C-3532/3556

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 — R.C. Seine 376.286
Fondé en 1925 — Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութներ, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկ. 3500 ֆր. կամ $ 10: Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 1 ՆՈՅԵՄԲԵՐ
JEUDI 1 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7721 | 32e ANNEE | Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ | ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3532

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ԵՒ ԱՀԱ ՓՈԹՈՐԻԿԸ

•

Ինչ որ տեղի կ'ունենայ Միջին Արեւելքի մէջ, շատոնց նախատեսուած էր:

Կաթսան կ'եռար տարիներէ ի վեր: Մանաւանդ այս տարի: Եւ ուշ-կանուխ պիտի պայթէր:

Զարմանալի չէ որ արշաւանքն սկսաւ Իսրայէլ:

Կազմուած՝ 1948 Մայիս 15ին, այս պետութիւնը մինչեւ այսօր ալ չէ կրցած լեզու գտնել իր դրացիներուն հետ:

Միւս կողմէ, մտավախութեան մատնուած էր, տեսնելով մանաւորապէս Եգիպտոսի զօրացումը:

Եւ վերջապէս, յաճախադէպ էին սահմանային ընդհարումները տարուան սկիզբէն ի վեր:

Տեղեկագրի մը համաձայն, վերջին ինը ամիսներու ընթացքին սպաննուած են 121 Իսրայէլացիներ եւ 496 Արաբներ, առանց հաշուելու հազարաւոր վիրաւորները:

Հետեւելով հին ռազմագիտութեան մը, Իսրայէլի զինուորական իշխանութիւնը կը կարծէ թէ առաջին յարձակողը միշտ յաղթական կը հանդիսանայ:

Ամէն պարագայի մէջ, այն կասկածն ունի թէ ժամանակը իր դրացիներուն համար կը բանի: Հետեւաբար, չուզեր թոյլ տալ որ աւելի զօրանան:

Այդ մտահոգութեամբ էր որ սոխպոզական ձեռնարկներ կը կատարէր ամիսներէ ի վեր, զէնք եւ ռազմանիւթ ճարելու համար արեւմտեան ճակատէն:

Իսրայէլի վարչապետին վերջին ճառերն ալ բացորոշապէս կը հաստատեն թէ արշաւանքը նախատեսուած էր:

Պէն Կիւրիոն միշտ կը շեշտէր թէ Արաբները կ'ուզեն կործանել Իսրայէլը:

Տակաւին անցեալ շաբթու կրակոտ խօսքեր կ'արտասանէր խորհրդարանին մէջ, արաբական երկիրներու միջեւ կնքուած զինակցութեանց առթիւ:

Այս մթնոլորտին մէջ էր որ Իսրայէլի զինուորները սկսան յառաջ խաղալ դէպի Սուէզ, ռազմագիտական դիրքեր գրաւելու եւ եգիպտական բանակը պաշարելու համար:

Արեւմտեան աշխարհը խոր մտահոգութեան մատնուած է այս արշաւանքին հետեւանքով, որ կրնայ իրական պատերազմի մը յանգիլ, հակառակ Իսրայէլի այն յայտարարութեան թէ պիտի գոհանան սահմանափակ ձեռնարկով մը:

Երբ թնդանօթը կ'որոտայ եւ օդանաւերը կը սուրան, միամիտներ միայն կրնան հաւատալ թէ ամէն ինչ պիտի վերջանայ պարզ արշաւանքով մը:

Անցեալ Փետրուարէն ի վեր, պարտք սեպեցինք արթնութեան եւ լրջութեան կոչեր ուղղել, բացատրելով թէ Միջին Արեւելքի խմորումներն ու խլրտումները կրնան վրդովիչ անակնկալներու առջեւ դնել նաեւ մեզ:

Ըսել կ'ուզէինք թէ կացութիւնը կը պահանջէ կարճ կապել ներքին ժխորը, խուժանավարական սպառնալիքները, «մինչեւ ծայրը» երթալու չոչորթաբանութիւնները:

Դժբախտաբար արհեստական «ճիհատ»ը շարունակուեցաւ նոյն մոլեռանդութեամբ: Այն աստիճան որ, եթէ վաղը իրական «ճիհատ» մը սարքուի, կամ զինուորական գործողութիւնները ծաւալին, ամէնէն առաջ խուճապի պիտի մատնուին «եկեղեցասէր» ասպետները, իրենց վայրերան կանչերով կամ այլապէս գրգռիչ ելոյթներով:

Երանի թէ չուտ սթափէին, յուշիկ յուշիկ վար առնելով կուսակցական քինախնդրութեան առագաստները եւ իմաստութեան ճիգ մը փորձելով:

Այս նոր ալեկոծութեան մէջ մեր առաջին հոգը պիտի ըլլայ խուսափիլ անաքանդ մարդանքներէ:

Շ.

ԱՆԳԼԵՒՖՐԱՆՍԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԳԻՐ

ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՌԻՒՆԵՐԸ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԵԳԻՊՏՈՍ ՎՃՌԱՊԷՍ ՄԵՐԺԵՑ

ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԻՆ. ՈՒԺԵՐԸ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՄՏՆԵՆ

Կացութիւնը խիստ ծանրացաւ Միջին Արեւելքի մէջ, քանի մը ժամուան մէջ: Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները, որոնք արտակարգ նիստի հրաւիրած էին իրենց խորհրդարանները, վերջնագիր մը ուղղեցին Իսրայէլի եւ Եգիպտոսի, 12 ժամ պայմանաժամ տալով, որպէսզի դադրեցնեն կռիւները: Իսրայէլ հաւանութիւն յայտնեց, իսկ Եգիպտոսի նախագահը վճռապէս մերժեց: Ֆրանսա եւ Անգլիա միեւնոյն ատեն պահանջած էին Եգիպտոսէն թոյլ տալ որ իրենց ուժերը առժամապէս գրաւեն Սուէզը, Փորթ Սայիտը եւ Իսմայիլիան: Վերջնագրին պայմանաժամը կը լրանար երէկ առտու ժամը 5·30ին: Գնդ. Նասր գայն մերժեց կէս գիշերին: Այս ծանրակշիռ որոշումները տրուած էին երկու խորհրդարաններուն արտակարգ նիստէն անմիջապէս ետք: Ֆրանսայի վարչապետը եւ արտաքին գործերու նախարարը յատկապէս Լոնտոն գացած էին, խորհրդակցելու համար: Նախապէս ալ երկու երկիրներուն դահլիճները բացառիկ նիստ գումարած էին:

Մինչ երկու կառավարութիւնները դիւանագիտական եւ զինուորական պատրաստութիւններ կը կատարէին, Մ. Նահանգները ժխտական դիրք բռնած էին Ապահովութեան Խորհուրդին մէջ: Բանաձեւ մը խմբագրած էին, ամբաստանելով Իսրայէլը թէ խախտած է զինադադարը: Ֆրանսա եւ Անգլիա մերժեցին այս բանաձեւը (վեթօ): Ամերիկեան ներկայացուցիչը նոյն իսկ մերժեց յետաձգել վիճաբանութիւնները:

Եգիպտոսի նախագահը յայտարարեց Գահիրէի անգլիական դեսպանին թէ վերջնագիրը «անընդունելի է» որեւէ պարագայի մէջ: Եւ ընդհանուր զօրաշարժ յայտարարեց: Միեւնոյն ատեն Եգիպտոսի օդանաւերը յարձակեցան իսրայէլեան ուժերուն վրայ, կասեցնելով անոնց յառաջխաղացութիւնը Սինայի անապատին մէջ: Այս առթիւ հրատարակուած պաշտօնական զեկոյցը կ'ըսէ թէ եգիպտական ուժերը ոչնչացուցին երկու թշնամի սաւառնակներ եւ 12 զրահապատ կառքեր, շատ ծանր կորուստներ պատճառելով: Թամատի մէջ, որ Սուէզի կէս ճամբուն վրայ կը գտնուի:

Ահաւասիկ Եգիպտոսի ժխտական պատասխանը որ անթելով ալ հաղորդուեցաւ.—

Նախագահ Նասր վճռապէս մերժեց անգլեւֆրանսական վերջնագիրը եւ ազդարարեց երկու կառավարութեանց թէ Եգիպտոս պիտի կռուի, եթէ անգլեւֆրանսական ուժերը փորձեն գրաւել Սուէզի Ջրանցքը: Նախագահը այս առթիւ դիտել կուտայ թէ վերջնագիրը կը բռնաբարէ Եգիպտոսի արժանապատուութիւնը եւ իրաւունքները եւ «բացորոշ արհամարհանք մը կը կազմէ Միացեալ Ազգերու դաշինքին դէմ: Եգիպտոս ուրիշ ելք չունի եթէ ոչ ինքնապաշտպանութեան դիմել եթէ որեւէ յարձակում կրէ: Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա նախայարձակում կը պատրաստեն յարձակման զոհերուն դէմ»: Գնդ. Նասր միեւնոյն ատեն դիմած է նախագահ Այզընհաուըրի եւ վարչապետ Բուլկանինի, խնդրելով որ խափանեն անգլեւֆրանսական ձեռնարկը: Եգիպտոսի դահլիճը բացառիկ նիստ գումարեց նախագահութեամբ գնդ. Նասրի, քննելու համար Միջին Արեւելքի կացութիւնը:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՎՃՌԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երեքշաբթի գիշեր ժամը 9ին Ազգ. Ժողովը բացառիկ նիստի հրաւիրուած էր, լսելու համար վարչապետին յայտարարութիւնը: Այս առթիւ բուռն վիճաբանութիւններ տեղի ունեցան, եւ ի վերջոյ Ժողովը կառավարութեան որոշումները վաւերացուց առտուան ժամը 1·30ին, 182ի դէմ 368 ձայնով: Միեւնոյն ատեն գեկուցում տրուեցաւ Հանրապետութեան Խորհուրդին մէջ (ծերակոյտ): Ազգ. Ժողովը լեցուած էր արտակարգ բազմութեամբ: Պ. Կի Մոլէ պարզեց Միջին Արեւելքի կացութիւնը, տեղեկութիւններ հաղորդեց Լոնտոնի մէջ կատարուած խորհրդակցութեանց մասին: Յետոյ անդրադառնալով Իսրայէլի կատարած արշաւանքին, ըսաւ.

— «Մենք շատ լաւ կը ճանչնանք Իսրայէլի ժողովուրդը, գիտենք իր քաջութիւնը եւ վճռականութիւնը, քաջութիւն մը որով կը պահեն իրենց երկրին ամբողջութիւնը թշնամի բնակչութեանց դիմաց: Կը ճանչնանք նաեւ գնդ. Նասրի վարչաձեւը: Գիտենք որ ան կանգ չառներ բռնի ուժին եւ միջազգային օրէնքի բռնաբարման առջեւ: Զենք մոռնար թէ շարունակ կը մերժէ թոյլ տալ որ Իսրայէլի նաւերը անցնին Սուէզի Ջրանցքէն, հակառակ Ազգաժողովին յանձնարարութեանց»:

Վարչապետը յիշելով Ջրանցքին բռնագրաւումը, եգիպտական զէնքերու փոխադրութիւնը դէպի Ալժերիա, հինգ ալժերիացի ղեկավարներու ձերբակալութիւնը, շարունակեց.

— Ցարգելով Ազգաժողովին ուխտը, ընդունեցանք ամերիկեան առաջարկը՝ Ապահովութեան Խորհուրդին յանձնելու համար Իսրայէլի յարձակման խնդիրը: Բայց կարելի՞ էր գոհանալ այդ ձեռնարկով, երբ կը տեսնենք որ կռիւները պիտի մղուին Սուէզի շրջանին մէջ եւ պիտի վտանգուի ազատ երթեւեկը: Կռիւները ծաւալած չեն տակաւին: Անհրաժեշտ էր անմիջական ձեռնարկ մը, արագօրէն դադրեցնելու համար թշնամութիւնները: Ուստի ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները այս իրիկուն ժամը 17·30ին հանդիսաւոր կոչ մը ուղղեցին իսրայէլեան եւ եգիպտական կառավարութեանց, պահանջելով անմիջապէս դադրեցնել որեւէ պատերազմական գործողութիւն ցամաքի եւ ծովու վրայ եւ օդին մէջ եւ իրենց զինուորները ետ քաշել Ջրանցքի շրջանէն: Խնդրեցին նաեւ եգիպտական կառավարութենէն արտօնել որ ֆրանքեւանգլիական ուժերը առժամապէս տեղաւորուին Ջրանցքին գլխաւոր կէտերուն վրայ, — Փորթ Սայիտ, Իսմայիլիա եւ Սուէզ, ապահովելու համար բոլոր ազգերու նաւերուն ազատ անցքը: Եգիպտոս եւ Իսրայէլ պարտաւոր են իրենց պատասխանը տալ 12 ժամէն: Եթէ այս պայմանաժամը լրացած ատեն գոհացում տուած չըլլան մեր պահանջին, ֆրանքեւանգլիական ուժերը պիտի գործադրեն իրենց նախատեսած միջոցները, որոնք ժամանակաւոր են: Այդ միջոցները ուղղուած չեն ոչ Եգիպտոսի, ոչ ալ Իսրայէլի դէմ: Գալով երեք քաղաքներու գրաւման՝ ֆրանքեւանգլիական ուժերու կողմէ, շատ մը նախընթացներ, զինադադարի համաձայնութեանց խախտումներ, կրկնակի գրգռութիւններ բաւական են այդ պա—

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ՀԱՒԱՆԻ ԵՏ ՔԱՇԵԼ ԻՐ ԶՕՐՔԸ

Նոր կարգուսարք Հունգարիոյ մէջ.— Կը ջնջուի միակ կուսակցութեան դրութիւնը. — Բոլշեւիկեան գիրքերը կը հրկիզուին. — 15·000 մեռեալ Փեշթայի մէջ

Հունգարիոյ վարչապետը, Նակի, յայտարարեց թէ նոր կառավարութիւն մը պիտի հաստատուի 1945ի կարգուսարքին հիման վրայ: Փեշթայի անթելը կը ծանուցանէ.— Ռուսերը կը քաշուին: Դադրեցուցէք կռիւը: Մի խանգարէք Ռուսերու նահանջը»:

Միեւնոյն ատեն կը հաստատուի թէ Խ. Միութիւնը տրամադիր է իր զինուորները քաշելու բոլոր արբանեակ երկիրներէն: Այս առթիւ եղած յայտարարութիւնը կ'ըսէ թէ կառավարութիւնը պատրաստ է քննելու խնդիրը, «աւելի զօրացնելու համար բարեկամութիւնը եւ գործակցութիւնը Խ. Միութեան եւ ուրիշ ընկերվարական պետութեանց միջեւ»: Յետոյ կը բացատրէ թէ խորհրդային զօրամասեր կան Հունգարիոյ եւ Ռումանիոյ մէջ՝ համաձայն Վարշաւայի դաշինքին, իսկ Լեհաստանի մէջ՝ Վարշաւայի դաշինքով եւ Փոցտամի համաձայնութեամբ: «Սովետական զօրամասեր չկան միւս ժողովրդական հանրապետութեանց մէջ»: Յայտարարութիւնը որեւէ տեղեկութիւն չի տար արեւելեան Գերմանիոյ մասին: Այս առթիւ կ'ըսէ թէ «ընկերվարական ազգերը իրենց յարաբերութիւնները պիտի հաստատեն կատարեալ հաւասարութեան, հողային ամբողջութեան պահպանման, պետական անկախութեան եւ գերիշխանութեան վրայ, յանձն առնելով չմիջամտել մէկուն կամ միւսին ներքին գործերուն»:

× Հունգարիոյ վարչապետը յայտարարեց թէ կառավարութիւնը որոշած է ջնջել միակ կուսակցութեան դրութիւնը: Բանակցութիւններ կը կատարուին Խ. Միութեան հետ, սովետական ուժերը քաշելու համար ամբողջ Հունգարիայէն:

Շուտով ընտրութիւններ պիտի կատարուին եւ պիտի վերահաստատուին 1946ի քաղաքական չորս կուսակցութիւնները: Ապստամբները միշտ կը պահանջեն որ ռուսական բոլոր ուժերը քաշուին, այլապէս զէնքերը վար պիտի չդնեն: Կռիւները կը շարունակուին մայրաքաղաքին թէ գաւառի մէջ: Համայնավարական օրաթերթը դադրեցուց իր հրատարակութիւնը: Ապստամբները գրաւեցին տպարանը եւ թռուցիկներ կը տպեն յանուն Յեղափոխական Կոմիտէին: Երիտասարդ աղջիկներ կ'օգնեն ապստամբներուն, դեղ եւ ուտեստ ճարելով: Տասնըչորս տարեկան աղջիկ մը ջահի պէս վառեցաւ քարիւղէ ռումբ մը արձակելով ռուսական թնդանօթներու վրայ: Գրատուն մը կրակի տրուեցաւ բոլոր բոլշեւիկեան գիրքերով: Բազմութիւնը կը պարէր խարոյկին առջեւ: Երիտասարդներ բոցերուն մէջ կը նետէին հարիւրաւոր գիրքեր: Բազմութիւնը կը պոռար,— «Թող Ռուսերը հեռանան»:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Երէկ առտու (չորեքշաբթի) նաւամարտ մը տեղի ունեցաւ Հայֆայի առջեւ, Իսրայէլի եւ Եգիպտոսի մարտանաւերուն միջեւ, տեւելով 40 վայրկեան:

Իսրայէլի ուժերը վար առին երկու եգիպտական օդանաւեր, գարձեալ Հայֆայի առջեւ: Միեւնոյն ատեն գրաւեցին եգիպտական նաւ մը:

Օդանաւային երթեւեկը դադրած է բոլոր արաբական երկիրներուն վրայ: Սուէզի Ջրանցքէն որեւէ նաւ չի կրնար անցնիլ: Բոլոր նաւերը Բաբելոսոյ ճամբով կ'երթեւեկեն: Ահազանգը սկսած է հնչել Եգիպտոսի մէջ:

× Վերջնագրին պայմանաժամը լրացած ըլլալով, անգլեւֆրանսական օդանաւային եւ ծովային ուժերը գործի ձեռնարկեցին յատկապէս մարզուած ռազմիկներ եւ օդագօրք ցամաք հանելով:

ՕՐԻՆԱՑ ՇՐՋԱՅԻՆԻՐ ՀԵՏ

ԱՆՍՈՎՈՐԱԿԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՍԵՆԵԼՈՆ

(TOUSSAINT — ԱՐԵՎԱՑԻ ՊՐԻՈՆ)

Paris, Palace Hotel

Ծիրանագոյն ծաղիկներ, ցաւագին յիշատակներ եւ ոսկեհատիկ տարեդարձներ ամէն մարդ ունի իր կեանքին մէջ, ինչպէս ունի իր տխուր ժամերը, երբ ամէն ինչ կարծես կը մթագնի մեր աչքերուն առջեւ, եւ մենք կը մնանք միայնակ, ինքնամոռաց, մեր ներսը ամփոփուած, մեր հոգիին մէջ ապրելով անցեալի մը ամենէն հեռաւոր յուշերը, որոնք կը վերակենդանանան մեր առջեւ, ինչպէս ուրուականներ, որոնք կ՚ուզեն մեզ տանիլ իրենց հետ, ուր որ ալ ըլլայ անոնց հանգրուանը։

Այդ ժամերուն է, որ մարդ կը զգայ, թէ ինչքան մենակ է ան, ինչքան անօգնական, ինչքան ոչնչութեան դատապարտուած։ Ամէն ինչ կը թուի անիմաստ, ամէն ինչ կը թուի ունայնութիւն։ Ամէն ինչ կը թուի ստուերներու խաղ, որոնք կը սահին մեր առջեւէն, առանց մեզի համար որեւէ նշանակութիւն ունենալու։

Ես ալ ունիմ իմ ոսկեհատիկ տարեդարձս, որ կը լրանայ այսօր, 19 Մայիսին։ Ես ալ ունիմ իմ ծիրանագոյն ծաղիկներս, որոնք կը ծաղկին իմ հոգիիս մէջ, ինչպէս ամէն մարդու հոգիին մէջ։ Ես ալ ունիմ իմ ցաւագին յիշատակներս, որոնք կը ներկայանան ինծի, ինչպէս ամէն մարդու։

Ես ալ ունիմ իմ ստուերներս, որոնք կը հետեւին ինծի, ինչպէս ամէն մարդու։

Ես ալ ունիմ իմ ունայնութիւնս, որ կը տիրապետէ ինծի, ինչպէս ամէն մարդու։

Ես ալ ունիմ իմ ոչնչութիւնս, որ կը սպասէ ինծի, ինչպէս ամէն մարդու։

Ես ալ ունիմ իմ մահ

ՍԱՍՈՒՆԻ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՍԱՍՈՒՆԻ — ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՊԸ 1922ԹՎԻՆ: Հին ասած վեպ, 1922թն սկսած և մոտ 9 ամիս վերջ, ամբողջ պատմությունը, մեծ Լուսե Հայկ Ալիշանի հետ միասին, ինչպես նաև Ալիշանի ընտանիքի անդամները, ինչպես նաև Ալիշանի ընկերները, ինչպես նաև Ալիշանի թշնամիները, ինչպես նաև Ալիշանի ծանոթները, ինչպես նաև Ալիշանի հարևանները, ինչպես նաև Ալիշանի գործընկերները, ինչպես նաև Ալիշանի աշակերտները, ինչպես նաև Ալիշանի ուսուցիչները, ինչպես նաև Ալիշանի հոգևոր հայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի հոգևոր հայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի հոգևոր հայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի հոգևոր հայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի հոգևոր հայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի խոստովանահոգևորականի հոգևոր հայրը, ինչպես նաև Ալիշանի խոստովանահոգևորական

«ՅԱՌԱՋ»Ի ՅԱՋՈՐԴ ՀԱՄԱՐԸ լոյս կը տեսնէ շաբաթ, Ամենայն Սրբոց տօնին պատճառով։

հանձը հասկնալու համար։ Այն պահուն երբ Ամմանի մեր դեսպանատունը կը քարկոծուի, երբ Երուսաղէմի մեր հիւպատոսարանը եւ Հալէպի մեր կրթական հաստատութիւնները կը հրկիզուին, հասկնալի է որ նիւթական երաշխիքներ պահանջենք համաձայնութեանց գործադրութիւնը ապահովելու համար։

«Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները միշտ տեղեակ պահած են ամերիկեան կառավարութիւնը՝ իրենց մտահոգութեանց եւ որոշումներու մասին։ Ես անձնական նամակ մը ուղղեցի նախագահ Այզընհաուըրի, բացատրելով ամէն բան։ Ցոյց յայտնեցի թէ պիտի դնահատէ Ֆրանքեւանգլիական ձեռնարկը իր բարձր հեղինակութեամբ։ Կառավարութիւնը կ'ըմբռնէ իր տուած որոշումներուն ծանրութիւնը. կ'ըմբռնէ նաեւ այն ծանր հետեւանքները որ կրնան ծագիլ Միջին Արեւելքի հաւասարակշռութեան եւ աշխարհի խաղաղութեան համար, եթէ որ եւ է ձեռնարկ չկատարուի։ Կը խնդրենք Ազգ. Ժողովէն իր հաւանութիւնը յայտնել սուսարաթիւ քուէարկութեամբ»։

Առաջին անգամ խօսք առաւ համայնավար ներկայացուցիչը, քննադատելով տրուած որոշումները։ Շատեր կը պոռային. — «Ի՞նչ լուր Փեշթայէն. մարդասպաննե՛ր»։

Մերակոյտն ալ հաւանութիւն յայտնեց 19ի դէմ 289 ձայնով։

× Անգլիոյ խորհրդարանին մէջ ալ մանրամասն զեկուցում տուաւ վարչապետը։ Պահպանողականները կը ծափահարէին կառավարութեան որոշումները, իսկ ընդդիմադիրները բուռն քննադատութիւններ կ'ուղղէին։ Անոնք յատկապէս ցաւ յայտնեցին որ վարչապետը խորհուրդ չէ հարցուցած Մ. Նահանգներուն եւ բրիտանական հասարակապետութեան։ Մասնաւորապէս նեղը դրուեցաւ արտաքին նախարարը։ Ի վերջոյ ժողովը կառավարութեան որոշումները քուէարկեց 218ի դէմ 270 ձայնով։ Այս առթիւ անգամ մը եւս փառաբանուեցաւ անգլեւֆրանսական սերտ գործակցութիւնը։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բացարձակապէս գաղտնի կը պահուին Անգլիոյ եւ Ֆրանսայի զինուորական գործողութիւնները։ Կը հաստատուի թէ մարտանաւեր եւ օդանաւեր ճամբայ ելած են դէպի Եգիպտոս։ Արտակարգ դէպքեր տեղի կ'ունենան Միջերկրականի մէջ։ Նախագահ Այզընհաուըր սախպողական կոչ մը ուղղեց Ֆրանսայի եւ Անգլիոյ վարչապետներուն, խնդրելով խաղաղութեամբ լուծել Միջին Արեւելքի տագնապը։ Խ. Միութեան վարչապետը եւ Կեդր. Կոմիտէին ընդհ. քարտուղարը մտահոգութեան մատնուած են եւ կ'առաջարկեն վէճը կարգադրել Ապահովութեան Խորհուրդին միջոցաւ։

Իսրայէլի անթելը կը ծանուցանէ թէ իրենց զօրքը շուտով կը հասնի բուն Ջրանցքը։ Եգիպտական ուժերը կը ջանան կասեցնել յառաջխաղացութիւնը։ Ամերիկեան վեցերորդ նաւատորմիղը կը շրջի արեւելեան Միջերկրականի մէջ։ Սուրիոյ բանակը պատերազմական վիճակի մէջ դրուեցաւ։ Պաշարման վիճակ յայտարարուեցաւ Իսրայէլի սահմանագլուխին վրայ։ Ազգ. պաշտպանութեան նախարարը յայտարարեց թէ ժամանակը եկած է դաս մը տալու Իսրայէլի։ Սպարապետը յետաձգեց իր ճամբորդութիւնը դէպի Մոսկուա, իսկ հանրապետութեան նախագահը մեկնեցաւ առանձին։ Առ այժմ հանդարտութիւն կը տիրէ Յորդանանի սահմանագլուխին վրայ։ Անգլիական օդանաւերը մեկնեցան Ամմանէն, անծանօթ ուղղութեամբ։

Արեւմտեան պետութիւնները կը շարունակեն պարպել իրենց քաղաքացիները՝ Միջին Արեւելքի բոլոր երկիրներէն։ Իրաքի դահլիճը բացառիկ նիստ գումարեց գիշերն ի բուն։ Բանակը հրամանի կը սպասէ կազմ եւ պատրաստ։ Լուրի մը համաձայն եգիպտ. բանակին կէսը պաշարուած է։

× Ապահովութեան խորհուրդին սովետական պատուիրակը ամբաստանեց Ֆրանսան եւ Անգլիան, իբրեւ մեղսակիցներ Իսրայէլի։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէի եւ մասնակցութեամբ շրջանի ենթակոմիտէներու եւ խումբերու Նոր Սերունդին եւ Կապոյտ Խաչի։
Այս Շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս։

SALONS DE L'ALHAMBRA, 340 Bld. Chave

Բարձր հովանաւորութեամբ Նախարար, երեսփոխան, Մարսէյլի քաղաքապետ

GASTON DEFERRE-ի

Խօսք կ'առնեն

FRANCIS LEENHARD et JEAN MASSE

Կը նախագահէ՝ Ընկ. **ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆ**

Կը խօսին

Ամերիկայէն նոր ժամանած **ԸՆԿ. ԿՈՊԵՌՆԻԿ [illegible]ԹԱՆՏՐՃԵԱՆ ԵՒ ՅՈՎԻԿ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ**

Երգ՝ Օր. ԱՍՏՂԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Գեղարուեստական ճոխ եւ ընտիր բաժին, Պոմոնի «Քրիստափոր» երգչախումբ «Մարսէյլէզ» եւ «Մշակ Բանուոր», Պ. Սարգիս Չէօրէքեան (ծանօթ ջութակահար), Պ. Զարեհ Գասեան (մեներգ), Օր. Մատըլէն Մարկոսեան (դաշնակ), Օր. Ալիս Յարութիւնեան (արտասանութիւն)։

Կէս գիշերէն ետք եւրոպական պարեր, ընկերակցութեամբ ԼԻՒՔ ԷՐԱՐ նուագախումբի։ Ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով։

Մուտքը ազատ է։

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. կոմիտէին եւ մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Դրօ» մասնաճիւղին։

Այս կիրակի երեկոյեան ժամը 9ին, Հ. Յ. Դ. Տան մէջ։

Պիտի խօսի ընկ. ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ։

Գեղարուեստական ճոխ բաժին, դպրոցին աշակերտներուն եւ Նոր Սերունդին կողմէ։

Կը հրաւիրուին բոլորդ անխտիր։

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Կազմակերպուած Հ. Յ. Դ. Կոմիտէի կողմէ, մասնակցութեամբ Նոր Սերունդի եւ Սանուհիներու։ Այս կիրակի ժամը 15.30ին։ Թէատր Մինիսխիալի շքեղ սրահին մէջ։

Կը խօսի Փարիզէն Խ. ՄԿՐՏԻՉԵԱՆ։

Գեղարուեստական ճոխ բաժին Հ. Յ. Դ. Նոր Սերունդի կողմէ։ Շասէն սիրայօժար իրենց մասնակցութիւնը կը բերեն Պալեան քոյրեր եւ երիտասարդ ջութակահար Կ. Պէպիրեան։

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վարանդեան կոմիտէի, մասնակցութեամբ Ֆ. Կապ. Խաչի եւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Սիամանթօ խումբի։

Այս շաբաթ, ժամը 20.30ին, Գ. Թադապետարանի մէջ։

Կը նախագահէ Ընկ. ՍԻՍԱԿ ՍԻՍԼԵԱՆ
Կը խօսին Ընկերներ ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ եւ ՆՇԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Գեղարուեստական ճոխ բաժին։ Կ'արտասանեն.— Պ. Պ. Պետրոս Թուրլեան եւ Լեւոն Ճոլաքեան։ Պիտի երգեն Օր. Լուիզ Հաբէլեան, Պ. Պ. Պետրոսեան եւ ֆրանսացի ծանօթ արուեստագէտներ Օր. Տրենիզ Քլէման, Պ. Ժագ Թիսօ Պ. Փօլ Քուէֆէ։

Մուտքը ազատ է։

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅ. 11, ԺԱՄԸ 18էն 2 SALLE VOLTAIRE, Alfortville

Նախագահութեամբ երեսփոխան եւ նախկին նախարար **E. Depreux**-ի
եւ Ալֆորվիլի քաղաքապետ՝ **R. Bleuse**-ի
ՅԱՂԹԱՆԱԿԻ ԿԱԼԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ **Fernand Reynaud**-ի
(ԺԱՄԸ ՃԻՇԴ 21ԻՆ)
ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ **Jacques HELIAN**

Հաղորդակցութեան միջոց.— Շարանթօն Էքօլէն 103 թիւը առնել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Սաղըրեան կը ծանուցանէ թէ այս կիրակի Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իր քրոջ զաւկին՝

ԱՐԱ ՔԵՐԵՍԹԷՃԻԵԻ

ղառնակսկիծ մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ Գերմանիա, 21 տարեկանին։

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները։

ՊԱՏԱՐԱԳ ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Այս Հինգշաբթի առաւօտ, Ամենայն Սրբոց տօնին առթիւ պատարագ պիտի մատուցուի ռիւ Ժէ, Սէն Լուի սրահին մէջ։

Պիտի պատարագէ Թորգոմ քհնյ. (Լիոնէն)։

ԻՐԱՆԱՀԱՅ ՑԱՅՏՆԻ ՊԱՐՈՒՀԻ ԼԱՈՒՐԻԱ ԱՒԵՏԻՍԵԱՆ

կուտայ իր անդրանիկ պարի երեկոյթը, Զորեքշաբթի, 14 Նոյեմբեր, 1956, ժամը 20.30ին

Théâtre International
21, Bd. Jourdan (Métro : Cité Universitaire).

Տոմսերը 500, 300, ուսանող 150։
Դիմել Սորպոնի դռնապաններուն։

Կ'ՈՒԶՈՒԻ

Կօշիկի կաղապարի վրայ քաշող վարժ գործաւոր մը (մօնթէօր ա լա փուէնթ)։ Տեւական գործ։ Դիմել՝

Chaussures KARENE
57 Rue des Couronnes, Paris (20e)

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ Մ. ԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼ

Տարեկան ճաշասեղան, ընկերութեան պատուոյ անդամներուն եւ համակիրներուն ի պատիւ։

Այս կիրակի ամբողջ օրը, Պոմոնի Եկեղեցւոյ յարակից սրահին մէջ։

Հայկական համադամ կերակուրներ, երգ, պար, արտասանութիւն եւ ընկերական ջերմ մթնոլորտ։

Ճաշագին մէկ անձի համար 600 Ֆրանք։

Համգամանկութիւն տեղի պիտի չունենայ։

Տեղերը սահմանափակ ըլլալով, կը խնդրուի նախօրօք ապահովել հրաւիրագիրները վարչութեան անդամներէն։

Տոմսերը նախօրօք ապահովել քաղաքը՝ Պ. Յ. Հացագործեանէն,

15, Rue Longue des Capucins

Պոմոն՝ Պ. Յարութիւն Գարաքէհեանէն,

326, Avenue de St. Julien

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Նախագահութեամբ Տիկին ԲԻՒԶԱՆԴԻ

Այս շաբաթ, ժամը 21ին, Քասէ սրճարանի վերնայարկը։

Պիտի խօսի ՏՈՔԹ. ԱՐԱՄ ՃԻՆՃԵԱՆ։

Նիւթ ունենալով՝ Ուխտագնացութիւն դէպի Վենետիկ, եւ անոր նշանակութիւնը հայկական տեսակէտով։

Բանախօսութենէն վերջ պիտի ներկայացուին յիշատակի նկարներ, մոգական լապտերով։ Մուտքը ազատ է։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԻԹԱԼԻ.— Հ. Յ. Դ. Աղբիւր Սերոբ եւ Մ. Եօթնեղբայրեան խումբի ընդհ. ժողովը այս շաբաթ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին։ Բոլորին ներկայութիւնը պարտաւորիչ։

ԴԷՊԻ ՓԷՐ ԼԱՇԷԶ

Հ. Յ. Դ. Պէլվիլի «Ռոստոմ» խումբը այս տար ինչս այց մը կազմակերպած է դէպի Փէռ Լաշէզի գերեզմանատունը, Ահարոնեանի, Ռուբէնի, Խատիսեանի, ազգ. հերոս Անդրանիկի, ինչպէս նաեւ ազգային գործիչներ Գրիգոր Օտեանի եւ Տիգրան Բէկզատեանի դամբարանները։

Այս կիրակի, կէս օրէ վերջ ժամը ճիշդ 3ին։ Ժամը 4էն 6, այցելութենէն վերջ թէյասեղան մը, Խտիւի ծանօթ սրճարանին սրահը, ուր պիտի ըլլան յարգանքի արտայայտութիւններ։

Թէյասեղանի համար ծախքերու մասնակցութիւն։ Կը հրաւիրուին փարիզեան շրջանի ընկերները եւ հայրենակիցները։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Տաճատ եւ Վրոյր Շալճեան եղբայրներ եւ պարագաները կը ծանուցանեն թէ՝ այս կիրակի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Պոմոնի Ս. Գր. Լուս. եկեղեցւոյ մէջ, իրենց նորոգ հանգուցեալ բարեհամբաւ հօր՝

Պ. ՂԵՒՈՆԴ ՇԱԼՃԵԱՆի

համար, անոր մահուան քառասունքին առթիւ։ Ուստի, հանգուցեալին յիշատակը յարգող բարեկամներ եւ հայրենակիցներ կը հրաւիրուին ներկայ ըլլալ առաւօտեան ժամը 10ին, Պոմոնի եկեղեցին։

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ ՀԱՅ ԿՌՓԱՄԱՐՏԻԿԸ

ԺԱՔԻ ԱԶՆԱՒՈՒՐԵԱՆ (Մարսիլիացի) իր առաջին մրցումը պիտի կատարէ Փարիզի մէջ, այս հինգշաբթի իրիկուն

Central Sporting Club
57, Fg. St. Denis

Նշանաւոր հարուածող ԿԱՊՐԻԷԼ ԱՍԱԿԱՑԻ հետ։

ԽՆՋՈՅՔ

«Սեբաստիոյ Մուրատ Ուսումնասիրաց Միութեան ցերեկոյթ – խնջոյքը տեղի կ'ունենայ այս կիրակի Խրիմեան վարժարանի սրահը, 2 ռիւ տը լա Տէֆանս, Իսի լէ Մուլինօ, ժամը 4.30էն մինչեւ 10։

Գեղարուեստական բաժին, Ա. մաս.— Ծիծաղաշարժ պաւեշտ, մէկ արար, ղեկավարութեամբ Մ. Շիրվանեանի եւ Պալեանի։

Բ. մաս.— Նուագ, երգ եւ արտասանութիւններ։

Կը հրաւիրուին բոլոր հայրենակիցները եւ համակիրները։

Առատ պիւֆէ Մուտքը ազատ է։

ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կազմակերպուած Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Սիամանթօ» խումբին կողմէ, ի նպաստ «Հայաստան» ամսաթերթին։

Այս կիրակի ժամը 15էն 24, Ցոյներու սրահին մէջ, 5 ռիւ Պօնըֆուա։

Հաճելի ժամանց, առատ կերուխում, սիրով կը հրաւիրուին երիտասարդները եւ ծնողները։



Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՋՐԻ ՑԱՆՑՆԵԼԻ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՄԷՆ ԿՈՂՄԸ

185, Bd. Jean Jaurès
Boulogne - Billancourt
Métro MARCEL SEMBAT

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HAYRATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN

Rédaction et Administration : 32, *Rue de Trévise, Paris-9e*

C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286

Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և գաղութքեր, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկ. 3500 ֆր. կամ $ 10 : Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ 3 ՆՈՅԵՄԲԵՐ • SAMEDI 3 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7722 32e ANNEE

ԽՄԲԱԳԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3533

ԱՌԱՋԻՆ ՕԴԱՐՇԱՒԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՎՐԱՅ

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ

ԵԳԻՊՏՈՍ ԽԶԵՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ՀԵՏ

Ֆրանքեւանգլիական վերջնագրի պայմանաժամին լրացումէն 12 ժամ ետքը տեղի ունեցաւ առաջին օդարշաւը Եգիպտոսի վրայ։ Նոր մտահոգութիւն կը տիրէ աշխարհի բոլոր մասերուն մէջ։ Մ. Նահանգներու նախագահը զեկուցում տալով հեռատեսիլի առջեւ, յայտարարեց թէ հեռու պիտի մնան թշնամական գործողութիւններէն, հետեւաբար միտք չունի արտակարգ նիստի հրաւիրելու խորհրդարանը։ Այս առթիւ յիշելով թէ Ֆրանսա եւ Անգլիա մերժած են ամերիկեան բանաձեւը՝ Ազահովութեան Խորհուրդին մէջ, յոյս յայտնեց թէ խնդիրը պիտի յանձնուի Միացեալ Ազգերու ընդհ. ժողովին քննութեան։ «Այնտեղ է որ համաշխարհային կարծիքը պիտի կրնայ ուժ տալ մեր ճիգերուն՝ փակելու համար այս վրդովիչ հարցը։ Սխալի մը հետեւանքն է Ֆրանքեւանգլիական զինուորական միջամտութիւնը Սուէզի ջրանին մէջ։ Մենք զինուղօրութեան գործածումը խմաստուն եւ նը պատակայարմար չենք նկատեր միջազգային վէճերու կարգադրութեան համար։ Մ. Նահանգներուն խորհուրդ չեն հարցուցած այս գործողութեանց մասին, ոչ ալ կանխաւ տեղեկութիւն տուած են։ Այս պարագան յիշելով երբեք չեմ ուզեր տկարացնել այն բարեկամութիւնը որ մեզ կը կապէ այդ ազգերուն հետ »։

Այդընհանուրը յետոյ բացատրեց թէ Մ. Նահանգները անցեալին մէջ ալեհոստացած են «ալակսիլ Իսրայէլի նոր պետութեան, մինչդեռ ատեն ամրապնդել մեր կապերը արաբական երկիրներուն հետ» եւ դար յայտնեց որ կացութիւնը վերջերս ծանրացաւ իբրեւ հետեւանք Եգիպտոսի կառավարութեան քաղաքականութեան որ մղեց վերագինուիլ համայնավարներու օդնութեամբ։ Ցիւեց նաեւ Սուէզի ջրանցքին ազգայնացումը։ Եւ հաստատելով հանդերձ թէ կ'ըմբռնեն Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իսրայէլի ծանր հոգերը, անոնց դէմ եղած զրոյցութիւնները, դարձեալ քննադատեց զինեալ միջամտութիւնը։

Ուշադրութեան կը հետազրեն թէ Մ. Նահանգները ժխտական դիրք բռնելով հանդերձ, պիտի չդադրեցնեն զէնքի եւ ռազմանիւթի յանձնումը Ֆրանսայի եւ Անգլիոյ։

× Ազգաժողովին ընդհ. քարտուղարը հրաժարեցաւ, դիտել տալով թէ չի կրնար շարունակել իր պաշտօնը, եթէ բոլոր անդամները պիտի չյարգեն իրենց յանձնառութիւնները։

× Ե. Միւթիւնն ալ դատապարտելի դանելով Անգլիոյ եւ Ֆրանսայի միջամտութիւնը, պահանջեց որ Ազգաժողովը անմիջական միջոցներ ձեռք առնէ, դուրս հանելու համար անոնց զօրքը Սուէզի ջրանէն։ Այս առթիւ հրատարակուած յայտարարութիւնը խստօրէն կ'ամբաստանէ թէ Իսրայէլը իրրեւ լծակ կը գործածեն, որպէսզի Ֆրանսա եւ Անգլիա ետ առնեն Սուէզի ջրանցքը։ Ցետոյ կ'աղաղարկ թէ երեք ազգերը պիտի կրեն ամբողջ պատասխանատուութիւնը «վտանգաւոր հետեւանքներուն, քանի որ խաղաղութիւնը եւ ապահովութիւնը բռնարարելու համար բան բռնեցին, նախայարձակման համբան։ Իսրայէլ իրրեւ զէնք կը ծառայէ աշխարհակալ չրջանակներուն որոնք կը փորձեն վերահաստատել գաղթատիրութիւնը Արեւելքի մէջ։ Ֆրանսա եւ Անգլիա Եգիպտոս արշաւելով կը բռնարարեն եղիպտական պետութեան իրաւունքները։ Ե. Միւթիւնը վճռապէս կը դատապարտէ այս յարձակողական արարքները։ Աչքառու հի ազատասէր ժողովուրդները չեմատպէս կ'ողջունեն եղիպտոսի ժողովուրդին արդար պայքարը, անոր ազգային անկախութեան պաշտպանութիւնը »։

× Եգիպտոսի հրամանատարութեան զեկոյցը կը ծանուցանէ թէ կառապղի կռիւները տեղի կ'ունենան Ալ Աուճայի չրջանին մէջ, ուր Իսրայէլացիները երեք յարձակումներ գործած էին։ Զեկոյցը կ'ըսէ թէ յարձակումները ետ մղուեցան, ծանր կորուստներ պատճառելով, թէ օդանաւերը յարձակեցան Իսրայէլի օդակայաններուն վրայ, թէ տասը օդանաւեր վար առնուեցան եւ 15 հրապայլեր եւ կառքեր ոչնչացան։

× Եգիպտոս փակեց բոլոր համալսարանները եւ բարձրագոյն վարժարանները, որպէսզի ուսանողները կարենան մասակցիլ ազգային ազատագրութեան ճակատին։ Հրամայուեցաւ զինեալ ուժերու տրամադրութեան տակ դնել բոլոր փոխադրական միջոցները եւ յարմար չէնքերը։

× Իսրայէլի հրամանատարութիւնը կը ծանուցանէ թէ իր ուժերը յառաջ կը խաղան, կազայի չրջանը անջատելու համար Եգիպտոսէն։ Այդ անջատումէն վերջ մեծ ուժերով պիտի յարձակին ու պիտի գրաւեն։ Կ'ըսուի թէ հաղարաւոր արաբ տարագիրներ կը փախչին դէպի հարաւ, պարտմէն խուսափելու եւ Եգիպտոս հասնելու համար։ Իբր 300·000 բնակիչներ կան կազայի մէջ, 200·000ը պաղեստինեան տարագիրներ որոնց հոգատարութիւնը յանձնած է Ազգաժողովը։

Եգիպտական այն մարտանաւը որ դէպի բռնուած էր Հայֆայի առջեւ նաւահանգիստ փոխադրուեցաւ իր 250 նաւաստիներով։ Մարտանաւը Լիբանանի ծովեզերքէն սողոսկելով Հայֆա հասած ատեն կրակ բացաւ։ Իսրայէլի ուժերը պատասխանեցին եւ բուռն կռիւ մը ծագեցաւ։ Ցետոյ երկու երկիրներուն օդանաւերն ալ մարտնակցեցան ճակատամարտին եւ եգիպտական մարտանաւը ծանրապէս վնասուած ըլլալով սպիտակ դրօշ պարզեց։ Հրամանատարը կ'ուզէր ընկղմել նաւը, բայց ժամանակ չմնաց։

Իսրայէլի հրամանատարութիւնը կը ծանուցանէ թէ մաքրագործումները կը չարունակուին Սինայի անապատին մէջ։ « Երուսաղէմի Ձայն»ը արաբերէն բաժնին մէջ կը հաղորդէ թէ Իսրայէլի բանակը չուռով պիտի վերջացնէ իր գործողութիւնները Սինայի մէջ, պարտութեան մատնելով եղիպտական զօրամասերը։ Ցետոյ կը յանձնարարէ կազայի արաբ տարագիրներուն լսել արաբերէն զեկուցումները եւ հետեւիլ արուած հրահանգներուն։ Կազայի չրջանը ունի 25 մղոն երկայնութիւն եւ ութ մղոն լայնութիւն, սեղմուած՝ Միջերկրականի ծովեզերքին եւ Նեկեզի անապատին միջեւ։

× Անգլիական եւ ֆրանսական օդանաւերը հոկտեմբեր 31ին սկսան զինուորական գործողութիւնները, դրաւելու համար Սուէզի չրջանը։ Յարձակումը կատարուեցաւ արուած պայմանաժամէն 12 ժամ վերջը։ Գահիրէի անթելը կը ծանուցանէ թէ անգլեֆրանսական օդանաւերը ռումբեր նետեցին Գահիրէի, Ադեքսանդրիոյ, Փորթ Սայիտի եւ Սուէզի վրայ։ Կիպրոսի բրիտանական անթելը կ'ըսէր թէ օդարշաւին նչանակէտներն էին եգիպտական օդակայանները եւ զինուորական բարխները, թէ Գահիրէն ռազմական նչանակէտ չէ։ Օդարշաւէն առաջ եղիպտական կառավարութիւնը ազդարարած էր ժողովուրդին չմօտենալ օդակայաններ-

ԸՆԴՀ. ԶՕՐԱՇԱՐԺ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

•

Սուրիայէն, Յորդանանէն եւ Լիբանան նէն վերջ Իրաք եւ Լիբիա եւս բացառիկ վիճակ յայտարարեցին։ Հետզհետէ նոր միջոցներ ալ ձեռք կ'առնեն։

Այսպէս, Յորդանան ընդհ. զօրաչարժ յայտարարեց։ Պետական պաշտօնեաներու արձակուրդը դադրեցաւ, ցնոր տնօրինութիւն։

Իրաք.— Ընդհանուր զօրաչարժ։ Կառավարութիւնը բազոքագիր մը ուղղեց Ֆրանսական եւ անգլիական կառավարութեանց՝ եղիպտոսի դէմ կատարուած զինուորական միջամտութեան առթիւ։ Մի եւնոյն ատեն յանձն առաւ զինուորական աջակցութիւն ընծայել Եգիպտոսի։

Սուրիա.— Ընդհանուր զօրաչարժ։ Սպարապետը, զօր. Նիզամետտին, յայտարարեց.— «Ֆրանքեւանգլիական վերջնագիրը որեւէ արժէք չունի։ Սուրիա պիտի գործադրէ Եգիպտոսի եւ Յորդանանի հետ կնքած զինուորական համաձայնութիւնը»։

Լիբանան.— Նախագահ Շամուն կ'առաջարկէ խորհրդաժողով մը գումարել արաբական երկիրներու վեհապետներէն եւ նախագահներէն, մասնակցութեամբ դնդ. Նասրի։ Այն ատեն զինուորական միջոցներ ձեռք պիտի առնուին, օդնութեան հասնելու համար Եգիպտոսի։ Արգիլուած են բոլոր հրապարակային ցոյցերը եւ ժողովները։

Լիբիա.— Դահլիճը բացառիկ նիստ գումարելով, որոշեց թոյլ չտալ որ երկիրը օգտագործուի Ֆրանքեւանգլիական ուժերուն կողմէ՝ Եգիպտոսի դէմ ուղղուած գործողութեանց համար։ Որոշեց նաեւ իր ամբողջական աջակցութիւնն ընծայել Եգիպտոսի։

× «Ազատ Եգիպտոս»ի անթելը որ կը կարծուի թէ Կիպրոսէն կը բանի, Եչ. օր յայտարարեց թէ Ֆրանքեւանգլիական միջամտութեան նպատակն է վերահաստատել զօր. Նեկիպը, իբրեւ վարչապետ։ Այս առթիւ կ'ըսէր թէ Եգիպտոսի յեղափոխութեան բուն պատն է Նեկիպը եւ ոչ թէ Նասրը։

× Եգիպտոս խզեց իր դիւանագիտական յարաբերութիւնները Անգլիոյ եւ Ֆրանսայի հետ։ Կը կարծուի թէ Ազգաժողովէն ալ պիտի հրաժարի։

× Գահիրէի անթելը հետեւեալ կոչը ուղղեց.— «Աշխատաւորներ բոլոր արաբական երկիրներու, քանդեցէք ձեր երկրէն անցնող բոլոր նաւթատարները (փայլայն), հարուածներ ձեր հողին վրայ հիմնուած բոլոր նաւթային հաստատութիւնները, անպործածելի դարձուցէք բոլոր թշնամի օդակայանները։ Հասած է գործի ժամը։ Դուք հանդիսաւորապէս ուխտեցէք համակերպիլ ձեր գործադիր յանձնաժողովի որոշումներուն, որոնք քուէարկուեցան անցեալ օգոստոս 10ին։ Այդ բանաձեւերով դուք նախատեսած էք գործունէութեան ծրագիր մը թշնամի օդակայաններու ու նաւթային հաստատութեանց դէմ։ Ձեր պարտքն է գործի ձեռնարկել։ Հասած է ժամը»։

Տեղական թերթերը դիտել կուտան թէ կոչը ուղղուած է արաբ աշխատաւորներուն՝ իրենց կառավարութեանց դէմ։

× Գահիրէի Ֆրանսական եւ անգլիական դեսպանատուները վառեցին իրենց դաղտնի դիւանաթուղթերը։ Լոնտոնի եւ Փարիզի դեսպանատունն ալ նոյն գործողութիւնը կատարեց։

× Օդանաւային ընկերութիւնները որոշեցին չգործածել Պէյրութի եւ ուրիշ արաբական քաղաքներու օդակայանները։ Դէպի Արեւելք օդանաւերը պիտի բանին Ռոլիս - Պաղտատ ճամբով։

Մ. Նահանգներու արտաքին գործերու նախարարութիւնը կը ծանուցանէ թէ այսուհետեւ ոեւէ ամերիկեան քաղաքացի չի կրնար Իսրայէլ, Եգիպտոս, Յորդանան կամ Սուրիա երթալ առանց մասնաւոր արտօնութեան։

× Սուրիոյ հանրապետութեան նախագահը, Շիւքրի Քուաթլի Նոյեմբեր 1ին Մոսկուա հասնելով ջերմ ընդունելութեան արժանացաւ։ Դիմաւորելու համար օդակայան գացած էին բոլոր դեսպանները, բացի Իսրայէլի ներկայացուցիչէն։ Նախագահը պիտի բնակի Կրեմլինի պալատը, այն չարկարաժիններէն ուր հիւրասիրուեցան միւս վեհապետները։ Բարի գալուստի ճառը խօսեցաւ մատեչալ Վորոշիլով, Ե. Միւթեան բարեկամութիւնը յայտնելով Սուրիոյ եւ արաբական միւս երկիրներուն «որոնք արիաբար կը կռուին իրենց անկախութեան համար որպէսզի չնչուին գաղթատիրութեան վերջին հետքերը»։ Շիւքրի Քուաթլի ուրախութիւն յայտնեց որ կ'ընդունուի «այն երկրին մէջ որ պատերազմի մասնակցած է Հիթլերի դէմ»։

ՓՈԹՈՐԻԿ

ԱՆԳԼԻՈՅ ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ ընդդիմադիրները նորէն յարձակեցան կառավարութեան վրայ։ Իրենց առաջնորդը, Կէյթսքել, պարսաւանքի բանաձեւ մը առաջարկեց աննախընթաց ուժգնութեամբ, պղտարարելով թէ աշխատաւորական կուսակցութիւնը ամէն բան պիտի փորձէ, հանրային կարծիքը կառավարութեան դէմ հանելու համար։ Այս առթիւ «անփոյթ եւ պատիասրեր յիմարութիւն» կոչեց գահլիճին զինուորական ձեռնարկը Եգիպտոսի դէմ։ Բսաւ թէ այդ ձեռնարկին եղերական հետեւանքները պիտի կրնանք տարիներով, թէ միլիոնաւոր Բրիտանացիներ խորապէս ցնցուած են կառավարութեան նախայարձակումէն Միջին Արեւելքի մէջ։

Վարչապետը, Սըր Էնթ. Իտըն խօսք առնելով խստօրէն ձաղկեց Եգիպտոսի նախագահին «թշնամական եւ անպատասխանատու քաղաքականութիւնը»։ Բսաւ թէ չկայ որ խաղաղութիւն հաստատուի Միջին Արեւելքի մէջ ցորչափ Թոյլ կը տրուի զնդ. Նասրի չարունակել իր բռնութիւնները։ «Եթէ երէկ ընդունած ըլլայինք ամերիկեան բանաձեւը Ապահո-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

սայի հետ։ Կը կարծուի թէ Ազգաժողովէն ալ պիտի հրաժարի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՄԱՐ

Ցավոք, հետաքրքրական նյութերի պակասության պատճառով մենք ստիպված ենք մեր ընթերցողներին զրկել Ս. Ա. Ալեքսանդրովի հոդվածի շարունակությունից։ Հոդվածագիրը ուսումնասիրում է հավաքական աշխատավարձի կազմակերպման հարցերը։ Ինչպես հայտնի է, հավաքական աշխատավարձի կազմակերպման ամենատարածված ձևերից մեկը կտորավարձն է։ Հոդվածագիրը ցույց է տալիս, որ կտորավարձի ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է ունենալ ճշգրիտ նորմաներ։ Ուրիշ ձևերի կիրառման դեպքում ևս

ՍԱՍՈՒՆԱ

(ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ա. ԳԼՈՒԽ, 364 - 400)

Բ. ԳԼՈՒԽ

10.— ՄԱՀԸ ՆԱՀԱՊԵՏ «ՍԱՍՈՒՆԱ ԿՈՂՄԸ»

Շատուկ ելոյթներ ընդունած ընդհանուր ժողովի մը մէջ, որ տեղի ունեցաւ Ս. Յակոբեան վարժարանի սրահին մէջ, Ս. Պատարագէն անմիջապէս ետք, Ս. Աթոռոյ Տեղապահ Գերշ. Տ. Գարեգին Արք. Յովսէփեան հրաժարական ներկայացուց Ս. Աթոռոյ Հոգեւոր Ժողովի անդամութենէ եւ Ս. Աթոռոյ Ընդհանուր Ներկայացուցչի պաշտօնէն, որ վարեց մինչեւ 1950 թուականի Մայիս 10-ը, երբ Ս. Աթոռոյ Ընդհանուր Ներկայացուցիչ ընտրուեցաւ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Գուշակեան։

Ներկայ էին Ս. Աթոռոյ Հոգեւոր Ժողովի անդամներ՝ Գերշ. Տ. Գարեգին Արք. Յովսէփեան, Գերշ. Տ. Թորգոմ Արք. Գուշակեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Սրուանձտեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Յովհաննիսեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Սարգիսեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Ալթունեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Ղազարեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Ղազիկեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Ղազանճեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Ղազանճեան, Գերշ. Տ. Գարեգին Արք. Ղազանճ

վութեան Խորհուրդին մէջ, ոչինչ ընելով Եգիպտոսի դէմ, Միջին Արեւելքը յանձնած պիտի ըլլայինք Եգիպտոսի դիկտատորին: Գիտակցօրէն մեր աչքերը փակած պիտի ըլլայինք իրականութեան առջեւ, եթէ մոռնայինք թէ Նասր քանիցս յայտնեց իր միտքը, — Իսրայէլը սրբել քարտէսէն եւ անհետացնել արեւմտեան ազդեցութեան վերջին հետքերը Արեւելքի մէջ: Ֆրանսա եւ Անգլիա բացարձակ իրաւունք ունին ամենայն անկախութեամբ ձեռք առնելու իրենց անհրաժեշտ համարած կենսական միջոցները ի պաշտպանութիւն իրենց շահերուն: Երկու երկիրները պէտք չունին Մ. Նահանգներու հաւանութեան, այդ պարտականութիւնը կատարելու համար:

× Վիճաբանութիւնները հինգշաբթի օրուան շարունակուեցան: Այս անգամ կատարեալ փոթորիկ մըն էր որ պայթեցաւ եւ ատենապետը հարկադրուեցաւ ընդհատել նիստը, ինչ որ հազուադէպ է Անգլիոյ մէջ: Վերջին անգամ այսպիսի ընդհատում տեղի ունեցած էր 1936ին: Վարչապետը վճռապէս պատասխանեց բոլոր յարձակումներուն, պնդելով թէ միջամտութիւնը ուրիշ նպատակ չունի եթէ ոչ արգիլել Եգիպտոսի եւ Իսրայէլի միջեւ ծագած թշնամութեան ծաւալումը, դիւրացնել խաղաղութեան վերահաստատումը: Վստահութիւն յայտնուեցաւ 255ի դէմ 324 ձայնով:

«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԿԱԹԻԼԸ»

Գնդ. Նասր Եչ. օր ճառ մը խօսելով յայտարարեց.

— «Պիտի կռուինք գիւղէ գիւղ, վայրէ վայր, մինչեւ որ շահինք յաղթանակը: Պիտի կռուիմ մինչեւ արեանս վերջին կաթիլը, ապահովելու համար Եգիպտոսի անկախութիւնը: Ամէն մէկդ զինուոր էք: Զէնքեր բաժնուած են ամէն անոնց որ կրնան գործածել: Պիտի կռուինք դաժանօրէն: Երբեք տեղի պիտի չտանք: Մեր բանակին գլխաւոր ուժերը պիտի մտնեն Նեղոսի Տէլթան եւ Ջրանցքի շրջանը, դիմադրելու համար անգլեւֆրանսական յարձակումը:

× Եգիպտոսի ներքին գործերու նախարարութիւնը հրամայեց 18 տարեկանէն վեր բոլոր Անգլիացիներուն եւ Ֆրանսացիներուն իրենց Թաղին ոստիկանատունը ներկայանալ երեք օրէն, յայտնելու համար իրենց զբաղումը, հասցէն եւ մտադրութիւնները: Նոյն հրամանը տրուեցաւ այն Անգլիացիներուն եւ Ֆրանսացիներու որոնք եգիպտական հպատակ եղած են:

ԱԶԳԱԺՈՂՈՎԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՆԳԼԻԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱՆ

Միացեալ Ազգերու ընդհ. ժողովը արտակարգ նիստ գումարեց Եչ. օր: Ֆրանսական պատուիրակը վերապահութիւն յայտնեց նիստին օրինականութեան, հետեւաբար եւ տրուելիք բոլոր որոշումներու մասին: Բայց եւ այնպէս օրակարգը քուէարկուեցաւ 62 ձայնով: Դէմ քուէարկեցին Ֆրանսա եւ Անգլիա: Ձեռնպահ մնացին Թուրքիա, Նոր Զելանտա, Աւստրալիա, Պելժիա, Փորթուկալ, Հարաւ. Ափրիկէ եւ Իսրայէլ: Հինգ պետութիւններ չմասնակցեցան քուէարկութեան: Օրակարգն էր. — «Պաղեստինի հարցը: Միջոցներ ձեռք առնել անմիջապէս դադրեցնելու համար Իսրայէլի զինուորական գործողութիւնը Եգիպտոսի մէջ»:

Առաջին անգամ խօսք առաւ Եգիպտոսի ներկայացուցիչը, Օմէր Լութֆի, որ յայտարարեց թէ Իսրայէլ զինուորական ծանր նախայարձակում մը կատարած է եւ ամբաստանեց Ֆրանսան ու Անգլիան իբրեւ մեղսակից: Ըսաւ թէ բրիտանական եւ ֆրանսական կառավարութիւնները շատ լաւ գիտէին որ Եգիպտոս չէր կրնար ընդունիլ իրենց վերջնագիրը:

Մեծն Բրիտանիոյ ներկայացուցիչը բացատրեց թէ Ֆրանսա եւ Անգլիա արմատական միջոցներ ձեռք առին, վասն զի գիտէին որ մեծ կռիւ մը պիտի պայթի Եգիպտոսի եւ Իսրայէլի միջեւ, կռիւ մը որ կրնար ընդհանուր պատերազմի մը յանգիլ Միջին Արեւելքի մէջ:

Միջին Արեւելքի դէպքերուն պատասխանատու համարելով Խ. Միութիւնը՝ բաղդատեց «ֆրանքեւանգլիական ոստիկանական գործողութիւնը եւ խորհրդային ուժերուն յարձակողական արարքը Հունգարիոյ մէջ:

Մ. Նահանգներու արտաքին նախարարը, Տըլըս մեղադրանքներ ուղղելով Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ եւ քննադատելով Եգիպտոսի կարգ մը արարքները, պահանջեց դադրեցնել զինուորական միջամտութիւնը:

Ընդհ. ժողովը երէկ առտու քուէարկեց ամերիկեան բանաձեւը, 64 ձայնով ընդդէմ հինգի (Անգլիա, Ֆրանսա, Իսրայէլ, Նոր Զելանտա եւ Աւստրալիա): Վեց երկիրներ ձեռնպահ մնացին:

Բանաձեւը կը պահանջէ «անմիջապէս դադրեցնել կրակը» եւ նոր մտահոգութիւն կը յայտնէ անգլեւֆրանսական միջամտութեան համար:

Քուէարկութենէն վերջ Իտալիոյ ներկայացուցիչը առաջարկեց օրակարգ անցընել Հունգարիոյ խնդիրը:

ՌՈՒՍԵՐԸ ՆՈՐԷՆ ՓԵՇԹԱ ՄՏԱՆ ՄԵԾ ՈՒԺԵՐՈՎ

Հունգարիան հազիւ շունչ առնել սկսած էր, եւ ահա նոր եւ բիրտ անակնկալ մը, — վարչապետ Նակի, որ միեւնոյն ատեն կը վարէ արտաքին գործերու նախարարութիւնը, իր մօտ հրաւիրելով խորհրդային դեսպանը, ցաւով յայտնեց թէ ռուսական նոր ուժեր անցած են սահմանագլուխը: Պահանջեց անմիջապէս ետ կանչել զանոնք, չեղեալ նկատեց Վարշաւայի դաշինքը եւ յայտարարեց թէ Հունգարիա չէզոք պիտի մնայ: Այս առթիւ Զօրս Մեծերու օգնութիւնը խնդրեց երկրին պաշտպանութեան համար: Դեսպանը խոստացաւ իր պատասխանը հաղորդել կարելի եղածին չափ շուտ: Վարչապետը իր մօտ հրաւիրեց բոլոր դեսպանները եւ ըսաւ թէ հեռագիրներ ուղղած է Ազգաժողովին, խնդրելով անմիջապէս նիստի հրաւիրել Ապահովութեան Խորհուրդը եւ փրկել Հունգարիոյ չէզոքութիւնը:

Վերջին լուրերու համաձայն, բուռն հրացանաձգութիւն մը տեղի կ'ունենայ Փեշթայի մէջ:

Ռուսական զօրքը գրաւած է մայրաքաղաքին ռազմագիտական կէտերը: Ռուսական հրասայլեր պաշարած են Փեշթայի օդակայանը: Ռուսական ուժերը Հունգարիա մտած են Ուկրայնայէն, Ռումանիայէն եւ Չեխոսլովաքիայէն: Բոլոր ճամբաները «ողողուած են» ռուս զինուորներով: Այս նոր կացութիւնը բուռն զայրոյթ պատճառած է ժողովուրդին, մանաւանդ որ Խ. Միութիւնը խոստացած էր նոր ուժեր չղրկել Հունգարիա: Ա. Միկոյեան եւ Սուսլով հաստատած էին այս խոստումը, երբ Փեշթա կը գտնուէին Դշ. օր: Պ. Նակի բողոքեց ուժգնօրէն:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Անգլ. հրամանատարութիւնը կը ծանուցանէ թէ վար առնուած են 50 եգիպտական օդանաւեր, 40 հատ ալ վնասուած են, իսկ Թորփիլահալած մը հրկիզուած է: Իսրայէլի վերջին զեկոյցին համաձայն, բանակը գրաւած է Սինայի Թերակղզին եւ Կազան:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Մարսէյլի Շրջ. կոմիտէի եւ մասնակցութեամբ շրջանի ենթակոմիտէներու եւ խումբերու Նոր Սերունդին եւ Կապոյտ Խաչի:

Այս Շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս:

SALONS DE L'ALHAMBRA, 340 Bld. Chave

Բարձր հովանաւորութեամբ Նախարար, երեսփոխան, Մարսէյլի քաղաքապետ

GASTON DEFERRE-ի

Խօսք կ'առնեն

FRANCIS LEENHARD et JEAN MASSE

Կը նախագահէ՝ Ընկ. ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆ

Կը խօսին

Ամերիկայէն նոր ժամանած ԸՆԿ. ԿՈՊԵՌՆԻԿ ԹԱՆՏՐՃԵԱՆ ԵՒ ՅՈՎԻԿ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Երգ՝ Օր. ԱՍՏՂԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. կոմիտէին եւ մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Դրօ» մասնաճիւղին:

Այս կիրակի երեկոյեան ժամը 9ին, Հ. Յ. Դ. Տան մէջ:

Պիտի խօսի ընկ. ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ:

Գեղարուեստական ճոխ բաժին, դպրոցին աշակերտներուն եւ Նոր Սերունդին կողմէ:

Կը հրաւիրուին բոլորդ անխտիր:

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Կազմակերպուած Հ. Յ. Դ. Կոմիտէի կողմէ, մասնակցութեամբ Նոր Սերունդի եւ Սանուհիներու: Այս կիրակի ժամը 15.30ին: Թէատր Մինիսիփալի շքեղ սրահին մէջ:

Կը խօսի Փարիզէն Խ. ՄԿՐՏԻՉԵԱՆ:

Գեղարուեստական ճոխ բաժին Հ. Յ. Դ. Նոր Սերունդի կողմէ: Շատէն սիրայօժար իրենց մասնակցութիւնը կը բերեն Պալեան քոյրեր եւ երիտասարդ ջութակահար Կ. Պէպիրեան:

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վարանդեան կոմիտէի, մասնակցութեամբ Ֆ. Կապ. Խաչի եւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Սիամանթօ խումբի:

Այս շաբաթ, ժամը 20.30ին, Գ. Թաղապետարանի մէջ:

Կը նախագահէ Ընկ. ՍԻՍԱԿ ՍԻՍԼԵԱՆ

Կը խօսին Ընկերներ ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ եւ ՆՇԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Գեղարուեստական ճոխ բաժին: Կ'արտասանեն.— Պ. Պ. Պետրոս Թուրքեան եւ Լեւոն Ճոլաքեան: Պիտի երգեն Օր. Լուիզ Հաքէլեան, Պ. Պ. Պետրոսեան եւ ֆրանսացի ծանօթ արուեստագէտներ Օր. Տընիզ Քլէման, Պ. Ժագ Թիսօ Պ. Փօլ Քուէֆէ:

Մուտքը ազատ է:

« ՏԱՍԸ ՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ »

Գունաւոր ժապաւէն, պատրաստուած Վեր. Յ. Հէլվաճեանէ:

Լիոն, այս կիրակի ժամը 20.30ին, Հայ Աւետ. եկեղեցւոյ սրահը, ռիւ Էթիէն Տէբիւէլ:

Տէսին, այս երկուշաբթի, Աւետ. Եկեղեցւոյ սրահը, 7 ռիւ Ուիլսոն:

Փօն տը Շէրի, այդ երեքշաբթի, ժամը 20.30ին, Պ. Աչառեանի սրահը:

Վեր. Յ. Հէլվաճեան պիտի պատմէ իր տպաւորութիւնները:

Ծախքերու մասնակցութիւն:

ՊԱՐԱՆՑԻԿ – ՑԵՐԵԿՈՅԹ

Այս կիրակի օր ժամը 16էն 23, Ազգ. Տան սրահը (32 ռիւ տը Թրէվիզ), կազմակերպուած Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Արնուվիլլի մասնաճիւղին կողմէ:

Լ Ս Ա Ր Ա Ն

Նախագահութեամբ Տիկին ԲԻՒԶԱՆԴԻ

Այս շաբաթ, ժամը 21ին, Քաղէ սրճարանի վերնայարկը:

Պիտի խօսի ՏՈՔԹ. ԱՐԱՄ ՃԻՆՃԵԱՆ:

Նիւթ ունենալով՝ Ուխտագնացութիւն դէպի Վենետիկ, եւ անոր նշանակութիւնը հայկական տեսակէտով:

Բանախօսութենէն վերջ պիտի ներկայացուին յիշատակի նկարներ, մոգական լապտերով: Մուտքը ազատ է:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԻԹԱԼԻ.— Հ. Յ. Դ. Աղբիւր Սերոբ եւ Մ. Եօթնեղբայրեան խումբի ընդհ. ժողովը այս շաբաթ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին: Բոլորին ներկայութիւնը պարտաւորիչ:

ԱՆԻԷՌ ՊՈՒԱ ՔՈԼՈՄԲ.— Հ. Յ. Դ. Արամ ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր շրջանի ընկերները այս կիրակի ժամը 21ին, ծանօթ հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ԴԷՊԻ ՓԷՐ ԼԱՇԷԶ

Հ. Յ. Դ. Պէլվիլի «Ռոստոմ» խումբը այս տար իեւս այց մը կազմակերպած է դէպի Փէռ Լաշէզի գերեզմանատունը, Ահարոնեանի, Ռուբէնի, Խատիսեանի, ազգ. հերոս Անդրանիկի, ինչպէս նաեւ ազգային գործիչներ Գրիգոր Օտեանի եւ Տիգրան Բէկզատեանի դամբարանները:

Այս կիրակի, կէս օրէ վերջ ժամը ճիշդ 3ին: Ժամը 4էն 6, այցելութենէն վերջ թէյասեղան մը, Խտիւի ծանօթ սրճարանին սրահը, ուր պիտի ըլլան յարգանքի արտայայտութիւններ:

Թէյասեղանի համար ծախքերու մասնակցութիւն: Կը հրաւիրուին փարիզեան շրջանի ընկերները եւ հայրենակիցները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Տաճատ եւ Վրոյր Շալճեան եղբայրներ եւ պարագաները կը ծանուցանեն թէ՝ այս կիրակի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Պոմոնի Ս. Գր. Լուս. եկեղեցւոյ մէջ, իրենց նորոգ հանգուցեալ բարեհամբաւ հօր՝

Պ. ՂԵՒՈՆԴ ՇԱԼՃԵԱՆի

համար, անոր մահուան քառասունքին առթիւ: Ուստի, հանգուցեալին յիշատակը յարգող բարեկամներ եւ հայրենակիցներ կը հրաւիրուին ներկայ ըլլալ առաւօտեան ժամը 10ին, Պոմոնի եկեղեցին:

ԽՆՋՈՅՔ

« Սեբաստիոյ Մուրատ Ուսումնասիրաց Միութեան ցերեկոյթ – խնջոյքը տեղի կ'ունենայ այս կիրակի Խրիմեան վարժարանի սրահը, 2 ռիւ տը լա Տէֆանս, Իսի լէ Մուլինօ, ժամը 4.30էն մինչեւ 10:

Գեղարուեստական բաժին, Ա. մաս. — Ծիծաղաշարժ զաւեշտ, մէկ արար, ղեկավարութեամբ Մ. Շիրվանեանի եւ Պալեանի:

Բ. մաս.— Նուագ, երգ եւ արտասանութիւններ:

Կը հրաւիրուին բոլոր հայրենակիցները եւ համակիրները:

Առատ պիւֆէ Մուտքը ազատ է

ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կազմակերպուած Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Սիամանթօ» խումբին կողմէ, ի նպաստ «Հայաստան» ամսաթերթին:

Այս կիրակի ժամը 15էն 24, Յոյներու սրահին մէջ, 5 ռիւ Պօնըֆուա:

Հաճելի ժամանց, առատ կերուխում, սիրով կը հրաւիրուին երիտասարդները եւ ծնողները:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Մէկ կամ երկու սենեակ խոհանոցով, Փարիզի արուարձաններուն մէջ, (Իսի լէ Մուլինօ եւն.): Դիմել

Sarafian, 6 Rue Magenta
Asnières (Seine)

Կ'ՈՒԶՈՒԻ

Կօշիկի կաղապարի վրայ քաշող վարժ գործաւոր մը (մօնթէօր ա լա փուէնթ): Տեւական գործ: Դիմել՝

Chaussures KARENE
57 Rue des Couronnes, Paris (20e)

ԴՊՐՈՑՆԵՐ

2, Rue de la Pépinière
PARIS
24, Rue du 22 Novembre
STRASBOURG
58, Av. de la Victoire - NICE

FAX

ԿԵՆԴԱՆԻ ԼԵԶՈՒՆԵՐ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵՔԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ, ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՔՆՆՈՒԹԵԱՆՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Նոր դասընթացք, 22 Հոկտեմբերէն մինչեւ 15 Նոյեմբեր:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութներ, տարեկան 3000 ֆր․, վեցամս․ 1600
Արտասահման՝ տարեկ․ 3500 ֆր․ կամ $10 : Հատը 12 ֆր․

ԿԻՐԱԿԻ 4 ՆՈՅԵՄԲԵՐ
DIMANCHE 4 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7723 32e ANNEE

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3534

55 ԱՀԱԶԱՆԳ ՄԻԱՅՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԻՐԱՔԻ ԶՕՐՔԸ ՅՈՐԴԱՆԱՆ ՄՏԱՒ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ ՊԻՏԻ ԳՐԱՒԵՆ ՍՈՒԷԶԸ

Զինուորական գործողութիւնները վճռական կէտի մը հասած են արդէն: Անգլեւֆրանսական ուժերը այժմ կը պատրաստուին զինուոր ցամաք հանելու եւ կը յուսան Սուէզը գրաւել մինչեւ երեքշաբթի : Օդային եւ ծովային գործողութիւնները գրեթէ վերջացած են, ինչպէս կը հաստատէ Ֆրանսայի ազգ․ պաշտպանութեան պաշտօնատան զեկոյցը: Մանրամասնութիւններ կը պակսին ցամաքային գործողութեանց մասին: Վերջին տեղեկութեանց համաձայն, ֆրանսական եւ անգլիական ուժերը Սուէզի ջրանցքը գրաւելէ ետք, պիտի սպասեն, տեսնելու համար թէ ինչ գործնական միջոցներ ձեռք պիտի առնէ Ազգաժողովը, իր ծրագրած «ոստիկանական ուժով», կռիւները դադրեցնելու եւ ջրանցքին ազատ նաւարկութիւնը ապահովելու համար :

Ֆրանսայի արտաքին նախարարը Պ․ Քրիստ․ Փինօ, Լոնտոն գնաց նորէն, խորհրդակցելու համար բրիտանական կառավարութեան հետ, Ազգաժողովին կողմէ տրուած վճռին առթիւ : Անդին, զինուորական իշխանութիւնը պատրաստութիւններ կը տեսնէ, հաղորդակցութիւնները խզելու եւ գրաւելի շրջանը չէզոքացնելու համար: Պատրաստութիւնները յառաջ կը տարուին սրընթաց: Բոլոր տեղեկութիւնները կը հաստատեն թէ ոչնչացած է Եգիպտոսի օդանաւային ուժը, մէջն ըլլալով Խ․ Միութեան ճարած արդիական օդանաւերը :

Ֆրանքեւանգլիական օդանաւերը անընդհատ ռմբակոծեցին Գահիրէի ռազմական կէտերը: Միայն ուրբաթ օր ահազանգը հնչեց 55 անգամ: Քաղաքին բնակիչները այլեւս չեն համրեր ահազանգները, որոնք անդադար կը հնչեն :

Եգիպտական զեկոյցը կ'ըսէ թէ վար առնուեցան 14 ֆրանսական եւ անգլիական օդանաւեր, թէ անոնց յարձակումներուն հետեւանքով հարիւր գիւղացիներ սպաննուեցան միայն մէկ արշաւանքի ընթացքին :

Ուրիշ զեկոյց մը կը հաստատէ թէ եգիպտական զինուորները քաշուեցան Սինայի թերակղզիէն, բայց «անձնապաշտութեան ուժերէն» (ֆետայիներ) : «Մեր բոլոր ուժերը ջրանցք վերադարձան, կ'ըսէ զեկոյցը: Այժմ Անգլիացիներուն եւ Ֆրանսացիներուն կը սպասենք Տելթային մէջ :

Ուրբաթի աղօթքէն վերջ, գնդ․ Նասր ճառ մը խօսելով Ալ Ազհարի համալսարանին մէջ, յայտարարեց ․

— Մեր ուժերը կղզիացած չեն այլ եւս: Ի դերեւ ելաւ Անգլիոյ եւ Ֆրանսայի խորամանկ դաւը որ սարքուած էր Իսրայէլի հետ: Եգիպտոս միշտ գերեզման մը եղած է արշաւողներուն համար: Բոլոր կայութիւնները փլած եւ անհետացած են Եգիպտոսի վրայ յարձակած ատեն: Բանակը առողջ է եւ ծանր կորուստներ պատճառած է Իսրայէլի ուժերուն :

ՍԻՆԱՅԻ ՃԱԿԱՏԸ ԽՈՐՏԱԿՈՒԱԾ

Կը հաստատուի թէ խորտակուած է եգիպտական ռազմաճակատը Սինայի անապատին մէջ եւ Իսրայէլի զօրքը յառաջ կը խաղայ դէպի Սուէզ: Կռիւներու ընթացքին Եգիպտացիները մեծ քանակութեամբ զինամթերք եւ մանաւանդ ռուսական հրասայլեր ձգած են որոնք այժմ կ'օգտագործուին Իսրայելացիներու կողմէ: Օդանաւերը կ'օգնեն յառաջխաղացութեան, ծանր կորուստներ պատճառելով : Տանկակներով եգիպտական հրասայլեր ոչնչացած կամ ձեռք անցած են անվթար : Կը կարծուի թէ այսուհետեւ Սինայի անապատը պիտի կազմէ բնական սահմանագլուխը Իսրայէլի եւ Եգիպտոսի միջեւ:

Ուրբաթ առտու ընդհանուր օդարշաւ մը տեղի ունեցաւ ամբողջ Եգիպտոսի վրայ : Մասնաւորապէս զարնուեցաւ արեւմտեան Գահիրէի ամէնէն կարեւոր օդակայանը որ կը գտնուի քաղաքէն 40 քիլոմեթր հեռու, Աղեքսանդրիոյ ճամբուն վրայ եւ որ ամէնէն ծանր ռմբակոծութիւնը կրեց : Լուքսորի օդակայանն ալ զարնուեցաւ : Այստեղ կը գտնուէին ռուսական նորագոյն օդանաւերը :

Զինուորական մասնագէտներ դիտել կու տան թէ անգլիական հրամանատարութիւնը ծայր աստիճան զգուշութեամբ կը գործէ: Իրենց նպատակն է նախ կատաբելապէս տիրապետել ծովուն եւ օդին, ապա ցամաք հանել իրենց զինուորները : Այսպէս, օդանաւային ուժերը խորտակելէ ետք, ձեռնարկեցին ծովերը մաքրելու : Վերջին տեղեկութեանց համաձայն, Խ․ Միութեան կողմէ տրամադրուած երկու թորփիլահալածներ որոնք Զաֆէր եւ Ալ Նասր կոչուած էին, ոչնչացած են, յարձակում կրելով Աղեքսանդրիոյ բացերը, ֆրանսական օդանաւերու կողմէ:

Նոյն աղբիւրին համաձայն, Սինայի թերակղզին բոլորովին մաքրուած է : Իսրայէլի զեկոյցը կ'ըսէ ․ — «Կացայի պահակազօրքը անձնատուր եղաւ »: Ձեռք անցած են աւելի քան հարիւր ռուսական հրասայլեր, Սթալին ևն․: Իսրայէլի զեկոյցին համաձայն եգիպտական բանակին կէսը կը գտնուէր Սինայի շրջանին մէջ :

ՍՈՒՐԻԱ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԵՏ

Կիպրոսի անթելը հետեւեալ ազդարարութիւնն ուղղեց Եգիպտոսի ժողովուրդին, — Մեր մարտանաւերը հրասայլեր եւ թնդանօթներ ցամաք պիտի հանեն : Այժմ վերջացած են օդակայաններու քանդումը եւ ծովային գործողութիւնները ջրանցքին հարաւային եւ հիւսիսային մասերուն մէջ: Ուրեմն շուտով պիտի ձեռնարկուի ջրանցքի շրջանին առժամեայ գրաւման » :

× Արաբական աղբիւրէ կը հաղորդեն թէ Յորդանան եւ Սուրիա որոշած են պատերազմ յայտարարել եւ շուտով իրենց զօրքը պիտի ղրկեն ռազմադաշտ :

× Կազա հասած թղթակիցները կը հեռագրեն թէ քաղաքը ինկաւ Նոյ․ 2ին, առանց կռուելու: Անկումը տեղի ունեցաւ գիշերային թնդանօթաձգութենէ մը ետք, չանթահարիչ արագութեամբ : Իսրայէլի զինուորները քաղաք մտան դրահապատ զօրամասով մը, որ գրաւեց շրջականներն ալ: Քաղաքին անձնատրութիւնը տեղի ունեցաւ կարճ արարողութեամբ մը: Այսպէս Իսրայէլի ձեռքն անցաւ ոչ միայն բուն Կազա քաղաքը, այլեւ ամբողջ ծովեզերքը, որ ունի 25 մղոն երկայնութիւն եւ 5 - 8 մղոն լայնք: Քաղաքին շուկան լեցուած էր հրասայլերով եւ զինուորական կառքերով: Եգիպտացի գերիները փողոցներէն կ'անցնէին իրենց ձեռքերը գլուխներուն վրայ դրած :

Կազա առեւտրական կեդրոն մըն է եւ ունի երեսուն հազար բնակիչ: Փողոցները ամայի էին երբ Իսրայէլի զօրքը ներս մտաւ :

× Առջի օր գրոյց կը շրջէր թէ գնդ․ Նասր հրաժարած է, բայց չհաստատուեցաւ :

× Լոնտոնի իսրայէլեան դեսպանը յայտարարեց թէ «երբեք պիտի չընդունին որ վերահաստատուի զինուորական գործողութենէն առաջ եղած վիճակը » :

× Իրաքեան աղբիւրէ կը հաղորդեն թէ սուրիական զինուորներ մտած են Յորդանան, անոնց հետեւէն ալ՝ իրաքեան ուժեր: Կը կարծուի թէ այս վերջինները շարժած են Անգլիոյ համաձայնութեամբ :

Իսրայէլի անթելն ալ հաղորդեց այս տեղեկութիւնը, առանց մանրամասնութիւններ տալու: Յորդանան գետը կը բաժնէ Սուրիան եւ Իսրայէլը, նաեւ իսրայէլեան Պաղեստինը՝ յորդանանեան Պաղեստինէն :

Սուրիոյ վարչապետը ձայնասփիւռ ճառ մը խօսելով յայտարարեց թէ «վճռած են Եգիպտոսի հետ ըլլալ մինչեւ ծայրը եւ բաժնել անոր ճակատագիրը»: Վարչապետը այս առթիւ դատապարտեց ֆրանքեւանգլիական յարձակումը, «իբրեւ դաշոյն մը միջազգային արժէքներու եւ յարաբերութեանց դէմ»: Այս յարձակումը ծանր փորձի մը կ'ենթարկէ աշխարհի խղճմտանքը: Սուրիա վճռած է կատարել իր պարտաւորութիւնները Եգիպտոսի հանդէպ, իր զինեալ ուժերը դնելով միացեալ հրամանատարութեան տակ :

Դամասկոսի մէջ ալ ահազանգը հնչեց երեք անգամ :

Յորդանանի խորհրդարանը հաւանութիւն յայտնեց որ Սուրիոյ զօրքը Յորդանան մտնէ: Ապա խզեց իր դիւանագիտական յարաբերութիւնները Ֆրանսայի հետ: Խիստ գաղտնապահութիւն կը տիրէ խորհրդարանին տուած որոշումներու մասին : Կ'ըսուի թէ Յորդանանի բանակին հրահանգուած է կրակ չբանալ Իսրայէլի սահմանին վրայ, մինչեւ որ Եգիպտոս ինք չխնդրէ: Արդէն իսկ սուրիացի սպաներ կ'երեւան Ամմանի փողոցներուն մէջ: Կը հաստատուի թէ Իրաք պիտի օգնէ Յորդանանի եւ իր զինուորները պիտի ծառայեն ընդհ․ հրամանատարութեամբ :

ԵԳԻՊՏՈՍԻ նախարարական խորհուրդը բացառիկ նիստ գումարելով հետեւեալ որոշումները տուաւ ․— 1․ Պաշարման վիճակ հաստատել ամբողջ երկրին մէջ: 2․— Նախագահ Նասրը անուանել զինուորական կառավարիչ Եգիպտոսի, բոլոր բացառիկ իրաւասութիւններով: 3․— Գրաքննութիւն հաստատել :

Միւս կողմէ, արգելքի տակ առնուած են ֆրանսական եւ անգլիական ստացուածքները: Ձերբակալուած են այն 450 անգլիացի մասնագէտները եւ իրենց օգնականները որոնք Սուէզի շրջանը մնացած էին ռազմական հաստատութիւնները վարելու համար: Բոլորն ալ անգլիացի սպաներ են քաղաքային հագուստներով :

× Փարոսները մարած են Իսրայէլի եւ Եգիպտոսի ծովեզերքներուն երկայնքը : Նաւերուն ազդարարուած է հեռանալ Կարմիր ծովուն հիւսիսային կէտէն եւ արեւելեան Միջերկրականէն :

× Քանդուեցաւ «Արաբական Ձայն»ի կայանը որ կը գտնուէր Գահիրէէն 12 քիլոմեթր հեռու: Այլեւս չեն կրնար եգիպտական քարոզութիւններ կատարել Մարոքի, Ալժերիոյ եւ Թունուզի համար :

× Ֆրանսայի ազգային պաշտպանութեան պաշտօնատան բանբերը յայտարարեց․ — Եգիպտոսի օդանաւային ուժը այլ եւս ի վիճակի չէ կռուելու: Ռմբակոծութենէն ի վեր 121 օդանաւեր քանդուած կամ վնասուած են, 16ը «Իլուշին» , 50ը «Միկ» (երկուքն ալ ռուսական) :

ԱՐՇԱՒԱՆՔԻՆ անգլիացի սպարապետը, զօր․ Քայթլի լրագրական ասուլիս մը սարքելով Նիկոսիոյ մէջ, հաստատեց թէ Եգիպտոսի նիւթական ծանրկորուստներ կրած է Դշ․ եւ Եշ․ օրերու ռմբակոծութիւններէն: Ցետոյ բացատրեց ֆրանսական եւ անգլիական կառավարութեանց տուած որոշումներուն իմաստը : «Մենք պարզապէս կ'ուզենք մղել Եգիպտոսը որ ինքնաբերաբար ընդունի ֆրանքեւանգլիական ծրագիրը Սուէզի ջրանցքի հակակշռի մասին, եւ նուազագոյն կորուստով: Եգիպտացիները որքան շուտ հասկնան՝ թէ միջազգային հակակշիռ մը

(Շար․ը կարդալ Դ․ էջ)

ԱՆՍՏՈՅԳ ՎԻՃԱԿ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

●

Փեշթայէն կը հեռագրեն թէ ապստամբները գրաւեցին արտաքին գործերու պաշտօնատունը: Միւս կողմէ, ռուսական ուժերը կը շարունակեն կասկածելի շարժումներ կատարել: Անոնք պաշարած են Փեշթան եւ կը պատրաստուին պաշարել նաեւ յեղափոխութեան օրրանը, Կիյոր :

Ապստամբները արտաքին գործերու պաշտօնատունը մտնելով, ահուղողի մատնեցին պաշտօնեաները: Իրենց հրամանատարն է Եոզէֆ Տուտաս, Թունդ. հակառուս :

Ապստամբները չարչարանքի սենեակ մը գտած են Փեշթայի մէկ արուարձանին մէջ, յատկապէս կազմակերպուած :

Կարդինալ Մինդենթի եւ վարչապետը ստիպողական կոչեր ուղղեցին Ազգաժողովին, օգնութիւն խնդրելով: Վարչապետը կը մտածէ Նիւ Եորք երթալ, անձնապէս պարզելու համար կացութիւնը :

Վերջին լուրերու համաձայն, Փեշթան միջնաբերդի մը վերածուած է, պատրաստ՝ Ռուսերուն դիմադրելու մինչեւ կատարեալ կործանում :

Ապահովութեան Խորհուրդը արտակարգ նիստի հրաւիրուեցաւ, քննելու համար Հունգարիոյ խնդիրը : Մ․ Նահանգներու արտաքին նախարարը յոյս յայտնեց թէ հունգարական խնդիրը պիտի քննուի ստիպողաբար: Այս առթիւ ըսաւ թէ քաջալերական լուրեր կը ստանան ռուսական զօրքի մեկնումին առթիւ, բայց նաեւ վրդովիչ տեղեկութիւններ՝ անոնց վերադարձի մասին :

× Մոսկուայի հեռագրական գործակալութիւնը կը ծանուցանէ թէ «յետադիմականները դեռեւն կը չահին Հունգարիոյ մէջ եւ վայրագօրէն կը սպաննեն համայնավարները :

× Փոխ — վարչապետը Ա․ Միկոյեան Փեշթա գնաց նորէն, մասնաւոր պաշտօնով :

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Իսրայէլի հրամանատարութիւնը կը ծանուցանէ թէ հարիւր եգիպտական հրասայլեր եւ հինգ հարիւր թնդանօթներ ոչնչացուցած են Սինայի ռազմադաշտին վրայ: Գերի բռնած են 15,000 զինուորներ, այսինքն Եգիպտոսի բանակին մէկ երրորդը: Այս յաղթանակին շնորհիւ, Իսրայէլի սպարապետը կը յուսայ թէ բանակին մեծ մասը այլուր փոխադրել, դիմադրելու համար հիւսիսէն եւ արեւելքէն սպառնացող վտանգին (Սուրիա եւ Յորդանան) :

Գնդ․ Նասր հինգ նաւեր ընկղմել տուած է Սուէզի ջրանցքին մէջ, անցքը փակելու համար :

× Ասիական եւ ափրիկեան պետութիւնները կը պահանջեն նորէն նիստի հրաւիրել Ազգաժողովը, պատիժներ տնօրինելու համար Ֆրանսայի, Անգլիոյ եւ Իսրայէլի դէմ :

× Ապահովութեան Խորհուրդը միաձայնութեամբ որոշեց՝ օրակարգ անցընել Հունգարիոյ խնդիրը, հակառակ Մոսկուայի ընդդիմութեան: Անհամբեր կը սպասուի Խ․ Միութեան որոշումին՝ զօրքերը քաշելու մասին: Հակառուս ցոյցերը կը ծաւալին Հունգարիոյ եւ Լեհաստանի մէջ: Ռումանիոյ մէջ ալ խլրտումներ կը նշմարուին :

× Կաթի տագնապը վերսկսաւ Փարիզի մէջ, նոր գործադուլի մը հետեւանքով :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱՐՈՔԻ կառավարութիւնը բացառիկ միջոցներ ձեռք առաւ, բարեկարգութիւնը պահպանելու համար :

ՊԱՊԸ կոչ մը ուղղեց, Միջին Արեւելքի պատերազմը դադրեցնելու համար :

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹԻՒՆԸ

(ՂԵՎՈՆԴԵԱՆՑ)

Ընդհանուր դատ - դատ մը ամբողջ տասնամեակ մը տեւեցաւ, մինչեւ որ Լիբանանի ժողովուրդը, իր ազգային գիտակցութեան ամբողջ ուժգնութեամբ, կարենայ ստանձնել իր ճակատագրին տիրանալու պատասխանատուութիւնը։ Ինչո՞ւ մենք կը հետաքրքրուինք այդ դատով։ Ինչո՞ւ մեր ուշադրութիւնը կ՚ուղղենք դէպի Լիբանան։ Որովհետեւ մենք ալ մեր ազգային դատը ունինք, որ ոչ միայն մեր ներկան, այլ նաեւ մեր ապագան կը ներառնէ։ Մենք ալ մեր ազգային ինքնութեան համար կռիւ մղած ենք, մղած ենք ու պիտի շարունակենք մղել, մինչեւ որ մեր ազգային ինքնութիւնը ամրապնդուի, ամբողջանայ, ինքնուրոյն ուղիներով ընթանայ։ Մենք ալ մեր ազգային դատը ունինք, որ ոչ միայն մեր ներկան, այլ նաեւ մեր ապագան կը ներառնէ։ Մենք ալ մեր ազգային ինքնութեան համար կռիւ մղած ենք, մղած ենք ու պիտի շարունակենք մղել, մինչեւ որ մեր ազգային ինքնութիւնը ամրապնդուի, ամբողջանայ, ինքնուրոյն ուղիներով ընթանայ։

Ահա թէ ձեզի մեր երկիրն է, ու երկար ժամանակ մեր ձեռքը ինչպէս ուզեց, այնպէս ալ ձգեց։ Ինչո՞ւ։ Որովհետեւ մենք ալ ձեզի պէս ենք, ու ձեզի պէս ալ մեր ներքին կռիւներուն մէջ կը տկարանանք։ Ինչո՞ւ ձեզի պէս ենք։ Որովհետեւ մենք ալ ձեզի պէս ենք։ Ինչո՞ւ ձեզի պէս ենք։ Որովհետեւ մենք ալ ձեզի պէս ենք։ Ինչո՞ւ ձեզի պէս ենք։ Որովհետեւ մենք ալ ձեզի պէս ենք։

Ինչպէս ձեր երկիրն է, ու երկար ժամանակ մեր ձեռքը ինչպէս ուզեց, այնպէս ալ ձգեց։ Ինչո՞ւ

ՍԱՍՈՒՆԻ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲ, 364 - 400)

Ա. ՊԱՐԻՆ

10.— ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ «ՍԱՍՈՒՆԻ ԴԱՎԹԸ»

Դու՞ք, Սասնա մարդիկ, դուք եք այն ազգը, որ ձեր հայրենի հողի համար ձեր կյանքը չէք խնայում, որ ձեր սրտերի արյունով ոռոգեցիք ձեր հայրենի հողը, որ ձեր կյանքի գնով պահեցիք ձեր ազատությունը, ձեր հավատը, ձեր սովորությունները, ձեր լեզուն, ձեր գրականությունը, ձեր ամուսինների, ձեր զավակների, ձեր ծնողների պատիվը, ձեր տան սրբությունը, ձեր ամբողջ ազգային գոյությունը։ Դուք եք, որ ձեր կյանքի գնով ազատեցիք ձեր հայրենիքը օտարների լծից, ձեր հայրենի հողը ոտնակոխ անելուց։ Դուք եք, որ ձեր կյանքի գնով ազատեցիք

առժամապէս անհրաժեշտ է, այնքան նըւազ պիտի ըլլան մարդկային կորուստները եւ նիւթական վնասները : Դաշնակից-ներուն օդարշաւները տեղի կ'ունենան լայն ընդհատումներով, որպէս զի Եգիպ-տացիները կարենան պատսպարան մտնել : Իրենց ապահովութիւնը կախում ունի Դաշնակիցներու պայմաններու ընդունե-լութեան արագութենէն : Դաշնակիցները իրենց տրամադրութեան տակ ունին մեծ ուժեր որոնք կրնան շատ խիստ հարուած-ներ տալ : Կը յուսամ թէ զանոնք գործա-ծելու պէտք պիտի չունենանք : Եգիպտոս ալ պէտք է յուսայ որ պատերազմի վտանգը անհետանայ կարելի եղածին չափ շուտ» :

ՎԱՐՁԱՊԵՏԸ, կի Մոլէ հետեւեալ յայ-տարարութիւնն ըրաւ պատերազմի սրբ՛-րու միջազգային պատուիրակութեան մը.

— Վերջին ժամանակներս տրուած բո-լոր որոշումներուն մէջ մէկ վայրկեան իսկ չմոռցայ թէ ես ալ պատերազմի սրբ մըն եմ : Մեր հայրերը ռազմադաշտին վրայ ինկան միեւնոյն դատին համար, ո՛րն ալ ըլլայ իրենց երկիրը, խաղաղութեան հա-մար, բայց ոչ թէ որեւէ խաղաղութեան համար : Խաղաղութիւնը արժէք ունի մի-այն ազատութեամբ եւ մարդկային ար-ժանաւորութեամբ : Մեր հայրերը մեզի իբրեւ պատգամ ձգեցին թէ աւելի լաւ է մեռնիլ քան ընդունիլ ստրկութիւնը եւ նուաստացումը : Այս ոգիով է որ տուի վերջին օրերու բոլոր որոշումները : Հրա-մայած եմ ամէն բան ընել եւ ամէն զգու-շութիւն ձեռք առնել որպէս զի կարելի ե-ղածին չափ քիչ ըլլայ մարդկային կո-րուստը, նոյնիսկ հակառակորդին մօտ :

«ԱԽԱԶԱԿՈՒԹԻՒՆ»

Մոսկուայի պելժիական դեսպանատան մէջ սարքուած ընդունելութեան մը առ-թիւ, Պելժիոյ արտաքին նախարարը, Պ. Սփաք, ըսաւ թէ իր կարծիքովպէտք էմի-եւնոյն ատեն լուծել Սուէզի խնդիրը եւ զինուորական գործողութեանց դադար-ման հարցը : Իր ռուս պաշտօնակիցը, Շե-պիլով բացարձակապէս մերժեց այս թե-լադրութիւնը, պահանջելով ամէնէն ա-ռաջ դադրեցնել կրակը : «Եգիպտոսի դէմ կատարուած յարձակումը ապահովաբար սրբազան պատերազմի մը պիտի մղէ ա-րաբ ժողովուրդները : Ահա թէ ինչո՛ւ վը-տանգաւոր է» : Շեպիլով «աւազակու-թիւն» կոչեց Եգիպտոսի դէմ կատարուած զինուորական գործողութիւնը :

Երկու նախարարներուն խօսակցու-թեանց խառնուեցաւ Խ. Միութեան փոխ-վարչապետը, Քականովիչ : Սփաք միշտ կը պնդէր թէ անհրաժեշտ է նախ լուծել հիմնական խնդիրը (Սուէզ) : Շեպիլով պատասխանեց.— «Կարելի չէ վիճաբանիլ երբ ռումբերը կ'իյնան Գահիրէի վրայ» : Յետոյ բացատրեց թէ «կացութիւնը ծայր աստիճան ծանր է եւ դէպքերը կրնան շատ հեռուները քշել մեզ» :

× Թուրքիոյ հանրապետութեան նա-խագահը, Ճելալ Պայար, ճառ մը խօսելով Ազգ. ժողովին վերաբացման առթիւ, անուղղակի ակնարկեց Փրանքեւանգլիա-կան գործողութեանց, առանց որեւէ մե-ղադրանք յայտնելու Անգլիոյ կամ Ֆրան-սայի դէմ : Իր խօսքերէն կը հետեւի թէ Միջին Արեւելքի կացութեան ծանրաց-ման համար պատասխանատու կը նկատէ Խ. Միութիւնը, Իսրայէլը և գնդ. Նասըրը :

× Ֆրանսայի համայնավար կուսակցու-թեան Կեդր. Կոմիտէն բացառիկ նիստ գումարելով, բանաձեւ մը քուէարկեց, հետեւեալ բովանդակութեամբ.— Երկրին շահը եւ խաղաղութեան դատը կը պա-հանջեն զատապարտել նախայարձակու-մը, անմիջապէս դադրեցնել Եգիպտոսի դէմ սարքուած պատերազմը, Ֆրանսա վերադարձնել արշաւազօրքը եւ բանակ-ցութիւններով լուծել Սուէզի խնդիրը :

× Յունական կառավարութիւնն ալ դա-տապարտելի կը գտնէ Իսրայէլը, Ֆրան-սան եւ Անգլիան, իբրեւ նախայարձակ : Միւս կողմէ կ'ըսուի թէ Աթէնքի խորհր-դային դեսպանը արտօնութիւն պիտի խնդրէ որ Եգիպտոսի յատկացուած ռու-սական օդանաւերը Յունաստանէն անց-նին : Իրազեկներ կ'ըսեն թէ կառավարու-թիւնը պիտի մերժէ :

× Մարսէյլէն 842 հրեայ կամաւորներ հասան Նափոլի, Իսրայէլի բանակին միա-նալու համար : Փոխադրանաւը արժան-թինեան ըլլալով, կը սպասէ արտօնու-թեան, ճամբան շարունակելու համար :

ԱԹԷՆՔԷՆ կը հեռագրեն թէ երկրաշար-ժի զօրաւոր ցնցում մը զգացուեցաւ Վո-լոյի մէջ, քանդելով քանի մը տուներ եւ ելեկտրական զօրաւոր կայան մը :

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Կիրակի, 11 Նոյեմբեր, ժամը 14ին, Հայ Կաթողիկէ սրահին մէջ, (ռիւ տը լա Պռօս) : Նախաձեռնութեամբ Սէն Շամոնի Հ. Յ. Դ. «Վարուժան» եւ Սէնթ Էթիէնի «Անտոք» կոմիտէներուն, մասնակցու-թեամբ Նոր Սերունդի երկու խումբերուն :

Կը նախագահէ ընկ. Ս. ԸՆՏՐԻԿԵԱՆ

Կը խօսի ընկ. Մ. ՄԻՐՋԷ

Գեղարուեստական խնամուած բաժին :

Ճոխ պիւֆէ Մուտք ազատ է

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱՍՓԻՒՌ ՊԱՏԱՐԱԳ

Այսօր կիրակի, առաւօտեան ժամը 10-ին (ֆրանսական ժամ) Վատիկանեան կա-յանը հայկական Ս. պատարագ պիտի ձայնասփռէ հետեւեալ կարճ ալիքներուն վրայ. 19,84, 25,67, 31·10, 41·21 :

Երգեցողութիւնը պիտի կատարէ Հռո-մի համայնքին երգչախումբը :

Այս տարեշրջանիս, նոյն յայտագրով ուրիշ ձայնասփռումներ եւս տեղի պիտի ունենան Յունուարի, Մարտի եւ Մայիսի առաջին կիրակիներուն :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՇԱԽԻԼ.— Եկեղեցւոյ շինութեան յանձ-նախումբը շնորհակալութեամբ ստացած է երկու հազար Ֆր. Տէր եւ Տիկին Մեր-կեր Առաքելեանէ, փոխան ծաղկեփունջի, օր. Ֆիլոր Զիվիչեանի եւ Պ. Արթիւր Էմէճեանի նշանախօսութեան առթիւ :

ՆՈՒԷՐՆԵՐ

Շաթուէն իր բարենպատակ նուէրներով ծանօթ ազատուհին մէկ տուփ շաքար կը նուիրէ Ֆր. Կ. Խաչի մանուկներուն, 500 Ֆր. Նոր Սերունդին, 500 Ֆր. ալ «Յա-ռաջ»ի բարգաւաճման համար :

(FESTIVAL)

ԵՐԳԱՊՆԱԿՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՆԱԾ Է

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆԻ

«Զանազան ժամանակներու եւ զանազան երկիրներու» ծիսական երաժշտութեան նուիրուած երգապնակները (միքրօսիյօն) :

Լիտիա Կարինի գօնթր-ալթօ հարուստ ձայնին կ'ընկերանան «Մարթինօ»ի ալիք-ները, ինչպէս նաեւ հարուածային երա-ժշտական գործիքները (բերգիւսիոն), ո-րոնք կը ստեղծեն երաժշտական դիւթիչ մթնոլորտ մը :

Այս երգապնակով երաժշտական հաճելի պտոյտ մը կը կատարէք հինաւուրց Արե-ւելքը (Հայաստան, Սուրիա, Արաբիա, Բաբելոն, Հնդկաստան, Հասարակածային Ափրիկէն, Միջին դարու Ֆրանսան եւ Ս-պանիա, հին Աթէնքը, Կելտերու երկիրը (Սկովտիա) եւ վերջապէս Պրազիլիա եւ Հարաւային Ամերիկա :

Փափաքողները կրնան իրենց ապսպրանք-ները ուղղել երգապնակի բոլոր վաճա-ռատուները հետեւեալ ըէֆէրանսով.

DISQUES FESTIVAL «MUSIQUE RITUELLE»
ATRAVERS TEMPS ET PAYS - F. L. D. 88

ՎԵՐԱՄՈՒՏ

Վերաբացուած է Համազգայինի Մարսէյլ քաղաքի դպրոցը :

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան չորեքշաբթի իրիկունները՝ ժամը 7էն ըս-կսեալ, ֆրանսական համալսարանի սրա-հին մէջ :

Հին եւ նոր աշակերտներու եւ աշակեր-տուհիներու արձանագրութեանց համար չորեքշաբթի իրիկուններ՝ ժամը 6-7 : Դի-մել ուսուցիչ Պ. Ազգին Մարտիրոսեանի, դասաւանդութեանց վայրին մէջ :

Կ'ՈՒԶՈՒԻ

Կօշիկը կաղապարի վրայ քաշող վարժ գործաւոր մը (մօնթէօր ա լա փուէնթ) : Տեւական գործ : Դիմել՝

Chaussures KARENE
57 Rue des Couronnes, Paris (20e)

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Էլմասեան եղբօրդութիւնը իր այլազան պուպրիկներու հաւաքածոյով կը մաս-նակցի 9րդ Սալօն տը լ'Անֆանս տը լա Ժէօնէս է տը լա Ֆամիյ ցուցահանդէսին, Կրան Փալէի մէջ Նոյ. 1 - 18 :

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅ—ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Թիւ 175 - 176 (Յուլիս – օգոստոս), ճոխ բովանդակութեամբ.—

Երգարան... Բժշկարան (Շ. Նարդու-նի).— Մատ կը ծծեն, յետոյ.. կը ծխեն. — Ասփիրինով... անձնասպանութիւն.— Անակնկալ մահերը (Տոքթ. Լ. Գրիգոր-եան).— Ուսելիքները (Տոքթ. Գալուստ-եան).— Մանկութիւն եւ բանաստեղծու-թիւն.— Ֆրանկախտը (Տոքթ. Պ. Մի-սաքեան).— Որովայնային ժանտատենդ (Տոքթ. Ղազարեան).— Զաւակ չունենա-լու համար.— Ինչո՞ւ չեմ քնանար (Տոքթ. Լէվէֆ).— Նիհարնալու համար.— Խլիր-դը (քանսէր) կիներուն վրայ (Տոքթ. Ալ-թունեան).— Դաշտանը լեռներուն վրայ. — Ոտանաւոր բառարան.—Տօքթէօր, զա-ւակ կ'ուզեմ (Մեծ Հայրիկ).— Կատա-ղութիւնը (Տոքթ. Ա. Պօղոսեան).— Ին-չո՞ւ կը փնտռտաք (Տոքթ. Օնատ).— Ա-ղիքներու թշուառութիւն (Տոքթ. Շ. Այ-վազեան) :

Տարեկան բաժնեգինը հազար ֆրանք Ֆրանսա, 1200 ֆրանք արտասահման : Հատով չի ծախուիր : Դիմել Շ. Նարդու-նի, 32 ռիւ տը Թրէվիզ, Փարիզ :

Օր. ԱՆԺԵԼ ՊՕՅԱՃԵԱՆ
Պ. ՄԻՀՐԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ
Ամուսնացած

27 Հոկտ. 1956
Կնքահայրութեամբ Պ. Ժաք Կէօզիւմեանի

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆՋՈՅՔ

Կազմակերպուած Թոքատի Հայր. Մի-ութեան կողմէ : Կիրակի, 11 Նոյեմբեր, կէս օրէ վերջ ժամը 3ին, 45 ռիւ տը լա Տէֆանս սրճարանի սրահը, Իսի լէ Մու-լինօ :

Գեղարուեստական բաժնին կը մասնակ-ցին տիկիններ Ֆէսլեան, Գալայճեան, Տարօն քոյրեր, Գարակէօզեան, Յակոբ-եան եւայլն :

Հայկական, կովկասեան եւ հունգա-րական պարեր եւ զանազան անակնկալ-ներ : Խօսք պիտի առնեն Ֆրանսահայ Փո-խադարձ օգնութեան միութեան Կեդր. վարչութեան անդամները :

Հասոյթը պիտի յատկացուի Հայաստա-նի Պետական Համալսարանին զրկուելիք գիրքերուն :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Հալէպէն Արմենակ եւ Բերուզ Գասպար-եանի զաւակները, Էսքիշէհիրցի, կը փնտ-ռեն իրենց մօրեղբայրները՝ Երուանդ, Կարապետ եւ մօրաքոյրը՝ Մարի Դանիէլ-եաններ, մօրը անունը Սուլթան, հայրը՝ Յարութիւն : Կը կարծուի թէ Արտաշէսի նա-հանգին Պիւզէ քաղաքը կը գտնուին :

Կը խնդրուի ճանչցողներէն տեղեկացնել հետեւեալ հասցէին Գ. Խոսրովեան, 14 ռիւ Թրաշէլ, Նիս :

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅ. 11, ԺԱՄԸ 18էն 2 SALLE VOLTAIRE, Alfortville

Նախագահութեամբ երեսփոխան եւ նախկին նախարար **E. Depreux**ի
եւ Ալֆորվիլի քաղաքապետ՝ **R. Bleuse**ի

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԿԱԼԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ **Fernand Reynaud**ի
(ԺԱՄԸ ՃԻՇԴ 21ԻՆ)

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ **Jacques HELIAN**

Հաղորդակցութեան միջոց.— Շարանթօն էքօլէն 103 թիւը առնել :

ՀԱՅ ԹԱՏՐՈՆ

U. F. C. F.ի ԹԱՏԵՐԱՍՐԱՀ

21, Rue Yves Toudic PARIS (10e) Métro : République et Bonsergent

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԳԻՇԵՐ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1956, ԺԱՄԸ ՃԻՇԴ 8.45ԻՆ

ԴԵՐԱՍԱՆ **ԳԷՈՐԳ ՏԷՐՎԻՇԵԱՆ**

ԿԸ ԽԱՂԱՅ

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՄԸ

ՏՈՆ ԺՈՒԱՆ

ՄՈԼԻԷՌԻ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ, ՀԻՆԳ ԱՐԱՐ

Կը մասնակցին ՕՐ. ԱԼԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ, Պ.Պ. Ա. ԳՄԲԷԹԵԱՆ, Ն. ՄԱՐԳԱՐԵԱՆ,

Տ. ՆՇԱՆԵԱՆ եւ ուրիշ կարեւոր ուժեր :

ՃԱՇԱՐԱՆ ԵԱՐ

Հիմնադիր-տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

★

Ֆրանսական – հայկական եւ կովկաս-եան ընտիր կերակուրներ

ՇԱՆ ԶԷԼԻԶԷԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՅ

4, Rue Robert - Estienne
(Rue Marbeuf) PARIS (8e)
Téléphone BAL. 31 - 21
(Métro: F. D. Roosevelt)

★

Հաճելի մթնոլորտ

Առաջնակարգ կովկասեան խորոված-ներ, «շաշլիք», «քարսքի»

★

BAR AMERICAIN



LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

HARATCH

ՕՐԱԹԵՐԹ

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ․ասր, տարեկան 3000 ֆր․, վեցամս․ 1600
Արտասահման՝ տարեկ․ 3500 ֆր․ կամ $ 10 : Հատը 12 ֆր․

ԵՐԵՔՇԱԲԹԻ
6
ՆՈՅԵՄԲԵՐ
MARDI
6 NOVEMBRE
1956

32ՐԴ ՏԱՐԻ — Թիւ 7724 32e ANNEE · Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ · ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3535

ՀՈՒՆԳԱՐԻԱՆ ԴԺՈԽՔԻ ՎԵՐԱԾՈՒԵՑԱՒ

ՌՈՒՍԱԿԱՆ ԹՆԴԱՆՕԹՆԵՐՈՎ, ՀՐԱՍԱՅԼԵՐՈՎ ԵՒ ՕԴԱՆԱՒԵՐՈՎ

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸ ՃԶՄԵՑԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՅ

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐ ԱՄԷՆ ԿՈՂՄ․— ԱԶԳԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ ԳԻՇԵՐ ՑՈՐԵԿ․— ՅՈՒՍԱՀԱՏԱԿԱՆ ԿԱՆՉԵՐ ԵՒ ԿԱՏԱՂԻ ԿՌԻՒՆԵՐ․— «ՕԳՆՈՒԹԻ՛ՒՆ, ՕԳՆՈՒԹԻՒՆ»․— ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՋԱԽՋԱԽՈՒԻ ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԵԱՄԲ :

Քանի մը օրուան շարաշուք լռութիւնը եւ ռուսական հրասայլերու, թնդանօթներու եւ զինուորներու խուժումը յանգեցան ահաւոր նախճիրի մը: Մոսկուայի «յեղափոխականները» արեան մէջ խեղդեցին Հունգարիոյ ժողովուրդին ազատագրական շարժումը, աւելի քան հազար հրասայլերով, անհամար թնդանօթներով եւ օդանաւերով, ձերբակալեցին վարչապետը՝ Նակի եւ իր գործակիցները, եւ նոր կառավարութիւն մը կազմեցին թունդ բոլշեւիկներէ, դժոխքի վերածելով Փեշթան եւ ուրիշ քաղաքներ, շաբաթ եւ կիրակի: Այս մոնկոլեան բարբարոսութիւնը ահագին յուզում պատճառեց ամբողջ աշխարհի մէջ, տեղի տալով ուժգին ցոյցերու: Ազգաժողովը նիստ կըգումարէր ցերեկ, բանաձեւեր մշակելով անզօր կատաղութեամբ :

Ահաւասիկ այս արիւնազանգ ողբերգութեան գլխաւոր դէպքերը :—

Ուրբաթ օր ժամը 23·40ին Ապահովութեան Խորհուրդը գումարուեցաւ նախագահութեամբ Իրանի պատուիրակին՝ Էնթեզամի: Օրակարգն էր «Հունգարիոյ կացութիւնը»: Խ· Միութեան պատուիրակը՝ Սոբոլով ընդդիմացաւ այս հարցին քննութեան: Բայց եւ այնպէս Խորհուրդը տասը ձայնով ընդդէմ մէկի (Խ· Միութիւն) որոշեց շարունակել քննութիւնը: Հունգարիոյ ներկայացուցիչն ալ հրաւիրուեցաւ, որոշ վերապահութեամբ: Քուպայի պատուիրակը առաջարկեց պահանջել Խ· Միութենէն որ անմիջապէս ետ կանչէ իր զօրքը եւ ապահովել որ Հունգարիոյ ժողովուրդը ազատ ընտրութիւններ կատարէ կառավարութիւն մը ընտրելու համար: Առաջարկեց նաեւ յանձնաժողով մը կազմել, որպէսզի հսկէ, անհրաժեշտ միջոցները ձեռք առնելու եւ դիւրացնելու համար Հունգարիոյ ժողովուրդին քաղաքական անկախութեան վերահաստատումը :

Բրիտանական պատուիրակը բացատրեց թէ Միջին Արեւելքի խնդիրը պէտք չէ մոռացութեան տայ Հունգարիոյ կացութիւնը եւ յոյս յայտնեց թէ խորհրդային կառավարութիւնը ի վերջոյ պիտի խոստովանի որ սնանկացած է զինեալ միջամտութեան քաղաքականութիւնը :

Ֆրանսայի ներկայացուցիչը, Կիրենկօ, Խորհրդային Միութեան միջամտութիւնը նկատեց բացայայտ բռնաբարում Հունգարիոյ անկախութեան եւ գերիշխանութեան, բռնաբարում ինքնորոշման իրաւունքի: Այս առթիւ մերժեց Խ· Միութեան այն առարկութիւնը թէ ապստամբութիւնը սարքուած է ափ մը փաշականներու կողմէ: «Որո՞ւ պիտի հաւատացնեն թէ ափ մը փաշականներ են որ դժուարութեան մատնած են խորհրդային միջամտութեան ուժերը: Որո՞ւ՝ պիտի հաւատացնեն թէ փաշականներու փոքր խումբ մըն է որ ազդած է Պ· Նակիի վրայ, օտար զօրքի պարպումը պահանջելու համար: Ապացուցուած ըլլալով օտար միջամտութիւնը, նոյնպէս ապացուցուած ըլլալով հունգար ժողովուրդին կամքը վերջ տալու այդ միջամտութեան, Ապահովութեան Խորհուրդը, Ազգաժողովը, բովանդակ աշխարհ կը դառնէին ՄԱԿի ուխտին, միջազգային օրէնքի եւ բարոյականի բռնաբարման առջեւ: Ազգաժողովը չկրցաւ յարգել տալ իր որոշումները ոչ կարդինալ Մինծենթիի, ոչ ալ պուլկար երեցներու ձերբակալութեան առեն: Ժամանակն է որ վերջ գտնէ այս անկարողութիւնը: Ահա թէ ինչու Ֆրանսական կառավարութիւնը պահանջեց Ապահովութեան Խորհուրդին այս արտակարգ նիստը, նպատակայարմար բանաձեւ մը քուէարկելու համար: Եթէ այս արդիւնքը ձախողի վեթոյի պատճառով, այն ատեն հարկ է անմիջապէս արտակարգ նիստի հրաւիրել ընդհ· ժողովը»:

Խ· Միութեան պատուիրակը յայտարարեց թէ «բացարձակապէս անհիմն են» այն ամբաստանութիւնները թէ խորհրդային զինուորներ մտած են Հունգարիա: Չինաստանի ներկայացուցիչը յիշեցուց թէ հունգարական կառավարութիւնը նոր զեկոյց մը հաղորդած է Ազգաժողովին, հաստատելով ռուսական նոր ուժերու մուտքը: Ֆրանսական պատուիրակն ալ կարդաց վերջին հեռագիրները :

Ցետոյ Ապահովութեան Խորհուրդը իր նիստը յետաձգեց մինչեւ շաբաթ ժամը 15 :

Կիրակի առտու ժամը 5·5ին ռատիօ-Փեշթան կը հաղորդէ խեղդուկ ձայնով մը·— Խօսողն է Իմրէ Նակի, Հունգարիոյ վարչապետը: Խորհրդային զինուորները արշալոյսին յարձակեցան Փեշթայի վրայ, Հունգարիոյ օրինաւոր կառավարութիւնը տապալելու բացորոշ դիտումով: Մեր զինուորները կը կռուին Սովետներուն դէմ յանուն արդարութեան եւ ազատութեան :

Ժամ 13·19, Մոսկուա, վերջին վայրկեան·— Այս առտու յետադիմական դաւադրութեան ուժերը ջախջախուեցան: Նոր կառավարութիւն մը կազմուեցաւ բանուորներէ եւ գիւղացիներէ, նախագահութեամբ Եանոս Քատարի :

Այդ պահուն Փեշթայի անթելը երկու անգամ եւս կրցաւ բանիլ, ծանուցանելու համար թէ ապստամբութեան գերագոյն ճիգը ջախջախուեցաւ հազար հրասայլերու, անհամար հետեւակազօրքի եւ փոսփորով լեցուած ռումբերու ծանրութեան տակ: Խորհրդային յարձակողականը խնամքով կազմակերպուած էր նախընթաց օրերու ընթացքին: Շաբաթ կէս օրէն ետք բանակցութիւններ կը կատարուէին Հունգարիոյ եւ եօթը ռուս բարձրաստիճան սպաներու միջեւ, խորհրդային զօրքի հեռացման մասին: Երբ այդ բանակցութիւնները խզուեցան, Կեդր· Կոմիտէին Ա· քարտուղարը, Քատար, Մոսկուայի կամակատարը, կը ծանուցանէր թէ նոր կառավարութիւն մը կը կազմէ եւ խորհրդային զօրքին աջակցութիւնը կը խնդրէր :

ԲՈՑԱՎԱՌ ՇԻՇԵՐ ՀՐԱՍԱՅԼԵՐՈՒՆ ԴԷՄ

Այն ատեն սկսաւ անողոք եւ կատաղի ճակատամարտ մը: Խորհրդային հրամանատարութեան հզօր ուժերուն դէմ ապստամբները ունէին չափազանց տկար զէնքեր եւ աննկուն քաջութիւն մը, մինչ ռատիօ-Փեշթան կ'ազդարարէր·

— Դուք որ այստեղ ապրած էք, պէտք է այստեղ ալ մեռնիք :

Կռիւը շարունակուեցաւ աւելի քան 16 ժամ: Ապստամբները ռուսական հրասայլերուն վրայ կը յարձակէին հրանիւթի բոցավառ շիշերով, կը փորձէին պատուարներ շինել տապալած հանրակառքերով: Ի վերջոյ Ռուսերը յաղթեցին գերազանց ուժերով: Կէս օրին միայն ցիրուցան կռիւներ տեղի կ'ունենային :

Ռուսերը միեւնոյն կատաղութեամբ յարձակեցան գաւառի մէջ Առտուն կանուխ գրաւած էին ամէնէն կարեւոր կեդրոնները, մինչ բուռն կռիւներ տեղի կ'ունենային Փեշթայէն 90 քիլոմեթր հեռու, դէպի հարաւ-արեւմուտք :

Անհամար փախստականներ, կիներ, մանուկներ, ծերունիներ, ուժասպառ զինուորներ, Աւստրիա կ'ապաստանին ողբալի վիճակի մէջ :

Ապահովութեան Խորհուրդը նորէն նիստ գումարեց գիշերանց, եղերական մթնոլորտի մը մէջ: Ամերիկեան կառավարութիւնը պահանջեց անմիջապէս ետ քաշել խորհրդային զօրքը: Մոսկուայի ներկայացուցիչը մերժեց: Այն ատեն ամերիկեան պատուիրակը բացագանչեց ·

— Ձեր վեթօն չի կասեցներ ջարդերը Հունգարիոյ մէջ: Կը պահանջեմ արտակարգ նիստի հրաւիրել ՄԱԿի ընդհ· ժողովը :

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԷՔ, ՇՈՒՏ

Հունգարիոյ հեռագրական գործակալութիւնը լեղապատառ կոչեր կ'ուղղէր կիրակի առտու ժամը 5,30էն, Վիէննայի գործակալութեանց: Ահաւասիկ այդ կոչերը որոնք շարունակուեցան մինչեւ ժամը 10,55·—

«Ռուս զինուորները դաւաճանեցին մեզի· կրակ բացին Փեշթայի վրայ: Հաճեցէք իմացնել Եւրոպայի եւ աւստրիական կառավարութեան: Ցանկարծ յարձակեցան Փեշթայի եւ ամբողջ երկրին վրայ: Ընդհանուր յարձակողական է: Եանոս Քատար եւ երկու ընկերները նոր կառավարութիւն մը կազմեցին եւ սկսան բնաջնջել յեղափոխութիւնը: Երեքն ալ Ռուսերուն հետ են: Բուռն կրակի մը ենթարկուած ենք: Ամբողջ Փեշթան կրակի մէջ է: Ռուս սպաները (կէնսկոթըր) դաւաճանեցին մեզի: Քանի մը ժամէ ի վեր քանի մը հարիւր հրասայլեր յարձակում կը գործեն: Գնդացիրներու կրակին ենթարկուած ենք: Գրասենեակը բաց կը պահեմ լուր տալու համար ձեզի: Չեմ գիտեր թէ դեռ որքան պիտի կրնայ բանիլ գիծը: Կեցցէ՛ Հունգարիան եւ Եւրոպան: Պիտի մեռնինք Հունգարիոյ եւ Եւրոպայի համար»:

Քանի մը վայրկեան ետք, աւելի սաղ-պողական կոչեր·

— «Օգնութեան լուր չկա՞յ: Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ: Ռուսական յարձակումը սկսաւ առտուն ժամը 4ին: Պատասխանի կը սպասենք: Ժամանակ չունինք··· Կը հաստատուի Հունգարիոյ ապայակոյտին ձերբակալութիւնը: Նակի անձամբ օգնութիւն կը խնդրէ եւ դիւանագիտական ձեռնարկներ»:

Ժամը 6,10ին հաղորդակցութիւնը կտրեցաւ: Ամերիկեան «Էսոշիէյթըտ Փրէս» գործակալութիւնը նոր գիծ մը հաստատեց Փեշթայի «Սադադ Նեփ» թերթին հետ, որ օգնութիւն խնդրելէ վերջ կը հաղորդէր·

— «Ժողովուրդը տապալեց շարք մը հանրակառքեր պատուար մը շինելու համար մեր շէնքին մօտ: Երիտասարդները ձեռնառումբեր կը շինեն շէնքին մէջ, հրասայլերուն դէմ կռուելու համար: Թնդանօթի ռումբեր կը պայթին մեր գտնուած վայրին մօտ, օդանաւեր կը սաւառնին մեր գլխուն վերեւ: Հրասայլերը այժմ կրակ կը տեղան Դանուբի ուղղութեամբ: Երիտասարդները կը կռուին պատնէշներուն վրայ: Զէնք եւ ռազմանիւթ կը պահանջեն: Կատաղի ճակատամ-

(Շար·ը կարդալ Դ· էջ)

ՕԴԱՆԱՒԱՅԻՆ ԿՐԱԿ ԵԳԻՊՏՈՍԻ ՎՐԱՅ

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ՑԱՄԱՔ ԻՋԱՆ

Ֆրանքեւանգլիական օդատորմիղը կը շարունակէ անընդհատ ռմբակոծել Եգիպտոսի ռազմական կէտերը եւ զինեալ ուժերը, իբրեւ նախապատրաստութիւն ցամաքահանման: Խիստ գաղտնապահութիւն կը տիրէ կատարուած գործողութեանց մասին: Բազմաթիւ զինուորներ ճամբայ հանուած են Կիպրոսէն: Բացարձակապէս կը հերքուի այն լուրը թէ ֆրանքեւանգլիական առաջին զօրամասերը ետ մղուած են մեծ կորուստներով, երբ կը փորձէին ցամաք ելել: Ամէնէն կարեւոր ուժերը պիտի ղրկուին Մալթայէն, որ 1800 քիլոմեթր հեռու է Եգիպտոսի ջուրերէն: Ա· օդազօրքը ցամաք իջաւ :

× Իսրայէլի ներկայացուցիչը բողոքագիր մը ուղղեց Ազգաժողովին, գանգատելով թէ իրաքեան զինուորներ մտած են Յորդանան: Կը հաստատուի թէ Իրաքի կառավարութիւնը հրամայած է իր զօրքին Յորդանան մտնել, օգնելու համար Իսրայէլ· յարձակումի մը դէմ: Տակաւին չի հաստատուիր թէ սուրիական զօրք մտած է Յորդանան :

× Իսրայէլեան աղբիւրէ կը հաղորդեն թէ 17 հազար եգիպտական զինուորներ սպանուած, վիրաւորուած կամ գերի բռնուած են Սինայի ճակատամարտին մէջ:

× Եգիպտոսի հրամանատարութիւնը կը ծանուցանէ թէ գնդ· Նասր հրամայած է բոլորովին փակել Սուէզի ջրանցքը, նոր նաւեր ընկղմելով: Կիրակի օր ականներ դրուեցան էլ Ֆերտանի կամուրջին տակ: Կարճ խօսքով, ամէն միջոց ձեռք առնուած է, դժուարացնելու համար անգլեւ-ֆրանսական գործողութիւնները :

× Իրաքի քարիւղի ընկերութեան նաւթուղին կտրուեցաւ երեք տարբեր կէտերու վրայ, Սուրիոյ մէջ: Կառավարութիւնը հրամայեց բանակին պաշտպանել նաւթուղիները եւ յարակից հաստատութիւնները:

× ՄԱԿի ընդհ· ժողովը որոշեց միջազգային ոստիկանական ուժ մը ղրկել Եգիպտոս եւ պահանջել պատերազմիկներէն որ անմիջապէս դադրեցնեն կրակը: Ֆրանսա եւ Անգլիա յայտարարութիւն մը հրատարակեցին, որով կ'ըսեն ·— Պատրաստ ենք դադրեցնելու զինուորականգործողութիւնները հետեւեալ պայմաններով·

1· Իսրայէլի եւ Եգիպտոսի կառավարութիւնները կ'ընդունին որ Ազգաժողովին կողմէ կազմուած ուժ մը պահպանէ խաղաղութիւնը : 2·— Ազգաժողովը անհրաժեշտ միջոցները ձեռք կ'առնէ այդ ուժին կազմակերպութեան համար, մինչեւ որ Իսրայէլ եւ արաբական պետութիւնները համաձայնին հաշտութեան պայմաններու մասին եւ գոհացուցիչ կարգադրութիւններ ըլլան Սուէզի (բանուքին համար: 3·— Մինչեւ Ազգաժողովին զօրագունդի կազմակերպումը երկու հակառակորդները կ'ընդունին որ անգլեւֆրանսական սահմանափակ ջոկատներ անմիջապէս դիրք բռնեն յանուն Ազգաժողովի, երկու պատերազմիկ երկիրներուն միջեւ :

× Արտաքին գործերու եւ ազգ· պաշտպանութեան նախարարները Լոնտոն գացին, խորհրդակցելու համար: Անգլիոյ արտաքին նախարարին օգնականը, Նըթինկ, հրաժարեցաւ, հակառակ ըլլալով Եգիպտոսի դէմ կատարուած գործողութեանց :

× Անգլ· կառավարութիւնը կը հերքէ այն լուրը թէ չորս մարտանաւեր ընկղմած են Եգիպտացիներու կողմէ :

ԱԼԺԵՐԻՈՅ ապստամբութեան գլխաւոր վարիչներէն Աճուլ անձնատուր եղաւ :

ՏԸԼԸՍ խլիրդի գործողութեան ենթարկուեցաւ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ

ՄՍՏ. — Սկսած այս թվակիրից, ընթերցողները կարող են բաժանորդագրվել «Հայկական Սովետական Գրողի» ամսագրին եւ հանդիսանալ նրա կանոնավոր ստացողները։ Տարեկան բաժանորդագինը 12 ռուբլի է։ Ստացողները պարտավոր են ամսագրի գինը վճարել ամսագրի խմբագրության հասցեով։

(Ի ՀԱՐԿԱԴՐՈՒԹԻՒՆ)

Ցաւալի մեծ ուշացումով կը հասնի մեզ Ալեքսանդրապոլի Ազգային Վարժարանի Տեսչութեան տարեկան հաշուետուութիւնը։ Ի՞նչ ըսենք այս ուշացման մասին։ Ինչպէ՞ս կարելի է, որ այսքան կարեւոր գործ մը, ինչպէս է ազգային վարժարանի մը տարեկան հաշուետուութիւնը, այսքան անտարբերութեան մատնուի

ՍԱՍՈՒՆԻ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱՀԿ, 364 - 400)

Բ. գիրք

ԳՎԱԽՈՒՅՍՈՒՆ «ՍԱՍՈՒՆԻ ՂՎԱԽՈՒՅՍՈՒՆ»

Ներքևում ձեռագիր հեղինակը էջերի վերևի մասում նշել է թվերը, որոնք ցույց են տալիս, թե քանի տող է գրել յուրաքանչյուր էջում։ Այդ թվերը մենք չենք տպագրում։ Ծանոթագրությունները մեր կողմից են։

— Ես ձեզ ասացի, որ ինձ համար ամենից թանկ է իմ ազգի պատիվը։ Ես ուզում եմ, որ ամբողջ աշխարհը հարգի մեր ազգը, որովհետև մենք ունենք մեծ անցյալ, մեծ պատմություն, որ ստեղծել են մեր նախնիները։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա ազատություն, որովհետև ազատությունը ամենից թանկ բանն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հայրենիքը, որովհետև հայրենիքը ամենից սուրբ բանն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր լեզուն, որովհետև լեզուն ամենից մեծ գանձն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հավատը, որովհետև հավատը ամենից մեծ ուժն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հոգին, որովհետև հոգին ամենից գեղեցիկ բանն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր սերը, որովհետև սերը ամենից ուժեղ զգացումն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հավատարմությունը, որովհետև հավատարմությունը ամենից մեծ առաքինությունն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր ոգին, որովհետև ոգին ամենից վեհ բանն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր ապագան, որովհետև ապագան ամենից պայծառ բանն է աշխարհում։ Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հավիտենականությունը, որովհետև հավիտենականությունը ամենից մեծ բանն է աշխարհում։

Ահա թե ինչ էր ասում Սասունի Դավիթը, երբ նրան հարցնում էին, թե ինչ է ուզում իր ազգի համար։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հայրենիքը, որովհետև հայրենիքը ամենից սուրբ բանն է աշխարհում։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր լեզուն, որովհետև լեզուն ամենից մեծ գանձն է աշխարհում։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հավատը, որովհետև հավատը ամենից մեծ ուժն է աշխարհում։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հոգին, որովհետև հոգին ամենից գեղեցիկ բանն է աշխարհում։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր սերը, որովհետև սերը ամենից ուժեղ զգացումն է աշխարհում։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր հավատարմությունը, որովհետև հավատարմությունը ամենից մեծ առաքինությունն է աշխարհում։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր ոգին, որովհետև ոգին ամենից վեհ բանն է աշխարհում։

Ես ուզում եմ, որ մեր ազգը ունենա իր ապագան, որովհետև ապագան ամենից պայծառ բանն է աշխարհում։

մարտ մը կը մղուի քաղաքին կեդրոնը:

Փեչթայի հեռագրական գործակալու-թեան վերջին լուրը կ՚ըսէր.

— Այժմ կը ձգենք մեր կայանը: Մնաք բարով, բարեկամներ: Աղօթեցէք մեզի համար: Գրեթէ զէնք չունինք, բայց քանի մը փոքր գնդացիրներէ, ռուսական եւ խտալական հրացաններէ: Քաղաքացիները հրապարակներուն վրայ կը յարձակին ձեռ-նառումբերով: Հունգարները մահէն չեն վախնար: Դժբախտաբար չենք կրնար աւելի դիմանալ: Զինուոր մը հրաժեշտ առած առեն մայրը կ՚ըսէր.

— Ձեմ ըսեր որ հերոս մը դարձաս, բայց վախկոտ մը չըլլա՛ս...

Քիչ վերջ Հունգարական Թերթը կը հաղորդէր.

— Հրասայլերը եւ թնդանօթները կը մօտենան: Ի՞նչ կը բանի Ազգաժողովը:

Ուրիշ աղբիւրէ մը հետեւեալ տեղեկու-թիւնները կը հաղորդուին.— Վարչապետ Նակի ձերբակալուած է: Կարդինալ Մին-ձէնթի ամերիկեան դեսպանատունը ա-պաստանած է: Ռուսերը գրաւեցին խոր-հրդարանը: Անոնք վերջնագիր մը ուղ-ղած էին Հունգարական կառավարու-թեան, պահանջելով անձնատուր ըլլալ մինչեւ կէս օր: Ռուսերը գինաթափ կ՚ը-նեն Փեչթայի պահակազօրքը կայարանի մը մէջ եւ կը քշեն անծանօթ ուղղու-թեամբ:

× Արտաքին նախարարը Ք. Փինօ հե-տեւեալ յայտարարութիւնն ըրաւ կիրակի առտու.

— Գիշերն ի բուն անձկութեան կո-չեր ուղղելէ ետք, Հունգարիոյ դիմադրա-կան ճակատը լռեց: Բովանդակ Ֆրանսա, ինչպէս կառավարութիւնը, կը խոնարհի քաջութեանը եւ մարտիրոսութեանը առ-ջեւ ժողովուրդի մը որ պատրաստ է մեռ-նելու իր ազատութեան համար: Եւ կը ցաւի որ Ազգաժողովը եւ կարգ մը կառա-վարութիւններ նախընտրեցին թանկագին ժամեր ղոհել չքմեղացնելու համար ե-գիպտացի դիկտատորը, հեղինակը բազ-մատեսակ նախայարձակումներու եւ քա-րոզիչ սրբազան պատերազմի, փոխանակ իրենց աջակցութիւնը ընծայելու քաջարի ժողովուրդի մը որ միայն չէզոքութիւն կ՚ուզէ, ազատ ապրելու կամեցողու-թեամբ: Երանի թէ արթննայ աշխարհի խիղճը, որպէսզի չարչարանքներու եւ արեան մէջ չխեղդուին ձայները անոնց ո-րոնք ուզեցին յարգել տալ մարդ անհա-տին էական իրաւունքները:

× Հունգարիոյ ողբերգութիւնը խոր յուզում պատճառեց Եւրոպայի մէջ: Ա-րեւմտեան Պերլինի քաղաքապետութիւ-նը հրամայեց փակել բոլոր պարասրահ-ները եւ զբօսարանները եւ սեւ դրօշ պարզել քաղաքապետարանին վրայ: Ա-րեւմտեան Գերմանիոյ խորհրդարանը ար-տակարգ նիստի հրաւիրուեցաւ:

Լահէյի մէջ ցոյց մը տեղի ունեցաւ խորհրդային դեսպանատան առջեւ: Հո-լանտայի վարչապետը իր վրդովումը յայտնեց: Անթէնը դադրեցուց թեթեւ ե-րաժշտութիւնը: Քոփենհակի մէջ ոստի-կանութիւնը միջամտեց, երբ ցոյց մը կը կատարուէր խորհրդային դեսպանատան դէմ: Ցոյցեր կատարուեցան ուրիշ մայ-րաքաղաքներու մէջ ալ: Պելժիոյ արտա-քին գործերու նախարարը, Սփաք, ձայ-նասփիւռ ճառ մը խօսելով փառաբանեց Հունգար ժողովուրդին քաջութիւնը:

ԱԶԳԱԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱԿի ընդհ. ժողովը կիրակի օր նիստ գումարեց, քննելու համար Հունգարիոյ կացութիւնը: Խ. Միութեան պատուիրա-կը ընդդիմացաւ, առարկելով թէ քըն-նութիւնը կը նշանակէ «միջամտութիւն Հունգարիոյ ներքին գործերուն» եւ թէ Իմրէ Նակիի կառավարութիւնը ինկած ըլլալով իր կոչը արժէք չունի: Ժողովը 8ի դէմ 50 ձայնով քուէարկեց օրակար-գը: Ամերիկեան պատուիրակը խստօրէն դատապարտեց Խ. Միութիւնը, պնդելով թէ բռնաբարեցին Ազգաժողովին ուխ-տը եւ ժողովուրդներու դերիշխանութեան իրաւունքները: Զարկեց Ռուսերու «վայ-րագութիւնը»: Մոսկուայի պատուիրակը միշտ կ՚առարկէր: Քանատայի պատուի-րակը հարցուց Սոբոլեվի թէ կ՚ընդունի՞ քննիչ յանձնախումբ մը ղրկել Հունգա-րիա: «Թերեւս վերջին պատեհութիւնն է այս ապացուցանելու Խ. Միութեան ուղղա-մտութիւնը: Անգլիական պատուիրակը յոյս յայտնեց թէ Ազգաժողովը պիտի մերժէ ճանչնալ Հունգարիոյ պարտադրած խամաճիկ կառավարութիւնը: Ֆրանսա-կան պատուիրակը չեշտեց.— «Հունգար ժողովուրդը ծառացաւ ոչ թէ ընկերային կարգուսարքի մը, այլ դուրսէն պարտա-դրուած ահուսարսափին դէմ, առանց կու-սակցութեան եւ դասակարգի խտրու-թեան»:

Այդ պահուն կարդացին Այզընհաուըրի սեփական նամակը՝ ուղղուած Բուլկա-նինի: Նախագահը կը խնդրէր եռ քաշել ռուսական զօրքը եւ թոյլ տալ որ Հուն-գարիան ազատօրէն կազմէ իր նախընտ-րած կառավարութիւնը:

Ի վերջոյ ամերիկեան բանաձեւը քուէ-արկուեցաւ ութի դէմ յիսուն ձայնով: Ձեռնպահ մնացին 15 պետութիւններ: Բանաձեւը կը պահանջէ Ա.— Դադրե-ցնել «ամէն միջամտութիւն եւ զինեալ յարձակում Հունգար ժողովուրդին դէմ» — 2. Անյապաղ ետ քաշել խորհրդային զօրքը.— 3. Հաստատել թէ Հունգարիան իրաւունք ունի կառավարութիւն մը կազ-մելու համաձայն իր ազգային տենչերուն, ապահովելով իր անկախութիւնը եւ բարօ-րութիւնը.— 4. Խնդրել ընդհ. քարտու-ղարէն որ ներկայացուցիչներ նշանակէ, կացութիւնը քննելու համար.— 5. Հրա-ւիրել Ազգաժողովին անդամները որ մար-դասիրական օգնութիւն հասցնեն Հուն-գարներուն:

Ամերիկեան պատուիրակը յայտարարեց թէ Մ. Նահանգները չեն կրնար ճանչնալ Քատարի կառավարութիւնը, որ կազ-մուած է «փոքրաթիւ խամաճիկներէ, յարգէ մարդիկներէ» եւ պնդեց թէ բուն վարչապետն է Նակի:

Ժողովի պահուն դուրսը թշնամական ցոյցեր կը կատարուէին Խ. Միութեան դէմ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Կիրակի, 11 Նոյեմբեր, ժամը 14ին, Հայ Կաթողիկէ սրահին մէջ, (ռիւ տը լա Պոսս): Նախաձեռնութեամբ Սէն Շամոնի Հ. Յ. Դ. «Վարուժան» եւ Սէնթ Էթիէնի «Անտոք» կոմիտէներուն, մասնակցու-թեամբ Նոր Սերունդի երկու խումբերուն:

Կը նախագահէ ընկ. Ս. ԸՆՏՐԻԿԵԱՆ

Կը խօսի ընկ. Մ. ՄԻՐԶԷ

Գեղարուեստական խնամուած բաժին: Ծոխ պիւֆէ Մուտք ազատ է

(FESTIVAL)

ԵՐԳԱՊՆԱԿՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՆԱԾ Է

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆԻ

«Զանազան ժամանակներու եւ զանազան երկիրներու» ծիսական երաժշտութեան նուիրուած երգապնակները (միքրօսիյօն):

Լիտիա Կարինի զօնթր-ալթօ հարուստ ձայնին կ՚ընկերանան «Մարթինօ»ի ալիք-ներու, ինչպէս նաեւ հարուածային երա-ժշտական գործիքները (բերգիւսիոն), ո-րոնք կը ստեղծեն երաժշտական դիւթիչ մթնոլորտ մը:

Այս երգապնակով երաժշտական հաճելի պտոյտ մը կը կատարէք հինաւուրց Արե-ւելքը (Հայաստան, Սուրիա, Արաբիա, Բաբելոն, Հնդկաստան, Հասարակածային Ափրիկէն, Միջին դարու Ֆրանսան եւ Ս-պանիա, հին Աթէնքը, Կեդտերու երկիրը (Սկովտիա) եւ վերջապէս Պրազիլիա եւ Հարաւային Ամերիկա:

Փափաքողները կրնան իրենց ապսպրանք-ները ուղղել երգապնակի բոլոր վաճա-ռատուները հետեւեալ ըէֆէրանսով.

DISQUES FESTIVAL «MUSIQUE RITUELLE» ATRAVERS TEMPS ET PAYS - F. L. D. 88

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Հալէպէն Արմենակ եւ Բերուզ Գասպար-եանի զաւակները, Իսքիչէհիրցի, կը փըն-տռեն իրենց մօրեղբայրները՝ Երուանդ, Կարապետ եւ մօրաքոյրը՝ Մարի Դանիէլ-եանները, մօրը անունը Սուլթան, հայրը՝ Ցարութիւն: Կը կարծուի թէ Արտէշի նա-հանգին Պիւղէ քաղաքը կը գտնուին:

Կը խնդրուի ճանչցողներէն տեղեկացնել հետեւեալ հասցէին Գ. Խոսրովեան, 14 ռիւ Թրաշէլ, Նիս:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅ—ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Թիւ 175 - 176 (Յուլիս – օգոստոս), ճոխ բովանդակութեամբ.—

Երգարան... Բժշկարան (Շ. Նարդու-նի).— Մատ կը ծծեն, յետոյ.. կը ծխեն.— Ասփիրինով... անձնասպանութիւն.— Անակնկալ մահերը (Տոքթ. Լ. Գրիգոր-եան).— Ուտելիքները (Տոքթ. Գալուստ-եան).— Մանկութիւն եւ բանաստեղծու-թիւն.— Ֆրանկախտը (Տոքթ. Պ. Մի-սաքեան).— Որովայնային ժանտատենդ (Տոքթ. Ղազարեան).— Զաւակ չունենա-լու համար.— Ինչո՞ւ չեմ քնանար (Տոքթ. Լէվէք).— Նիհարնալու համար.— Խլիր-դը (քանսէր) կիներուն վրայ (Տոքթ. Ալ-թունեան).— Դաշտանը լեռներուն վրայ.— Ոտանաւոր բառարան.—Տօքթէօր, զաւակ կ՚ուզեմ (Մեծ Հայրիկ).— Կատա-ղութիւնը (Տոքթ. Ա. Պօղոսեան).— Ին-չո՞ւ կը փոնգտաք (Տոքթ. Օճառ).— Ա-ղիքներու թշուառութիւն (Տոքթ. Շ. Այ-վազեան):

Տարեկան բաժնեգինը հազար ֆրանք Ֆրանսա, 1200 ֆրանք արտասահման: Հատով չի ծախուիր: Դիմել Շ. Նարդու-նի, 32 ռիւ տը Թրէվիզ, Փարիզ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Յառաջիկայ դասախօսութիւնը այս չո-րեքշաբթի Քառէի վերնայարկը:

Դասախօս Պ. Յովհան Կարապետեան

Նիւթը՝ «Շէյքսփիր եւ Թուրքերը»:

Մուտքը ազատ է:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Այրի Տիկին Մարի - Զարուհի Ստեփան-եան պատիւ ունի ծանուցանել իր զաւկին

ԺԱՆ. ՎԱՀՐԱՄի

(Dentiste-Professeur suppléant à l'Ecole de Chirurgie Dentaire et de Stomatologie de Pasis).

ամուսնութիւնը

Mlle. Yolande MANSUTTIի հետ:

Պսակը տեղի ունեցաւ խիստ մտերմա-կան շրջանակի մը մէջ, Յուլիս 30ին Փա-րիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ եկեղեցին: 1, Rue Abel Vacher, Meudon (S.et.O.)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆՋՈՅՔ

Կազմակերպուած Թոքատի Հայր. Մի-ութեան կողմէ: Կիրակի, 11 Նոյեմբեր, կէս օրէ վերջ ժամը 3ին, 45 ռիւ տը լա Տէֆանս սրճարանի սրահը, Իսի լէ Մու-լինօ:

Գեղարուեստական բաժնին կը մասնակ-ցին տիկիններ Ֆէսլեան, Գալայճեան, Տարօն քոյրեր, Գարակէօզեան, Յակոբ-եան եւայլն:

Հայկական, կովկասեան եւ հունգա-րական պարեր եւ զանազան անակնկալ-ներ: Խօսք պիտի առնեն Ֆրանսահայ Փո-խադարձ օգնութեան միութեան կեդր. վարչութեան անդամները:

Հասոյթը պիտի յատկացուի Հայաստա-նի Պետական Համալսարանին ղրկուելիք գիրքերուն:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի Հ. Մ. Ը. Մ.ի պարահանդէսը Դեկտեմբեր 15ին, շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս Ալհամպրայի մէջ:

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅ. 11, ԺԱՄԸ 18էն 2 SALLE VOLTAIRE, Alfortville

Նախագահութեամբ երեսփոխան եւ նախկին նախարար E. Depreuxի եւ Ալֆորվիլի քաղաքապետ՝ R. Bleuseի

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԿԱԼԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ Fernand Reynaudի

(ԺԱՄԸ ՃԻՇԴ 21ԻՆ)

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ Jacques HELIAN

Հաղորդակցութեան միջոց.— Շարան թօն էքօլէն 103 թիւը առնել:

ՈՐԲԱԽՆԱՄԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ՆՈՅԵՄԲԵՐ 18 ԿԻՐԱԿԻ, ԺԱՄԸ 16էն 24

GRAND HOTEL

ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՄԵԾԱՇՈՒՔ ՓԱՌԱՏՕՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Բարձր Հովանաւորութեամբ Հանրապետութեան Նախկին Նախագահ

Monsieur VINCENT AURIOLի

Կիրակի, 11 Նոյեմբեր, ժամը 20.30ին, ՍԱԼ ՓԼԵՅԷԼԻ ՄԷՋ

252, FAUBG. SAINT-HONORE, PARIS (Métro : Ternes)

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ԲԱԺԻՆ

ՀԱՏԸՆՏԻՐ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԽՄԲԵՐԳ, ՄԵՆԵՐԳ, ՆՈՒԱԳ ԵՒ ՊԱՐ

Մանրամասնութիւնները առանձին յայտագրով

ՀԱՆԴԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅ

Մուտքը ձրի է թուագրեալ հրաւիրագրով, որ կարելի է ստանալ Միութեան գրասենեակէն

11, Square Alboni, Paris (16e). Tél. : TROcadéro : 03-18

ԹԱՐՄԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԳՈՅՆԵՐԸ, ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ԴԻՄԵՑԷՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

THOMLAC

16bis, Bld. Sébastopol, PARIS (4e) Angle Rue de la Reynie

ԵՒ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԸ

52, Rue de Chalon, PARIS (12e), 4bis Rue Vaillant CouturierARGENTEUIL

166, Ave. Aristide Briand, PAVILLONS - SOUS - BOIS

3, Rue de la Charronnerie, ST.-DENIS

Մասնաւորաբար ձեր ճաշակին համար պատրաստուած ԸՆՏԻՐ ԻՒՂԱՆԵՐԿԵՐ որ ձեր բնակարանին ներքինը պիտի զարդարեն, իսկ արտաքինը պիտի պահպանեն բնութեան սպառնալիքներուն դէմ ՆԱԵՒ ՆՈՐԱՁԱՇԱԿ ՊԱՏԻ ԹՈՒՂԹԵՐ LINOLEUM, PLASTIQUE, etc.

Դիւրամատչելի գիներ եւ սիրալիր ընդունելութիւն կը սպասեն ձեզի

ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 — R.C. Seine 376.286
Fondé en 1925 — Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկ. 3500 ֆր. կամ $ 10: Հատը 12 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 7 ՆՈՅԵՄԲԵՐ • MERCREDI 7 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7725 — 32e ANNEE — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3536

ՄԵՐ ԽՕՍՔԸ

«ՓՐԿԵՑԷ՛Ք ՄԵԶ...»

Այս բառերով կը վերջանար Փեշթայի ռատիօ - կոչը, կիրակի օր: Լեղապատառ կանչ մը, որ յանկարծ լռեց:

Երկուշաբթի առտու, երկու պատճայներ եւս կը լսուէին.

— Փեշթան բոցավառ ծով մըն է այլ եւս: Ռազմիկները զինամթերք չունենալով, կռուեցան մինչեւ վերջին վայրկեանը դանակներով, երկաթեայ ձողերով, շիշերով ···

Արու բնակչութիւնը կը կեդրոնացնեն կայարաններուն մէջ, աքսորելու համար:

Անշուշտ կարաւանները ճամբայ հանուած են արդէն, անծանօթ ուղղութեամբ, ինչպէս նախընթաց պարագաներու մէջ:

Անցեալ շաբթու «Հերոսամարտ» կոչեր էինք Հունգարիոյ ազատագրական այս պայքարը:

Իսկական հերոսամարտ մը որ խեղդուեցաւ արեան ճապաղիքներու մէջ: Հազարաւոր հրասայլերու, թնդանօթներու, ռմբաձիգներու կրակին տակ:

Ժողովուրդ մը տրորուեցաւ, ճզմուեցաւ Եւրոպայի սրտին վրայ: Քաղաքակիրթ մարդկութեան աչքին առջեւ:

Որո՞ւ սրտէն սարսուռ մը չանցաւ կիրակի առտուան այդ պահուն, երբ ռատիօն կը գուժէր.

— «Մեր նաւը կ'ընկղմի: Լոյսը կը տկարանայ: Լսեցէ՛ք մեր աղաղակը, ժողովուրդներ աշխարհի, փրկեցէ՛ք մեզ: Տէր ընդ ձեզ եւ ընդ մեզ ···»

Այս հոգեվարքի աղաղակը Ասիոյ խորերէն կ'արձակուէր երէկ:

Այն ատեն, Հայաստանի լեռները, ձորերն ու դաշտերն էին որ կը դղրդային այդ օրհասական աղաղակէն:

Ամբողջ ժողովուրդ մը կը բնաջնջուէր սանձակոտոր կատաղութեամբ: Լեռն ու դաշտը ժաժքի կը մատնուէին, քրիստոնեայ եւ քաղաքակիրթ Եւրոպան կը մնար անշարժ: Կը դառնար անկարող: Նոյնիսկ մեղսակից:

Այսօր, ուրիշ ժողովուրդ մը կը ջարդուի Եւրոպայի պորտին վրայ, «յեղափոխական» իշխանութեան մը կողմէ, եւ մարդկութիւնը կը մնայ նոյնքան թոյլ եւ ապիկար:

Ներողութիւն. ժողովներ կը գումարէ մասնակցութեամբ 76 պետութեանց, բանաձեւեր մշակելու եւ դահիճը կարգի հրաւիրելու համար, «օրինական մեծամասնութեամբ»:

Լոնտոնի թերթերէն մին ծաղրանկար մը հրատարակած էր առջի օր, — Երեսարդ մը գետին փռուած անշունչ. քովը պոլշեւիկ մը՝ գնդացիր ի ձեռին. դիակին վրայ ծաղկեպսակ մը հետեւեալ մակագրութեամբ, — «Օգնութիւն Հունգարիոյ. Ազգաժողովին բանաձեւը»:

Դարձեալ երէկուան պատմութիւնը:

Այն ատեն ալ Ազգերու Դաշնակցութիւնն էր որ բանաձեւեր կը մշակէր, Լոզանի ամօթը պարտկելու համար: Բանաձեւեր որոնք ի յառաջագունէ դատապարտուած էին ամլութեան:

Դեռ աւելին — յաղթականը կը դառնար պարտեալ, նոյն այդ բանաձեւերով:

Մաղթենք որ աւելի բախտաւոր հանդիսանայ Ազգաժողովը, սանձահարելով կարմիր բռնակալը:

— *«Սթալինը յարութիւն առած է», կը գրէ տեղական թերթ մը:*

— *«Սթալինէն աւելի սթալինական», գիտել կուտայ ընկերվարական պաշտօնաթերթը:*

Եւ մինչ զոհերը «փրկեցէ՛ք մեզ», կ'աղաղակեն, Ազգաժողովը գիշերներ կը լուսցնէ, իրաւասութեանց խնդիրներ լուծելու համար:

Թշուառ մարդկութիւն ···

Շ.

ԿՌԻՒՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԴԱԴԱՐ ԻՍՐԱՅԷԼԻ ՃԱԿԱՏԻՆ ՎՐԱՅ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԵՐԺԵՑ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ

Դէպքերը իրարու կը յաջորդեն սրընթաց: Ինչպէս հաղորդած էինք երէկ, անգլեւֆրանսական առաջին օդադորքը Փորթ Սայիտ իջաւ երկուշաբթի օր, գրաւելով օդակայանը եւ երկու կամուրջներ: Բուռն կռիւներ տեղի ունեցան: Գահիրէի զեկոյցը կը հերքէր այն լուրը թէ Ջրանցքի շրջանին զօրքը անձնատուր եղած է. եւ իրիկուան դէմ կը հաղորդէր թէ «զինուորները հերոսաբար կը դիմադրեն ֆրանքեւանգլիական զօրքին», թէ Նախագահ Կամալ Նասր Ջրանցքին շրջանը կը գտնուի, դիրքերը քննելու համար եւն.:

Ֆրանքեւանգլիական օդադորքը Փորթ Սայիտի վրայ յարձակած էր Բշ. առտու արշալոյսին, բուռն դիմադրութեան մը հանդիպելով: Եգիպտական զեկոյցը կ'ըսէր թէ յարձակողները ետ մղուած են, թէ բազմութիւնը կը ցնծայ Գահիրէի փողոցներուն մէջ եւ մարդիկ իրար կը համբուրեն:

Անգլեւֆրանսական զեկոյցը բոլորովին տարբեր կը պատմէ անցուդարձը: Կ'ըսէ թէ դաշնակից օդադորքը մաքրեց Ջրանցքին հիւսիսային մուտքը, կարճ բայց արիւնալի կռիւէ մը ետք, թէ Փորթ Սայիտի եգիպտական զօրքը զէնքերը վար կը դնէր, համաձայնութիւն գոյացած ըլլալով անձնատուութեան մասին: Ֆրանսական եւ անգլիական օդադորքը խումբ խումբ վար կ'իջնէր Սուէզի հիւսիսային ծայրին վրայ եւ եգիպտական զինուորները զինադադար խնդրեցին, անձնատուր ըլլալու համար: Եգիպտացիները կը դիմադրէին հրասայլերով եւ հրասանդներով, բայց ժամը 4.15ին Փորթ Սայիտի կառավարիչը խնդրեց բանակցիլ կրակը դադրեցնելու համար: Ֆրանսական զեկոյցը կ'ըսէ թէ 70 Եգիպտացիներ սպաննուեցան եւ տասը հոգի գերի բռնուեցան:

Զինադադարը խզուեցաւ վերջին պահուն:

Ֆրանքեւանգլիական հրամանատարութիւնը իր նպատակին հասած ըլլալով, Բշ. գիշեր հաղորդեցին Ազգաժողովին թէ հրահանգուած է անմիջապէս դադրեցնել ռմբակոծութիւնը, սպասելով Ազգաժողովին ծրագրած ոստիկանական ուժին ժամանման:

Մինչ այս մինչ այն, Ապահովութեան Խորհուրդը արտակարգ նիստի կը հրաւիրուէր, քննելու համար Խ. Միութեան առաջարկը, որ կը պահանջէր Անգլիայէն, Ֆրանսայէն եւ Իսրայէլէն զինուորական գործողութիւնները դադրեցնել անմիջապէս կամ 12 ժամէն: Բանաձեւը կը խնդրէր նաեւ հրաւիրել Մ. Նահանգները եւ Խ. Միութիւնը որ միջամտեն, եթէ վերոյիշեալ երեք ազգերը երեք օրէն ետ չքաշեն իրենց զօրքը:

Աֆրիկեւասիական խմբակցութիւնն ալ բանաձեւ մը ներկայացուցած էր Ազգաժողովին, պահանջելով դատապարտել Մեծն Բրիտանիան, Ֆրանսան եւ Իսրայէլը, Եգիպտոսի դէմ կատարուած, զինուորական գործողութեանց առթիւ եւ դադրեցնել կռիւները: Միեւնոյն ատեն կ'առաջարկէին որ Ազգաժողովին ընդհ. քարտուղարը տեղեկագիր մը ներկայացնէ 12 ժամէն: Նոյն ատեն Խ. Միութեան արտաքին նախարարը, Շեպիլով նամակ մը ուղղելով Ապահովութեան Խորհուրդին կ'ըսէր թէ իր կառավարութիւնը պատրաստ է աջակցելու որ յարձակումը դադրի, պատրաստ է օգնելու յարձակման զոհերուն եւ խաղաղութեան վերահաստատման, Եգիպտոս ղրկելով օդանաւային եւ ծովային ուժեր:

Մ. Նահանգներու կառավարութիւնը անմիջապէս ազդարարեց Խ. Միութեան թէ խորհրդային ուժեր ղրկելու որեւէ փորձ պիտի հանդիպի ամերիկեան ընդդիմութեան: Այս յայտարարութիւնն եղաւ մառեշալ Բուլկանինի կողմէ Այզընհաուըրի ուղղուած նամակի մը վրայ որ կ'առաջարկէր միանալ Խ. Միութեան, միացեալ զինուորական գործողութիւն մը կատարելու եւ «նախայարձակումը» կասեցնելու համար: Ամերիկեան յայտարարութիւնը կ'ըսէ թէ «ներկայ պարագաներուն մէջ նոր ուժեր ղրկել պիտի նշանակէ խախտել Ազգաժողովին ուխտը: Այն ատեն ՄԱԿի բոլոր անդամներուն պարտականութիւնը պիտի ըլլայ — Մ. Նահանգներն ալ մէջն ըլլալով — ընդդիմանալ այդ կարգի որեւէ փորձի»:

Բուլկանինի նամակը կ'ըսէր. — «Եգիպտոսի կացութիւնը վճռական գործողութիւններ կը պահանջէ, եթէ Ազգաժողովը չուզեր կորսնցնել իր հեղինակութիւնը եւ կազմալուծուիլ: Եթէ այս պատերազմը չդադրի, վտանգներ կը ներկայացնէ երրորդ աշխարհամարտի մը համար: Այս սպառնալից պահուն, երբ Ազգաժողովին ամէնէն վսեմ սկզբունքները, հիմքերը եւ նպատակները փորձի ենթարկուած են, խորհրդային կառավարութիւնը սերտ գործակցութիւն մը կ'առաջարկէ Մ. Նահանգներուն, վերջ տալու համար նախայարձակման եւ դադրեցնելու ամէն նոր արիւնահեղութիւն: Մ. Նահանգները զօրաւոր տորմիղ մը ունին Միջերկրականի մէջ. Խ. Միութիւնն ալ ունի հզօր տորմիղ մը եւ օդատորմիղ մը: Այս միջոցներուն անմիջական օգտագործումը. Ազգաժողովին մէկ որոշումով, ապահով երաշխիք մը կը կազմէ դադրեցնելու համար նախայարձակումը եգիպտացի ժողովուրդին եւ Միջին Արեւելքի արաբ ժողովուրդներուն դէմ»:

Նամակը խստօրէն կը քննադատէ անգլիական եւ ֆրանսական կառավարութիւնները, Եգիպտոսի դէմ կատարուած յարձակումը համարելով «գողերու պատերազմ, վերահաստատելու համար գաղթատիրութիւնը Արեւելքի մէջ»:

× Ապահովութեան խորհուրդը 3ի դէմ (Իրան, Եուկոսլաւիա եւ Խ. Միութիւն) չորս ձայնով (Անգլիա, Ֆրանսա, Աւստրալիա, Մ. Նահանգներ) մերժեց քննել Մոսկուայի բանաձեւը: Ձեռնպահ մնացին Չինաստան, Քուպա, Պելճիա եւ Փերու:

Խ. ՄԻՈՒԹԻՒՆԸ Կ'ԱԶԴԱՐԱՐԷ ՖՐԱՆՍԱՅԻ, ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ

Բշ. օր ժամը 23ին Խ. Միութեան վարչապետը, մառեշալ Բուլկանին մասնաւոր նամակներ ուղղեց Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իսրայէլի վարչապետներուն, ազդարարելով թէ Եգիպտոսի դէմ բացուած պատերազմը կրնայ վտանգաւոր հետեւանքներ ունենալ ամբողջ աշխարհի համար: Մառեշալը արդարանալի չի գտներ ֆրանսական եւ անգլիական ուժերուն յարձակումը «երկրի մը դէմ որ դեռ վերջերս վերագտաւ իր անկախութիւնը եւ որ պաշտպանութեան բաւարար միջոցներ չունի: Ի՞նչ վիճակի մէջ պիտի գտնուէին Ֆրանսա (եւ Անգլիա), եթէ աւելի զօրաւոր պետութիւններ յարձակէին իրենց վրայ, ունենալով ամէն տեսակ արդիական քանդիչ զէնքեր: Եթէ հրթիռներ գործածուէին Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ, բարբարոսական արարք պիտի կոչէիք: Բայց ի՞նչ է տարբերութիւնը Անգլիոյ եւ Ֆրանսայի արարքին՝ զինաթափ Եգիպտոսի դէմ»:

Բուլկանին եզրակացնելով կը թելադրէ Անգլիոյ եւ Ֆրանսայի վարչապետներուն «լսել բանականութեան ձայնը» եւ կը հրաւիրէ բրիտանական կառավարութիւնը, խորհրդարանը, աշխատաւորական կուսակցութիւնը, սենտիկաները եւ ամ-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

«ՁԵՆՔ ԿՐՆԱՐ ՕԳՆԵԼ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ»

ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՉԷ ԴԱԴՐԱԾ

Անգլիոյ Երեսփ. Ժողովին Բշ. օրուան նիստին մէջ արտաքին նախարարը, Ս. Լոյտ խոստովանեցաւ թէ Բրիտանիա եւ արեւմտեան պետութիւնները չեն կրնար որեւէ բան ընել Հունգարիոյ համար: Երբ հարցումները կը կրկնուէին, նախարարը յայտարարեց. — Պատրաստ եմ քննելու ամէն միջոց, կարելի օգնութիւնը հասցնելու համար, բայց «դժուար պիտի ըլլայ արդէն եղածէն աւելին կատարել»: Կառավարութիւնը 25.000 սթերլին տրամադրած է Կարմիր Խաչին եւ նոյնքան ալ պիտի տրամադրէ, օգնութիւն հասցնելու համար Հունգարիոյ:

Նախարարը հաստատեց թէ կառավարութիւնը համաձայն է որ միջազգային ուժ մը ղրկուի Հունգարիա: Երբ հարցուցին թէ Ազգաժողովը չի՞ կրնար ձեռնարկ մը կատարել, Պ. Լոյտ պատասխանեց, հեգնութեամբ, — Ազգաժողովը միայն յանձնարարութիւններ կրնայ ընել:

× *Վերջին տեղեկութեանց համաձայն, դիմադրութիւնը տակաւին կը շարունակուի Հունգարիոյ զանազան մասերուն մէջ: Յուսահատական կռիւներ կը մղուին: Ռուսական հրամանատարութիւնը վերջնագիր մը ուղղեց ըմբոստներուն, որպէսզի անձնատուր ըլլան, այլապէս պիտի բնաջնջուին: Կ'ըսուի թէ Փեշթայի մէջ ալ դիմադրութեան բոյներ մնացած են: Ռուս հրամանատարը կը հրաւիրէ հունգար սպաները եւ զինուորները միանալ խորհրդային ուժերուն: «Մենք եկած չենք Հունգարիան նուաճելու համար»:*

Նոր վարչապետը, Քատար, յայտարարեց թէ «պիտի վերահաստատուի Հունգարիոյ անկախութիւնը եւ ազգային գերիշխանութիւնը»...

× *Երկուշաբթի գիշեր բուռն ցոյցեր կատարուեցան Ֆրանսայի Համայնավար կուսակցութեան կեդրոնին եւ «Իւմանիթէ»ի խմբագրատան դէմ, «Անկցի՛ն սովետ մարդասպանները» աղաղակներով: Ցուցարարները հունգարական դրօշ մըն ալ պարզած էին: Ցոյցերը շարունակուեցան մինչեւ կէս գիշեր: Ապակիներ խորտակուեցան թէ կուսակցական կեդրոնին եւ թէ խմբագրատան մէջ:*

× *Ֆրանսացի բազմաթիւ մտաւորականներ հանրագրութիւն մը ստորագրեցին, բողոքելով սովետական միջամտութեան եւ գործուած բարբարոսութեանց դէմ:*

× *Հազարաւոր փախստականներ հասած են Աւստրիա, ուժասպառ եւ թշուառ վիճակի մէջ: Մեծ մասով կիներ եւ մանուկներ են, կարօտ անմիջական օգնութեան: Փախստականները հեղեղի պէս կը հոսին երբ մութը կոխէ:*

× *Պուլկարիոյ Համայնավար կուսակցութեան պաշտօնաթերթը ազդարարութիւն մը ուղղեց, ըսելով թէ «պիտի ջախջախուին յետադիմական ուժերը, եթէ փորձեն ըմբոստութիւն մը սարքել եւ խզել պուլկարեւռուսական զինակցութիւնը»:*

Կը խօսի ընկ. Կարօ Մանկեան :
Նիւթ՝ «Ի՞նչ է ազգութիւնը» :

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Կիրակի, 11 Նոյեմբեր, ժամը 14ին, Հայ Կաթողիկէ սրահին մէջ, (ռիւ տը լա Պռոս) : Նախաձեռնութեամբ Սէն Շամոնի Հ. Յ. Դ. «Վարուժան» եւ Սէնթ Էթիէնի «Անտօք» կոմիտէներուն, մասնակցութեամբ Նոր Սերունդի երկու խումբերուն :
Կը նախագահէ ընկ. Ս. ԸՆՏՐԻԿԵԱՆ
Կը խօսի ընկ. Մ. ՄԻՐՋԷ
Գեղարուեստական խնամուած բաժին :
Ճոխ պիւֆէ Մուտք ազատ է

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս երկուշաբթի, ժամը 21ին, Քաֆէ Քատէի վերնայարկը : Դասախօս Պ. ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹՈՒՇԵԱՆ : Նիւթը՝ «Հրաշագործ Հայը և քանի մը երգիծ. նոր էջեր» : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ : Մուտքը ազատ է :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սամուէլ Մուրատեան վարժարանի տօնածառի հանդէսը կիրակի 23 Դեկտեմբեր, ժամը 4ին :

ՆՈՒԷՐՆԵՐ

ՄԱՐՍԷՅԼ. — Սէն Լուի Հ. Յ. Դ. Ակնունի ենթակոմիտէն Տր. Կ. Խաչը եւ Նոր Սերունդը կը շնորհաւորեն իրենց երիտասարդ ընկերոջ՝ Անդրանիկ Փամպուքճեանի (ելեկտրագէտ) եւ Ժանն Սարգիսեանի ամուսնութիւնը, եւ իրենց խնդակցութիւնը յայտնելով, հազարական ֆրանք կը նուիրեն Սէն Լուի Կ. Խաչի, Նոր Սերունդին, «Յառաջ»ին եւ Մշակոյթի Տան :
(Վերջինը ստանալ «Յառաջ»էն) :

(FESTIVAL)

ԵՐԳԱՊՆԱԿՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՆԱԾ Է

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆԻ

«Զանազան ժամանակներու եւ զանազան երկիրներու» ծիսական երաժշտութեան նուիրուած երգապնակները (միքրօսիյօն) :

Լիտիա Կարինի գօնթր-ալթօ հարուստ ձայնին կ'ընկերանան «Մարթինօ»ի ալիքները, ինչպէս նաեւ հարուածային երաժշտական գործիքները (բերգիւսիոն), որոնք կը ստեղծեն երաժշտական դիւթիչ մթնոլորտ մը :

Այս երգապնակով երաժշտական հաճելի պտոյտ մը կը կատարէք հինաւուրց Արեւելքը (Հայաստան, Սուրիա, Արաբիա, Բաբելոն, Հնդկաստան, Հասարակածային Ափրիկէն, Միջին դարու Ֆրանսան եւ Սպանիա, հին Աթէնքը, Կեղտերու երկիրը (Սկովտիա) եւ վերջապէս Պրազիլիա եւ Հարաւային Ամերիկա :

Փափաքողները կրնան իրենց ապսպրանքները ուղղել երգապնակի բոլոր վաճառատուները հետեւեալ ըէֆէրանսով.

DISQUES FESTIVAL «MUSIQUE RITUELLE» A TRAVERS TEMPS ET PAYS - F. L. D. 88

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Հալէպէն Արմենակ եւ Բերուզ Գասպարեանի զաւակները, Խաքիշէհիրցի, կը փնտռեն իրենց մօրեղբայրները՝ Երուանդ, Կարապետ եւ մօրաքոյրը՝ Մարի Դանիէլեաններ, մօրը անունը Սուլթան, հայրը՝ Յարութիւն : Կը կարծուի թէ Արտէշի նահանգին Պիւզէ քաղաքը կը գտնուին :

Կը խնդրուի ճանչցողներէն տեղեկացնել հետեւեալ հասցէին Գ. Խոսրովեան, 14 ռիւ Թրաշէլ, Նիս :

ԾԱԽՈՒ Է

Ծախու է պարապ փավիյօն մը (Ժիւվիզի սիւր Օրժ, Փորթ տ'Իթալիէն), պարտէզովը երեք սենեակ, խոհանոց, քավ, մուտք, ջուր, ելեկտրականութիւն : Գին 1.700 : Դիմել՝

Taniellian, 20 Rue Lucien Sampaix, Paris 10e, ou Henry Gottihiaux, 3 Rte. de Fontainebleau, Athis-Mons. (S. et O.).
Tél. : BEL 42-67

*

Երկու մեքենաներ կօշիկի երես (սայա) կարելու համար եւ մէկ հատ ալ ծակելու մեքենայ մը (փեռֆոռաժ) : Դիմել Տիկին Թորոսեանի՝ 15 ռիւ Թիէ, Անիէռ (Սէն) :

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅ. 11, ԺԱՄԸ 18էն 2 SALLE VOLTAIRE, Alfortville

Նախագահութեամբ երեսփոխան եւ նախկին նախարար E. Depreuxի
եւ Ալֆորվիլի քաղաքապետ՝ R. Bleuseի
ՅԱՂԹԱՆԱԿԻ ԿԱԼԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ Fernand Reynaudի
(ԺԱՄԸ ՃԻՇԴ 21ԻՆ)
ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ Jacques HELIAN
Հաղորդակցութեան միջոց. — Շարան Թօն Էքօլէն 103 թիւը առնել :

ԿԱՐԵԼԻ Է ՏԱԿԱՒԻՆ ՔԱՆԻ ՄԸ ՕՐԻՆԱԿ ԳՏՆԵԼ՝

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ

երկու վէպերէն —

«ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ»
ԵՒ «ՅԱՐԱԼԷԶՆԵՐՈՒ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ»

Երկու հատորը միասին 1500 ֆրանք :
Դիմել «Յառաջ»ի վարչութեան :

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ վարչութիւնը եւ հոգաբարձութիւնը բացած են կիրակնօրեայ վարժարան մը հայ մանուկներու եւ պատանիներու կրօնական դաստիարակութեան համար, կիրակի 4 Նոյեմբերէն ի վեր :

Կը հրաւիրենք ծնողները որ դիմեն եկեղեցւոյս դիւանատունը արձանագրել տալու համար իրենց զաւակները : Դասաւանդութիւնները կը կատարուին ժամը 10.30-11.30 : Յետոյ աշակերտները խումբով պիտի առաջնորդուին եկեղեցի մասնակցելու կրօնական արարողութեան :(Դիւան)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԿՐԸՆՈՊԼԸ. — Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Արշալոյս Սիսլեանէ երկու հազար ֆր. դպրոցին համար, իր ազաքինման առթիւ : Շնորհակալութեամբ ստացած ենք Այրի Տիկին Ռոզինա Թիւֆէնքճեանէ 500 ֆրանք, նոյնպէս դպրոցին համար :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Ատանացի Վերոնիկա Մանուկեան կը փնտռէ իր եղբայրը՝ Կիրակոս Թիւթիւնճեանը, հօր անունը Գրիգոր, մօր անունը Աննիկ, 1920ին եկած է Ֆրանսա, Մարսէյլ եւ հոն ամուսնացած է ֆրանսուհիի մը հետ : Իմացնել՝

Mr. Kouyoumdjian
46, Bd. Marie Joseph, Madrague-Vilele
Marseille (15e) (B. du R.)

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԱՆԻՒԹ ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊԻ Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր անդամուհիները այս երկուշաբթի ժամը 15ին Տիկ. Օրմանճեանի բնակարանը, Քոլոմպ : Կարեւոր օրակարգ :

ԹԷՅԱՍԵՂԱՆ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կաթողիկէ Տիկիններու Միութիւնը հաճոյքով կը հրաւիրէ Լիոնի հայութիւնը իր տարեկան թէյասեղանին, այս կիրակի կէսօրէ վերջ, Յոյներու սրահին մէջ, 5, ռիւ Պոնըֆուա :

Հայկական ջերմիկ միջավայրի մէջ զուարճալի ժամանց այլազան անակնկալներով եւ գեղարուեստական բաժինով :

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆՋՈՅՔ

Կազմակերպուած Թոքատի Հայր. Միութեան կողմէ : Կիրակի, 11 Նոյեմբեր կէս օրէ վերջ ժամը 3ին, 45 ռիւ տը լա Տէֆանս սրճարանի սրահը, Իսի լէ Մուլինօ :

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին տիկիններ Ֆէչլեան, Գալայճեան, Տարօն քոյրեր, Գարակէօզեան, Յակոբեան եւայլն :

Հայկական, կովկասեան եւ հունգարական պարեր եւ զանազան անակնկալներ : Խօսք պիտի առնեն Ֆրանսահայ Փոխադարձ օգնութեան միութեան Կեդր. վարչութեան անդամները :

Հասոյթը պիտի յատկացուի Հայաստանի Պետական Համալսարանին ղրկուելիք գիրքերուն :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի Հ. Մ. Ը. Մ.ի պարահանդէսը Դեկտեմբեր 15ին, շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս Ալհամպրայի մէջ :

Կ'ՈՒԶՈՒԻ՝

Պատրաստուած եւ լուրջ երիտասարդ մը (23էն 40 տարեկան, զինուորութենէ ազատ), հաստատուն եւ ապագայ ունեցող գործի մը համար :

Մանրամասնութեանց համար դիմել անձամբ «Յառաջ»ի : Գաւառէն գրել նոյն հասցէին, տալով քիւրիքիւլոմ վիթէ (կենսագրական տեղեկութիւններ) :

☘

Ծախու է Թրիքոյի աշխատանոց մը ամբողջ կազմով, դիմել նաեւ «Յառաջ»ին :

ՈՐԲԱԽՆԱՄԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ՆՈՅԵՄԲԵՐ 18 ԿԻՐԱԿԻ, ԺԱՄԸ 16էն 24

GRAND HOTEL

ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՄԵԾԱՇՈՒՔ ՓԱՌԱՏՕՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Բարձր Հովանաւորութեամբ Հանրապետութեան Նախկին Նախագահ
Monsieur VINCENT AURIOLի

եւ ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐի

Խօսք կ'առնեն Գեր. Տ. ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ : Արհ. ԿԱՐԱՊԵՏ Ծ. Վրդ. ԱՄԱՍՈՒՆԻ, Վեր. ԳԱՐԵԳԻՆ ՍԻՍԼԵԱՆ, ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ
Monsieur Henri BARRE, Sénateur
Monsieur le Comte Philippe d'ARSCHOT, petit -fils de Boghos NUBAR
ՎԱՀԷ ՖՐԷՆԿԵԱՆ, ՆՈՒՐՀԱՆ ՖՐԷՆԿԵԱՆ
Կիրակի, 11 Նոյեմբեր, ժամը 20.30ին, ՍԱԼ ՓԼԵՅԷԼԻ ՄԷՋ
252, FAUBG. SAINT-HONORE, PARIS (Métro : Ternes)

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ԲԱԺԻՆ

արտասանութիւն, խմբերգ, մեներգ, նուագ, պար, մասնակցութեամբ Սիփան Կոմի տաս երգչախումբի, ղեկավար՝ Կարպիս Ափրիկեան, Օրիորդներ՝ Լ. Անտիսեանի, Գ. Ղազարոսեանի, Ի. Պէրպէրեանի, Ի. Պիւլպիւլեանի, Ս. Սաաբճեանի, Ա. Սարգսեանի, Թ. Քէօշկէրեանի եւ Պ. Պ. Մ. Աբրահամեանի, Ա. Գմբէթեանի եւ Ս. Պօղոսեանի

ՀԱՆԴԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅ

Մուտքը ձրի է թուազրեալ հրաւիրագրով, որ կարելի է ստանալ Միութեան գրասենեակէն
11, Square Alboni, Paris (16e). Tél. : TROcadéro : 03-18

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութներ, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկ. 3500 ֆր. կամ $10 : Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ 9 ՆՈՅԵՄԲԵՐ • VENDREDI 9 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7727 32e ANNEE | Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ | ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3538

ԲՈՒՌՆ ՑՈՅՑԵՐ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

ԹԵՐԹԵՐԸ ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱՆ ԵՐԷԿ ԱՌՏՈՒ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ ՀՐԿԻԶՈՒԵՑԱՒ, — ՑԱՐՁԱԿՈՒՄ «ԻՒՄԱՆԻԹԷ»Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՎՐԱՅ. — ԲԱԶՄԱԹԻՒ ՎԻՐԱՒՈՐՆԵՐ ԵՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ. — ՑՈՒԶՈՒՄՆԱԼԻՑ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳ. ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Փոթորիկ մը պայթեցաւ չորեքշաբթի գիշեր, Փարիզի գլխաւոր պողոտաներուն վրայ, Հունգարիոյ մէջ կատարուած բարբարոսութեանց առթիւ: Համայնավար թերթերու աշխատաւորներն ալ յարձակում կրած ըլլալով, տպագրիչներու սենտիքան գործադուլ յայտարարեց եւ երէկ առտու թերթ չհրատարակուեցաւ Փարիզի մէջ :

Անցուդարձին ամփոփումը. —

Չորեքշաբթի ժամը 18ին թափօր մը կազմակերպուած էր Շան զ'Էլիզէի պողոտային վրայ, Յաղթական Կամարին տակ, մասնակցութեամբ ականաւոր դէմքերու եւ բազմաթիւ կազմակերպութեանց : Լոնտոնի թերթերը մինչեւ քսան հազար կը հաշուեն մասնակցողներուն թիւը: Թափօրին առջեւէն կ'երթային նախորդ վարչապետներ Ժորժ Պիտօ, Ռընէ Փլեւէն, Ժոզէֆ Լանիէլ, Անթուան Փինէ եւ Ռոպէր Շուման: Այս առթիւ հունգարական դրօշ մը դրուեցաւ Անծանօթ Զինուորի դամբարանին վրայ: Միեւնոյն ատեն կը հրկիզուէր կարմիր դրօշ մը : Ցուցարարները մեծ մասով ուսանողներ եւ բանուորներ էին :

Մեծարանքի այս արարողութենէն ետք, ցուցարարները խումբ խումբ կ'արշաւէին դէպի քաղաքին կեդրոնը, յարձակելու համար յատկապէս նշանակուած հաստատութեանց վրայ : Շատեր հունգարական դրօշ պարզած էին: Բազմութեան մէջ կը լսուէին թշնամական կանչեր Խ. Միութեան եւ Համայնավար կուսակցութեան դէմ, — «Մարդասպաններ, քաշուեցէք Հունգարիայէն, դէպի կառափնատ» եւայլն: Մասնաւորապէս կը յիշէին Թորէզի անունը :

Ժամը ութին խլրտանք մը տեղի ունեցաւ Շաթոտէօն, Քառէ եւ յարակից փողոցներուն մէջ: Անցուդարձը խափանուած էր, անչափահասութեան դատապարտելով հանրակառքերը եւ «Թաքսի»ները : Ոստիկանները անընդհատ կը սուլէին : Ցանկարծ լուր տարածուեցաւ թէ Համայնավար կուսակցութեան կեդրոնատեղին կը վառի :

Արդարեւ, հազարաւոր ցուցարարներ յարձակելով հսկայ շէնքին վրայ, կրակի տուած էին վարի յարկին : Լոնտոնի թերթերը կը գրեն թէ նախկին վայրաշուներ (փարաշութիստ) եւ հակաբոլշեւիկներ խորտակած էին շէնքին պողպատեայ փեղկերը: Վերի յարկերէն համայնավարները «հեր եւ ուրիշ առարկաներ կը նետէին ցուցարարներուն վրայ, որոնք պահ մը չփոթութեան մատնուեցան: Շատեր վիրաւորուած էին :

Այս անգամ աւելի զայրանալով, ցոյցին կազմակերպիչները, որոնց դէմքերէն արիւն կը վազէր, նորէն յարձակեցան եւ խորտակեցին դուռները : Յետոյ վերի յարկերը բարձրացան եւ սկսան բազմութեան վայ նետել թերթերու, գիրքերու դէզեր, ինչպէս եւ ծանր կարասիներ: Այս առթիւ ալ շատեր վիրաւորուեցան: Ցուցարարները մօտակայ սրճարաններէն աթոռներ ճարելով կը նետէին շէնքին վրայ: Ի վերջոյ յաջողեցան խորտակել երկաթեայ փեղկերը եւ բանալ պատուհանները: Դղրդալին ծափեր լսուեցան, երբ Սթալինի խոշոր կենդանագիրը վար կը նետուէր երկրորդ յարկէն: «Տէյլի Թէլէկրաֆ»ի թղթակիցը կ'ըսէ թէ երիտասարդ մը, որ հունգարական դրօշ մը բռնած էր եւ դէմքէն ծանրապէս վիրաւոր,

գետնայարկի պատուհանը կը խորտակէր իր լախտով, ներս մտնելու համար ,

Անոնք որ ներս մտած էին, սկսան կրակի տալ թուղթերը: Յետոյ մէկը քարիւղ ուզեց եւ անմիջապէս թափեցին բոցերուն մէջ: Հրշէջներուն ժամանումէն առաջ գետնայարկը բռնկած էր, իսկ ցուցարարները յաջողեցան փրկուիլ առաջին յարկի պատուհաններէն վար ցատկելով :

Նոյն աղբիւրին համաձայն, համայնավար պաշտօնեաները, մօտ քսան հոգի, յաջողած էին փախչիլ նեղ անցքէ մը, մինչ բազմութիւնը կը մռնչէր, — «Մոսկուա գացէք, մարդասպաններ» :

Այդ միջոցին ուրիշ բազմաթիւ ցուցարարներ կը յարձակէին «Իւմանիթէ»ի խմբագրատան վրայ, քարեր փրցնելով սալայատակներէն : Համայնավարները քարիւղով լեցուած շիշեր, երկաթի կտորներ եւ ուրիշ առարկաներ կը նետէին: Կարգ մը ցուցարարներ ելեկտրական երկար պարաններ տարած էին :

Բուռն ընդհարումներ տեղի ունեցան Սէն Տընիի շրջանին մէջ ալ, մանաւանդ որ համայնավարները հակացոյց մը սարքած էին: Վիրաւորներուն թիւը կը հաշուեն եօթանասունէն աւելի, 40ը ծանր :

Ինչպէս ըսինք, բողոքի ցոյցը սկսած էր Շան զ'Էլիզէի պողոտայէն : Մեծարանքի ցոյցէն ետք, երիտասարդներ հետեւեալ ազդանշանը կուտային, — « Դէպի Համայնավար կուսակցութեան կեդրոնը » : Միեւնոյն ատեն Թռուցիկներ կը ցրուէին : Ոստիկանութիւնը երկու օրէ ի վեր հսկողութիւն կը կատարէր կուսակցական շէնքին շուրջը : Այդ գիշեր ալ դիրք բռնած էին, երբ հազարաւորներու բազմութիւնը ուժգնօրէն յառաջ խաղաց, գրաւելով հրապարակը : Թերթերը կը գրեն թէ որեւէ միջամտութիւն չկատարուեցաւ մինչեւ շէնքին հրկիզումը : Ոստիկան մը կ'ըսէր. — «Ամէն բանէ առաջ Ֆրանսացիներ ենք»: Իսկ բազմութիւնը կ'աղաղակէր. — «Ոստիկանութիւնը մեզի հետ է »:

Թերթ մը հեգնօրէն դիտել կուտայ թէ նոյն օրը Կեդր. Կոմիտէին քարտուղարը՝ Տիւքլօ դանգատած էր որ ոստիկաններ դրած են կուսակցութեան շէնքին առջեւ: Այս առթիւ կ'ըսէր. — « Բանուորները կը բաւեն պաշտպանելու համար իրենց կուսակցութեան կեդրոնատեղին » :

Նոյն օրը Ազգ. Ժողովին մէջ ալ բուռն վիճաբանութիւններ տեղի ունեցան: Ոստիկանութիւնը փակած էր երկու գլխաւոր կամուրջներ, իսկ ուրիշ կամուրջներ ալ հսկողութեան տակ առնուած էին, ցոյցերը արգիլելու համար :

Ալզասի «Իւմանիթէ»ին խմբագրատունն ալ աւարի տրուեցաւ :

× Գործադուլը վերջացած ըլլալով, իրիկուան թերթերը լոյս տեսան սովորականին պէս :

× Համայնավար կուսակցութիւնը թռուցիկներ կը բաժնէր երէկ, Ռէփիւպլիքի հրապարակը հրաւիրելով ժողովուրդը ժամը 18ին: Ոստիկանութիւնը արգիլեց այս ցոյցը: Ստուարաթիւ ոստիկաններ դիրք բռնած էին հրապարակին վրայ :

× Ազգ. Ժողովը գիշերը 136ի դէմ 468 ձայնով քուէարկեց Դ. Մայէրի առաջարկած բանաձեւը, որ կը հրաւիրէր կառավարութիւնը «ազատ ազգերու հետ ձեռք առնել բոլոր միջոցները արգիլելու համար նոր ջարդեր եւ սփոփողաբար օգնելու համար իրենց երկիրը մնացած կամ փախստական Հունգարներուն» : Ժողովը 81ի դէմ 463 ձայնով մերժեց Իզորնիի առաջարկած յանձնումը, որ կը պահանջէր լուծել համայնավար կուսակցութիւնը: Վարչապետը այս առթիւ խօսք առնելով ըսաւ. — «Կեղծ հերոսնասիրհմայքը խորտակուեցաւ, հիմա որ Մ. Նահանգները իրենց բարեկամութեամբ ուժ կուտան Ֆրանսայի եւ Անգլիոյ» :

× Վերջին լուրերու համաձայն կացութիւնը խառնակ է Փեշթայի մէջ : Կառավարութիւնը նոր կոչ մը ուղղեց, որպէսզի աշխատանքը վերսկսին :

× Տերակոյտին մէջ ալ համակրանքի ցոյց մը կատարեցին, փառաբանելով Հունգարիոյ ժողովուրդին հերոսական դիմադրութիւնը :

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Կառավարութիւնը որոշեց ապաստան տալ Հունգարիոյ փախստականներուն : Այս առթիւ հրատարակուած բանաձեւը կ'ըսէ. — « Հունգար ժողովուրդը մինչեւ վերջը պայքարեցաւ իր ազգային անկախութեան համար, ազատ աշխարհին հիացումը գրաւելով » : Տարագիրները պիտի ընդունուին փարիզեան շրջանին մէջ, որ շատ մը յարմարութիւններ ունի :

× Ազգ. Ժողովին դիւանը որոշեց հինգ միլիոն ֆրանք ղրկել, Հունգարիոյ ժողովուրդին օգնելու համար : Այս գումարը պիտի առնուի այն վարկերէն որ քուէարկուած էին նախապէս, Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդին պատուիրակներն ընդունելու համար: Ընդունելութիւնը չեղեալ համարուած է :

× Արտաքին գործերու նախարարութիւնը որոշեց չմասնակցիլ բոլշեւիկեան յեղափոխութեան 39րդ տարեդարձին առթիւ սարքուած ընդունելութեան: Միայն պաշտօնատար մը ներկայ պիտի ըլլայ : Ոչ նախարարը, ոչ տնօրէնները, ոչ ալ սովետական գործերու մասնագէտներ : Անգլիական, քանատական, հոլանտական եւ ամերիկեան դեսպանութիւններէն ալ ոչ մէկ ներկայացուցիչ պիտի երթայ : Նոյն որոշումները տրուած են Լոնտոնի, Քոփենհակի եւ Լա Հէյի մէջ: Լոնտոնի քաղաքապետն ալ ներկայ պիտի չըլլայ տարեդարձի ընդունելութեան :

Անգլիոյ փաստաբանական կաճառը չեղեալ համարեցաւ այն հրաւէրը զոր ուղղած էր Խ. Միութեան փաստաբաններուն, այցելութիւն մը կատարելու համար :

× Ամսթերտամի շուէտնաւային ընկերութիւնը որոշեց ընդհատել նաւագնացութիւնը դէպի Խ. Միութիւն :

× Աւստրիոյ ընկերվարական կուսակցութեան պաշտօնաթերթը, « Արպայթըր Ցայթունկ», կը յայտարարէ խմբագրականով մը. — Այսօր տարեդարձն է խորհրդային յեղափոխութեան, պատմական դէպք մը որ երբեմն մեծ յոյսեր ներշնչեց աշխատաւոր դասակարգին: Միեւնոյն ատեն ռուս ժողովուրդին անկախութեան օրն է այդ: Բայց այսօր ոչ մէկը տրամադիր է ձեռք երկարելու Ռուսի մը կամ համայնավարի մը, եթէ չուզեր եւ քաշել զայն արիւնով կարմրած : Հունգարիոյ արիւնոտ բռնաբարումէն ետք, մենք ձեռք պիտի սեղմենք անոնց համայնավարին հետ որ կը յայտարարէ. — Ա՛լ կը բաւէ: Ես կապերս խզեցի համայնավարութեան հետ » :

× Լիւքսէմպուրկի խորհրդային դեսպանատունը կիսովին հրկիզուեցաւ ցոյցի մը հետեւանքով: Դեսպանը նկուղը ապաստանած էր :

× Հունգարիոյ դէմ կատարուած խժդժութեանց առթիւ հանրագրութիւն մը ստորագրած էին նաեւ չորս համայնավար գրագէտներ: Կեդր. Կոմիտէն որոշեց կարգապահական պատիժի ենթարկել զանոնք ալ, ինչպէս կը գրէ «Իւմանիթէ» : Ազգ. Ժողովի Գչ. օրուան նիստին մէջ յառաջդիմական երեսփոխանները չուզեցին նստիլ համայնավարներուն քով: Նոյն իսկ երկուքը պարսաւեցին Խ. Միութեան ընթացքը :

× « Մաչ» պարբերականին թղթակիցը, Ժան Փիէռ Փետրազինի, որ վիրաւորուած էր Փեշթայի կռիւներուն մէջ, մեռաւ հակառակ ամէն դարմանի : Օդանաւով Փարիզ փոխադրուած էր ուրբաթ գիշեր : Քսաներինը տարեկան էր, ամուսնացած: Ռուսական գնդացիրներու կրակին ենթարկուած էր երեք անգամ, իր պաշտօնը կատարած ատեն :

× Ազգ. Ժողովին արտաքին գործերու յանձնախումբը բանաձեւ մը պիտի ներկայացնէ ժողովին, բողոքելով Հունգարիոյ մէջ սարքուած աքսորներուն դէմ : Բանաձեւը խոնարհելով անկախութեան պայքարի զոհերուն առջեւ, հիացում կը յայտնէ ցոյց տրուած քաջութեան համար «ընդդէմ հարստահարիչի մը որուն արիւնոտ արարքը կ'ամբաստանէ տիեզերական խիղճը»: Յետոյ կը պահանջէ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել ծրագրուած տարագրութեանց դէմ :

× Ազգ. Ժողովին պատուակալ նախագահը Պ. Էռիօ, հրաժարեցաւ Ֆրանս - Խ. Միութիւն ընկերակցութենէն :

× Երեքշաբթի օր Վիէննա հասան քանի մը աւստրիացի եւ գերման լրագրողներ, որոնք Փեշթայէն եկեր էին կիրակի օր եւ ձերբակալուելէ ետք ազատ ձգուած էին: Ահա թէ ինչ կը պատմեն.

— « Խորհրդային զօրքին յարձակումը սկսաւ կիրակի առտու, օդանաւային ռմբակոծութեամբ : Յետոյ սկսան որոտալ թնդանօթները, ահագին վնասներ պատճառելով եւ հրդեհներ յարուցանելով : Եւ վերջապէս գործեցին հրասայլերը, անոնց ետեւէն ալ՝ հետեւակազօրքը : Խորհրդային զինուորները մեծ մասով Մոնկոլներ էին: Փողոցներուն մէջ կուլային ծերունիներ եւ երիտասարդներ, ահուսարսափի մատնուած : Քանի մը ժամ ետք աննկարագրելի քաոս մը կը տիրէր»:

Ձերբակալուած ատեն, լրագրողները ժամերով խուզարկուած եւ հարցաքննուած են: Ռուսերը ամերիկեան գործակալներ եւ փաշականները կը նկատեն իրենց բոլոր գերիները :

ԱԶԳԱԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԱՍԻՆ

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՄԵՐԺԷ ՊԱՐՊԵԼ ԻՐ ԳՐԱՒԱԾ ՀՈՂԵՐԸ

Երուսաղէմէն կը հեռագրեն թէ Իսրայէլի կառավարութիւնը պիտի չպարպէ Սինայի թերակղզին եւ թէ թոյլ պիտի չտայ որ միջազգային ուժ մը տեղաւորուի իր տիրած երկրամասին վրայ :

Անգլիոյ վարչապետը նոր յայտարարութեամբ մը չեշտեց թէ Իսրայէլ պէտք է պարպէ իր գրաւած հողերը : Նախագահ Այզընհաուըր ալ նամակ մը ուղղելով Իսրայէլի վարչապետին, պահանջեց պարպել գրաւած հողերը :

Սինայի թերակղզին 60.000 քառ. քիլոմեթր տարածութիւն ունի, — աւելի մեծ քան բուն Իսրայէլը :

ՄԱԿի ընդհ. ժողովը կը ծանուցանէ թէ ոստիկանական ուժ մը պիտի կազմակերպուի անմիջապէս, պահպանելու համար խաղաղութիւնը Միջին Արեւելքի մէջ : Այս առթիւ բանաձեւ մը քուէարկեց 64 ձայնով, գլխաւորութեամբ Խ. Միութեան եւ Մ. Նահանգներուն, պահանջելով Ֆրանսայէն, Անգլիայէն եւ Իսրայէլէն որ պարպեն եգիպտական հողերը : Ձեռնպահ մնացին տասը պետութիւններ :

Եգիպտոս հեռագիր մը ուղղեց Ազգաժողովին, դանգատելով թէ անգլեւֆրանսական ուժերը կը շարունակեն յառաջ խաղալ Ջրանցքին մէջ, հակառակ կրակը

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՍԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ստորագրությունների հավաքումը դադարեցնելու մասին հայտարարությունից հետո, երբ Երևանի Մեծ Կոմունարների անվան հրապարակում հավաքվեցին մոտ 5 հազար մարդ, ոստիկանությունը ձերբակալեց 18 հոգու։ Ձերբակալվածների մեջ էին նաև Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբեն Ավետիսյանը, Վարդան Ղազարյանը, Ռուբեն Մելիքյանը, Ռուբեն Մանասյանը, Ռուբեն Ղազարյանը, Ռուբեն Ավետիսյանը, Ռուբեն Մելիք

ՍՈՍՏԻԿ

(ՍՈՍՏԻԿԻ ՎՃՊ, 364 - 400)

Ֆ. ԳԻՒՂ

10.— ՄԻՆՉԵՎ «ՅՈՍՏՂՎԱՐՔ»

ՕՐԱԹԵՐԹԸ »

Ամառ ձորաստանի վարարուն գետը դուրս էր եկել ափերից, ողողել էր ամբողջ հովիտը, ու ջրերի մռնչյունը հասնում էր մինչև գյուղ։ Իսկ գյուղում ամեն ինչ հանգիստ էր թվում։ Ոչ ոք չէր կասկածում, որ ահռելի ուժով ջրերը ամեն վայրկյան կարող են ավերել ամեն ինչ։ Ոչ ոք չէր կասկածում, որ ամեն վայրկյան կարող է հնչել ահազանգի զանգը։

Ամենից շատ ջրերի մռնչյունը վախեցնում էր Ասյային։ Նա ամեն գիշեր քնելուց առաջ ականջ էր դնում ջրերի մռնչյունին, ու ամեն անգամ, երբ ջրերի մռնչյունը ուժգնանում էր, նա ոտքի էր թռչում ու վազում էր հոր մոտ։

— Հայրիկ, ջրերը ավելի բարձրացան, ասում էր նա։

Հայրը հանգստացնում էր աղջկան։

— Մի վախեցիր, ասում էր նա, ամեն ինչ լավ կլինի։ Ես ամեն ինչ հսկում եմ։ Ես ամեն վայրկյան ականջ եմ դնում ջրերի մռնչյունին։ Ես գիտեմ, թե երբ պետք է զանգը հնչեցնել։ Ես ամեն ինչ գիտեմ։ Ես ամեն ինչ հսկում եմ։

Ասյան հանգստանում էր հոր խոսքերից, բայց նորից ականջ էր դնում ջրերի մռնչյունին։ Ջրերը ավելի ու ավելի էին բարձրանում։ Ասյան նորից վազում էր հոր մոտ։

— Հայրիկ, ջրերը ավելի բարձրացան, ասում էր նա։

Հայրը նորից

դադրեցնելու որոշման ։ Լոնտոն կը հերքէ այս մեղադրանքը ։

Անգլիական աղբիւրէ կը հաղորդեն թէ Խ. Միութիւնը նոր սաւառնակներ կը ղրկէ Եգիպտոսի եւ Սուրիոյ ։ Նոյն աղբիւրին համաձայն միայն հարիւր հոգի սպաննուած կամ վիրաւորուած են Փորթ Սայիտի կռիւներուն մէջ ։

× Մառեշալ Ժուկով ճառ մը խօսելով բոլշեւիկեան յեղափոխութեան տարեդարձին առթիւ, յայտարարեց թէ Խ. Միութիւնը պատրաստ է զինեալ ուժեր տրամադրելու, Միջին Արեւելքի խաղաղութեան համար ։

× Մառեշալ Բուլկանին նոր նամակ մը ուղղեց Անգլիոյ եւ Ֆրանսայի վարչապետներուն ։

× Մ. Նահանգները միջոցներ ձեռք առին իրենց զինեալ ուժերը կազմ եւ պատրաստ պահելու համար, իբրեւ հետեւանք Մոսկուայի սպառնալիքներուն ։

× Անգլեւֆրանսական սպայակոյտը կը ծանուցանէ թէ գրաւած են Ջրանցքին առաջին քառորդ մասը (40 քիլոմեթր 160ի վրայ) ։ Հարիւր միլիոն ֆրանքի աւար անցած է դաշնակիցներուն ձեռքը ։

ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐ շահած է 29.500.000 քուէ, իր մրցակիցը՝ Սթիվենսըն՝ 21.370.000 ։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Ազգ. ժողովին մէջ բուռն տեսարաններ պարզուեցան առջի գիշեր ։ Արտաքին նախարարը խօսք առնելով յայտարարեց թէ «Համայնավար մամուլը կ'անպատուէ ինքզինքը ։ Լեհ, եուկոսլաւ, չինացի համայնավարները հեռագիրներ ուղղեցին համակրանք յայտնելով հունգար ժողովուրդին ։ Միայն ֆրանսացի համայնավարները անարգեցին տակաւին տաք դիակներ ։ Ազգաժողովը աւելի լաւ գործ մը կատարած պիտի ըլլար այնքան ժամանակ չվատնելով եգիպտական հարցին համար եւ աւելի շատ զբաղելով Հունգարիոյ կացութեամբ »։

Վարչապետն ալ խօսք առնելով յայտարարեց համայնավարներուն. — «Դուք կը վախնաք վասն զի Փեշթայի մէջ դեռ կան մարդիկ որոնք կը նախընտրեն մեռնիլ ոտքի վրայ, քան ապրիլ ծնրադիր, ինչպէս կ'ընէք դուք »։

Վիճաբանութեանց ընթացքին կարգ մը լուտանքներ արձակուեցան ։ Նախագահը, Լը Թրոքէր, խօսքը համայնավար Ռամէթի ուղղելով աղաղակեց. — «Ձեզմէ թի ուղղելով [illegible] չունիմ»։ Երեսփոխան մը «մա[illegible]սպաննե՛ր» պոռաց համայնավար[illegible]րուն ։ Վարչապետը դարձեալ խօսք ա[illegible]ելով ըսաւ. — «Ոստիկանութիւնը ձի կը պաշտպանէ ժողովրդական [illegible]յթին դէմ »։

Բուէարկութեան ատեն, «148 սթալինեան երեսփոխաններ քուէ տուին Փեշթայի մեռեալներուն դէմ», կ'ըսէ «Փարի Փրէս» ։ Այս առթիւ ալ աննկարագրելի ժխոր մը ծագեցաւ ։

× Վիէննայէն կը հեռագրեն թէ Փեշթայի մէջ մոնկոլ զինուորներ ժողովուրդին վրայ կը յարձակին բոցարձակ զէնքերով ։ Կռիւները կը շարունակուին տակաւին ։ Դիակները դիզուած են փողոցներուն մէջ, ինչպէս եւ վիրաւորներ ։

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ վարչութիւնը եւ հոգաբարձութիւնը բացած են կիրակնօրեայ վարժարան մը հայ մանուկներու եւ պատանիներու կրօնական դաստիարակութեան համար, կիրակի 4 Նոյեմբերէն ի վեր ։

Կը հրաւիրենք ծնողները որ դիմեն եկեղեցւոյս դիւանատունը արձանագրել տալու համար իրենց զաւակները ։ Դասաւանդութիւնները կը կատարուին ժամը 10.30-11.30 ։ Յետոյ աշակերտները խումբով պիտի առաջնորդուին եկեղեցի մասնակցելու կրօնական արարողութեան ։(Դիւան)

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Հալէպէն Արմենակ եւ Բերուզ Գասպարեանի զաւակները, Էսքիշէհիրցի, կը փնտռեն իրենց մօրեղբայրները՝ Երուանդ, Կարապետ եւ մօրաքոյրը՝ Մարի Դանիէլեաններ, մօրը անունը Սուլթան, հայրը՝ Յարութիւն ։ Կը կարծուի թէ Արաէչի Նահանգին Պիւզէ քաղաքը կը գտնուին ։

Կը խնդրուի ճանչցողներէն տեղեկացնել հետեւեալ հասցէին Գ. Խոսրովեան, 14 ռիւ Թրաշէլ, Նիս ։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Կիրակի, 11 Նոյեմբեր, ժամը 14ին, Հայ Կաթողիկէ սրահին մէջ, (ռիւ տը լա Պոռս) ։ Նախաձեռնութեամբ Սէն Շամոնի Հ. Յ. Դ. «Վարուժան» եւ Սէնթ Էթիէնի «Անտոք» կոմիտէներուն, մասնակցութեամբ Նոր Սերունդի երկու խումբերուն ։

Կը նախագահէ ընկ. Ս. ԸՆՏՐԻԿԵԱՆ

Կը խօսի ընկ. Մ. ՄԻՐԶԷ

Գեղարուեստական խնամուած բաժին ։

Ճոխ պիւֆէ — Մուտք ազատ է

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս երկուշաբթի, ժամը 21ին, Քաֆէ Քատէի վերնայարկը ։ Դասախօս Պ. ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ ։ Նիւթը՝ «Հրաշագործ Հայը եւ քանի մը երգիծ. նոր էջեր »։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ ։ Մուտքը ազատ է ։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

(Բարեգործականի 50ամեակին առթիւ)

Բարեգործականի Յոբելենական հանդէսի կարգադիր յանձնախումբը ստիպողաբար կը խնդրէ հաղորդել. —

Ա) Բոլոր անոնք որ հանդէսին համար թուագրեալ տոմսակ ստացած են եւ որ եւ է պատճառով պիտի չկրնան օգտագործել զանոնք, բարի ըլլան անմիջապէս վերադարձնելու Բարեգործականի գրասենեակը, որպէս զի կարելի ըլլայ գոհացում տալ բազմաթիւ նոր խնդրանքներու ։

Բ) Բոլոր անոնք որ ձրի հրաւէրի տոմսեր ունին թող փութան փոխանակել զանոնք մուտքի թուագրեալ տոմսերով, Բարեգործականի գրասենեակը ։

Գ) Մուտքի թուագրեալ տոմսակներ ունեցողներուն տեղերը, եթէ իրենց տէրերուն կողմէ գրաւուած չըլլան ժամը 9ին, կրնան ուրիշներու տրամադրուիլ ։

Դ) Ներկայիս տրամադրելի տեղերու թիւը խիստ սահմանափակ ըլլալով, հաւանական է որ սպառին մինչեւ կիրակի եւ հանդէսին մուտքին տրամադրելի տոմսակներ մնան շատ սահմանափակ թիւով ։ Հանդէսին ներկայ ըլլալու փափաք ունեցողներուն կը թելադրուի կանխաւ ձեռք բերել թուագրեալ տոմսակներ, մինչեւ Շաբաթ իրիկուն, դիմելով Բարեգործականի գրասենեակը ։

ԾԱԽՈՒ Է

Ծախու է պարապ փավիյօն մը (Ժիւվիզի սիւր Օրժ, Փորթ տ'Իթալիէն), պարտէզով երեք սենեակ, խոհանոց, ֆավ, մուտք, ջուր, ելեկտրականութիւն ։ Գին 1.700 ։ Դիմել՝

Taniellian, 20 Rue Lucien Sampaix, Paris 10e, ou Henry Gottihiaux, 3 Rte. de Fontainebleau, Athis-Mons. (S. et O.).

Tél. : BEL 42-67

*

Երկու մեքենաներ կօշիկի երես (սայա) կարելու համար եւ մէկ հատ ալ ծակելու մեքենայ մը (փեռֆոռաժ) ։ Դիմել Տիկին Թորոսեանի՝ 15 ռիւ Թիէ, Անիէռ (Սէն) ։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սամուէլ Մուրատեան վարժարանի տօնածառի հանդէսը կիրակի 23 Դեկտեմբեր, ժամը 4ին ։



Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՁՐԻ ՅԱՆՁՆԵԼԻ ՖՐԱՆՍԱՅԻ
ԱՄԷՆ ԿՈՂՄԸ

185, Bd. Jean Jaurès
Boulogne - Billancourt
Métro MARCEL SEMBAT

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅ. 11, ԺԱՄԸ 18էն 2 SALLE VOLTAIRE, Alfortville

Նախագահութեամբ երեսփոխան եւ նախկին նախարար E. Depreuxի եւ Ալֆորվիլի քաղաքապետ՝ R. Bleuseի

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԿԱԼԱ՜ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ Fernand Reynaudի
(ԺԱՄԸ ՃԻՇԴ 21ԻՆ)

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ Jacques HELIAN

Հաղորդակցութեան միջոց. — Շարանթօն Էքօլէն 103 թիւը առնել ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆՋՈՅՔ

Կազմակերպուած Թոքատի Հայր. Միութեան կողմէ ։ Կիրակի, 11 Նոյեմբեր, կէսօրէ վերջ ժամը 3ին, 45 ռիւ տը լա Տէֆանս սրճարանի սրահը, Իսի լէ Մուլինօ ։

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին տիկիններ Ֆէսլեան, Գալայճեան, Տարօն քոյրեր, Գարակէօզեան, Յակոբեան եւայլն ։

Հայկական, կովկասեան եւ հունգարական պարեր եւ զանազան անակնկալներ ։ Խօսք պիտի առնեն Ֆրանսահայ Փոխադարձ օգնութեան միութեան Կեդր. վարչութեան անդամները ։

Հասոյթը պիտի յատկացուի Հայաստանի Պետական Համալսարանին դրկուելիք գիրքերուն ։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ Մարսէյլի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը Դեկտեմբեր ութին ։ Մանրամասնութիւնները յաջորդով ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ֆ. Կ. ԽԱՉԻ Անիէռ Պուա Քոլոմպի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր անդամուհիները այս երկուշաբթի ժամը 15ին Տիկ. Օրմանճեանի բնակարանը, Քոլոմպ ։ Կարեւոր օրակարգ ։

ԿԱՊ. ԽԱՉԻ Իթալիի մասնաճիւղին ընդհ. ժողովը այս չորեքշաբթի ժամը չորսին, դպրոցին սրահը ։ Ներկայ կ'ըլլայ Կեդր. վարչութեան ներկայացուցիչը ։

ԹԷՅԱՍԵՂԱՆ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կաթողիկէ Տիկիններու Միութիւնը հաճոյքով կը հրաւիրէ Լիոնի հայութիւնը իր տարեկան թէյասեղանին, այս կիրակի կէսօրէ վերջ, Յոյներու սրահին մէջ, 5, ռիւ Պոնըֆուա ։

Հայկական ջերմիկ միջավայրի մէջ, զուարճալի ժամանց այլազան անակնկալներով եւ գեղարուեստական բաժինով ։

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ՅԱՅՏՆԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՊԱՐՈՒՀԻ

ԼԱՈՒՐԱ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Կուտայ իր անդրանիկ պարի երեկոյթը մասնակցութեամբ՝

ՄՈՐԻՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

եւ ՆԱՅԻՐԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ղեկավարութեամբ

ԳԷՈՐԳ ԵԱՆՊԷԿԵԱՆԻ

Չորեքշաբթի, 14 Նոյեմբեր, ժամը 20.30ին

Théâtre International, 21 Bd. Jourdan (Métro Cité Universitaire)

Տոմսերը 500, 300, ուսանող 150 ։ Դիմել Սարգոնի ղոնապաններուն ։

ՀԱՅ ԹԱՏՐՈՆ

U. F. C. F.ի ԹԱՏԵՐԱՍՐԱՀ

21, Rue Yves Toudic PARIS (10e) Métro : République et Bonsergent

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԳԻՇԵՐ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1956, ԺԱՄԸ ՃԻՇԴ 8.45ԻՆ

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԳ ՏԷՐՎԻՇԵԱՆ

ԿԸ ԽԱՂԱՅ

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՄԸ

ՏՈՆ ԺՈՒԱՆ

ՄՈԼԻԷՌԻ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ, ՀԻՆԳ ԱՐԱՐ

Կը մասնակցին ՕՐ. ԱԼԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ, Պ.Պ. Ա. ԳՄԲԷԹԵԱՆ, Ն. ՄԱՐԳԱՐԵԱՆ, Տ. ՆՇԱՆԵԱՆ եւ ուրիշ կարեւոր ուժեր ։

Տոմսերը կը ծախուին Բալուեան գրատունը ։

ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՄԵԾԱՇՈՒՔ ՓԱՌԱՏՕՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Բարձր Հովանաւորութեամբ Հանրապետութեան Նախկին Նախագահ

Monsieur VINCENT AURIOLի

եւ ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐԻ

Խօսք կ'առնեն Գեր. Տ. ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ ։ Արհ. ԿԱՐԱՊԵՏ Ծ. Վրդ. ԱՄԱՏՈՒՆԻ, Վեր. ԳԱՐԵԳԻՆ ՍԻՍԼԵԱՆ, ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ

Monsieur Henri BARRE, Sénateur

Monsieur le Comte Philippe d'ARSCHOT, petit -fils de Boghos NUBAR

ՎԱՀԷ ՖՐԷՆԿԵԱՆ, ՆՈՒՐՀԱՆ ՖՐԷՆԿԵԱՆ

Կիրակի, 11 Նոյեմբեր, ժամը 20.30ին, ՍԱԼ ՓԼԵՅԷԼԻ ՄԷՋ

252, FAUBG. SAINT-HONORE, PARIS (Métro : Ternes)

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ԲԱԺԻՆ

արտասանութիւն, խմբերգ, մեներգ, նուագ, պար, մասնակցութեամբ Սիփան Կոմի տաս երգչախումբի, ղեկավար՝ Կարպիս Ափրիկեան, Օրիորդներ՝ Լ. Աւետիսեանի, Գ. Ղազարոսեանի, Ի. Պէրպէրեանի, Ի. Պիւլպիւլեանի, Ս. Սաաթճեանի, Ա. Սարգսեանի, Թ. Քէօշկէրեանի եւ Պ. Պ. Մ. Աբրահամեանի, Ա. Գմբէթեանի եւ Ս. Պօղոսեանի

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅ

Մուտքը ձրի է թուագրեալ հրաւիրագրով, որ կարելի է ստանալ Միութեան գրասենեակէն

11, Square Alboni, Paris (16e). Tél. : TROcadéro : 03-18

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 — R.C. Seine 376.286
Fondé en 1925 — Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ.ներ, տարեկան 3000ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ 10 ՆՈՅԵՄԲԵՐ • SAMEDI 10 NOVEMBRE 1956

32րդ ՏԱՐԻ — Թիւ 7726 — 32e ANNEE — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12րդ ՏԱՐԻ, Թիւ 3539

ԲԱՑԱՌԻԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ԻՍՐԱՅԷԼ ՈՐՈՇԵՑ ԵՏ ԿԱՆՉԵԼ ԻՐ ԶՕՐՔԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԱՍԻՆ

Նախագահ Այզընհաուըր հազիւ վերընտրուած, հրամայեց բացառիկ միջոցներ ձեռք առնել, նկատելով որ կացութիւնը ծանրացած է Կեդր. Եւրոպայի եւ Միջին Արեւելքի մէջ :

Ահաւասիկ առաջին կարգադրութիւնները. —

Ազգ. պաշտպանութեան նախարարութիւնը հրամայեց բոլոր օդանաւային, ծովային եւ ցամաքային ուժերու հրամանատարներուն «ամրապնդել Ամերիկայի պաշտպանութեան միջոցները», նկատի առնելով Կեդր. Եւրոպայի եւ Միջին Արեւելքի կացութիւնը: Միացեալ սպայակոյտին ներկայացուցիչը մերժեց ճշդել ձեռք առնուելիք միջոցները եւ գոհացաւ հետեւեալ յայտարարութեամբ. — « Չենք ուզեր յանկարծակիի գալ: Միւս կողմէ, չենք ուզեր ձեռք առնել որեւէ գրգռիչ միջոց որ կրնայ փորձանքի մատնել մեզ: Այս է մեր միակ ընելիքը ներկայ կացութեան մէջ »:

Բանբերը միեւնոյն ատեն յայտնեց թէ Հոկտեմբեր 29էն ի վեր միացեալ սպայակոյտին պետերը ամէն օր երկու անգամ կը հաւաքուէին, տեղեկութիւններ հաղորդելով վերադոյն հրամանատարներուն աշխարհի կացութեան մասին եւ մատնանշելով ձեռք առնուելիք միջոցները, ամերիկեան ազգին պաշտպանութեան միջոցները զօրացնելու համար :

Այս առթիւ կը ծանուցուի թէ ամերիկեան այն կարեւոր նաւաբաժինը որ կը յածէր Նորֆոքի բացերը, հրաման ստացած է դադրեցնելու իր ռազմափորձերը եւ բացառիկ ժամանակներու յատուկ վարժութիւններ կատարելու: Այս նաւաբաժինը զօրացած է նոր օդանաւակիր մարտանաւով մը որ ունի 60.000 թոն տարողութիւն: Ուրիշ օդանաւակիր մը եւս կը գտնուի նաւաբաժինին մէջ, 45.000 թոն տարողութեամբ: Ատլանտեանի եւ Խաղաղականի կարգ մը նաւաբաժինները բացառիկ վիճակի մէջ դրուած են եւ կը համախմբուին: Կարեւոր նաւահանգիստի մը մէջ նաւաստիներուն արձակուրդը կէս առ կէս կրճատուեցաւ: Հոնոլուլուի մէջ կարգ մը նաւաբաժիններ հրաման ստացան փութացնելու իրենց մեկնումը դէպի Միջին Արեւելք :

Նոյեմբեր 8ին ամերիկեան ապահովութեան Խորհուրդը նիստ գումարեց նախագահութեամբ Այզընհաուըրի: Ժողովը, որ երկուքուկէս ժամ տեւեց, յատկացուած էր Միջին Արեւելքի կացութեան եւ մասնաւորապէս այն օգնութեան զոր Մ. Նահանգներ տրամադիր են ընծայելու Ազգաժողովին ղրկելիք ոստիկանական ուժին :

Իրազեկ աղբիւրէ կը հաստատեն թէ այս ժողովին մէջ Այզընհաուըր ծանրացած է ոչ միայն Միջին Արեւելքի, այլ եւ Կեդր. Եւրոպայի կացութեան վրայ: Ստացուած տեղեկութեանց համաձայն արեւմտեան Եւրոպայի կարգ մը կառավարութիւններ լուրջ մտահոգութեան մատնուած են:

Այզընհաուըր երէկ (ուրբաթ) ժողովի հրաւիրած էր երկու կուսակցութեանց վարիչները, քննելու համար թէ ինչ միջոցներ ձեռք առնելու է, տեւական խաղաղութիւն հաստատելու համար Միջին Արեւելքի մէջ, միեւնոյն ատեն ամրապնդելով ապահովութիւնը Կեդր. Եւրոպայի մէջ:

Միւս կողմէ, Խաղաղականի Ա. նաւաբաժինին եւ օդատորմիղին հրամանատարները կը ծանուցանեն թէ այն մարտանաւերը եւ օդանաւակիրները որոնք Խաղաղականի ջուրերը պիտի երթային Նոյեմբերին եւ Դեկտեմբերին, կամ եւ պատրաստ կը սպասեն, ճամբայ ելլելու համար, համաձայն միջազգային կացութեան պահանջներուն :

Ամերիկեան աղբիւրէ կը հաղորդեն թէ մթնոլորտը այնքան թանձրացած է որ վերջին 24 ժամերու ընթացքին կը վախնային թէ «բան մը կրնայ պատահիլ»: Մասնաւոր ազդարարութիւններ ուղղուած են որպէս զի չթերագնահատուի Խ. Միութեան սպառնալիքը միակողմանի գործողութեան մը ձեռնարկելու Միջին Արեւելքի մէջ: Այս առթիւ ուշադրաւ կը համարուի որ Միջին Արեւելքի կարգ մը անգլիական եւ ֆրանսական ուժերը արդէն ճամբայ ելած են դէպի հայրենի խարիսխները, ի նախատեսութիւն որեւէ անակնկալի :

Միեւնոյն ատեն կը հաստատուի թէ Խ. Միութեան ցամաքային եւ օդանաւային ուժերը կասկածելի շարժումներ կը կատարեն: Այսպէս, ստուարաթիւ զինուորներ փոխադրուած են արեւելեան Գերմանիա: Նոյնպէս զինուորական համախմբումներ կը նշմարուին Լեհաստանի ռուսական սահմանին վրայ, զրոյցի մը համաձայն՝ 20 – 40 զօրաբաժին: Ռումանիոյ սահմանին վրայ եւս աւելցած են ռուս զինուորները, իսկ Հունգարիան արդէն կը գտնուի ռուսական բանակի թաթին տակ: Այս պարագան մեծ մտահոգութիւն կը պատճառէ մասնաւորապէս Աւստրիոյ :

Կը հաստատուի թէ Խ. Միութիւնը ամենավերջին դրութեամբ օդանաւեր ղրկած է Սուրիա, լուրջ մտահոգութիւն պատճառելով Ազգաժողովի Ապահովութեան Խորհուրդին :

Այս բոլոր շարժումները եւ ուրիշ պարագաներ կ'ապացուցանեն թէ արեւմտեան պետութիւնները աւելի ծանր դէպքեր կը նախատեսեն :

ԱԶԳԱԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԻ՞Ն

Իսրայէլի կառավարութիւնը հաղորդեց Ազգաժողովին թէ պատրաստ է իր զինուորները անմիջապէս քաշելու Եգիպտոսէն, երբ գոհացուցիչ կարգադրութիւն մը ըլլայ Ազգաժողովին միջազգային ուժը մը հաստատելու համար անոնց տեղ: Իսրայէլի արտաքին նախարարը, Տիկին Կոլտա Մէյր այս յայտարարութիւնը Ազգաժողովին ընդհ. քարտուղարին հաղորդեց իր պատուիրակին միջոցաւ : Յայտարարութիւնը այս առթիւ ալ կը յիշեցնէր թէ Իսրայէլ պատրաստ է ուղղակի բանակցութիւններ կատարելու Եգիպտոսի հետ, տեւական հաշտութիւնը կնքելու համար: Բայց դիտել կուտայ թէ այս առաջարկը կապ չունի զօրքի պարպումին հետ: Ուրեմն Իսրայէլ յանձն կ'առնէ քաշել իր զօրքը, առանց պայմաններ դնելու:

Այզընհաուըր մասնաւոր նամակ մը ուղղած էր Իսրայէլի վարչապետին, թելադրելով ետ քաշել իր զօրքը, համաձայն Ազգաժողովին որոշման: Պէն Կիւրիոն պատասխանեց թէ «ոչ ինք, ոչ ալ ուրիշ որեւէ իրաւասու անձ ըսած է թէ պիտի կցենք Սինայի անապատը»: Այս առթիւ զարմանք յայտնեց որ Խ. Միութեան վարչապետը՝ մարեշալ Բուլկանին իր գրով կը սպառնար Իսրայէլի գոյութեան : «Իբրեւ գերիշխան պետութիւն մենք տէրն ենք մեր ճակատագրին »:

Այս երկու նամակները հրատարակուեցան, երբ Իսրայէլ կը ծանուցանէր թէ ետ պիտի քաշէ իր զօրքը: Մարեշալ Բուլկանին կ'ամբաստանէր Իսրայէլի կառավարութիւնը թէ աշխարհի ճակատագրին հետ կը խաղայ եւ կ'աղաղակէր. — «Խ. Միութիւնը միջոցներ ձեռք առած է խաղաղութիւնը պահպանելու համար: Կը յուսանք թէ Իսրայէլ պիտի վերաքննէ իր քաղաքականութիւնը, դադրեցնելով իր նախայարձակում մը Եգիպտոսի դէմ ետ քաշելով իր զօրքը :

Շատ աւելի սիրալիր են Այզընհաուըրի հետ փոխանակուած նամակները :

× Վերջին լուրերու համաձայն անդորրութիւնը հետզհետէ կը վերահաստատուի Եգիպտոսի մէջ: Բայց ֆետայիները վերսկսած են իրենց գործունէութիւնը Իսրայէլի դէմ :

× Անգլիա եւ Ֆրանսա հետեւեալ պայմանները դրած են, իրենց զինուորական գործողութիւնները դադրեցնելու համար.— Եգիպտոս եւ Իսրայէլ կ'ընդունին կրակը դադրեցնել, առանց որեւէ պայման դնելու: Միջազգային ուժը ի վիճակի պէտք է ըլլայ կատարելու իրեն յանձնուած պաշտօնը: Ֆրանսա եւ Մեծն Բրիտանիա յանձն կ'առնեն մաքրել եւ գործածելի դարձնել Ջրանցքը: Ապահովութեան Խորհուրդը պարտաւոր է այժմէն քննել Միջին Արեւելքի խնդիրներուն կարգադրութիւնը :

Եգիպտոսի բոլորովին տարբեր պայմաններ կը դնէ, կրակը դադրեցնելու համար: Կը պահանջէ ետ քաշել բոլոր օտար զինուորները (ֆրանսական, անգլիական, իսրայէլեան), որեւէ օտար աջակցութիւն չընծայել պատերազմիկներուն, ապահովել Ջրանցքին նաւարկութիւնը :

Աֆրիկեասիական խմբակցութիւնն ալ բանաձեւ մը յանձնած է, պահանջելով անմիջապէս ետ քաշել բոլոր օտար զինուորները :

× Մոսկուայի կուսակցական պաշտօնաթերթը, «Փրաւտա» կը փառաբանէ Եգիպտոսի ժողովուրդին հերոսական դիմադրութիւնը, յաղթանակ մը համարելով կրակը դադրեցնելու որոշումը, իբրեւ հետեւանք Խ. Միութեան միջամտութեան՝ Ազգաժողովին մէջ :

ՔԱՌՍ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

ՍՈՎԻ ՎԱԽ ԵՒ ՈՒՐԻՇ ՏԱԳՆԱՊՆԵՐ

Սրտաճմլիկ լուրեր կը հասնին Փեշթայէն, ուր դիմադրութիւնը կը շարունակուի յուսահատօրէն: Երկիրը կատարեալ քաոսի մը վերածուած է: Ազգաժողովին ընդհ. քարտուղարը հարցուց հունգարական կառավարութեան թէ կ'արտօնէ՞ որ քննիչներ ղրկուին :

Իսկ Խ. Միութեան վարչապետը, Բուլկանին պատասխանեց Այզընհաուըրի նամակին թէ «խորհրդային զօրքը Հունգարիայէն քաշելու խնդիրը հարց մըն է որ կ'իյնայ « միայն հունգարական եւ խորհրդային կառավարութեանց իրաւասութեան տակ »:

× Վիէննա հասած տեղեկութեանց համաձայն, կառավարութիւնը կը խոստովանի թէ ցարդ չէ յաջողած բարեկարգութիւնը վերահաստատել Փեշթայի մէջ եւ թէ քաղաքը սովի վտանգին առջեւ կը գտնուի, իբրեւ հետեւանք կազմալուծման եւ «զինեալ հրոսախումբերու» գործողութեանց : Խամաճիկ իշխանութիւնը օրն ի բուն ռատիօ-կոչեր կ'ուղղէ, հրաւիրելով ժողովուրդը որ «ամէն բան ընէ, որպէսզի զէնքերը լուեն կարելի եղածին չափ շուտ »:

Կարելի չէ գիտնալ թէ դիմադրութիւնը որքան կրնայ տեւել մայրաքաղաքին մէջ: Ուշադրաւ է որ խորհրդային հրամանատարութիւնը նոր կոչ մը ուղղեց, կրակը դադրեցնելու եւ բոլոր զէնքերը յանձնելու համար: Կը նշանակէ թէ ապստամբները չեն ուզեր անձնատուր ըլլալ : Դիմադրութեան բոյներ հաստատուած են երկրին զանազան մասերուն մէջ: Ըմբոստները կը նախընտրեն մեռնիլ կռուելով քան գնդակահարուիլ անձնատուր ըլլալով :

ՓՈԹՈՐԻԿ ԱԶԳ. ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

«ԼՈՒԾԵՑԷՔ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ».— ՓՈԽԱԴԱՐՁ ԼՈՒՏԱՆՔՆԵՐ.— «ԿԵՍԹԱՓՕ», «ԿԵՓԷՈՒ».— « ՀՐՁԻԳՆԵՐ».— «ՍՐԻԿԱ՛Յ».— «ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸ ԿԸ ՃԶՄԵՆ ՑԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ »

Երէկ համառօտակի յիշած էինք Ազգ. Ժողովի Նոյեմբեր ութի նիստին մէջ պարզուած տեսարանները: Իրականին մէջ շատ աւելի յուզումնալից հանգամանք ունէր նիստը: Նախագահը հարկադրուեցաւ երկու անգամ ընդհատել ժողովը եւ 17 անգամ կարգի հրաւիրել շատ մը երեսփոխաններ :

Օրակարգի խնդիրներն էին Եգիպտոսի վրայ կատարուած արշաւանք եւ Հունգարիոյ ժողովուրդին տագնապը : Մասնաւորապէս բուռն տեսարաններ պարզուեցան այս վերջին հարցին քննութեան առթիւ :

Առաջին հարցապնդումը կատարեց ժողովրդական (կաթոլիկ) երեսփոխան մը, Պիշէ, իր մեծարանքը յայտնելով հունգար ժողովուրդին որ կը ջախջախուի սովետական բանակին կողմէ: Ըսաւ թէ կատարուած արարքը զայրոյթ կը պատճառէ Ֆրանսացիներու ստուար մեծամասնութեան եւ ուժգնօրէն բողոքեց Խ. Միութեան այն մեղադրանքին դէմ թէ ապստամբութիւնը ափ մը ֆաշականներու գործն էր եւ գովուեցաւ ժողովուրդին կողմէ :

Այդ պահուն «պռաւօ» պոռաց համայնավար երեսփոխան մը, Մառան; «Դուք Ֆրանսայի ամօթն էք», պատասխանեց ուրիշ ժողովրդական երեսփոխան մը, խօսքը ուղղելով ծայրագոյն ձախակողմին (բոլշեւիկ):

Պիշէ շարունակելով իր ճառը, յայտարարեց թէ ժողովուրդը ըմբոստացած է թշուառութեան եւ ոստիկանական դիկտատուրային դէմ Փեշթայի մէջ, ինչպէս Պերլինի եւ Փոզնանի մէջ: Այդ միջոցին «մարդասպաններ» կ'աղաղակէին կեդրոնէն եւ աջէն: Ուրիշ մը պոռաց «Ջարդարարներ» : Հարցապնդող երեսփոխանը խստօրէն դատապարտեց Ֆրանսայի համայնավար կուսակցութիւնը «որ կը ջատագովէ ոճիրը եւ դաւաճանութիւնը, որ տեւականօրէն կը վնասէ պետական ապահովութեան եւ ազգին բարոյականին :

Երկրորդ հարցապնդողը, Թեքսիէ Վինեանքուր, հազիւ բեմ ելած, համայնավարները ահագին ժխոր մը յարուցին, լուտանքներ տեղալով, Պ. Թեքսիէ յայտարարեց թէ պիտի չպատասխանէ որեւէ ընդմիջումի: Ժխորը կը շարունակուէր, « ֆաշական, գործակից» աղաղակներով : Նախագահը միշտ կը յիշեցնէր թէ բեմը ազատ է բոլոր երեսփոխաններուն համար: Յետոյ ճարահատ ընդհատեց նիստը: Քառորդ ժամ վերջը, նախագահը վերաբանալով նիստը յորդորեց յարգել բեմին ազատութիւնը : Աջակողմեան երեսփոխանը իր տեսակէտները պարզելէ ետք, հարցուց .— «Ո՞րո՞նք ենք ֆաշականները: Անոնք որ ազատ ընտրութիւններ կը պահանջեն թէ՞ անոնք որ կ'արգիլեն զինու զօրութեամբ: Անո՞նք որ փոսփորէ ռումբերով խաչեցան, թէ անոնք որ կը ձերբակալեն հունգար պատուիրակները, բանակցութեանց ընթացքին »:

Համայնավարները վերսկսան աղմկել : Վինեանքուր շարունակելով իր ճառը, հարցուց.— Ի՞նչ կը բանի կառավարութիւնը: Ֆրանսան իրաւունք ունի՞ ինքզինքը պաշտպանելու համայնավար կուսակցութեան հակաֆրանսական գործունէութեան դէմ»: Այս առթիւ յիշելով 1939ի գերմանեւռուս դաշնագիրը եւ ֆրանսացի համայնավարներուն բռնած

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՎԱՂԱԿՈՒՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հայկական Կոմսոմոլի վաղակուն հայրենական պատերազմի հաղթանակը ոգեկոչելու համար Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի, Հայկական Կոմսոմոլի Կենտկոմի, Հայաստանի Կոմպարտիզանների միության Կենտկոմի և Հայաստանի Ազգային պատերազմական կոմիտեի որոշմամբ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Ի. Քոչինյանի նախագահությամբ կազմվել է հանձնաժողով։

Հանձնաժողովի կազմում են ընկ. Ա. Ի. Քոչինյանը, Հայկական Կոմսոմոլի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Ա. Ղազարյանը, Հայաստանի Կոմպարտիզանների միության Կենտկոմի նախագահ ընկ. Ա. Ա. Ղազարյանը, Հայաստանի Ազգային պատերազմական կոմիտեի նախագահ ընկ. Ա. Ա. Ղազարյանը, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար

պրուքֆիլնը , դիտել տալով թէ յանցանքը ապացուցուած չէ :

Այսօր եօթը տարի է անցած Ռայքի եւ իր բարեկամներուն կախաղանէն ի վեր , եւ բոլորին անմեղութիւնը հաստատուած է : Հունդար ժողովրդական Հանրապետութեան մտաւորականները յանդգնօրէն պլուին անցան ապստամբական այս չարժման : Անոնք վերահաստատեցին Ռայքի եւ իր բարեկամներու պատիւը եւ ստիպեցին որ պատասխանատուներուն մեծ մասը հեռանայ քաղաքական ասպարէզէն :

1949ի կէսը ստորագրողներս եւ իրենց բարեկամները համակրանքով եւ ոգեւորութեամբ կը հետեւին հունդար մտաւորականներուն , որոնք կը չարունակեն երկրին յեղափոխական մեծ աւանդութիւնը 1848էն ի վեր : Անոնք գիտեն թէ հունդարացի մտաւորականները կ'ուզեն պարտադրել ճշմարիտ ժողովրդապետութեան մը ձեւերը , վերահաստատել խօսքի եւ մտքի ազատութիւնը , իրրեւ անհրաժեշտ պայմանները մշակոյթի բարգաւաճման, ստեղծել վերջապէս ընկերվարական պայմաններ , ուր Ռայքի դատավարութեան նման դէպք մը անկարելի դառնայ :

Այս է պատճառը որ անոնք կ'ուզեն իրենց համակրանքը եւ ջերմ քաջալերութիւնը իրենց հունդար պաշտօնակիցներուն որոնք փրկարար պայքար մը կը մղեն : (Ստորագրութիւններ) :

Ֆրանսացի մտաւորականներ իրենց հուսգար եղբայրներուն .—

Ֆրանսայի մտաւորականները լսեցին լեզապատառ կոչերը հունդար մտաւորականներուն, որոնք ծառացան խորհրդային բռնակալութեան դէմ, եւ կը պայքարին աշխատաւորներու հետ հիանալի հերոսութեամբ , ձեռք ձգելու համար ազատութիւնը : Կ'աւելցնեն թէ Կրեմլինի վարիչները, ղրկելով իրենց հրասայլերը եւ օդանաւերը, ըմբոստներուն դէմ, ցարական չրջանի Մոսկուա մը կը գտնեն : Մարդկութենէ դուրս կը նկատենք եւ կը դատապարտենք ազատ աշխարհի համայնավարները որոնք իրենց ձեռքերը կը թաթխեն հունդար ժողովուրդի արեան մէջ : Կը հրաւիրենք ազատ աշխարհի մտաւորականները միանալ այս յայտարարութեան :

(Ստորագրուած չորս ակադեմականներու , չիսնեակ մը ֆրանսացի ականաւոր գրագէտներու կողմէ) :

Բողոքի արտայայտութիւններ ըրին նաեւ «Ֆրանսայի Գրողներու Ընկերակցութիւնը» եւ ուրիշ բազմաթիւ կազմակերպութիւններ :

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ .— Այս կիրակի ժամը 17ին ձայնասփիւռէն (Փարի էն - թէր) պիտի հաղորդուին Կարին Իչզա - լացեանի ծիսական երգերը (ձայնագրուած) :

Այս երգահնչակը մեծ յաջողութիւն ըզ - ուած է արդէն :

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՎԵՆԵՏԻԿ

Փարիզի ատամնաբուժական վարժարանին դասախօսներէն Արամ Ճինճեան, Նոյեմբեր երեքին դասախօսութիւն մը տուաւ Քաֆէ Քատէլ սրահին մէջ : Նիւթն էր դէպի Վենետիկ ուխտագնացութիւնը եւ անոր նշանակութիւնը հայկական տեսակէտով : Սրահը լեցուած էր անտովոր բազմութեամբ մը : Կը նախագահէր Տի - կինն Է. Բիւզանդ որ ինքն ալ մասնակցած էր ուխտագնացութեան ևեքանիմբհօսքով կատարեց դասախօսութեան բացումը :

Իր բուն նիւթին անցնելէ առաջ, Պ. Ա. Ճինճեան խօսեցաւ վերջին քառասուն տարուան ընթացքին Ֆրանսա հաստատուած հայ երիտասարդութեան եւ զայն չրջապատող վտանգներուն մասին, եզրակացնելով որ նախապէս Ֆրանսա հաստատուած հայ գաղութը ծանր պատասխանատուութեան տակ կը գտնուի, երբ մեր երիտասարդները ոչ միայն օտարացան, այլ եւ այլասերեցան ու հայ կեանքէն հեռացան : Չկար մարմին մը, որ նորեկ երիտասարդներու հոգերով զբաղէր եւ որոշ հոգածութիւն ցոյց տար : Այդ օրերէն կը սկսին օտարներու հետ ամուսնութիւնը եւ օտարացումը : Եւ այսօր կը գտնուինք զրեթէ անյոյս վիճակի մը մէջ : Նոր սերունդ մը ունինք որ իր մայրենի լեզուն չի գիտեր եւ սովիլ չուզեր : Մեր կազմակերպութեանց վարիչները ազգապահպանում կը քարոզեն, բայց իրենց տուներուն մէջ հայերէն չեն խօսիր, եւ չատեր ոչ հայերէն թերթ եւ ոչ ալ գիրք կը կարդան : Ունինք երիտասարդական միութիւններ , որոնք Ֆրանսերէն դասախօսութիւն կուտան :

Օտարացման վտանգին առջեւ բոլոր միջոցները ներելի են : Մեր երիտասարդներուն պէտք է բացատրենք, թէ հայ ժողովուրդն ալ քաղաքակիրթ ազգերու չարքին մէջ իր տեղն ունի մշակոյթի արժէքներով, զրականութեամբ եւ անկախ եկեղեցիով :

Զեռք առնուելիք միջոցներու կարգին, դէպի Վենետիկ ուխտագնացութիւնը , փորձով տեսանք, որ արհամարհելի չէ եւ գործնական նշանակութիւն ունեցաւ : Ամբողջ երեք չաբաթ բազմաթիւ ընտանիքներ ու առանձին անհատներ հայկական մթնոլորտի մէջ ապրեցան, հայ երգով ու հայ խօսքով : Այցելեցին Մխիթարեան Մենաստանը, հայրերու վանքը, մատուռը, թանգարանը, ձեռագրատունը ու տպարանը : Մեր երիտասարդները մանաւանդ խանդավառուեցան եւ Հայ ծնած ըլլալու հպարտութիւնը զգացին :

Մխիթարեան Հայրերը մեզ հիւրասիրեցին Մուրատ - Ռափայէլեան վարժարանին մէջ, ցոյց տալով ամէն խնամք եւ հոգածութիւն ուխտաւորներուն հանդէպ : Բազմանդամ ընտանիքի մը տպաւորութիւնը կը կրէր ոեւէ անհատ, երբ վարժարանին սեղանատունը կը մտնէր :

Ուխտաւորները կենդանի դասեր ալ կ'առնէին, լսելով այդ կրթական հաստատութենէն չրջանաւարտ բազմաթիւ անձերու մասին, որոնց չարքին կարելի է յիչել Մկրտիչ Պէշիկթաչլեան, Թովմաս Թէրզեան, Մկրտիչ Աճէմեան, Ս. Թզլեան, Ա. Արփիարեան, Դ. Վարուժան, Ահարոն Տատուրեան եւ ուրիշներ, ինչպէս անմոռանալի եւ պատկառելի հետեւեալ դէմքերը Մխիթարեան մեծ ուխտին հիմնադիր Մխիթար Սեբաստացին Աբբահայրը, Հ. Մ. Զամչեան, Հ. Ղ. Ինճիճեան, Հ. Մ. Զախչախեան, Հ. Գ. Ալեմիքեան, Հ. Մ. Ալպերեան, Հ. Ե. Թովմասեան, Հ. Ա. Կ. Բազրատունի, Հ. Ե. Հիւրմիւզ, Հ. Մ. Քէլճունի, Հ. Մ. Ալիշան, Հ. Հացունի, Հ. Ա. Ղազիկեան եւ ուրիշ վաստակաւորներ : Ամէն մէկուն անունն ու կենսագրութիւնը կը բաւէին , որ մեր ուխտաւորները խանդավառուէին եւ իրենք զիրենք աւելի քան Հայ զգային :

Անգամ մը եւս համոզուեցանք որ Ս. Ղազարը ազգապահպան տեսակէտով մեծ դեր ունի կատարելիք մանաւանդ ասկէ ետք, եթէ գիտնանք օգտուիլ : Եթէ Մխիթարեան Հայրերը օտար հողի վրայ եւ օտար երկրի մէջ կրցեր են պահել իրենց դոյութիւնը երկուքուկէս դարէ ի վեր , պատճառ մը չկայ, որ մենք կորնչը - նենք մեր հայկականութիւնը, մեր լեզուն եւ մշակոյթը : Մեր երիտասարդները մանաւանդ պէտք է կենդանի դաս մը առնեն անոնցմէ :

Այս չատ այժմէական դասախօսութենէն ետք, նախագահը խօսք տուաւ անոնց, որոնք խումբին մաս կը կազմէին : Ամէն մէկն իր խօսքով, եկաւ նոր բան մը ըսելու : Ընդհանուր բաղձանքն էր ամէն տարի կրկնել այս ուխտագնացութիւնը :

ՈՒՆԿՆԴԻՐ

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՏԷՍԻՆ .— Կիրակի, 4 Նոյեմբեր, ժամը 21ին, Տէսինի ազատատենչ հայութիւնը եւս ոտնկայ մեր հայրենասէր կուսակցութեան, Հ. Ց. Դաշնակցութեան Օրը, Հ. Ց. Դ. Տան մէջ, նախաձեռնութեամբ Կոմիտէին եւ մասնակցութեամբ Նոր Սերունդի «Դրօ» խումբին : Կազդուրիչ էր , մանաւանդ Նոր Սերունդի անդամներուն մեծ մասին ներկայութիւնը : Անոնք արդէն ցերեկին քաջալերեր էին Լիոնի իրենց քոյր մասնաճիւղին ձեռնարկը : Եւ ահա, պատահանութեան դիտակից՝ ճշդապահ էին նաեւ մեր ոտնակատարութեան :

Հանդէսին բացումը կատարուեցաւ իրենց երգած «Ցառաջ Նահատակ»ով, զոր ներկաները ունկնդրեցին յոտնկայս : Ապա, օրուան նախագահը ընկեր Սարգիս Առաքելեան, դրաւոր բանախօսութեամբ մը պարզեց Հ. Ց. Դաշնակցութեան 66 տարիներու բեղուն աշխատանքը հայ ազատագրական չարժման մէջ, ներկայացնելով անվեհեր մարտիկներ, պայքարի հերոսներ ու մաքի հսկաներ, որոնց անձնազոհութեամբ նուիրագործուեցան ազգային պահանջներն ու իղձերը , թելադրեց բոլորուիլ այս մեծ կուսակցութեան դրօշին չուրջ, որպէս զի նոյն չարաբաստութեամբ չարունակէ իրեն վերապահուած առաքելութիւնը : Ցետոյ խնդրեց ներկաներէն յոտնկայս ոգեկոչել յիչատակը հայրենիքի բոլոր հերոսներուն :

Գեղարուեստական բաժինը ճոխ էր չորս հիւ ուսուցչուհի Տիկին Ա. Միլոսեանի գնահատելի աշխատանքին : Զգացումով արտասանեցին զրերոցին աչակերտներէն Օր. Գեղուհի Մանուկեան՝ «Մեռա՞նք, չկորանք» : Օր. Ժընըվիէվ Պարտագճեան՝ «Հայ տղայ» : Օր. Մարդրիտ Զաքարեան՝ «Քեզ չեմ մոռնար» : Օր. Բրաբիոն Տապաղեան՝ «Հայ ժողովուրդին» : Օր. Արմենուհի Թագըճեան՝ Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի», Ֆրանսերէն, Թարգմանուած՝ զրերոցականներու երկու չակերտուհիներու կողմէ : Նաեւ փոքրիկն Կարապետ Տէր Պողոսեան՝ «Հայ զրօշին» : Բոլորն ալ ջերմօրէն ծափահարուեցան :

Սէնթ Էթիէնի Նոր Սերունդէն Ալպէր Ներսէսեան խոր յուզումով արտասանեց Սիլվա Կապուտիկեանի «Ասօք իմ որդուն»ը, եւ ջերմ ծափերու տակ , հայկ. զրօշին նուիրուած բանաստեղծութիւն մը : Նոյնքան գնահատուեցան նաեւ Ցարութիւն Շահրիկեան, (Սէնթ Էթիէն) եւ Պերճ Պառուեան (Տէսին) իրենց զգայուն արտասանութիւններով : Երկրորդին արտասանութիւնը՝ « Ցորդոր » (Որպիսակ) կը խտացնէր զաղթահայ իրականութիւնը ու մշակուած էր Տիկին Ռ. Միլոսեանի կողմէ : Նոր Սերունդի խումբը երգեց «Նոր Սերունդն ենք» խմբերգը մասնակցութեամբ զրերոցին խումբին : Աչակերտուհի Օր. Անժէլ Կարապետեան քաղցր ձայնով մը երգեց «Անուշ Հայաստան»ը, իսկ օրիորդներ Արմենուհի Ռադըճեան, Բրաբիոն Տապաղեան եւ Անժէլ Կարապետեան յաջողութեամբ երգեցին երկձայն : Դպրոցական երգչախումբը մէջ ընդ մէջ երգեց «Ցողեր ջան » (Կ. Վ.) եւ «Գարուն երեւան» խմբերգները : Անխտիր բոլորն ալ ծափահարուեցան :

Օրուան բանախօսը, ընկեր Յակիկ Մկրտիչեան վերլուծեց Հ. Ց. Դաշնակցութեան զաղափարական յաղթանակի գաղտնիքը եւ անոր մատուցած անգին ծառայութիւնները հայ ժողովուրդին : Դաշնակցութիւնը չօշափելի գործերով էր որ ապահովեց իր բարոյական բարձրութիւնը , յարատեւութիւնը եւ կենսունակութիւնը : Դաշնակցութիւնը կ'ապրի ամէն Հայու սրտին մէջ : Ցետոյ անդրադարձաւ խորհրդայինն ուժերու բերած գործունէութեան , որուն այս անգամ գոհ գնաց ուրիշ աղատատենչ ժողովուրդ մը՝ արեան ճապաղիքներու մէջ : Փաստերով ցոյց տուաւ համայնավարութեան բռնատիրական մեթոտները եւ զաղափարականութեան անկնկութիւնը : Եւ յոյս յայտնեց թէ ինչպէս չատ մը բռնատիրութիւններ, համայնավարութիւնն ալ ուշ կամ ուչ պիտի պարտուի (ծափեր) : Հանդէսը փակուեցաւ Հ. Ց. Դ. Նոր Սերունդին խմբական «Մշակ բանուոր»ով :

Գ. Պ.

ՍԱՄՈՒԷԼ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ, 364 – 400)
Բ. ԳԻՐՔ

10.— ՄՈՒՇԵՂ «ԽՈՏՈՐՆԱԿԻՆ ԽՈՏՈՐՆԱԿ »

Սակայն մի քանի նոր հանդամանքներ, որոնք , երեւի, քեզ յայտնի չեն, պէտք է սաստիկ զժուարացնեն մեր աչխարհի դործերը : Որմիզդուխտի մեր ձեռքը զերի ընկնելուց յետոյ, Մերուժանի կատաղութիւնը անցել է ամէն չափից : Ես հաստատ տեղեկութիւններ ունեմ, որ նա, չը բաւականանալով իւր հրամանի ներքոյ դտնուած պարսկական նշանաւոր ուժերով , աչխատել է իւր կողմը ձգել Աղուանից Ուռնայր արքային եւ Լեկաց Շէրդիլ արքային : Գարսից զօրքերը իւր ձեռքում ունենալուց յետոյ, երբ նա կը սիրնայ այդ երկու կիսավայրենի թագաւորների հետ, կարող է այնուհետեւ չատ վնասներ հասցնել մեր աչխարհին : Հեռատես Թչնամին որպիսին է Պարսիկը, այնքան վտանգաւոր չէ կարող լինել, որքան զրացին : Իսկ աղուանները եւ լեկերը ղրօշին չուրջ, որպէս զի նոյն յարատեւութեամբ չարունակէ իրեն վերապահուած առաքելութիւնը : Ցետոյ խնդրեց ներկաներէն յոտնկայս ոգեկոչել յիչատակը հայրենիքի բոլոր հերոսներուն :

Գեղարուեստական բաժինը ճոխ էր չորս հիւ ուսուցչուհի Տիկին Ա. Միլոսեանի գնահատելի աշխատանքին : Զգացումով արտասանեցին զրերոցին աչակերտներէն Օր. Գեղուհի Մանուկեան՝ « Մեռա՞նք, չկորանք» : Օր. Ժընըվիէվ Պարտագճեան՝ «Հայ տղայ» : Օր. Մարդրիտ Զաքարեան՝ «Քեզ չեմ մոռնար » : Օր. Բրաբիոն Տապաղեան՝ «Հայ ժողովուրդին » : Օր. Արմենուհի Թագըճեան՝ Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի », Ֆրանսերէն, Թարգմանուած՝ զրերոցականներու երկու չակերտուհիներու կողմէ : Նաեւ փոքրիկն Կարապետ Տէր Պողոսեան՝ « Հայ զրօշին» : Բոլորն ալ ջերմօրէն ծափահարուեցան :

Տէր եւ Տիկին Սահակ Սահակեան, Տէր եւ Տիկին Արշակ Սահակեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Գրիգոր Սահակեան եւ զաւակները, Տէր եւ Տիկ. Յակոբ Սահակեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ, այս կիրակի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փարիզի Ս. Յովհ.-Մկրտիչ եկեղեցին, իրենց մօր եւ մեծ մայրերնին ԱՅՐԻ ՏԻԿ. ԿԻՒԼԶԱՐ ՍԱՀԱԿԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին ազգականները եւ յիշատակը յարգողները :

× Այս առթիւ Տէր եւ Տիկին Մանուէլ եւ Բերկրուհի Էքսէրեաններ եւ զաւակը երկու հազար ֆր. կը նուիրեն Փարիզի Մշակոյթի Տան, փոխան ծաղկեպսակի : (Ստանալ «Յառաջ էն) : եւ 500 ֆր. «Յառաջ»ի բարգաւաճման համար :

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ

(ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ)

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Ի նպաստ բախտագուրկ մանուկներու
Այս Կիրակի, Կռանտ Օթէլի սրահներուն մէջ ժամը 16էն 24
Աքթաէսիոն
Ցիկան նուագախումբ, ղեկավարութեամբ ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒԻ
ՄՈՒՏՔ 500, ուսանողաց 300

AU BEAU NOYER
185, Bd JEAN JAURÈS
BOULOGNE - BILLANCOURT
METRO : MARCEL SEMBAT

Salles de séjour
Chambres - cosys
Salons-tapisserie
Penderies - literie
Cuisines laquées
Fauteuils-canapés lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՁՐԻ ՅԱՆՁՆԵԼԻ ՖՐԱՆՍԱՅԻ
ԱՄԷՆ ԿՈՂՄԸ

185, Bd Jean Jaurès
Boulogne - Billancourt
Métro MARCEL SEMBAT

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Ֆ. Կապոյտ Խաչի տօնածառի հանդէսը տեղի կ'ունենայ Յունուար երեքին, Սոսիէթէ Սավանթի մեծ սրահին մէջ, մեծ պատրաստութեամբ :

ՊԱՏԱՐԱԳ – ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՆԻՍԻ ՄԷՋ

Այս կիրակի, ի յիշատակ 1914 – 18ի պատերազմին զոհուած զինուորներուն : Պիտի պատարագէ Աստ. քահանայ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը կազմակերպած է, ընկերահամակրական խնճոյք մը՝ 25 Նոյեմբեր, կիրակի կէսօրէ վերջ, ժամը՝ չորսէն մինչեւ կէս գիշեր, Յոյներու սրահը, 5 ռիւ Պօնըֆուա : Կը խնդրուի ընկերուհիներէն, ընկերներէն, Նոր Սերունդէն եւ բոլոր համակիրներէն քաջալերել այս բարենպատակ ձեռնարկը :

●

Հայ Արիներու 26րդ տարեկան ցերեկոյթը, Կիրակի, 10 Մարտ : Կէսօրէ ետք ժամը 2.30ին :

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN

Rédaction et Administration : 32, *Rue de Trévise, Paris-9e*

C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286

Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և գաղութներ, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ 17 ՆՈՅԵՄԲԵՐ

SAMEDI 17 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7734 32e ANNEE

ԽՄԲԱԳԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3545

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ԿՐԿՆԱՊԷՍ ԿՂՋԻԱՑԱԾ

Ահա մեր հանրային կեանքին պատկերը՝ արեւմտեան Եւրոպայի մէջ, սկսելով Փարիզէն :

Կղզիացած, մեկուսացած՝ թէ ներքին եւ թէ՛ արտաքին ճակատի վրայ :

Մեր ազգային կազմակերպութեանց հանդոյցը կա՛մ բանկալէն կը սկսի, եւ կամ ի վերջոյ այնտեղ կը յանգի :

Այնքան արմատացած է « կրօնական համայնք »ի նախապաշարումը որ, իւրաքանչիւր հայաշատ կեդրոն ինքն իրեն համար աշխարհ մը կը կազմէ իր մատուռով եւ անոր չրջապատով :

Ամէն մէկը մեկուսացեալ կեանք մը կը վարէ, համաձայն իր տեղական չահերուն եւ մատուռ մակարդակին :

Եւ տարիները կը թաւալին, բայց կարելի չէ ընդհանուր ղեկավարութիւն մը հաստատել : Միացնել բոլորը եւ ամբողջական զաղութի մը վերածել :

Փարիզի ձայնը արուարձաններէն ան-դին չանցնիր : Լիոնը, Վալանսը եւ միւսները՝ անջատ համայնքներ են, մինչեւ Մարսէյլ :

Բանդէմներ կ'ըսէին թէ էջմիածին դիտակցօրէն կաթող. պատուիրակները նշանակած է, որպէս զի կազմակերպէն եւ կառավարէն արտասահմանի թեմերը :

Եկող - գացող նուիրակներէն ո՞ր մէկը յաջողեցաւ գլուխ հանել այդ գործը :

Ամենավերջինը, որ միեւնոյն ատեն առաջնորդ կը կոչուի, չկրցաւ քայլ մը առնելի յառաջ երթալ :

Եւ գործերը կ'ընթանան համաձայն ընկալեալ սովորութեանց :

Տարբերութիւնը չատ մեծ պիտի չըլլար, եթէ մասնաւոր վանահայրութիւն մը հաստատէին :

Կ'ըսեն թէ կրօնական ընկերակցութեանց օրէնքը թոյլ չի տար լայն բանակ թեւերը, համապատասխան կազմակերպութիւն մը ստեղծելու համար :

Պարագաներ կան ուր այդ սահմանափակումը ինքնին կը վերջանայ :

Օրինակ, ընդհանուր հոգեր ունինք, որոնք ոչ բանկալի հետ կապուած են, ոչ ալ վեղարի :

Այդ հոգերը կը պահանջեն սերտ գործակցութիւն կազմակերպուած մարմիններու միջեւ : Ոչ միայն այստեղ, այլեւ հարեւան զաղութներու հետ :

Քաղաքական կացութեան ելեւէջներն ալ այդ կը թելադրեն, պարբերաբար :

Մինչդեռ, ամէն ինչ ձգտած է պահպանութեան :

Անհրաժե՞շտ է որ փոթորիկ մըն ալ այստեղ պայթի, որպէս զի թօթափենք անտիրութեան փոշիները :

Ի վերջոյ ո՞րն է այն օրհանը որ պարտականութիւններ եւ պատասխանատուութիւններ պիտի ստանձնէր, յանուն ամբողջ զաղութին :

Այդ գործակցութիւնը եւ ընդհանուր ղեկավարութիւնը միայն բացառիկ պարագաներու յատուկ չեն :

Ամենօրեայ կեանքին մէջ իսկ, տարբերական պահանջներ են երկուքն ալ :

Եթէ իւրաքանչիւր հայաշատ կեդրոն պիտի չարունակէ կշկշալ իր սեփական թառին վրայ, առանց հեռաքրքրուելու մնացեալով, անտիրութեան պիտի յաջորդէ կազմալուծումը :

Եւ այն ատեն, ի զուր ինքնապաշտպանութեան միջոցներ պիտի մուրանք, պատէ պատ զարնուելով :

Ամենօրեայ դէպքերը կը պարտադրեն վերջ տալ թէ համատարած մեկուսացման եւ անզործութեան :

Քանի մը խօսք ալ արտաքին կղզիացման մասին, որ նոյնքան վրդովիչ պատկեր մը կը ներկայացնէ :

Այս անգամ խնդիրը կապ ունի երիտասարդութեան հետ, առանց դաւանանքի խորութեան :

Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԲՈՒԼԿԱՆԻՆԻ ՆՈՐ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԱՅԻ, ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ

ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Ա. Մխիթեան վարչապետը, մտերիմ Բուլկանին Նոյեմբեր 15ին նոր նամակներ ուղղեց Ֆրանսայի, Անգլիոյ եւ Իսրայէլի վարչապետներուն, ի պատասխան այն նամակներուն զոր այս վերջիններէն ղրկած էին Նոյեմբեր 5ին :

Անգլիոյ վարչապետին ուղղուած նամակով, Բուլկանին գոհունակութիւն կը յայտնէ որ հրամայուած է դադրեցնել կրակը Եգիպտոսի մէջ : Սակայն մատնանշութեամբ դիտել կուտայ թէ անգլիա-ֆրանսական զօրքը տակաւին Եգիպտոս կը մնայ եւ կ'ըսէ թէ ներկայիս կայծ մը բաւական է հրդեհը բռնկցնելու համար : Ցետոյ կը յայտարարէ թէ հակառակ չէ որ Ազգաժողովին ուժերը Եգիպտոս մտնեն. բայց պէտք չէ ջրանցքի շրջանին մէջ տեղաւորուին :

Անցնելով ուրիշ հարցի մը, մտերիմը կը հերքէ այն պնդումները թէ Ա. Մխիթեանը մասնաւոր դիտումներ ունի Միջին Արեւելքի երկիրներուն վրայ : Եւ կը յիշեցնէ թէ միայն անգլ-ֆրանս-իսրայէլեան ուժերուն պարպումը կրնայ «վերջնական խաղաղութիւն» բերել աշխարհի այդ մասին մէջ :

Մտերիմը յետոյ կը պահանջէ միջազգային յանձնաժողով մը ստեղծել, հաշուելու համար «Եգիպտոսի վճարուելիք հատուցումը, որուն իրաւունք ունի այդ երկիրը իբրեւ հետեւանք զինուորական զործողութեանց » :

Հունգարական հարցին առթիւ Բուլկանին կը յայտարարէ թէ աշխատաւոր դասակարգն էր որ ըմբոստացաւ հոր Թիան (նախկին նախագահ) նախայարձակման դէմ եւ թէ խորհրդային կառավարութիւնը չէր կրնար զլանալ իր աջակցութիւնը Հունգարիոյ ժողովրդական կառավարութեան : Այս առթիւ կը հերքէ այն վերագրումը թէ Ա. Մխիթեանը կ'ուզէ միջամտել Հունգարիոյ ներքին զործերուն :

Նոյն բովանդակութիւնն ունի Ֆրանսայի վարչապետին ուղղուած նամակը : Իսրայէլի ուղղուած նամակին մէջ Բուլկանին կը մերժէ այն տեսակէտը թէ Իսրայէլ եգիպտոսի դէմ չարժեցաւ իր օրինաւոր ինքնապաշտպանութեան համար : Իր կարծիքով, եգիպտական յարձակման վտանգ չկար : Այս առթիւ ցաւ կը յայտնէ որ Իսրայէլ չյարգեց Ազգաժողովին որոշումները եւ կը պահէ մասնաւորապէս կաղայի շրջանը կցելու ծրագիրները :

Մտերիմը կ'աղդարարէ Պեն Կիւրիոնի թէ Իսրայէլի քաղաքականութիւնը վճռական է խաղաղութեան համար եւ կը սպառնայ բուն իսկ Իսրայէլի չահերուն : Ապա յիշելով կրակը զադրեցնելու որոշումը, կը պահանջէ եւ կանչել զօրքը եւ միջոցներ ձեռք առնել կանխելու համար որեւէ ընդհարում Միջին Արեւելքի մէջ : «Իսրայէլեան նախայարձակումը Եգիպտոսի դէմ պատճառ եղաւ քանի մը հազար անձերու մահուան, աւերեց քաղաքներ եւ մշակութիւններ, արաբական երկիրներու առեւտուրը զրկուեց իսրայէլի դէմ » : Մտերիմը կրկին կը յիշեցնէ թէ անհրաժեշտ է եւ քաշել իսրայէլեան զօրքը եւ երաշխիքներ տալ թէ այդպիսի արարքներ պիտի չկատարուին այսուհետեւ : Այս առթիւ ալ կ'աղդարարէ թէ այդպիսի արարքներ կրնան վիճելի դարձնել Իսրայէլի գոյութիւնն իսկ իբրեւ պետութիւն :

Նամակը չի խօսիր խորհրդային կամաւորներու առաքման մասին : Մոսկուայի եգիպտական դեսպանը պատասխանելով կամաւորներու մասին եղած հարցումին, յայտարարեց թէ եգիպտոս պիտի խնդրէ որ խորհրդային կամաւորները զուրկուին միայն այն ատեն երբ անգլիական, ֆրանսական եւ իսրայէլեան զինուորները անմիջապէս չքաշուին : Առ այժմ որեւէ պաշտօնական դիմում կատարուած չէ Ա. Մխիթեանի :

Ուշադրութեան բրիտանական դեսպանը աղդարարեց թէ Ա. Մխիթեանը բռնարարած պիտի ըլլայ Ազգաժողովին որոշումը, եթէ կամաւորները ղրկէ եգիպտոս : Այս առթիւ ըսաւ թէ Ռուսիա 420 միլիոն տոլարի օդանաւեր, հրասայլեր, թնդանօթներ եւ ուրիշ զէնքեր ղրկած է եգիպտոս, վերջին 15 ամիսներու ընթացքին :

ԱՐԱԲՆԵՐԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ

Պէյրութէն կը հեռագրեն թէ Նոյեմբեր 15ին վերջացաւ արաբ թագաւորներու եւ նախարարներու եռօրեայ խորհրդաժողովը : Կը մասնակցէին Սուտանի, Լիբիոյ, Եգիպտոսի, Իրաքի, Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Արաբիոյ եւ Եմէնի ներկայացուցիչները, — երեք թագաւորներ, դահաժառանգ մը, երկու նախագահներ, վարչապետներ, արտաքին զործերու նախարարներ եւ ուրիշ բարձր պաշտօնատարներ :

Ժողովը հրաւիրուած էր Լիբիանանի հանրապետութեան նախագահին կողմէ և զեկոյց մը հրատարակեց հետեւեալ բովանդակութեամբ . —

« Միաձայնութեամբ որոշուեցաւ որ եթէ Իրլանիա եւ Ֆրանսա մերժեն համակերպիլ Ազգաժողովին որոշման՝ իրենց զինուորները քաշելու համար Եգիպտոսէն, անմիջապէս եւ առանց պայմանի, եւ եթէ Իսրայէլ եւս մերժէ համակերպիլ եւ իր զինուորները ետ քաշել զինադադարի սահմանագծին վրայ, անմիջապէս եւ առանց պայմանի, եւ կամ եթէ Ֆրանսայի, Բրիտանիոյ եւ Իսրայէլի դիրքը պատճառ ըլլայ յարաբերութեանց լարման, յանդելով զինուորական զործողութեանց վերսկսման, այն ատեն Բրիտանիա, Ֆրանսա եւ Իսրայէլ հաւաքաբար պատասխանատու պիտի համարուին նախայարձակումի չարունակութեան համար եւ այս խորհրդաժողովին մասնակցող ամէն պետութիւն անմիջապէս պիտի ձեռնարկէ Ազգաժողովի ուխտին 41րդ յօդուածին զործադրութեան, յանուն օրինաւոր ինքնապաշտպանութեան իրաւունքին, ազդու միջոցներ ձեռք առնելով համաձայն Արաբական Հաւաքական Ապահովութեան դաշինքին երկրորդ յօդուածին » :

Զեկոյցին ամէնէն կարեւոր կէտը այս վերջինն է : Ա. Արաբական Ուխտին Բ. յօդուածին տրամադրութեամբ, «արաբական երկրի մը դէմ կատարուած որեւէ յարձակում պիտի համարուի ուղղուած՝ բոլոր արաբական երկիրներուն դէմ եւ պիտի հակազդեն հաւաքաբար կամ անջատօրէն ձեռք պիտի առնեն բոլոր միջոցները, մէջն ընդալով զինեալ ուժը, եւ մղելու համար յարձակումը » :

Ազգաժողովի դաշինքին 41րդ յօդուածը այնքան խիստ չէ եւ կը տրամադրէ ամբողջական կամ մասնակի խզում տնտեսական եւ դիւանագիտական յարաբերութեանց, ինչպէս եւ երկաթուղիներու, ծովային, օդային, թղթատարական եւ հեռագրական հաղորդակցութեանց՝ նախայարձակին հետ :

Արաբ վարիչները դոհ են Ազգաժողովին վերջին կարդադրութեանց համար եւ կ'առաջարկեն Սուէզի խնդիրը անջատել Եգիպտոսի դէմ կատարուած յարձակման հարցէն : Եւ կարգադրել այնպիսի եղանակով մը որ ապահովէ Եգիպտոսի դերիշխանութիւնը եւ արժանապատուութիւնը, Ազգաժողովի չրջանակին մէջ :

ԱՌԱՋԻՆ ՁՕՐԱՄԱՍԸ ՏԵՂԱՒՈՐՈՒԵՑԱՒ

Ազգաժողովին առաջին զօրամասը, որ կը բաղկանայ 95 դանիացի եւ նորվեկիացի զինուորներէ, Իսրայիլիա հասաւ նո-

---

յեմբեր 15ին եւ ընդունուեցաւ եղիպտացի զօր. Ամին Հիլմիի կողմէ, որ բարի զալուստ մաղթեց յանուն Եգիպտոսի զինեալ ուժերուն : Ցետոյ զինուորները զացին իրենց յատկացուած վայրը : Շուտասցի հաղարապետ Կերսթէր, Ազգաժողովին զէտերէն մէկը, խօսքը ուղղելով զինուորներուն ըսաւ .

— Այստեղ պիտի մնաք ցնոր տնօրինութիւն : Պիտի տեղաւորուիք օդակայանին մէջ : Որեւէ բան չեմ պիտեր ձեր ապագայ պարտականութեանց մասին :

Ազգաժողովին ընդհ. քարտուղարը, Դակ Համերչոլտ, Նոփոլիէն ճամբայ ելաւ զէպի Գահիրէ, ուր պիտի տեսակցի նախագահ Կամալ Նասրի հետ : Քարտուղարը Հռոմի մէջ տեսակցութիւն մը ունեցած էր միջազգային ոստիկանութեան հրամանատարին՝ զօր. Պրունի հետ :

× Մ. Նահանգներու ազդ. պաշտպանութեան նախարարութիւնը կ'ամբաստանէ Անգլիան եւ Ֆրանսան թէ խախտած են իրենց միջազգ. համաձայնութիւնները, եգիպտոսի մէջ զործածելով ամերիկեան զինամթերքը : Կը թուի թէ նախարարութիւնը պիտի զհանայ պարզ զիտողութեամբ, առանց ուրիշ միջոցներ ձեռք առնելու :

× Ամերիկեան կառավարութիւնը որոշեց փոխել Փարիզի, Լոնտոնի, Հռոմի եւ ուրիշ կարգ մը մայրաքաղաքներու դես-պանները, զոհ մնացած չըլլալով անոնց զործունէութենէն : Այզընհաուըրի վերջին յայտարարութիւնը յուսախաբութիւն պատճառեց Անգլիոյ մէջ :

ԱՔՍՈՐՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

Փեշթայէն կը հեռագրեն թէ Քառատարի կառավարութիւնը նոր զիջումներ կատարեց, որպէսզի զադրի ընդհ. գործադուլը : Տասը աթալինականներ պաշտօնանկ եղան : Միւս կողմէ Ռատիօ Փեշթա հեռաձայել խոստումները հաղորդեց . —

1· Ազատ եւ զաղտնի ընտրութիւններ պիտի կատարուին : 2·— Պիտի ճանչցուին այն բոլոր կուսակցութիւնները որ կ'ընդունին ժողովրդապետութեան ընկերային եւ տնտեսական հիմքերը : 3·—Պիտի հրատարակուին Ա. Մխիթեան հետ կնքուած առեւտրական համաձայնութիւնները : 4·— Պիտի զադրեցնեն զատական հետապնդումները եւ ազատրնեն բոլոր անոնք որ ձերբակալուած են 16·000 հոգի միայն Փեշթա քաղաքէն եւ ուրիշ հազարաւորներ ալ տարբեր վայրերէ : Տասը հազար աշխատաւորներ բողոքի ցոյց մը կատարեցին խորհրդարանին առջեւ, ուր հաստատուած է կառավարութիւնը : Անգլիոյ արտաքին զործերու նախարարութիւնն ալ կը հաստատէ հունգար երիտասարդներու ազատրը զէպի Ա. Մխիթիւն :

× Եուկոսլաւիոյ նախագահը, Թիթօ չունգալից ճառ մը խօսելով յայտարարեց թէ իր երկիրը որեւէ զեր չէ ունեցած Հունգարիոյ եւ Լեհաստանի զէպքերուն մէջ : Իր կարծիքով, անկարգութեանց պատասխանատուն է Կրեմլինի մէջ փոքր աթալինականներու խումբ մը որ կ'ընդդիմանայ արբանեակ երկիրներու ժողովրդականացման : Իր յայտարարութեան համաձայն, խոր պառակտումներ կը տիրեն Կրեմլինի մէջ : Մասնաւորապէս ծանրանալով Հունգարիոյ զէպքերուն վրայ, Թիթօ բացատրեց թէ Ա. Մխիթիւնն ալ զժուարին կացութեան մը մատնուած է, թէ միայն նախկին վարիչներու կուսակիցները չեն որ կը կռուին Հունգարիոյ մէջ, այլեւ բանուորները, եւ ամբողջ ժողովուրդը » :

ԹՈՒՐՔԻԱՆ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

●

Վերջերս առիթն ունեցայ կարդալու «Սէօյ» Հրատարակչականի մատենաշարին 11րդ հատորը, «Արդի Թուրքիան»:

Հեղինակը՝ Անտուէ Ֆալք, կրցած է հարազատօրէն պատկերացնել մեր օրերու Թուրքիան: Հատորը կը պարունակէ շարք մը բաժիններ եւ կենդանի նկարներ:

Առաջին գլխուն մէջ, որ կը կոչուի «Բիւզանդիոնի բացակայութիւնը», Պ. Ֆալք կը խօսի այն բարգաւաճման մասին, որ Կ. Պոլիսը ճանչցաւ Բիւզանդական իշխանութեան օրով: 1453 Մայիս 29ին 52 օրուան հերոսական դիմադրութենէ մը վերջ, Մահմուտ Բ. տիրացաւ Կ. Պոլսոյ եւ զայն կցեց Օսմանեան կայսրութեան:

Քեմալական շարժման օրով, Թուրքերը ամբողջովին ժխտեցին Պոլսոյ անցեալ փառքը եւ Թուրքիոյ մայրաքաղաքը փոխադրեցին Անգարա: Հեղինակը մեծ զարմացումով եւ ընդվզումով կը յիշէ հետեւեալ դէպքը, «Պոլիս քաղաքին զբօսաշրջիկներուն յատկացուած պաշտօնական առաջնորդ մը, կանգ առնելով բիւզանդական ջրմուղի մը առջեւ, զայն կը ներկայացնէ իբրեւ Ժ.Ե. դարու շինութիւն եւ իսլամական արուեստի կոթող: Գիտուն Ֆրանսացի մը, որ շրջիկներուն մէջ կը գտնուէր, երբ կը յայտնէ իր զարմանքը, հետեւեալ չոր պատասխանին կ'արժանանայ.

— «Դուք ձեր տաճարներով զբաղեցէք եւ մեր մզկիթները հանգիստ ձգեցէք»: Ս. Սոֆիան՝ մեր մզկիթը ...

Յաջորդ գլխուն մէջ հեղինակը կը խօսի պատմութեան այն վերամշակումին մասին զոր Թուրքերը կատարեցին 1929ին՝ Աթաթիւրքի հրամանով: Այդ միջոցին Թուրքերը իւրացուցին Հիթիթներու աւելի քան 3000ամեայ հնութեամբ մշակոյթը. «Յիշել Հիթիթները, մոռնալ Հայերը»: Քեմալական պատմաբանները պաշտօն ունէին Ատտիլաէն աւելի ներկայանալի նախահայրեր ապահովել Թուրքիոյ համար, հետեւաբար իրենց ընտրութիւնը կեդրոնացուցին Հիթիթներուն վրայ: Գալով Հայաստանին, քարտէսին վրայէն ջնջեցին անոր անունն իսկ, մինչ, միւս կողմէ, կը բնաջնջէին Հայերը: Պատմութեան ուսուցիչները հետեւալը կը սորվեցնէին իրենց աշակերտներուն:

— Լաւ յիշեցէք. Հայաստան չկայ. Հայաստանի գոյութեան մասին շրջած լուրերը կեղծ զրոյցներ են պարզապէս»...

Հետեւեալ գլխուն մէջ հեղինակը կը վերլուծէ Քեմալական յեղափոխութիւնը, զոր Թուրքերը կ'ուզեն բաղդատել Ֆրանսական Ժաքոպէն շարժման հետ, բայց որ իրականութեան մէջ Փաշական բռնակալութիւններու նմանակն է միայն: Կը նկարագրէ թէ ինչ պայմաններու տակ Քեմալ մուտք գործեց Իզմիր, ինչպէս Թուրքերը կը հալածէին քրիստոնեաները, կը բռնաբարէին կիները, դռներուն կը գամէին մանուկները..: Կը պատմէ թէ ինչպէս Կալին, իր բարեկամ Ֆէթհիի եւ Միւլի Էմնիյէթի մեղսակցութեամբ «հակաքեմալական շարժում» մը ստեղծել տալու, որպէսզի աւելի ազատօրէն կարենայ կախաղան բարձրացնել իր վտանգաւոր դատած տարրերը: «Թուրքիան, որ առնուազն հինգ հարիւր տարի ետ մնացած էր, յեղափոխութեան շնորհիւ քանի մը դար յառաջացաւ երեսուն տարուան շրջանի մը մէջ, բայց շատ հաւանական է որ իր արդի վարիչները ամբողջովին կորսնցնեն շահուած դարերը, որովհետեւ կ'ուզեն հսկայաքայլ վազել, մինչ ժողովուրդը չի կրնար քալել անգամ, եւ կը նախընտրէ նստած մնալ, քան որեւէ ճիգ փորձել: Թուրքիան, որ այժմ կը հաշուէ մօտ 23 միլիոնի բնակչութիւն մը, կրնայ կերակրել կրկին թիւով ժողովուրդ, բայց Անատոլուի խորերը ապրող Թուրքը իր խեղճութեան մէջ ինքնագոհ, ոչ մէկ ճիգ կ'ընէ իր ապրուստի մակարդակը բարձրացնելու համար: Թուրք գիւղացին ամենացած մակարդակի մը վրայ կը գտնուի մասնաւորաբար Սեւ Ծովու եւ արեւելեան նահանգներուն մէջ, ուր նորածինները լաթերու մէջ կը փաթթեն, կիները գրաստի տեղ կը գործածեն, բազմակնութեան ու 18 տարեկանէն վար աղջիկներու ամուսնութեան արգելքը փոխարինուած են կասկածելի ու զզուելի «որդեգրում»ներով:

Յաջորդ երկու գլուխները, որոնք կը կոչուին «Օսքար» եւ «Աշխարհի կեդրոնը», պիտի կարդացուին մեծ ուշադրութեամբ: Այստեղ, հեղինակը, կը ծանրանայ Թուրքերու քաղաքական ճկունութեան վրայ: Կը շօշափէ Նեղուցներու հարցը, Ռուսեւթրքական յարաբերութիւնները, Ամերիկեան Միսուրի զրահաւորին Պոլիս այցը 1947ին, երբ Թուրքերը նամականիշ մըն ալ հրապարակ հանեցին. (պէտք է ըսել, ի միջի այլոց, որ ամերիկեան 1.5 միլիառ տոլարի օգնութեան փոխարէն Թուրքերը Մ. Նահանգներուն միայն այդ նամականիշը տուին): Թուրքերը միշտ ալ գիտցած են փոխ առնել: Իրենց արդի տնտեսութիւնը հիմնուած է հետեւեալ վարդապետութեան վրայ.— Փոխ առնել, լաւ մը ծախսել, ապա պահանջատէրէն խնդրել որ կրկնապատիկ յատկացում մը եւս ընէ:

Անոնք որ, 1950ին, կարծեցին թէ Դեմոկրատ իշխանութեան օրով ժողովրդապետութեան սկզբունքներն են որ պիտի կիրարկուին, մեծ յուսախաբութիւն կրեցին: Նոյն մենատիրութիւնն է որ կը տիրէ, անկարելի դարձնելով ուրիշ կուսակցութիւններու դրական գոյութիւնը: «Դեմոկրատ կուսակցութիւնը «պախշիշ»ի կուսակցութիւն մըն է, որ սեւ շուկայի վերածած է երկրին տնտեսութիւնը, պետական շուկան: Ամերիկեան տոլարներուն հետ չարաշահութիւններ կ'ընէ եւ Թուրքիան կ'առաջնորդէ դէպի տնտեսական կործանում: Ընտրութիւններէն անմիջապէս առաջ իբրեւ թէ մեծ թափով սկսան շինութիւններ, որոնք, ընտրութիւններէն ետք ընդհատուեցան և մակադրուեցան «ռազմական շրջան»: 1947ին, սկսան օփերայի շէնք մը շինել. 1953ին, կիսաշէն պատերը սարդի ոստայններով ծածկուած էին: Շատ մը շէնքեր 4 – 5 տարիէ ի վեր կը սպասեն իրենց վերելակներուն: Գործարանները չեն բանիր, որովհետեւ մեքենաներ եւ օտար «տըվիզ»ներ չկան, մինչ միւս կողմէ, կրադիւսի 39 գործարաններ բացուեցան մէկ անգամէն: Երկրին մէջ դրամ չկայ, դեղ չկայ, կեանքի անհրաժեշտ պիտոյքներ չկան, բայց միւս կողմէ կը ծրագրեն առկախ կամուրջ մը շինել Վոսփորի վրայ: Ամերիկացիները ուզեցին սանձել այս շռայլութիւնները. բայց իրենց պատասխանուեցաւ (եւ ինչ շեշտով) որ իրենցմէ պահանջուածը դրամ է եւ ոչ թէ խրատ:

Հանրածանօթ իրողութիւն մըն է, որ Թուրքիայէն զանազան պահանջներ ունեցող երկիրներու մէջ Թուրք դեսպանները կը դէն կ'անցնին թերթերու խմբագրութեանց յղուած բողոքագիրներու բոլոր մրցանիշները: Անոնք առիթը չեն փախցներ խիստ նամակներով բողոքելու այն բոլոր գրութեանց դէմ, որոնք կը մատնանշեն Թուրքիոյ տնտեսական անկումը»:

Հեղինակը կը խօսի Աթաթիւրքի այն հրամանին մասին, որ կ'արգիլէր «ֆէսն» ու «շալվար»ը եւ կը պարտադրէր եւրոպական զգեստները: Արդիւնքը այն եղաւ, որ ամբողջ ժողովուրդը «քլոշարի» կերպարանք ստացաւ, կարկտնուած բաճկոններով, աղտոտ ու խղոտ շապիկներով, պատռտուած գլխարկներով, որոնք գլուխներուն վրայ կը մնան միշտ, նստած, ոտքի, թերեւս նաեւ պառկած ժամանակ: Սովորական երեւոյթ է որ քաղաքներուն փողոցներուն մէջ ամերիկեան ճոխ կառքերը խաչաձեւեն իբրեւ գրաստ գործածուած բեռնակիրներ, որոնք, կքած աներեւակայելի ծանրութիւններու տակ, մայրաքաղաքին փողոցներուն մէջ իսկ կուգան յիշեցնել թէ երկրին մէկ մասը տակաւին չէ հասած բեռնակառքի դարաշրջանին:

Ուրիշ գլուխ մը կը նկարագրէ Թուրք զինուորը. «սարսափազդու պատկեր մը, խուզուած գլխով, որ կը կորսուի խոշոր գլխարկի մը տակ, արտայայտութենէ զուրկ աչքերով: Համեմատաբար քիչ մը աւելի ներկայանալի զգեստները վերապահուած են չքերթներուն: Արձակուրդով քաղաք իջած «ասկեար»ը փողոցներուն մէջ կը պտտի շագանակ կամ ճանճերով ծածկուած ձմերուկի շերտեր կրծելով: Ծակած կօշիկներով այս զինուորներուն շուրջը՝ աղջկան ոչ մէկ նշոյլ: Զինուորներն ալ, մխիթարուելու համար, կը պտտին իրարու հետ՝ ճկոյթ մատներով իրարու միացած: Ենթասպաները հազար կտոր կ'ըլլան այս անգրագէտ «ասկեար»ներուն մեքենագիտութեան ամէնէն տարրական սկզբունքները սորվեցնելու համար, բայց իզուր: Թնդանօթ մը գործածելու ձեւը այս զինուորներուն սորվեցնելու համար, հարիւր անգամ աւելի ժամանակի պէտք կայ քան թնդանօթը շինելու: Ինչ որ քիչ մը սորված են առաջին արձակուրդին բոլորովին կը մոռնան: Այս բոլորը շատ բնական են անգրագէտ զինուորներու համար. բայց հարցը այն է, որ Թուրք վարիչները չեն ուզեր ընդունիլ այս իրողութիւնը, մանաւանդ իրենց պաշտպաններուն առջեւ որոնց հետ այնպէս կը վարուին որ կարծէք իրենց փոքրաւոր շահակիցընկերները կամ պաշտպանեալները ըլլային:

Թուրք «ասկեար»ը գնդապետ Լորենսի ժամանակուան զինուորը մնացած է միշտ, փոշեթաթախ, անբան, բայց միշտ կարող՝ իր ենթասպային մէկ հրամանին վրայ ոտքի նետուելու եւ դրացին մորթելու, ինչպէս հաստատեց սեպտեմբեր վեցի դէպքերուն ժամանակ, երբ գազաններու նման յարձակեցան անպաշտպան ժողովուրդի վրայ, կողոպտեցին, թալանեցին, ջարդուփշուր ըրին Պէյօղլուի յունական, հայկական եւ հրէական թաղերը:

Գիրքին մէջ կը գտնենք անկեղծութեամբ գեղուն գլուխներ, որոնք, զերծ թշնամական նկատումներէ, կը ձգտին միայն ճշմարտութիւնը արտայայտել, արդի Թուրքիոյ իսկական պատկերը տալ: Զգացում մը, որ միայն պատիւ կրնայ բերել իր հեղինակին:

Գիրքը կը վերջանայ «Պատկերներ» անուն գլուխով:

Հեղինակը կը նկարագրէ Պոլսոյ նեղ, աղտոտ եւ վտանգաւոր փողոցները, կը խօսի Անգարայի հաստատման մասին, որ, ըստ Քեմալի, Անատոլուցիներու աչքին առջեւ պիտի բանար արեւմտեան քաղաքակրթութեան հրաշալիքները:

Երկրին մէջ կատարած ճամբորդութեանց նկարագրութեան բաժնին մէջ հեղինակը կը խօսի ճաշարաններուն, ճաշերուն, բնակչութեան, պանդոկներուն եւ ճամբաներուն մասին: «Անգամ մը որ դուրս գաք քաղաքին սալայատակուած փողոցներէն, կը սկսիք առատ փոշի կլլել այնպիսի արահետներու վրայ, որոնք պաշտօնապէս կը կոչուին մեծ ճանապարհ» ...

Զըլլայ որ այնտեղ խօսիք «Հայաստանի Թուղթ»ի մասին: Հայաստանի հետ կապ ունեցող որեւէ բան գոյութիւն չունի եւ ունեցած ալ չէ Թուրքիոյ մէջ:

Եւ, վերջացնելու համար, կ'ուզեմ հետեւեալ մէջբերումը կատարել հեղինակէն.— «Աշխարհի ամէնէն ազնիւ հողերուն վրայ 400 տարուան օսմանեան դրաւումէ մը ետք, մարդ կը բաղձայ որ Յոյն մը անցնի քովէն եւ երկար սեղմէ անոր ձեռքը»:

Կարելի էր նախադասութիւնը լրացնել հետեւեալ ձեւով.— «մարդ կը բաղձայ որ Յոյն մը եւ Հայ մը անցնին քովէն, եւ երկար սեղմէ անոնց ձեռքը»:

ՏՈՔԹ. Ս. ԱԲԳԱՐԵԱՆ

ՄԱՐԻՆԷ

*

Այն ամէնը ինչ որ չէ ընդօրինակութիւն կամ կուրօրէն հետեւողականութիւն:

Ապրիլ կեանքը իր խելքով, իր սեփական տրամաբանութեամբ դատելով եւ ունենալ քաջութիւնը գործադրելու, արտայայտելու, ինչպէս եւ յղացածը գործադրելու համարձակութիւնը իր եւ իր ապրած ընկերութեան բարօրութեան համար ...

Ուսումնասիրութիւնը չի բաւեր, անհրաժեշտ է ապրիլ եւ ապրիլ Թրքահայ կեանքը: Հօս արդէն Մարինէի սիրտը կ'ուզէր, ան կ'ուզէր միջամտել երկու ընկերներու խօսակցութեանը, բայց չէր համարձակեր ... Քովընտի սենեակէն ան կը լսէր միայն անոնց խօսքերը ...

Դարը կը վերջանար Հայու գերեզմանին վրայ, դարը կը սկսէր նոր գերեզմաններ փորելով ...

Այդ օրերուն՝ հերոսական Սասունը կ'իյնար անհաւասար եւ, ըսենք նաեւ, անպատրաստ մարտէ մը ետք:

Կը հասնէին օգնութեան ամէն կողմ, բայց ի զուր, ալ ուշ էր, Սասուն արդէն ինկեր էր ...

Ինչո՞ւ եւ ի՞նչպէս ... Դառն է իրականութիւնը, յիշենք միայն նախադասութիւն մը. «Ես եմ եղեր այդ ժողովրդի դժբախտութեա պատճառը (*), կը կանչէր իր ընկերներուն առջեւ խղճահարութեան մէկ բոպէին հերոսը աննման:

Եւ նման հերոսներու խումբը շունչ կ'առնէր Այգեստանի ծառաստաններու հովանիին տակ:

Նոր Սասուն մը կը պատրաստուէր ... Զէ՞ որ գաղափարի զոլորշին հեռուէն, շատ հեռուէն եկած, զարկեր էր, ցնցեր էր գլուխներու միջուկը, վառեր էր ազատութեան գաղափարի վեհութեան կրակով:

— Վան - Այգեստանի մէջ եւրոպական - ամերիկեան աւելի կարեւոր ներկայացուցիչներ կան, — կռիւ մը հոս, որուն պիտի յաջորդէ կոտորած մը, աւելի դիւրին արձագանգ պիտի տայ եւրոպական մայրաքաղաքներու մէջ եւ հայկական հարցը ... կը խորհէին Սասունէն եկողները:

Մտատանջ են Կովկասէն նոր վերադարձող երկու ընկերները ... Մարինէն կը լսէ անոնց մտերիմ խօսակցութիւնը ... Տեղական Կոմիտէի անդամ Եփրատը շարունակ կը հաղորդէ երկու ընկերներուն Այգեստան ապաստանողներու մտածողութեան եւ դիտաւորութեան փոփոխութիւնը եւ վերջինը՝ կռիւ մը հանելու որոշումը ...

Միջամտութեան որոշումը կը տրուի: Անհրաժեշտ է ուժ տալ Կոմսի ջանքերուն: Տեսակցութիւն մը անմիջապէս, պէտք է ցրուել ռոմանտիկ երեւակայութեան ամպերը, փաստեր եւ կարծիքներ կան զօրաւոր ... «Թոնիր»ի ազաններու ապրած մանկական տարիներու փորձառութիւնը չիկացած երկաթի խարանով դրոշմ է դրեր անոնց սրտին, նաեւ ուղեղին մէջ:

— Անհատի մը մահը կրնայ արդարանալ գաղափարի մը համար, բայց ժողովուրդի մը մահը, այն ալ միայն հարցական գաղափարի մը համար, ոչ, արդարանալի չէ ...

Եւ Մարինէն այդ ճգնաժամային օրերուն կ'ակնարկէ անշուշտ, երբ կը գրէ իր ընկերուհի՝ Ատրինէին.

« Ազատութեան պայքարը այնքան զօրաւոր կերպով թաղուած է սարսափի եւ տառապանքի մէջ, որ ես զայն ապրեցայ իմ փոքրիկ տարիքիս միայն վերջին երկուքովը:

Այո, փոքր էի ազատութեան այդ պայքարը հասկնալու համար իր իրական իմաստովը, բայց կարծես մեծ էի արտասուքը եւ վախը հասկնալու համար» («Վարազ», Թ. 11, էջ 26):

« Արտասուքը եւ վախը», ու ճիշդ այդ օրերուն Այգեստանի Հայ ժողովուրդը, վախի ահաւոր ճիրաններուն մէջ բռնուած, կարծես ճակատագրական նզովքի մը ենթակայ, գիշերը կը լուսցնէր անքուն, սպասելով որ պիտի պայթի առաջին գնդակը եւ արշալոյսին ... Արեւի առաջին ճառագայթները Վարագայ Սարէն սիրուն Այգեստանի տուներու ծուխն ու բոցը պիտի դիմաւորեն անտարբեր:

« Արտասուքն ու վախը » նստեր էին այդ օրերուն Վասպուրականի ժողովուրդի սրտին վրայ: Շուկան գոց էր երեք օրէ ի վեր, փուռերը հաց չկար, 96ի կոտորածի աւերները դեռ չէր մոռցած Հայ մամիկը եւ ահա նորէն սպանդանոց, այս բառը բան մը կը խօսի՞ ընթերցողին:

Տողերս գրողի աչքին առջեւ կենդանի էր եւ է տակաւին, 96ի կոտորածի առաւօտը, երբ հօրս հետ մեր տան տանիքը բարձրացանք, հրացանաձգութեան ուղղութիւնը որոշելու եւ երբ կոտորածի արձագանգը հնչեց տունէ տուն, փողոցէ փողոց, ես հօրս աչքերուն մէջ նշմարեցի այն սոսկալի արտայայտութիւնը, որ կը նմանէր ոչխարի նայուածքին, այն ոչխարին, երբ մսագործը գետին կը փռէ՝ դանակը անոր կոկորդին քսելու պատրաստ ... դուք տեսե՞ր էք այդ աչքերը ....

Դ. ՄԵԼՈՅԵԱՆ
(Շար.)

(2)

(*) Սեպուհի Յուշերը, «Հայրենիք» օրաթերթ, 1939, թիւ 92:

ԿԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՔ «ՅԱՌԱՋ»Ը

ՍԱՍՈՒՆԻ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 364 - 400)

Ը. ԳԼՈՒԽ

12.— ՀՈՒՅՍԻՆ ՄՈՐԱՑՆԵԼ

Տատը իր տրտնջոցով ամբողջ այդ ընթացքում ոչ մի անգամ չդադարեցրեց ինձ հղկելը։ Ես ոչ մի խոսք չէի ասում, ոչ էլ ինձ մի վիրավորված էի զգում։ Ընդհակառակը, ես ուրախ էի, որ տատը ինձ հանգիստ է թողնում, որովհետև ես ամբողջ ուշադրությամբ լսում էի Հույսինի պատմությունը։ Ես ուզում էի իմանալ, թե ինչպես է նա ապրում, ինչ է անում, ինչ է մտածում։ Ես ուզում էի իմանալ, թե ինչպես է նա ընդունում իր ընկերուհիների ծաղրանքները, ինչպես է նա վերաբերվում իր ուսուցիչներին, որոնք, ինչպես ես գիտեի, նրան չէին սիրում։ Ես ուզում էի իմանալ, թե արդյոք նա ինձ չի մոռացել, թե արդյոք ինձ հիշում է։ Ես ուզում էի իմանալ, թե արդյոք նա ինձ չի դավաճանել, թե արդյոք նա ինձ հավատարիմ է մնացել։

Ես ուզում էի իմանալ, թե արդյոք նա ինձ չի դավաճանել, թե արդյոք նա ինձ հավատարիմ է մնացել

Ի՞ՆՉ ԿԸ ԲԱՆԻ ԵՂԻՇԷ ԱՐՔ.

«Այգ»ի նոյեմբեր 14ի թիւէն կ'իմանանք թէ երեք վարդապետներ եւ 15 ծանօթ անձեր Պէյրութ գացած են, Երուսաղէմ առաջնորդելու համար նոր տեղապահը, Տիրան արք. Ներսոյեան։

Ուրիշ լուրի մը համաձայն, պաշտօնանկ տեղապահը, Եղիշէ արք. Տէրտէրեան էջմիածինէն Լիզպոնա (Փորթուկալ) գացեր է Շահէ վարդապետի հետ, տեսակցելու համար Կիւլպէնկեան հիմնարկութեան վարիչ մարմնին հետ։ Այս առթիւ Շահէ վրդ. հեռաձայնած է Պէյրութ, — «Մեր առաքելութիւնը պսակուեցաւ յաջողութեամբ։ Լիզպոնայէն վերադարձանք Ցիւրիխ, ուր պիտի մնանք ատեն մը, յետոյ պիտի վերադառնանք Պէյրութ»։

ԲՈՂՈՔՆԵՐ ԵՒ ՀՐԱԺԱՐՈՒՄՆԵՐ

Զուիցերիոյ աշխատանքի կուսակցութիւնը (համայնավար) եւս տագնապի մատնուած է, Հունգարիոյ դէպքերը բացած է շատերուն աչքերը նոյնիսկ այս կուսակցութեան մէջ որ յարդ հաւատարիմ Սթալինականներու ձեռքը մնացած էր։ Կուսակցութեան երեսփոխաններուն եւ թերթերու խմբագիրներուն հրաժարումէն ետք, որոշուեցաւ լուծել կազմակերպութեան Պալի մասնաճիւղը։

× Իտալիոյ համայնավար կուսակցութեան ղեկավարութիւնը կը խոստովանի թէ Հունգարիոյ դէպքերը ամենածանր տագնապ մը յառաջ բերած են շարքերուն մէջ։ Կուսակցութեան գլխաւոր միջնաբերդներէն Մանթովայի մէջ շարքերուն գայրոյթը գագաթնակէտին հասած է։ Բոլորն ալ խստօրէն կը դատապարտեն Հունգարիոյ մէջ կատարուած միջամտութիւնը, հաստատելով թէ «աններելի ոճիրներ եւ ոճիրներ գործուեցան։ Լոմպարտիոյ համայնավար ծերակուտականը, Սեքիա Մանթովա փութաց, շարքերը հանդարտեցնելու համար, բայց հազիւ հասած, ազդեր փակցուած էին պատերուն վրայ, պահանջելով բոլոր ղեկավարներուն հրաժարումը։

Ամէնէն կարմիր նահանգներէն Էմիլիայի Տովատոլա քաղաքին մէջ ժողով մը սարքուած էր, բացատրութիւններ տալու համար Հունգարիոյ դէպքերու մասին։ Բանախօսները իրենք զիրենք գտան պարապ սրահի մը առջեւ։

Ամբողջ երկրի մէջ հազարաւոր համայնավարներ պատռելով ետ կը ղրկեն իրենց անդամատետրերը։ Միայն Ռովիկիոյի նահանգին մէջ 3000 համայնավարներ հրաժարած են կուսակցութենէն եւն։

× Ֆրանսական կառավարութիւնը որոշեց ազգային համերաշխութեան օր հռչակել Նոյեմբեր 18ի կիրակին, Հունգարիոյ դէպքերուն առթիւ։ Հանրային շէնքերու դրօշները կէս պիտի պարզուին եւ դրամ պիտի հաւաքուի փողոցներու մէջ։ Կը յանձնարարուի առատաձեռնօրէն մասնակցիլ, որպէսզի կարելի ըլլայ եղբայրական օգնութիւնը կազմակերպել արագօրէն։

× Մառեշալ Թիթոյի նախկին աջ բազուկը, Միլովան Ճիլաս, յօդուած մը հրատարակելով կ'ըսէ թէ Հունգարական յեղափոխութեան կողմէ համայնավարութեան տրուած հարուածը երբեք չի կրնար սպիանալ»։

× Ֆրանսայի համայնավար կուսակցութեան ընդհ. քարտուղարը, Մորիս Թորէզ պատասխանելով խումբ մը յառաջդիմական համայնավար մտաւորականներու բողոքներուն եւ հրաժարումներուն, կ'ըսէ թէ անոնք պատեհապաշտներ են եւ չեն կրցած իւրացնել կուսակցութեան սկզբունքները։

ԼԵՀԱՍՏԱՆԻ վարչապետը, Կոմուլքա ճառ մը խօսելով Մոսկուայի մէջ, պարզեց իր ծրագիրները, իբրեւ հիմք բանակցութեանց. — Գերիշխանութիւն եւ հաւասարութիւն, չխառնուիլ ուրիշ ազգերու ներքին գործերուն։

Կոմուլքա չորս տարի բանտարկուած էր իբրեւ Թիթոյական եւ այս անգամ յաղթական ընդունելութեան մը արժանացաւ Մոսկուայի մէջ։

ՀՐԱՆԻՒԹԻ (Հանա) խնայողութեան համար աւելի խիստ միջոցներ ձեռք պիտի առնուին։ Պիտի արգիլուի կառքերու շրջագայութիւնը շաբաթ կէս օրերէ ետք։ Եթէ այս միջոցն ալ չբաւէ, հրանիւթը տոմսակներով պիտի բաժնուի։ Կը վախցուի որ շատ մը ճարտարարուեստութիւններ վնասուին եւ դժուարութեանց հանդիպի տուներու ջեռուցումը։

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ

Այրի Տիկին Վերոն Ռ. Զարդարեան 50.000 ֆրանք կը նուիրէ Շաւիլի եկեղեցւոյ շինութեան, իր ամուսնոյն՝ Ռուբէն Զարդարեանի յիշատակին։

Ստանալ «Յառաջ»էն։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Փարիզի Եկեղեցւոյ դիւանէն կը խնդրուի ծանուցանել թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր օծման տարեդարձին առթիւ բարեհաճած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ա. կարգի շքանշանը շնորհել Պ. Պ. Արմենակ Համբարձումեանի եւ Կարապետ Յակոբեանի. Հայ. եկեղեցւոյ իրենց մատուցած ծառայութիւններուն համար։

ՈՐԲ. ՕԳՆ. ՄԱՐՄԻՆԸ (Փարիզահայ Տիկ. Միութիւն) շնորհակալութեամբ ստացած է Տիկին Լ. Մուրատեանէ 30000 Ֆր. իր ամուսնոյն՝ Պ. Լեւոն Մուրատեանի մահուան առթիւ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԱԼՖՈՐՎԻԼ. — Տէր եւ Տիկին Գէորգ Նալպանտեան եւ զաւակները, Մկրտիչ Աւետիքեան եւ զաւակը Յովհաննէս, եւ բոլոր պարագաները կը ծանուցանեն թէ, այս կիրակի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ մէջ իրենց զաւկին, քրոջ, կնոջ, մօր ԾՆՈՒՆԴ ԱՒԵՏԻՔԵԱՆԻ մահուան տարելիցին առթիւ։ Կը հրաւիրուին հանգուցեալին յիշատակը յարգողները։

ԵՐԵԿՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Սեբաստիոյ Մուրատ Ուսումնասիրաց Միութեան Մարսէյլի մասնաճիւղի։

Այս շաբաթ, ժամը 21էն մինչեւ լոյս, Սալոն տիւ Ռուա Ռընէ (6 ռիւ տը լ'Արպր)։

Կը նախագահէ Պ. ԹՈՐՈՍ ԿՏԻԿԵԱՆ

Կը խօսի Պ. Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

Գեղարուեստական բաժին. — Տիկին Արմաղանեան (երգ), Օր. Ակինեան (դաշնակ), Օր. Արմաղանեան (պար), Պ. Մութաֆեան (ֆանթէզի), Պ. Քէնտիր-եան (արտասանութիւն), Պ. Յարութիւնեան (ֆանթէզի)։ Մկրտիչ Պօղոսեանի (Փարիզէն, երգ)։

Հայկական պարեր Տիւրկէրեան քոյրերու կողմէ։ Նուագ Պ. Պարոյրի կողմէ։

Կը ցուցադրուի գունաւոր գեղեցիկ ժապաւէն մը՝ «ԺԱՄԱՆՑ Ի ՎԵՆԵՏԻԿ»։

Վիճակահանութիւնը պիտի քաշուի հանդէսի պահուն։

Կէս գիշերէն մինչեւ առաւօտ եւրոպական պարեր Օրքէսթր ՌԸՆԷ ՏԱՆԻ։

ՊԱՏԱՐԱԳ

Շաւիլի մատրան յաջորդ պատարագը, այս կիրակի առաւօտ։

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ամասիոյ Հայր. Միութեան։ 1 Դեկտեմբեր, շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս, Սալոն Ալամպրայի մէջ, 340 Պուլվ. Շաւ։

Պատուակալ նախագահութեամբ բանաստեղծ ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹի։

Գեղեցիկ աչքերու մրցում, ընտրուած թեկնածուհին կը ստանայ արժէքաւոր նուէր մը։

Գեղարուեստական ճոխ բաժին։

Սիւզան Հիւպէր (երգ), Ժօ Ալպան։

Ընտանեկան մթնոլորտ եւ հաճելի անակնկալներ։ Նուագախումբ ՆԻՔ ՖՐԱՆՔ։

Սեղանները թուագրուած ըլլալով, այժմէն ապահովել Միութեանս անդամներէն, Տիկին Արփինէ Մորճիկեան, Շէ Վէթէր, 34 ռիւ Թափի Վէր։

Պ. Յար. Չէքէմեան, 12 ռիւ տը լ'Արք. հեռ. Փրատօ 78-61։

Պ. Տիգրան Զորիկեան, 5 Ավընիւ Քամիյ Փէլըթան։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Եօթնեղբայրեան կոմիտէի, մասնակցութեամբ Ֆ. Կ. Խաչի սանուհիներու եւ Նոր Սերունդի 18 Նոյեմբեր, կիրակի կէսօրէն վերջ, ժամը 3ին, ռիւ Ժէի սրահին մէջ։

Կը նախագահէ Ընկ. ՀԱՅԿ ՍԷՐԷՆ-ԿԻՒԼԵԱՆ։

Կը խօսի Ընկ. ՍԻՍԱԿ ՍԻՍԼԵԱՆ

Գեղարուեստական խնամուած բաժին։ Գեղջկական պարեր, զոյգ պար, մեներգ եւ արտասանութիւններ։

Դպրոցին աշակերտներու կողմէ երգախառն պատկերներ եւ խմբերգներ։

Հանդէսէն անմիջապէս յետոյ ընկերահամակրական խնջոյք, յարակից փոքր սրահին մէջ։

ՊՈՒՏՈՅԻ ՄԷՋ

Այս կիրակի ժամը 15.30ին, կղերականներու սրահը ռիւ տէ Պահիւթէէ։

Մանրամասնութիւնները տեղին վրայ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԻՍԻ. — Հ. Յ. Դ. «Զաւարեան» կոմիտէի ժողովը այս շաբաթ, ժամը 21ին, Խրիմեան դպրոցի սրահը։

ՇԱՒԻԼ. — Հ. Յ. Դ. «Արղութեան» խումբի բացառիկ ժողովը այս շաբաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին։

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Անիէռ Պուա Քոլոմպի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանի անդամուհիները այս երկուշաբթի ժամը 15ին, Տիկին Քէչիշեանի բնակարանը, 8 ռիւ Ատոլֆ Պրիֆօ, Անիէռ։ Խիստ կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ՊԱՏԱՐԱԳ - ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՆԻՍԻ ՄԷՋ

Այս կիրակի, ի յիշատակ 1914 - 18ի պատերազմին զոհուած զինուորներուն պիտի պատարագէ Ատոմ քահանայ։

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ

(ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ)

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Ի նպաստ բախտազուրկ մանուկներու — Այս Կիրակի, Կաւնտ Օթէլի սրահներուն մէջ ժամը 16էն 24 — Աբրաքսինոն

Ցիկան նուագախումբ, ղեկավարութեամբ ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒԻ

ՄՈՒՏՔ 500, ուսանողաց 300

ՀԱՅ ԹԱՏՐՈՆ

U. F. C. F. Ի ԹԱՏԵՐԱՍՐԱՀ

21, Rue Yves Toudic PARIS (10e) Métro : République et Bonsergent

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԳԻՇԵՐ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1956, ԺԱՄԸ ՃԻՇԴ 8.45 ԻՆ

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԳ ՏԷՐՎԻՇԵԱՆ

ԿԸ ԽԱՂԱՅ

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՄԸ

ՏՈՆ ԺՈՒԱՆ

ՄՈԼԻԷՐԻ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ, ՀԻՆԳ ԱՐԱՐ

Կը մասնակցին ՕՐ. ԱԼԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ, Պ. Պ. Ա. ԳՄԲԷԹԵԱՆ, Ն. ՄԱՐԳԱՐԵԱՆ, Տ. ՆՇԱՆԵԱՆ եւ ուրիշ կարեւոր ուժեր։

Տոմսերը կը ծախուին Բալուեան գրատունը։ Գիները՝ 200, 300 եւ 400 Ֆր.։

ՃԱՇԱՐԱՆ ԵԱՐ

Հիմնադիր-տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

★

Ֆրանսական - հայկական եւ կովկասեան ընտիր կերակուրներ

ՇԱՆ ԶԷԼԻԶԷԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՅ

4, Rue Robert - Estienne

(Rue Marbeuf) PARIS (8e)

Téléphone BAL. 31 - 21

(Métro: F. D. Roosevelt)

★

Հաճելի մթնոլորտ

Առաջնակարգ կովկասեան խորովածներ, «շաշլիք», «քարսքի»

★

BAR AMERICAIN



PARIS CALIFORNIE

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻԹԹԵՒԵԼԵԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

16 RUE SAINTE CECILE — PARIS 9e

ԹՐԻԲՕ ՇԻՆԵԼՈՒ ՅԱՏՈՒԿ ԿԵՐՊԱՍՆԵՐ — ԷՆԹԵՐԼՈՒՔ

ԼԱՒԱԳՈՅՆ ԱՊՐԱՆՔ — ԼԱՒԱԳՈՅՆ ԳԻՆԵՐՈՎ

Մէկ հասցէ՝

PARIS - CALIFORNIE

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

HARATCH

ՕՐԱԹԵՐԹ

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ.սր, տարեկան 3000ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրաք: Հատը 12 ֆր.

ԿԻՐԱԿԻ 18 ՆՈՅԵՄԲԵՐ
DIMANCHE 18 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7735 32e ANNEE

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3546

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՀՈԳԵՐ ԵՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ուսանողներ ունինք Ֆրանսայի, Պել-ժիոյ, Անգլիոյ, Իտալիոյ, Աւստրիոյ եւ ուրիշ երկիրներու համալսարաններուն եւ բարձրագոյն վարժարաններուն մէջ :

Տարուէ տարի կ'աճի անոնց թիւը, կազմելով կարեւոր համրանք մը :

Ընդհանրապէս կուգան Մօտաւոր եւ Միջին Արեւելքէն: Աւելի չատուոր են անոնք որ բնիկներ կը համարուին, ծնած ըլլալով հիւրընկալ երկիրներուն մէջ :

Դժբախտաբար ստոյգ տեղեկութիւններ կը պակսին անոնց ներքին կացութեան մասին :

Տեղ – տեղ կան Ուսանողական Միութիւններ, որոնք դասախօսութիւններ կը կազմակերպեն, պարբերաբար, աւելի ճիշդ՝ պատահաբար :

Վաղուան ուժերն են սաոնք, ինչպէս ամէն ազգի մէջ :

Թէեւ, մեծ մասով կ'ընտրեն այն գի-տութիւնները որ կրնան բանուկ ասպարէզ մը ապահովել իրենց :

Այդպէս ըլլալով հանդերձ, չատերու մէջ վառ կը մնայ հանրային դործունէութեան ջիղը, ժողովուրդին ծառայելու տրամադրութիւնը :

Յաճախ յիչեցուցած ենք թէ այս երիտասարդութիւնը կրնայ հանրօգուտ պարտականութիւններ կատարել ուսանողութեան չրջանին ալ :

Ամէն ուր որ ուսանողներ կան, գաղութ մըն ալ ունինք, աւելի կամ նուազ ստուարաթիւ :

Ուսանողները մեղանչած պիտի ըլլային իրենց կոչումին դէմ, եթէ անջատ, մեկուսացեալ դասակարգ մը կազմէին հայրենակից հասարակութեան մէջ :

Ընդհակառակն, իրենց չահն ալ կը պահանջէ որ դառնան այդ հասարակութեան անբաժան մասը, ջանան երիտասարդացնել անոր կեանքը :

Ունին անմիջական պարտականութիւն մը եւս, իրենց ուսանողութեան չրջանէն իսկ (4–5 տարի):

Ուր որ ալ գտնուին, չրջապատուած են հազարաւոր օտար դասընկերներով :

Այդ խաղաղ համակեցութիւնը լայն պատեհութիւններ կ'ընծայէ, փոխադարձաբար ծանօթանալու, տեսակ մը եղբայրութիւն կազմելու համար :

Մանաւանդ նոյն աշխարհամասէն եկած ուսանողներ մօտէն կը ճանչնան իրար, ինչ որ կրնայ օգտակար ըլլալ ապագային համար ալ :

Օրինակ, մեր ազգը որքան սերտ կապեր ունենայ Միջին Արեւելքէն եկած օտար ուսանողներու հետ, այնքան կ'օգտուին, փոխադարձաբար :

Այս ճակատի վրայ եւս մեկուսացումը տեսակ մը դասալքութիւն պիտի նչանակէր, միշտ աններելի:

Հայ ուսանողը, իբրեւ ամբողջութիւն, ոչինչ կը չահի, իր պատեանին մէջ կծկըւելով կամ տարամերժ դիրք մը բռնելով, անխուսափօրէն :

Իր դասընկերներուն մէջ կան հարիւրաւորներ որոնք հանրային կամ պետական պաշտօններու պիտի կոչուին, երբ ուսման չրջանը լրացնեն :

Չորս – հինգ տարուան մտերմութիւն մը երբեք ապարդիւն չի կրնար անցնիլ, հանրային տեսակէտով :

Միւս կողմէ, այդ մտերմութեամբ կը հարթուին չատ մը թիւրիմացութիւններ: Մանաւանդ որ, ծուռ բերաններ միշտ պատրաստ են ամբոխին կեր ճարելու :

Կան զոյնզգոյն դիմակաւորներ ալ, որոնց պաչտօնն է թակարդներ լարել, անմէջ գիտելիքներով :

Ուսանողին տարրական պարտականութիւնն է լուրջ սորվիլ հանրային կեանքի յորձանքին մէջ, փոխանակ անկիւն մը քաչուելու եւ դիտելու :

Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆՈՐ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԿԸ ՀԱՄԱԽՄԲՈՒԻՆ

Ազգաժողովին ընդհ. քարտուղարը, Համերշոլտ, Գահիրէ հասնելով, նախ մէկուկէս ժամ խօսակցեցաւ Եգիպտոսի արտաքին գործերու նախարարին հետ, ապա ներկայացաւ նախագահ Նասրի : Ընդհանուր տպաւորութիւն այն է թէ բանակցութիւնները մեծ դժուարութեանց պիտի հանդիպին : Ընդհ. քարտուղարին ժամանումէն քիչ առաջ, կառավարական թերթը, «Ալ Կումհուրիյա» խմբագրական մը հրատարակած էր ուր կը չեչտէր թէ միայն Եգիպտոս պիտի որոշէ անգլիական, ֆրանսական եւ իսրայէլեան զօրքին հեռացման պայմանները :

Պ. Համերշոլտ օդանաւէն վար իջած ատեն, դիմաւորուեցաւ նորվեկեան եւ դանիական զինուորներէն որոնք նոր հասած էի: Այս առթիւ խօսքը անոնց ուղղելով ըսաւ.

— Կը չնորհաւորեմ ձեզ որ մաս կը կազմէք այս միջազգային ուժին, առաջինը՝ իր տեսակին մէջ, վասնզի կամաւորներ կուգան աշխարհի բոլոր մասերէն, ծառայելու համար այն սկզբունքներուն որոնց վրայ հիմնուած է Ազգաժողովը: Վստահ եմ թէ այս օրինակով օր մը պիտի ունենանք համաշխարհային կարգուսարք մը որով կրնանք հպարտանալ բոլորս ալ» :

× Ազգաժողովին արձանագրած զինուորները հետզհետէ կը համախմբուին Ջրանցքի չրջանին մէջ: Մինչեւ չաբաթ առտու հասած էին 192 զինուորներ :

× Եգիպտացիները փակած են անուշ ջուրի ճամբան Փորթ Սայիտի մէջ : Անգլեւֆրանսական հրամանատարութիւնը բողոքագիր մը ուղղեց Ազգաժողովին:

× Վաւերական տեղեկութիւններ կը պակսին Ազգաժողովին ընդհ. քարտուղարին եւ նախագահ Նասրի տեսակցութեան մասին : Գահիրէէ մեկնելէ առաջ Համերշոլտ երկար տեսակցութիւն մը ունեցած էր միջազգային զօրագունդի հրամանատարին՝ զօր. Պըրնսի հետ: Երէկ, չաբաթ, նոր տեսակցութիւններ պիտի ունենար գնդ. Նասրի եւ արտաքին գործերու նախարարին հետ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ

Հնդկաստանի վարչապետը, Նեհրու, ճառ մը խօսելով խորհրդարանին առջեւ ըսաւ թէ ընդհ. պատերազմ կրնայ ծագիլ, եթէ զինուորական գործողութիւնները վերսկսին Միջին Արեւելքի մէջ: Այս առթիւ բացատրեց թէ աշխարհի այդ մասին մէջ ձգտումներ կան որոնք կրնան ծանրացնել կացութիւնը եւ ի վերջոյ պատերազմի յանգիլ: Իր կարծիքով, «ֆրանքեւանգլիական ուժերը ամբողջապէս պիտի տեղանուրուին եգիպտական հողին վրայ եւ առ այժմ միտք չունին հեռանալու: Եթէ այդ ուժերը մնան Եգիպտոսի մէջ, կացութիւնը կրնայ արագօրէն ծանրանալ եւ զինուորական նոր գործողութեանց յանգիլ »:

Իր ստացած տեղեկութեանց համաձայն, չատ ծանր եղած են մարդկային կորուստները Փորթ Սայիտի մէջ եւ քանի մը հազարի կը հասնին : «Քանի մը օր առաջ կ'ըսէի թէ կացութիւնը բարւոքած է Միջին Արեւելքի մէջ: Այսօր երբեք վստահ չեմ թէ բարւոքում տեղի ունեցած է»: Պ. Նեհրու այս առթիւ ալ քննադատեց անգլեւֆրանսական յարձակումը Եգիպտոսի դէմ, ըսելով թէ այդ ձեռնարկը օգնեց Իսրայէլի եւ օգտուեցաւ Իսրայէլէն: «Եթէ օտար ուժերը ամբողջովին չքաչուին Եգիպտոսէն, յայտնապէս բռնաբարուած պիտի ըլլայ Ազգաժողովին դաշինքը : Միջազգային ոստիկանութիւնը պէտք չէ գրաւէ Սուէզի Ջրանցքով : Իր գլխաւոր պաչտօնն է ապահովել որ Իսրայէլը մնայ զինադադարի նախկին համաձայնութեամբ ճչդուած սահմանագծին վրայ »:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ .ՄԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՄԱՐ

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ վարչապետը, Իտըն, ծրագիր մը պիտի ներկայացնէ Ազգաժողովին, արմատապէս լուծելու համար Միջին Արեւելքի ներկայ տագնապը :

Այդ ծրագրին գլխաւոր կէտերն են .—

1. Տեւական հաշտութիւն Իսրայէլի եւ արաբական աշխարհին միջեւ : 2.— Լուծում արաբ տարագիրներու հարցին, միջազգային համաձայնութեամբ : 3.— Միջազգային հսկողութիւն Սուէզի Ջրանցքին վրայ, ապահովելով ազատ նաւարկութիւն բոլոր երկիրներու, հետեւաբար եւ Իսրայէլի համար: 4.— Միջազգային ձեռնարկ մը կատարել, ընկերային բարենորոգումներ հաստատելու համար Միջին Արեւելքի մէջ, ուր ժողովրդային բազմութիւնները թչուառութեան մատնուած են: Այս բարենորոգումը չի կրնար կատարուիլ առանց Ամերիկայի աջակցութեան, ուրեմն հարկ պիտի ըլլայ ընդհանուր գործակցութիւն մը հաստատել : 5. — Տնտեսական օգնութիւն տրամադրել Եգիպտոսի, պայմանով որ չեղեալ համարի կարմիր գօտիէն անդին բրած ապստամբները: Իտըն ինքն ալ գիտէ որ Եգիպտոս պիտի մերժէ այս վերջին պայմանը :

× Եգիպտական իշխանութիւնները արգելափակեցին եօթը անգլիացի լրագրողներ Սեմիրամիս պանդոկին մէջ, ինչպէս կը հաղորդէ Գահիրէի զուիցերիական դեսպանատունը :

ԱԶԳԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՎԻՃԱԲԱՆԻ

ՄԱԿի հերթական ընդհ. ժողովի առաջին նիստին մէջ ամերիկեան պատուիրակը, Հուվըր, խօսք առաւ ի բացակայութեան Տըլըսի եւ հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ Հունգարիոյ դէպքերուն եւ Միջին Արեւելքի տագնապին առթիւ.

— Ձենք կրնար լուռ մնալ երբ Հունգարիոյ մէջ այրեր, կիներ եւ մանուկներ կ'աքսորուին, վասն զի չեն վախնար իրենց ազատ կարծիքը յայտնելու: Ընդհ. ժողովը պէտք է անմիջապէս ձեռնարկներ կատարէ այս եղերական կացութեան առջեւ »:

Անդրադառնալով Միջին Արեւելքի կացութեան, Պ. Հուվըր բացատրեց թէ Ազգաժողովի բանաձեւին հակառակ է կամաւորներ ղրկել Միջին Արեւելք: ՄԱԿի բոլոր անդամները, մէջն ըլլալով անոնք որ խառնուած են թչնամութեանց, պէտք չէ ուրիշ զօրք ղրկեն այդ չրջանը, բացի Ազգաժողովին որոշած միջազգային ոստիկանութենէն : Գալով Սուէզի հարցին, հարկ է միջազգային կարգադրութիւն մը գտնել : Հուվըր ալ անհրաժեշտ կը գտնէ որ եա կանչուին անգլեւֆրանսական զինուորները, երբ միջազգային ուժ մը կը ղրկուի :

Այս յայտարարութիւնը տհաճութիւն պատճառեց Փարիզի եւ Լոնտոնի մէջ, ուր դժգոհ են նաեւ Հնդկաստանի բռնած դիրքէն : Կարգ մը թերթեր կը գրեն թէ Հնդկաստանի մէջ ալ դժգոհ են վարչապետին եւ իր բանբերին՝ Քրիշնա Մենոնի արտայայտութիւններէն :

× Փարիզի ամերիկեան դեսպանը երկար տեսակցութիւն մը ունեցաւ Պ. Կի Մոլէի հետ, մանեչալ Բուլկանինի վերջին նամակներուն առթիւ: Ընդհանուր կարծիքն այն է թէ Խ. Միութիւնը կու-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ԱՆՈՐՈՇ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

ՈՒՐ ԿԸ ՂՐԿԵՆ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐԸ

Նիւ Եորքէն կը հեռագրեն թէ Մ. Նահանգները պահանջեցին Ազգաժողովէն ղադրեցնել Հունգարներու աքսորը դէպի Սիպերիա :

Փեչթայէն հասած լուրերու համաձայն, Քատարի կառավարութիւնը, որ հիմնուած է ռուսական հրասայլերուն եւ թնդանօթներուն վրայ, յուսահատական միջոցներ կը փորձէ, սաեղծուած քաոսը մեղմացնելու համար: Առջի օր խիստ հրահանգներ հրատարակեցին ուտեստի փոխադրութեան մասին: Ցետոյ յաջողեցան համոզել Փեչթայի բանուորներու Խորհուրդին մէկ մասը որ վերսկսին աչխատանքը գործարաններու մէջ: Քատար բացատրած է թէ ընդհ. գործադուլին չարունակութիւնը «ազգային անձնասպանութիւն» մը պիտի ըլլայ: Խորհուրդին համակերպումը սրտնեղութիւն պատճառած է ապստամբներու միւս մասին, մէջն ըլլալով ուսանողներն ու մտաւորականները: Երէկ, չաբաթ, պիտի ճշդուէր թէ որքան բանուորներ վերսկսած են աչխատանքը :

Պարենաւորման մասին հրատարակուած կանոնագիրը կ'ըսէ թէ անհատներ կամ կազմակերպութիւններ չեն կրնար ուտեստ փոխադրել գաւառէն, առանց մասնաւոր վերստեսուչին արտօնութեան եւ խորհրդային իշխանութեանց հաւանութեան : Այս կարգադրութիւնն ալ սահմանուած է սովի մատնելու ապստամբները :

Վերջին լուրերու համաձայն, բանուորներու Խորհուրդին եւ վարչապետին բանակցութիւնները տեւեցին ժամը 19էն մինչեւ առտուան 4·30: Նիստէն ետք, հաստատուեցաւ թէ վարչապետը մեծ յաջողութիւն մը չէ չահած: Բանուորական Խորհուրդը աչխատանքի վերսկսման կոչին մէջ կ'ըսէ թէ «մէկ ստորակէտ եա չէ առած ազգային ապստամբութեան նըպատակներէն», որոնց գլխաւոր կէտերն են, — սովետական զօրքին մեկնումը, նոր կառավարութեան մը կազմութիւնը, ազատ ընտրութիւններ մէկէ աւելի կուսակցութիւններով եւ չէզոքութիւն Հունգարիոյ :

× Ծամբորդներու տեղեկութեանց համաձայն, աքսորականներու առջին կարաւանները անցած են Խ. Միութեան սահմանագլուխը եւ միշտ սովետական զինուորներ կը հասնին Հունգարիա :

× Ազգաժողովին ընդհ. քարտուղարը մերժեց Հունգարիոյ կառավարութեան ներկայացուցիչներն ընդունիլ Հռոմի մէջ: Կ'ուզէ Փեչթա երթալ անձամբ, կացութիւնը քննելու համար :

× Մոսկուայի անթենը կը ծանուցանէ թէ Արեւմուտքի կողմէ առաջարկուած ազատ ընտրութիւնները պիտի մերժուին հունգարական կառավարութեան կողմէ :

× Վատիկանի անթենը դառնօրէն կը գանգատի թէ «ազատ աչխարհը մինակ ձգեց Հունգարիան իր ազատագրական պայքարին մէջ, վախնալով Խ. Միութեան սպառնալիքներէն, թէ մարտիրոս երկիրը չատ սուղ գին մը վճարեց խաղաղութեան համար, թէ ոչ մէկ գործնական քայլ առնուեցաւ ցեղասպանութիւնը դադրեցնելու համար» ենւ.:

× Իտալական կառավարութիւնը արգիլեց ռուսական պարախումբի մը մուտքը, Հունգարիոյ դէպքերուն հետեւանքով

× Սպիտակ Ռուսերը արարողութիւն մը սարքած են այսօր, Փարիզի մէջ, ի յարգանս Հունգարիոյ զոհերուն :

ՊՈԼՍԷՆ կը հեռագրեն թէ հակօդային մարզանքներ կատարուեցան քաղաքին զանազան մասերուն մէջ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻԱՆ ՎԱՅԱՁԱՆԱԿ
ՍԽՍՀՄ ՀԻՄՆԱԿ...

•

Ներկայում հայկական մամուլում չի մնում՝ որ ոչ մեր ուշադրությունը չգրավի Ռուսաստանի Հայաստանի վերաբերմամբ ծավալած ահռելի աշխատանքը։ Ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան մեր հայրենիքը ենթարկվում է ամենաարմատական վերափոխումների։ Ամեն ինչ նոր է, ամեն ինչ նոր ոգով է ներշնչված։ Ամեն ինչ նոր ուղիներ է բռնում։

ՆՎԻՐԱԿ

(ՊԱՏՄՎԱԾՔ ՀԿՊ, 364 - 400)

Ֆ. ԳԱՎԻ

12.— ՀՈՒՅՆ ՍՈՒՏԱՑԱՎ

Ալեքսանդրը ոտքի թռավ, խնդրեց, որ իրեն ոչինչ չասեն, ինքն ամեն բան ինքը տեսնի: Ինքն էլ գնաց ներքև, ուր հավաքված էին ամբողջ գունդը, ինչպես նաև ժողովրդի մեծ բազմություն: Ալեքսանդրը ձիու վրա նստած էր, շրջապատված իր զորավարներով: Նրանց մեջ էր նաև Պարմենիոնը, որ ամենից շատ էր սիրում Ալեքսանդրին: Ալեքսանդրը ձիուց իջավ, մոտեցավ Պարմենիոնին, գրկեց նրան և համբուրեց: Ապա ձիավարեց դեպի զորքերի առջևը, կանգնեցրեց ձին և սկսեց խոսել: Նա ասաց, որ ինքը ոչ մի վատ բան չի արել, որ ինքը միայն ուզում է, որ իր զորքերը հանգստանան, որ նրանք ուժասպառ են եղել, որ ինքը ուզում է նրանց ուղարկել տուն, որ նրանք ուրախությամբ տեսնեն իրենց ծնողներին, կանայք և երեխաներ: Ինքը կմնա Բաբելոնում, կհավաքի նոր զորք և կգնա Հնդկաստան: Ասաց, որ նրանք կարող են գնալ Մակեդոնիա, Հունաստան, ուր ուզում են, ինքը նրանց ազատ է արձակում: Ասաց, որ նրանք ազատ են գնալ Պարմենիոնի հետ, որ նրանք ազատ են գնալ Կրատերոսի հետ, որ նրանք ազատ են գնալ Մելեագրոսի հետ, որ նրանք ազատ են գնալ Պերդիկասի հետ, որ նրանք ազատ են գնալ Ալեքսանդրի հետ, որ նրանք ազատ են գնալ Հեփեստիոնի հետ, որ նրանք ազատ են գնալ Պտղոմեոսի հետ, որ նրանք ազատ են գնալ Սելևկոսի հետ, որ նրանք ազատ են գնալ Անտիգենե

ՍՈՒԳԻ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՕՐ

Ինչպէս գրած էինք, Ազգային Համերաշխութեան Օր հռչակուած է այսօր, կիրակի, օգնելու համար Հունգարիոյ ժողովուրդին :

Այս առթիւ Ֆրանսական Մամուլի Ազգ. Դաշնակցութիւնը, որուն անդամ է նաեւ «Յառաջ», կը հաղորդէ վարչապետ Պ. Կ. Մոլէի հետեւեալ յայտարարութիւնը. —

« Այն պահուն երբ Հունգարիան ծառացաւ իր ազատութիւնը վերագտնելու համար, Ֆրանսուհիներ եւ Ֆրանսացիներ յուզումով համակուեցան ի տես այդ հերոս ժողովուրդին, այն մարդոց որ կը մեռնէին «Մարսէյէզ»ը երգելով :

« Հունգար բանուորները, գիւղացիները, ուսանողներն են որ ամբողջ ազգին վստահութեամբ զօրացած, մղեցին պայքարը, հակառակ օտար բանակի մը վայրենի զսպումին : Մամուլին, անթելին, հեռատեսիլին վկայութիւնները ձեզի հաղորդեցին այդ ժողովուրդին խոյանքը եւ դուք տեսաք այն ինչ որ բարձրացուց մեր երկիրը ազատագրութեան օրերուն :

« Կառավարութիւնը, խորհրդարանը, բովանդակ Ֆրանսան կը խոնարհին Հունգարիոյ մարտիրոսութեան առջեւ, խորտակուած Հունգարիային որ սակայն կը մերժէ ստրկութիւնը : Նոյ. 18ի կիրակին ազգային սուգի օր մը պիտի ըլլայ, ինչպէս եւ համերաշխութեան օր մը Հունգար ժողովուրդին հանդէպ :

« Գիտեմ արդէն կատարուած ճիգը : Լեռնակուտակ աւերակները եւ անասելի թշուառութիւնը որուն մատնուած է այս քաջարի ժողովուրդը բոլորին կը պարտադրեն աւելին ընել : Առատաձեռնօրէն նուիրելով ձեր պարտականութիւնը կատարած պիտի ըլլաք » :

ԽՄԲ. — Կը յիշեցնենք թէ այսօր հանգանակութիւն պիտի կատարուի փողոցներու մէջ, ամէն տեղ :

դէ խանգարել Ազգաժողովին ոստիկանական գործողութիւնը Եգիպտոսի մէջ : Ֆրանսա եւ Անգլիա արդէն յայտարարած են թէ պիտի չքաշուին Ջրանցքի շրջանէն, մինչեւ որ Ազգաժողովին ուժերը գրաւեն կենսական կէտերը եւ Ազգաժողովը ապահովէ ազատ նաւարկութիւնը : Թէ Փարիզի եւ թէ Լոնտոնի մէջ ծիծաղելի կը գտնեն մաուեչալ Բուլկանինի այն պայմանը թէ պէտք է հատուցում վճարել Եգիպտոսի : «Նասր անգամ չհամարձակեցաւ հատուցում պահանջել այն քանդումներուն համար որոնց միակ պատասխանատուն ինքն իսկ է » : Այս առթիւ կը հաստատուի թէ Եգիպտացիները աւելի քան 30 նաւեր ընկղմած են Ջրանցքին մէջ, նաւարկութիւնը խանգարելու համար :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՈՒՐԻՈՅ արտաքին նախարարը կը հերքէ այն լուրերը թէ սովետական սաւառնակներ հասած են Դամասկոս : Միւս կողմէ կ'ամբաստանէ թէ ամէն օր անգլիական եւ ֆրանսական օդանաւեր կ'երեւան Սուրիոյ օդակայաններուն վրայ : Իր յայտարարութեան համաձայն, նախագահ Շիւքրի Քուաթլի Մոսկուայէն մեկնած ատեն ընկերացող ռուսական օդանաւերը վերադարձած են Սեւ Ծովէն, առանց Թուրքիա հանդիպելու :

ԼԵՀԱՍՏԱՆԻ եւ Խ. Միութեան բանակցութիւնները կը շարունակուին բարեկամաբար, ինչպէս կը հաղորդեն Մոսկուայէն : Երէկ վերջացած պիտի ըլլային խօսակցութիւնները :— Լեհաստանի սենտիքաներու Միութեան լիագումար նիստին մէջ, ջախջախիչ մեծամասնութեամբ որոշուեցաւ հեռացնել նախկին վարչութեան բոլոր անդամները, որոնք սթալինական կը համարուին :

ԼԻԲԱՆԱՆԻ վարչապետը, Եաֆի եւ պետական նախարարը, Սալամ հրաժարեցան, ներքին տագնապի մը հետեւանքով :

ՀՐԱՆԻԻԹԻ (Էսսեն) տագնապը լրջօրէն կը զբաղեցնէ կառավարութիւնը : Եղած սահմանափակումները բաւական չեն համարուիր եւ ուրիշ միջոցներ կը փնտռուին : Կ'ըսուի թէ օթոներու շրջագայութիւնը պիտի արգիլուի կիրակի օրերը, թէ պիտի յետաձգուի հաստատուած նոր տուրքը : Կ'առաջարկուի նաեւ որ զոյգ թիւեր կրող ինքնաշարժները զոյգ օրեր բանին, միւսները՝ ոչ-զոյգ օրեր ... Ածուխի տագնապ մըն ալ կը նախատեսուի եւ շատ մը մեծ հաստատութիւններ կը խորհին կրճատել աշխատանքի ժամերը : Վերջնական որոշում պիտի տրուի չորեք-

ՏԽՐՈՒՆԻ. — Ցաւով կ'իմանանք թէ անցեալ շաբթու փողոցէն անցած ատեն յանկարծամահ եղած է ծանօթ ոսկերիչ Պ. Երուանդ Գազազեան, 72 տարեկան : Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ ուրբաթ օր : Հանգուցեալը, բնիկ Պոլսեցի, Փարիզ հաստատուած էր վերջին արտագաղթէն ի վեր :

ՅՈԲԵԼԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՐՔԻ

Սալ Շոփէն (Փլէյէլ), Դեկտեմբեր 1
Շաբաթ գիշեր, ժամը 8.30ին

Նախաձեռնութեամբ Հայ Գրողներու Ընկերութեան եւ մասնակցութեամբ Մշակութային Միութեան եւ Համազգային ու Ֆրանսահայ լսարաններուն :

Գրական ու գեղարուեստական ճոխ բաժին :

Մուտքը 200 ֆրանք :

Տոմսերը կը ծախուին Բալուեանի գրատունը :

Մանրամասնութիւնները յառաջիկային :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Այս չորեքշաբթի երեկոյ Քաֆէ Քատէի վերնայարկը, տեղի կ'ունենայ լսարանի հերթական դասախօսութիւնը : Կը խօսի Պ. ՀՐ. ԲԱԼՈՒԵԱՆ : Նիւթը՝ Հայկանուշ Մարքի գրական եւ հանրային գործունէութիւնը (իր յոբելեանին առթիւ) : Մուտքը ազատ է :

ԾՆՈՂՔՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Դաշնակի դասեր Մարսիլիոյ մէջ

Իբրեւ փորձառու մանկավարժ ուսուցիչ, Մատլէն Եավէր վերսկսած է իր դաշնակի դասաւանդութիւնները :

Ժամանակի խնայողութիւն, հսկայական յառաջդիմութիւն, արդիական արագաշարժ դիւրուսոյց մեթոտներով, անոնք որ կարճ ժամանակի մէջ կ'ուզեն տիրանալ երաժշտական արուեստին եւ դաշնակ նուագել Քոնսերվաթուարի ծրագիր կանոնագրով, դիմեն, ամէն օր ժամը 2-7, Սթիւտիօ, 17 ռիւ Ֆլէկրէ, Ա. յարկ, Մարսէյլ :

(FESTIVAL)

ԵՐԳԱՊՆԱԿՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՆԱԾ Է

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆԻ

«Զանազան ժամանակներու եւ զանազան երկիրներու» ծիսական երաժշտութեան նուիրուած երգապնակները (միքրօսիյօն) :

Լիտիա Կարինի գօնթր-ալթօ հարուստ ձայնին կ'ընկերանան «Մարթինօ»ի ալիքներու, ինչպէս նաեւ հարուածային երաժշտական գործիքները (բերգիւսիոն), որոնք կը ստեղծեն երաժշտական դիւթիչ մթնոլորտ մը :

Այս երգապնակով երաժշտական հաճելի պտոյտ մը կը կատարէք հինաւուրց Արեւելքը (Հայաստան, Սուրիա, Արաբիա, Բաբելոն, Հնդկաստան, Հասարակածային Ափրիկէն, Միջին դարու Ֆրանսան եւ Սպանիա, հին Աթէնքը, Կելտերու երկիրը (Սկովտիա) եւ վերջապէս Պրազիլիա եւ Հարաւային Ամերիկա :

Փափաքողները կրնան իրենց ապսպրանքները ուղղել երգապնակի բոլոր վաճառատուները հետեւեալ ըէֆէրանսով .

DISQUES FESTIVAL «MUSIQUE RITUELLE» A TRAVERS TEMPS ET PAYS D. L.- F· 88

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ. — Յովհաննէս Վարժապետեան, Զորումցի, տարիք 55-56, որդին Մարկոս Վարժապետեանի, եւ թոռը Տէր Կարապետ Վարժապետեանի, իր մօրը կողմէ տիկին Էլմաս Վարժապետեանի ծնեալ Տէր Կարապետեան (ներկայիս Լօչեան) : Տեղեկացնել Տիկին Լօչեանի,
Maison des Vieillards Arméniens
1, Rue Jean Finot, Andilly (S. et O.)
France

շաբթի :

ԹՈՒՆԱՒՈՐՄԱՆ դէպք մը պատահած է Օպերվիլիէ թաղի մէջ : Անցեալ չորեքշաբթի անհանգստացած էին 72 աշակերտներ : Առջի օր թիւը բարձրացած էր 248ի, որոնք միեւնոյն խոհանոցէն կը ճաշէին : Քանի մը հոգի հիւանդանոց փոխադրուած են :

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ամասիոյ Հայր. Միութեան : 1 Դեկտեմբեր, շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս, Սալոն Ալամպրայի մէջ, 340 Պուլվ. Շաւ :

Պատուակալ նախագահութեամբ բանաստեղծ ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹի :

Գեղեցիկ աչքերու մրցում, ընտրուած թեկնածուհին կը ստանայ արժէքաւոր նուէր մը :

Գեղարուեստական ճոխ բաժին :

Սիւզան Հիւպէր (երգ), ժօ Ալպան :

Ընտանեկան մթնոլորտ եւ հաճելի անակնկալներ : Նուագախումբ ՆԻՔ ՖՐԱՆՔ :

Սեղանները թուագրուած ըլլալով, այժմէն ապահովել Միութեանս անդամներէն, Տիկին Արփինէ Մորճիկեան, Շէ Վէթէր, 34 ռիւ Թափի Վէր :

Պ. Յար. Չէքէմեան, 12 ռիւ տը լ'Արք. հեռ. Փրատօ 78-61 :

Պ. Տիգրան Զորիկեան, 5 Ավընիւ Քամիյ Փէլըթան :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՎԻԷՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ֆ. Կապ. Խաչի մասնաճիւղին, սիրայօժար մասնակցութեամբ Սէնթ Էթիէնի եւ Սէն Շամոնի Նոր Սերունդին, ղեկավարութեամբ

Ընկեր Ղարիբեանի

Կը ներկայացուի Ղ. Մելոյեանի

« ԱՐՄԵՆՈՒՇԸ » (տրամ 5 արար)

25 Նոյեմբեր, կիրակի կէսօրէն վերջ ժամը 3ին, Սէրֆլը Կաթոլիկի ծանօթ սրահին մէջ :

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ : Ճիշդ ժամուն կը սկսի :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

●

ՄԱՐՍԷՅԼ. — Հ. Յ. Դ. «Դրօ» խումբի ժողովը այս երեքշաբթի, ժամը 21ին : Կարեւոր օրակարգ :

ԱՆԻԷՌ ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊ. — Հ. Յ. Դ. Արամ Ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր շրջանի ընկերները այս հինգշաբթի, ժամը 21ին, ծանօթ հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Անիէռ Պուա Քոլոմպի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանի անդամուհիները այս երկուշաբթի ժամը 15ին, Տիկին Քէչիչեանի բնակարանը, 8 ռիւ Ատոլֆ Պրիֆօ, Անիէռ : Խիստ կարեւոր օրակարգ : Պարտաւորիչ ներկայութիւն :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիփան - Կոմիտաս երգչախումբին պարահանդէսը Դեկտեմբեր 16ին Ամպասատէօրի սրահը :

Սամուէլ Մուրատեան վարժարանի տօնածառի հանդէսը կիրակի 23 Դեկտեմբեր, ժամը 4ին :

ՀԱՅ Թատրոնը Կեդր. Ֆրանսայի մէջ :

ՎԱԼԱՆՍ. — Նախաձեռնութեամբ Ազգային Միութեան, շաբաթ գիշեր, 15 Դեկտեմբեր, (Քաղաք. Թատրոն) :

ԼԻՈՆ. — Նախաձեռնութեամբ Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին : Կիրակի ցերեկ, 15 Դեկտեմբեր, (Ֆրանսուա Քոփէ) :

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e).

ՀԱՅ ԹԱՏՐՈՆ

U. F. C. F. ի ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ

21, Rue Yves Toudic PARIS (10e) Métro : République et Bonsergent

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԳԻՇԵՐ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1956, ԺԱՄԸ ՃԻՇԴ 8.45ԻՆ

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԳ ՏԵՐՎԻՇԵԱՆ

ԿԸ ԽԱՂԱՅ

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՄԸ

ՏՈՆ ԺՈՒԱՆ

ՄՈԼԻԵՐԻ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ, ՀԻՆԳ ԱՐԱՐ

Կը մասնակցին ՕՐ. ԱԼԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ, Պ. Պ. Ա. ԳՄԲԵԹԵԱՆ, Ն. ՄԱՐԳԱՐԵԱՆ, Տ. ՆՇԱՆԵԱՆ եւ ուրիշ կարեւոր ուժեր :

Տոմսերը կը ծախուին Բալուեան գրատունը : Գիները 200, 300 եւ 400 ֆր. :

ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՑԱՆՉ.ԽՄԲԻ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ՇԱԲԱԹ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ : ԺԱՄԸ 21ԷՆ ՄԻՆՉԵՒ ԼՈՅՍ

CASINO DE CHARBONNIERES

Մասնակցութեամբ զաւառի ամէնէն ընտիր նուագախումբին՝

MAURICE DE THOU et LEO MELIAN — de la R. T. F.

Գեղարուեստական ճոխ բաժին : Բազմաթիւ անակնկալներ

Կը յանձնարարուի կանխաւ ապահովել սեղանները, հեռաձայնելով. —

Autos-cars — Place Bellecour Burdeau 54-03

Մուտք զոյգի զգեստը նախընտրելի է

AVIS AUX

Confectionneurs - Bonnetiers - Artisans

ՍԱՐԳԻՍ ԽԱՆՃԵԱՆ

ԱՐՕՆՈՎ, ընկերութեան առեւտրի բաժնին տնօրէնը

Զեզի կը յանձնարարէ. — Ճարտարարուեստի կամ ընտանիքի համար կարի մեքենաներ, աշխարհահռչակ «Փֆաֆ»ներով

ԱՄԷՆԷՆ ՄԱՏՉԵԼԻ ԳիՆԵՐՈՎ ԵՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

Maison ARONOV Հիմնուած 1904ին

19, Bd. du Temple, Paris (3e). Tél.: ARC. 67-29

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE
HARATCH
Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ-ք, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 20 ՆՈՅԵՄԲԵՐ • MARDI 20 NOVEMBRE 1956

32րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 7736 32e ANNEE Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12րդ ՏԱՐԻ, ԹԻՒ 3547

ՄՈՍԿՈՒԱ ՄԻՋՈՑՆԵՐ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«ԵԹԷ ՈՒԶԷԻՆՔ ԵՒՐՈՊԱՆ ԿԸ ԳՐԱՒԷԻՆՔ»

Խ. Միութիւնը Նոյեմբեր 17ին Մոսկուայի ամերիկեան, անգլիական, ֆրանսական, հնդկական եւ չինական դեսպաններուն յանձնեց յայտարարութիւն մը մառեշալ Բուլկանինի անձնական նամակով, ուղղուած նախագահ Այզընհաուըրի եւ Պ. Պ. Իտընի, Կի Մոլէի, Նեհրուի եւ Զու Ըն Լէյի: Այդ յայտարարութեամբ կ'առաջարկէր խորհրդաժողով մը գումարել, մասնակցութեամբ Մ. Նահանգներու, Խ. Միութեան, Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Հնդկաստանի եւ Չինաստանի վարչապետներուն, «պատերազմը կանխելու եւ զինարշաւը կասեցնելու համար»: Այս խորհրդաժողովը պիտի ծառայէ պատրաստելու աւելի լայն ժողով մը ուր պիտի հրաւիրուին Ատլանտեան Կազմակերպութեան եւ Վարշաւայի դաշինքին անդամ երկիրներու բոլոր վարչապետները: Խ. Միութիւնը բաղձալի կը գտնէ մասնակցութիւնը նաեւ այն երկիրներուն որոնք չեն պատկանիր որեւէ խմբակցութեան:

Խ. Միութիւնը կ'առաջարկէ՝ հինգ վարչապետներու խորհրդաժողովին գումարումէն ետք «քննել ամէն տեսակ զինեալ ուժերու եւ սպառազինութեանց ամբողջական լուծարքի խնդիրը, իւրաքանչիւր երկրի մէջ պահելով միայն ոստիկանական անհրաժեշտ ուժեր՝ ներքին ապահովութեան եւ սահմաններու պաշտպանութեան համար»:

Կը պահանջէ նաեւ ստորագրել ոչ-յարձակման դաշինք մը Ատլանտեան Կազմակերպութեան եւ Վարշաւայի դաշինքին անդամներուն միջեւ:

Ծրագիրը կը բաղկանայ 12 մեքենագիր էջերէ: Յառաջաբանին մէջ խորհրդային կառավարութիւնը ուժգնօրէն կը յարձակի Ֆրանսայի եւ Անգլիոյ դէմ, «Եգիպտոսի մէջ կատարուած նախայարձակման առթիւ, «որ ռազմաշունչ քարոզութեան արշաւ մը յառաջ բերաւ Ատլանտեան ճակատի երկիրներուն մէջ, սաստկօրէն աշխարհի հանրային կարծիքին առջեւ դնելով երրորդ մեծ պատերազմի մը խնդիրը»:

Խորհրդային կառավարութիւնը Թուելէ ետք նոր պատերազմի մը տնտեսական եւ ուրիշ հետեւանքները Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի համար, կը բողոքէ Ռուսիոյ մասին եղած «զրպարտութեանց արշաւին դէմ որ կատարուեցաւ Հունգարիոյ հակայեղափոխութեան ձախողման պատճառաւ» եւ կը մեղադրէ «կարգ մը արեւմտեան շրջանակներ թէ կ'ուզեն վերսկսիլ պաղ պատերազմը»:

Զինաթափութեան եւ միջազգային յարաբերութեան մեղմացման հարցին առթիւ, խորհրդային կառավարութիւնը կը յայտարարէ թէ եթէ Խ. Միութիւնը յարձակողական դիտումներ ունենար, ճիշդ ներկայ ռազմագիտական կացութեան մէջ կրնար ոտք դնել արեւմտեան Եւրոպա, առանց նոյնիսկ հիւլէական կամ ջրածնի զէնքեր գործածելու: Անկէ զատ, Խ. Միութիւնը կրնար նոյնպէս արեւմտեան Եւրոպա մտնել 1945ին, երբ զրուած չէր իր բանակը: Արդ, այդպէս չըրաւ այն ատեն եւ միտք չունի ընելու այժմ:

Թուելէ ետք խորհրդային կառավարութեան ձեռք առած միջոցները խաղաղութեան պահպանման համար եւ մասնաւորապէս յիշելէ վերջ թէ ձեռնարկած է իր զինեալ ուժերուն կրճատման, յայտարարութիւնը կ'ըսէ թէ «Խ. Միութիւնը որ եւ է զօրաշարժ եւ զինուորներու տեղափոխութիւն չի կատարեր»: Յետոյ հաստատելով իր խաղաղասիրութիւնը, կ'ըսէ թէ՝ Խ. Մ.ը էր, է եւ պիտի մնայ համաշխարհային պետութեանց համակեցութեան լենինեան սկզբունքին, ինչ քաղաքական եւ ընկերային կարգուսարք ալ ունենան»:

ԶԻՆԱԹԱՓՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Խ. Միութեան առաջարկած զինաթափութեան ծրագիրը կը բաղկանայ եօթը հիմնական կէտերէ. —

1. Գալիք երկու տարիներու ընթացքին մինչեւ մէկ միլիոնի, ի հարկին մէկուկէս միլիոնի կրճատել Խ. Միութեան, Մ. Նահանգներու եւ Չինաստանի զինեալ ուժերը այդ պետութիւններէն իւրաքանչիւրին համար, 650.000ի դեղչելով Անգլիոյ եւ Ֆրանսայի համար, եւ վերջապէս 150 հազարէն երկու հարիւր հազարի՝ միւս երկիրներէն իւաքանչիւրին համար: Իբրեւ առաջին քայլ, Խ. Միութիւնը կ'առաջարկէ առաջին տարուան ընթացքին զինեալ ուժերու կրճատումըկատարել հետեւեալ համեմատութեամբ.—

Խ. Միութիւնը, Մ. Նահանգները եւ Չինաստան մինչեւ երկուքուկէս միլիոն զինուոր, Անգլիա եւ Ֆրանսա մինչեւ 750 հազար, իւրաքանչիւրին համար: Նոյն համեմատութեամբ կրճատել սպառազինութիւնները:

2. Միեւնոյն ժամանակաշրջանին արգիլել հիւլէական եւ ջրածին զէնքերը, դադրեցնել հիւլէական զէնքերու արտադրութիւնը, արգիլել անոնց գործածութիւնը եւ ոչնչացնել բոլոր պատրաստ մթերքը: Իբրեւ առաջին քայլ Խ. Միութիւնը կ'առաջարկէ անմիջապէս դադրեցնել հիւլէական զէնքի ամէն փորձ:

3. Յառաջիկայ տարուան ընթացքին (1957) մէկ երրորդ համեմատութեամբ կրճատել Մ. Նահանգներուն, Խ. Միութեան, Անգլիոյ եւ Ֆրանսայի այն բոլոր զինեալ ուժերը որ կը գտնուին գերմանական հողին վրայ, համապատասխան հակակշիռ մը հաստատելով:

4. Մեծապէս կրճատել, 1957ի ընթացքին, Մ. Նահանգներուն, Անգլիոյ եւ Ֆրանսայի զինեալ ուժերը որ կը գտնուին Ատլանտեան ճակատի անդամակից երկիրներու մէջ, ինչպէս եւ Խ. Միութեան այն զինեալ ուժերը որ տեղաւորուած են Վարշաւայի դաշինքին յարած երկիրներու մէջ:

5. Երկու տարիէն լուծարքի ենթարկել օտար երկիրներու մէջ հաստատուած բոլոր զինուորական խարիսխները:

6. Կրճատել զինուորական ծախքերը համաձայն զինեալ ուժերու եւ սպառազինութեանց կրճատման:

7. Միջազգային խիստ եւ ազդու հակակշիռ, բոլոր համապատասխան իրաւունքներով ու պարտականութիւններով, յարգել տալու համար պայմանաւորուած յանձնառութիւնները:

Խ. Միութեան ծրագիրը կրկին արծարծելով բոլոր նաւահանգիստներու, երկաթուղիներու, ճամբաներու, օդակայաններու վրայ հակակշիռ հաստատելու խնդիրը, դիտել կուտայ թէ օդանաւային զննութիւնը չի կրնար լուծել սպառազինութեանց հակակշռի հարցը, ոչ ալ կանխել նախայարձակումը: Բայց եւ այնպէս, կ'ընդունի նախագահ Այզընհաուըրի առաջարկը, օդանաւային զննութիւնը սահմանափակելով ութ հարիւր քիլոմեթր խորութեամբ, սկսեալ որոշ սահմանագծէ մը, Եւրոպայէն դէպի արեւմուտք եւ արեւելք, ուր կը գտնուին Ատլանտեան ճակատին եւ Վարշաւայի դինակցութեան ուժերը:

× Նոյն օրը Մոսկուայի հեռագրական գործակալութիւնը կը ծանուցանէր թէ հիւլէական զէնք մը փորձուեցաւ Նոյեմբեր 17ին, Խ. Միութեան մէջ, շատ բարձրէն եւ պակսեցաւ յաջողութեամբ: Վերջին փորձերը տեղի ունեցած էին Նոյեմբեր 2ին եւ 10ին: Ամերիկեան աղբիւրէն ալ կը հաստատեն այս նոր պայթիւնը:

× Արեւմուտքի քաղաքական շրջանակներուն մէջ վերապահութիւն ցոյց կուտան Խ. Միութեան առաջարկին հանդէպ, քարոզչական ձեռնարկ մը համարելով զայն: Մ. Նահանգները երկդիմի կը գտնեն եղած առաջարկները, որոնք մեծ նորութիւններ չեն պարունակեր:

ԻՍԿ ԽՐՈՒՇՉԵՒ ԿԸ ՍՊԱՌՆԱՑ

•

ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ԿԸ ՁԳԵՆ Կ'ԵՐԹԱՆ

Խ. Միութեան Կեդր. Կոմիտէին ընդհ. քարտուղարը, Ն. Խրուշչեւ, որ լուռթիւն կը պահէր ատենէ մը ի վեր, կոշիտ ելոյթ ունեցաւ փետրուար 18ին, կիրակի, Մոսկուայի լեհական դեսպանատան մէջ սարքուած ընդունելութեան մը առթիւ:

Միջադէպը այնքան ծանր հանգամանք մը ունէր որ ֆրանսական եւ անգլիական դեսպանները որոշեցին պաշտօնապէս բողոքել Խրուշչեւի արտասանած խօսքերուն դէմ: Ընդունելութեան ներկայ էին Բուլկանին, Վորոշիլով, Մոլոթով, Միկոյեան, Քականովիչ, Ժուկով եւն., ինչպէս եւ բոլոր դեսպանները եւ մօտ երկու հազար ականաւոր անձեր: Խրուշչեւ իր ճառին մէջ յայտնեց թէ վերջացած են Լեհաստանի հետ կատարուած բանակցութիւնները, եւ թէ երկու երկիրները պիտի շարունակեն գործակցիլ հաւասարութեան, փոխադարձ յարգանքի, գերիշխանութեան եւ ազգային անկախութեան հիման վրայ: Յետոյ բուռն յարձակողական մը սկսաւ արեւմտեան պետութեանց դէմ. — «Ընկերվարական երկիրներու շահած յաղթանակները պատերազմէն ի վեր ատելավառ կատաղութեան մը մատնեցին դրամատիրական պետութիւնները: Անգլիոյ եւ Ֆրանսայի եւ իրենց մեղսակից Իսրայէլի աւազակային արարքները Եգիպտոսի դէմ յուսահատական փորձեր են վերագրաւելու համար իրենց կորսուած դիրքերը Միջին Արեւելքի մէջ: Բայց անցած են այն ժամանակները ուր աշխարհակալները կրնային անպատիժ կերպով գրաւել տկար երկիրներ»:

Յետոյ երկարօրէն ողջունելով եգիպտացի ժողովուրդին հերոսութիւնը, Խրուշչեւ յիշեց թէ «տենդագին գործունէութիւն մը կը տիրէ դրամատիրական երկիրներու մէջ, ուր Փաշական հրոսախումբեր կը յարձակին Ֆրանսայի եւ Իտալիոյ համայնավար կուսակցութեանց վրայ, ուր ճշմարիտ խաչակրութիւն մը տեղի կ'ունենայ արեան մէջ խեղդելու համար ընկերվարութիւնը եւ ժողովրդապետութիւնը, ուր քաղքենի դասը կը փորձէ յօշոտել համայնավար կուսակցութիւնները եւ բանուորները որպէս զի սանձը դնէ անոնց վզին եւ իր դիկտատուրան հիմնէ բանուորներու եւ գիւղացիներու վրայ: Եւ սակայն, բանուոր դասակարգը կրցաւ արժանաւոր պատասխան մը տալ յետադիմութեան: Առաջին անգամ չէ որ այդպիսի փորձեր կը կատարուին յետադիմութեան կողմէ, բայց ամէն անգամ ալ կը յաղթանակեն համայնավարութեան գաղափարները: Նոյն փորձին առջեւ կը գտնուինք այսօր, ահա թէ ինչու աշխարհի բոլոր երկիրներու առողջ ուժերը կը շարժին ճակատելու համար յետաշրջութեան դէմ:

«Այժմ ահագին ժխոր մը կը բարձրանայ դրամատիրական երկիրներէն հունգարական հարցին առթիւ: Շահագործելով Հունգարիոյ մէջ երեւան եկած սխալները եւ դժուարութիւնները, մի-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ԱՆՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

•

Ազգաժողովին ընդհ. քարտուղարը, Համըրշըլտ Նիւ Եորք վերադարձաւ կիրակի, երեք օր խորհրդակցելէ ետք Եգիպտոսի նախագահին հետ: Իր մեկնելէն քիչ ետք, օգնական մը յայտարարեց թէ Ազգաժողովը յանձն առած է օգնել Եգիպտոսի, մաքրելու համար Սուէզի ջրանցքը, վերահաստատելով բնականոն վիճակը: Յետոյ աւելցուց թէ ընդհ. քարտուղարը եւ գնդ. Նասր քննեցին միջազգային ոստիկանութեան դերը եւ ուրիշ խնդիրներ: Այս բոլոր հարցերու մասին տեղեկագիր մը պիտի ներկայացնէ ընդհ. քարտուղարը, ՄԱԿի ընդհ. ժողովին: Եգիպտոս կը պահանջէ որեւէ ձեռնարկ չկատարել Սուէզի ջրանցքը մաքրելու համար, մինչեւ որ ֆրանսական եւ անգլիական ուժերը քաշուին: Անգլիա եւ Ֆրանսա տրամադիր են քաշուելու երբ միջազգային ոստիկանութիւնը բաւարար ուժ համախմբած ըլլայ, իրենց տեղը բռնելու համար եւ Ազգաժողովը կամ ուրիշ միջազգային մարմին մը ստանձնեն ջրանցքին հսկողութիւնը:

Վերջին լուրերու համաձայն ամէն օր 150 նոր զինուորներ կը հասնին ջրանցքին շրջանը:

× Իսրայէլ մերժեց հատուցում վճարել Եգիպտոսի կառավարութեան, ինչպէս կը թելադրէր մառեշալ Բուլկանին: «Եթէ հատուցում վճարելու խնդիր կայ, մենք իրաւունք ունինք պահանջելու, 1948ին կատարուած արշաւանքին համար որուն զոհ գացին հազարաւորներ մեր որդիներէն եւ աղջիկներէն, մեր երկրին դէմ սարքուած տնտեսական պայքարին եւ ծովային պաշարման համար»:

× Եգիպտոսի կառավարութիւնը հրամայեց բոլոր Ֆրանսացիներուն եւ Անգլիացիներուն իրենց բնակավայրերէն դուրս չելլել, նկատելով որ ժողովուրդը գայրացած է, Փոր Սայիտի ռմբակոծութեան հետեւանքով: Մօտաւորապէս երկու հազար Անգլիացիներ մնացած են Եգիպտոսի մէջ, 4-5000 ալ Ֆրանսացիներ:

× Անգլիոյ վարչապետը, Իտըն, ճառ մը խօսելով, յայտարարեց թէ կառավարութիւնը երբեք չի զղջար Եգիպտոսի մէջ կատարած միջամտութեան համար: Եւ բացատրեց թէ այդ միջամտութեան շնորհիւ էր որ ձախողեցան Խ. Միութեան ձեռնարկները Միջին Արեւելքի մէջ: Պատերազմի վտանգը անմիջական էր եւ սպառնալից, առանց այդ միջամտութեան»:

ՏԻՐԱՆ ԱՐՔ. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Վերջին թղթաբերէն կ'իմանանք թէ Տիրան արք. Ներսոյեան Երուսաղէմ հասած է նոյեմբեր 15ին, խանդավառ ընդունելութիւն մը գտնելով: Պոլսոյ պատրիարքին ալ սրտագին մաղթանքներ ուղղած է նորընտիր պատր. տեղապահին:

ՊՈԼՍՈՅ թերթերը կը գրեն թէ 1955 Սեպտեմբեր վեցի դէպքերուն առթիւ ամբաստանուած 16 Թուրքերը դատուելով անպարտ արձակուեցան: Ուրիշ կերպ կրնա՞ր ըլլալ:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀՐԵԱՆԵՐԸ այս տարուան ընթացքին 44 միլիոն 250 միլիոն ֆրանքի նուէրներ ղրկած են Իսրայէլ:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ցնցումներ զգացուեցան ուրբաթ եւ շաբաթ, Էքս լէ Պէնի մէջ: Վնասները աննշան են, սակայն դէպքը լուրջ մտահոգութիւն կը պատճառէ, իբրեւ բացառիկ երեւոյթ: Կը վախցուի որ հանքային ջուրերը ցամքին:

ՓԱԼՄՈՆԱՑ ԵՐԳԱՑՈՒ ՈՂԶԻՆԵՐՑ ՀԱՄԱՐ

ՎԵՀՎՈՒՄ

*

Ցաղոտ օրը, երբ սահմանները ամայի էին, ես ու Ալիմանը ձիերով անցանք Ալիսեդեկի կամուրջը, ետևում թողեցինք Ալիսեդեկ գյուղը և ուղղվեցինք դեպի հարավ-արևելք։ Ալիմանը ինձ ասաց, որ ճանապարհը (Ալիսեդեկ — Ալիսեդեկ) երեք ժամ է տևում, և որ մենք պետք է հասնենք Ալիսեդեկ գյուղ մինչև կեսօր։ Ես ոչինչ չասացի, միայն ժպտացի։ Ես գիտեի, որ ճանապարհը ավելի երկար է, քան Ալիմանն էր կարծում, բայց ես չէի ուզում նրան ասել այդ մասին։ Ես ուզում էի տեսնել, թե ինչպես է նա ինքը հասկանում ճանապարհի երկարությունը։

Ճանապարհը, որ ձգվում էր Ալիսեդեկի կամրջից մինչև Ալիսեդեկ գյուղ, անցնում էր ամայի, անմարդաբնակ տեղերով։ Ոչ մի գյուղ, ոչ մի տնակ չկար ճանապարհի երկայնքով։ Միայն հեռվում, ձախ կողմում, երևում էին Ալիսեդեկ գյուղի տները։ Ամենուրեք տիրում էր լռություն։ Ոչ մի ձայն չէր լսվում, բացի մեր ձիերի սմբակների դոփյունից։

Ալիմանը ինձ ասաց, որ ինքը ծնվել է Ալիսեդեկ գյուղում, և որ այդ գյուղում ապրում են նրա ծնողները, եղբայրները և քույրերը։ Նա ասաց, որ ինքը ամեն տարի մեկ անգամ գնում է Ալիսեդեկ գյուղ, որպեսզի տեսնի իր ծնողներին, եղբայրներին և քույրերին։ Ես ոչինչ չասացի, միայն ժպտացի։ Ես գիտեի, որ Ալիմանը ամեն տարի մեկ անգամ գնում է Ալիսեդեկ գյուղ, որպեսզի տեսնի իր ծնողներին, եղբայրներին և քույրերին։ Ես գիտեի, որ Ալիմանը ամեն տարի մեկ անգամ գնում է Ալիսեդեկ գյուղ, որպեսզի տեսնի իր ծնողներին, եղբայրներին և քույրերին։

Ալիմանը ինձ ասաց, որ ինքը ամեն տարի մեկ անգամ գնում է Ալիսեդեկ գյուղ, որպեսզի տեսնի իր ծնողներին, եղբայրներին և քույրերին։ Ես ոչինչ չասացի, միայն ժպտացի

ՍԱՐԿԱՎԱԿ

(ՍԱՍՆԱՑՈՒ ԿՃՎ, 364 - 400)

Ֆ. ՊԱՐՈՅ

12.— ՀԱՑԻ ՊԱՐՈՅԵՍԸ

Ու մարմ ուր ամայի եւ ամէն ուր մարդ կար, հոն ալ Աստուած կար։ Ան ամէն տեղ էր, ամէն տեղ կար։ Ան ամէն տեղ էր, որովհետեւ ամէն տեղ կրնար ըլլալ։

Հայրապետը մը կը դիտէ, որ իր հօտը ամէն տեղ իր հետ կ՚առնէ, ինչպէս որ հովիւը իր ոչխարները։ Ան ամէն տեղ կրնայ ըլլալ, որովհետեւ ամէն տեղ կրնայ ներկայ ըլլալ։

Ու ես ալ ամէն տեղ իմ Աստուածս կը գտնէի։ Ան ինծի հետ էր ամէն տեղ։ Ան ինծի հետ էր Ֆրանսայի մէջ, ուր ես ծնած եմ, ինչպէս նաեւ Ամերիկայի մէջ, ուր ես մեծցած եմ։ Ան ինծի հետ էր Հնդկաստանի մէջ, ուր ես ապրած եմ։ Ան ինծի հետ էր Ճապոնիոյ մէջ, ուր ես հիմա կ՚ապրիմ։ Ան ինծի հետ էր Ամերիկա վերադառնալուս ալ։ Ան ինծի հետ էր ամէն տեղ։

Ես ինծի համար ոչ մէկ տեղ օտար կը զգամ։ Ամէն տեղ ինծի համար տուն մըն է։ Ամէն տեղ ինծի համար հայրենիք մըն է։ Ամէն տեղ ինծի համար Աստուծոյ տունն է։

Ես ամէն տեղ ինծի համար Աստուծոյ տունն եմ։ Ես ամէն տեղ Աստուծոյ տունն եմ։ Ես ամէն տեղ Աստուծոյ տունն եմ։

Ես ամէն տեղ Աստուծոյ տունն եմ, որովհետեւ ամէն տեղ Աստուած կայ։ Ան ամէն տեղ կայ, որովհետեւ ամէն տեղ կրնայ ըլլալ։

Ան ամէն տեղ կայ, որովհետեւ ամէն տեղ կրնայ ներկ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

●

ՄԱՐՍԼԻՑԼ.— Հ. Յ. Դ. «Դրօ» խումբը ժողովը այս երեքշաբթի, ժամը 21ին՝ կարեւոր օրակարգ :

ԱՆԻԼԻՈ ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊ.— Հ. Յ. Դ. Աբամ ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր շրջանի ընկերները այս հինգշաբթի, ժամը 21ին, ծանօթ հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ՇԱԻԻԼ.— Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Ազդրանիկ» խումբի դասախօսական ժողովը այս հինգշաբթի ժամը 21ին, դպրոցի սրահը : Կը դասախօսէ ընկեր Մանկեան : Կը հրաւիրուին Շաւիլի երկսեռ երիտասարդութիւնը :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիփան - Կոմիտաս երգչախումբին պարահանդէսը Դեկտեմբեր 16ին Ամպասատէօնի սրահը :

●

Սամուէլ Մուրատեան վարժարանի տոնածառի հանդէսը կիրակի 23 Դեկտեմբեր, ժամը 4ին :

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԼԻՑԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ամասիոյ Հայր. Միութեան : 1 Դեկտեմբեր, չարաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս, Սալոն Ալամպրայի մէջ, 340 Պուլվ. Շաւ :

Պատուակալ նախագահութեամբ բանասեղծ ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹԻ :

Գեղեցիկ աչքերու մրցում, ընտրուած թեկնածուհին կը ստանայ արժէքաւոր նուէր մը :

Գեղարուեստական ճոխ բաժին :

Սիւզան Հիւպէր (երգ), ժօ Ալպան :

Ընտանեկան մթնոլորտ եւ հաճելի անակնկալներ : Նուագախումբ ՆԻՒ ՓՐԱՆՒ :

Սեղանները թուագրուած ըլլալով, այժմէն ապահովել Միութեանս անդամներէն, Տիկին Արփինէ Մորճիկեան, Շէ Վէթէր, 34 ռիւ Թափի Վէր :

Պ. Յար. Զէքէմեան, 12 ռիւ տը լ'Արբ. հեռ. Փրաւո 78-61 :

Պ. Տիգրան Զորիկեան, 5 Ավընիւ Քամիլ Փէլըթան :

ՀԱՅ—ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Թիւ 175 - 176 (Յուլիս – օգոստոս), ճոխ բովանդակութեամբ.—

Երզարան... Բժշկարան (Շ. Նարդունի).— Մաս կը ծծեն, յետոյ... կը ծխեն.— Ասիիրինով... անձնասպանութիւն.— Անակնկալ մահերը (Տոքթ. Լ. Գրիգորեան).— Ուտելիքները (Տոքթ. Գալուստեան).— Մանկութիւն եւ բանաստեղծութիւն.— Թրանկխոսը (Տոքթ. Պ. Միսաֆեան).— Որովայնային ժանտաւենդ (Տոքթ. Ղազարեան).— Զաւակ չունենալու համար.— Ինչո՞ւ չեմ քնանար (Տոքթ. Լէվէֆ).— Նիհարնալու համար.— Խլիրդը (քանսէր) կիներուն վրայ (Տոքթ. Ալթունեան).— Դաչտանը լեռներուն վրայ.— Ոտանաւոր բառարան.—Տոքթէօր, զաւակ կ'ուզեմ (Մենծ Հայրիկ).— Կաուա - ղութիւնը (Տոքթ. Ա. Պօղոսեան).— Ին - չո՞ւ կը փռնդռաք (Տոքթ. Օճառ).— Ա - ղիքներու թշուառութիւն (Տոքթ. Շ. Այ - վազեան).

Տարեկան բաժնեգինը հազար ֆրանք ֆրանսա, 1200 ֆրանք արտասահման : Հատով չի ծախուիր : Դիմել Շ. Նարդունի, 32 ռիւ տը Թրէվիզ, Փարիզ :

ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԼԻՑԼ.— *Ֆ. Կ. Խաչի Պոմոնի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Այրի Տիկին Ալբաքսի Սարգիսեանի զաւակներուն, Այրի Տիկին Ռեբեկա - յի, Տէր եւ Տիկին Գրիգոր Գալըճեանի, Տէր եւ Տիկին Դաւիթեանի եւ բոլոր պարագաներուն իրենց ողբացեալ ամուսնոյն, հօր, փեսային եւ քեռայրին Գալուստ Սարգիսեանի կսկծալի մահուան առթիւ :*

Վարչութիւնը հոգեհանգստեան ներկայ գտնուելու համար կը հրաւիրէ բոլոր անդամները Ֆ. Կ. Խաչի Պոմոնի վարչութեան ներկայ անդամները, որ պիտի երթան Ալբաքսի Սարգիսեանի կսկծալի մահուան առթիւ :

Ֆ. Կ. Խաչի Պոմոնի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Այրի Տիկին Խաթուն Քէհէեանի, եղբարք Քէհէեաններու, Ղազարեան, Թաշճեան ընտանիքներուն եւ իրենց բոլոր պարագաներուն, ողբացեալ Կարապետ Ղազարեանի կսկծալի մահուան առթիւ, որ տեղի ունեցած է յետ կարճատեւ հիւանդութեան, իր քսանրութ տարեկան ծաղիկ հասակին : Ամերիկա, Նիւ Եորքի մէջ :

*Տէր եւ Տիկին Գրիգոր Գըլըճեանի, Տէր եւ Տիկին Գալուստ Սարգիսեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Գալուստ Սարգիսեան, Տէր եւ Տիկին Գալուստ Սարգիսեան, Տէր եւ Տիկին Գալուստ Սարգիսեան, Տէր եւ Տիկին

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN

Rédaction et Administration : 32, *Rue de Trévise, Paris-9e*

C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286

Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա և գաղութներ, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
21
ՆՈՅԵՄԲԵՐ
•
MERCREDI
21 NOVEMBRE
1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7737 32e ANNEE

ԽՄԲԱԳԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3548

ՄԵՐ ԽՕՍՔԸ

«ՄԵՆՔ ՊԻՏԻ ԹԱՂԵՆՔ ԶԵԶ»

•

Հունգարական ապիւնը դեռ չցամքած, երկդիմի տեսարաններ կը պարզուին Մոսկուայի մէջ։

Կառավարութիւնը պաշտօնապէս կ'ա-ռաջարկէ Հինգ Մեծերու ժողով մը դումարել, զինաթափութեան փորձ մը կատարելու համար։

Այս առթիւ մառեչալ Բուլկանին անձնական նամակներ ալ ուղղած է իր շրջապաշտօնակիցներուն, միեւնոյն ատեն հասկցնելով որ եթէ ուզեն, կրնան դրաւել արեւմտեան Եւրոպան։

Նամակը ղեսպաններուն յանձնած ատեն, Մոսկուայի հեռագրական գործակալութիւնը կը ծանուցանէր թէ հիւլէական ռումբ մը եւս պայթեցուցած են Նոյ. 17ին, չատ բարձրէն։ Նախապէս ալ երկու փորձեր կատարուած էին, Նոյ. 2ին եւ 10ին։

Դարձեալ նոյն օրը տեղի կ'ունենար Խրուշչեւի հերթական ելոյթը՝ Կրեմլինի պալատին մէջ, ի պատիւ Լեհաստանի վարչապետին սարքուած ընդունելութեան մը առթիւ։

Կեդր. Կոմիտէին ընդհ. քարտուղարը կոպտօրէն ասպարէզ կը կարդար արեւմտեան պետութեանց, մասնաւորապէս Ֆրանսայի եւ Անգլիոյ.

— « Անցած են այն ժամանակները ուր աշխարհակալները կրնային անպատիժ գրաւել տկար երկիրներ »։

Ցաջորդ օրը, կիրակի, աւելի փրփրելով, կը դունաւորէր սպառնալիքը, լեհական դեսպանատան մէջ.

— « Պարոնայք դրամատէրեր եւ իրենց ներկայացուցիչները որ այստեղ կը գտնուիք. եթէ չէք սիրեր մեզ, ազատ էք չպատասխանելու մեր հրաւէրներուն եւ կամ չհրաւիրելու մեզ։ Ձեր բարեհաճութենէն կախում չունի մեր գոյութիւնը...

« Ուզէք - չուզէք պատմութիւնը կը զարգանայ ի նպաստ մեզի եւ մեծ ենք որ գերեզման պիտի առաջնորդենք ձեզ։ Անխուսափելի է այս »...

Տարակոյս չկայ թէ Խրուշչեւ չատ աւելի անկեղծ է իր կոչտուկոպիա արտայայտութեամբ, քան մառեչալ Բուլկանին իր մանուածապատ չարաղբութեամբ։

Ճշմարտութիւնը մանուկէն, խենդէն կամ իմաստնէն իմացիր, կ'ըսէ ժողովրդական իմաստութիւնը։

Իրապէսները կ'ըսեն թէ Խրուշչեւ այդ օրը չատ խմած չէր։

Ինչ խմած ըլլայ թէ չատ, կեդր. կոմիտէին ընդհ. քարտուղարը — այս օրուան Սթալինը — հարազատօրէն կ'արտայայտէ կուսակցութեան հետապնդած նպատակները։ Կ'արտայայտէ՝ առանց բառերը ծամծմելու։

Անցեալ տարի ալ նոյնիմաստ ելոյթներ ունեցաւ Խրուշչեւ, Մոսկուայի մէջ, ինչպէս եւ երբ Ասիա, յետոյ Լոնտոն կ'այցելէր, Բուլկանինի հետ։

Այն ատեն քիչ մը աւելի զգոյշ կ'երեւար, թէեւ չատ մը անհաճոյ տեսարաններ պարզուեցան։

Կը թուի թէ աւելի կարծրացած է մէկ տարիէն միւսը, իբրեւ հետեւանք արբանեակ երկիրներու մէջ պայթած փոթորիկներու։

Ամէն պարագայի մէջ, ներքին տագնապ մը կը մատնէ այս ջղաձգութիւնը,

Երբ արեան մէջ կը խեղդին դարաւոր ժողովուրդ մը որ ազատութիւն կը պահանջէր Եւրոպայի սրտին վրայ, կեղծիք չէ՞ն խաղաղութեան սրտառուչ կոչերն ու ծրագիրները։

Կեղծիք չէ՞ զինաթափութիւն խաղալ թուղթի վրայ, անհամար թնդանօթներու, զնդացիրներու եւ հրասայլերու կրակին տակ պահել տկար եւ անճար ժողովուրդներ, երբ զերեզման կ'առաջնորդեն ոչ թէ աշխարհակալը, այլ բանուորն ու գիւղացին ...

Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԽՆԴԻՐԸ ԱԶԳԱԺՈՂՈՎԻՆ ԱՌՋԵՒ

★

ԱՔՍՈՐՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

«ԵԹԷ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ՈՒԺ ՂՐԿՈՒԻ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎՏԱՆԳՈՒԻ»։ — ԱՌՆՈՒԱԶՆ 16·000 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԱՔՍՈՐՈՒԱԾ։— ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՄԻ ԱՃՆ 40 ԱՌ ՀԱՐԻՒՐԸ ԿՆԱՇԽԱՏԻ

Մակ ընդհ. ժողովին Բ. օրուան նիստին մէջ, երբ կը քննուէր Հունգարիոյ խնդիրը, Ա. Միւութեան արտաքին նախարարը, Շեպիլով խօսք առնելով ապրեցաւ թէ միջազգայնուժ մը ղրկելու որեւէ ձեռնարկ պիտի վտանգէ խաղաղութիւնը։ Այս առթիւ Հունգարիոյ ապստամբութեան պատասխանատու հռչակեց ոչ – համայնավար աշխարհը եւ մասնաւորապէս Մ. Նահանգները։ Ցետոյ եզրակացուց.— « Կացութիւնը հետզհետէ կը չտկուի եւ Ազգաժողովը անելիք չունի Հունգարիոյ մէջ »։

Իրմէ առաջ ալ նոյնիմաստ ճառ մը խօսած էր Հունգարիոյ խամաճիկ իշխանութեան ներկայացուցիչը, Հորվաթ։ Երկուքն ալ հերքեցին աքսորները, իբրեւ « զրպարտիչ յերիւրանք, միջազգային մթնոլորտը թունաւորելու համար»։ Գալով խորհրդային զօրքին, Շեպիլով յայտարարեց.— « Համախորհուրդ Հունգարական կառավարութեան հետ խորհրդային պինուորները փեչթայէն պիտի քաշուին երբ կացութիւնը չտկուի։ Միեւնոյն ատեն Ա. Միութիւնը բանակցութիւններ պիտի վարէ Հունգարական կառավարութեան հետ, խորհրդային զօրքի տեղաւորման մասին, իբրեւ անդամ Վարշաւայի դաշինքին։ Անոնք ար Ազգաժողովին միջամտութիւնը կ'ուզեն իրականին մէջ կը թելադրեն վերակսիլ պայքարը ժողովրդավարական կարգուսարքին դէմ։ Ցեղասպանութեան ամբաստանութիւն կ'ըլլայ Քուպայի բանաձեւին մէջ։ Ցեղասպանութիւնը որեւէ կապ չունի Հունգարիոյ կացութեան հետ։ Ընդհ. ժողովը Թող քննէ Բրիտանացիներու ցեղասպանութիւնը Մաու Մաուներու դէմ, Քենիայի մէջ կամ Ֆրանսականը՝ Ալժերիոյ մէջ »։

Ամերիկեան պատուիրակը, Ք. Լաճ յայտարարեց թէ իր կառավարութիւնը տեղեկութիւն ունի որ առ նուազն 16·000 հոգի աքսորուած են Հունգարիայէն, Նոյեմբեր 16էն ի վեր։ Այս առթիւ ճշդեց թէ Նոյեմբեր 13ին առ նուազն երեք կառախումբեր, որոնց իւրաքանչիւրը վաթսուն վակոնէ կը բաղկանար, դէպի արեւելք մեկնած են, թէ ամէն վակոն 50 - 60 աքսորական կը պարունակէր։ Ամերիկեան պատուիրակը պահանջեց Ա. Միութենէն վայելուչ յարգանք մը ցոյց տալ աշխարհի հանրային կարծիքին հանդէպ, դադրեցնել աքսորները եւ ետ բերել անոնք որ աքսորուած են արդէն։

Ցետոյ աւելցուց թէ վերջին 24 ժամերու ընթացքին լուր առած են որ աքսորները կը չարունակուին, թէ բազմաթիւ աքսորականներ դէպի ստոյգ մահ կ'առաջնորդուին Ռուսիոյ սառնաշունչ ձմրան մէջ, բաց վակոններով։

Շեպիլով զոհացաւ պնդելով թէ Հունգարիա միայն նիւթական օգնութեան եւ խաղաղութեան կը կարօտի եւ ոչ թէ միջամտութեան։

× *Ռաափօ - Փեչթա կ'ըսէ թէ կարգ մը գործարաններու մէջ աշխատանքը վեր – սկսած են 40 - 45 առ հարիւր, ուրիշ հաստատութեանց մէջ՝ հազիւ 30 առ հարիւր։ Այս առթիւ կը բացատրէ թէ չատ մը պարագաներու մէջ փոխադրութեանց դժուարութիւնն է թուլութեան պատճառը։ Միւս կողմէ, նախանձութեու պակասը կը դժուարացնէ աշխատանքը։*

× *Մոսկուայի կուսակցական պաշտօնաթերթը, «Փրաւտա», յօդուածով մը կը հաստատէ թէ հունգար ապստամբները կը չարունակեն կռուիլ խորհրդային զինուորներուն դէմ։ «Ահաբեկիչ հրոսախումբեր ամէն ջանք կը թափեն խափանելու համար երկաթուղիներու երթեւեկը, բայց եւ այնպէս երկրին անտեսական բազկերակը աւելի արագ կը զարնէ ամէն օր»։*

× *Օտար թղթակիցներ, որոնք այցելած էին վերաբացուած գործարանները, կը հաստատեն թէ ընդհանուր թուլութիւն մը կը տիրէ։ Ռուս սպաներ ալ այցելած են, օգնութիւն խոստանալով։ Բանուորներու խորհուրդին նախագահը պատասխաներ է.— Մէկ օգնութիւն կը սպասենք ձեզմէ.— Մինակ ձգեցէք մեզ։*

× *Հնդկաստանի վարչապետը, Նեհրու նոր ճառ մը խօսելով խորհրդարանին մէջ, ըսաւ թէ «Հունգարիոյ դէպքերը մեծապէս վնասեցին խորհրդային իշխանութեան հմայքին, արեւելեան Եւրոպայի, նոյն իսկ Ա. Միութեան մէջ»։ Ցետոյ բացատրեց թէ նոր տեղեկութեանց համաձայն, «Հունգարիոյ կառավարութիւնը ազատ չէ, այլ պարտադրուած իշխանութիւն մըն է եւ ժողովուրդը գոհ չէ։ Խորհրդային բանակը յաղթեց, բայց ի՞նչ գնով։ Հունգար ժողովուրդին կամքը հաստատուեցաւ եւ ի վերջոյ պիտի յաղթէ»։ Ցետոյ առաջարկեց որ անկողմնակալ դէտեր այցելեն Հունգարիա եւ Եգիպտոսի ղբաւեալ վայրերը, կացութիւնը հաւատարմօրէն ուսումնասիրելու համար։*

ՕՐԸ ՕՐԻՆ

*

ԿԸ ԹՌԻՆ ՈՒ ԿԸ ԹԱՌԻՆ

Մեծաւոր ըլլան թէ փոքրաւոր, մեր վերդարաւորները առպռնակարգ եւ անմրցելի օդաչուներ են։

Անսահման տարածութիւններ, լեռներ ու ծովեր կը կտրեն եւ աշխարհէ աշխարհ կը թռին, ե՛րբ որ ուզեն։

Պատահաբար իմացեր էիմ թէ երուսաղէմի պատր. տեղապահը, Եղիշէ արք. Տէրտէրեան, անհետացեր է գիշերանց, խուսափելու համար իր պատմական «Ժուռնալ»ին հետեւանքներէն։

Եւ առտու մը էջմիածինէն լուսեցաւ իր ձայնը, բանաստեղծական բարոզով մը։

Անցեալ շաբթու, ուրէն պատահաբար իմացանիմ թէ պաշտօնական վեղարաւորը Լիզպոնա գացեր է, իր փոխբաւորին՝ Նահէ վարդապետի հետ։

Ցետոյ երկուքը միասին անցեր են Ցուրիխ։ Կիրակի օր արքեպիսկոպոսը չուներ Պէյրութ — միշտ օդանաւով — իսկ վարդապետը նախընտրեր է Լիբանան վերադառնալ փարիզի ճամբով։

Միշտ միասին կը ճամբորդեն երկու անբաժանելիները տարուան զանազան եղանակներուն։

Քանի մը ամիս առաջ ալ Հնդկաստանէն կուգար իրենց մեղմանո՛յշ ձայները։

Եթէ հարցնէիք թէ ո՞ր գանձէն կը վճարուին այս օդային քուիչները, կը դառնամ թշնամի Հայաստանեայց եկեղեցւոյ։

Թող գաղտնիքը երեւան հանեն անոնք որ պիտի ճնեն երուսաղէմի և Անթիլիասի հին հաշիւները։

Օդանաւը ելլի գլուխին մէկ մասն է։ Տակաւին կան թեւերն ու պոչերը։

Եւ կան ուրիշ վեղարաւոր գաղտնիքներ։

Լիբանանէն լաւատեղեակ անձ մը կը գրէ թէ Անթիլիասի ըմբոստ միաբանները փառաւոր պանդոկ մը վարձեր են, 8000 ոսկիով, թէ իւրաքանչիւրը ֆանի մը հազար ոսկի ալ գրպանի ծախք ստացած է, թէ շարունակ դրամ կը հոսի, «եկեղեցասիրութիւնը» շարունակելու համար։

Այսպէս, ոմանք երկրէ երկիր կը թռին իրենց ուզած ատենը, առանց որեւէ հաշիւ տալու ձեռնհաս իշխանութեան։

Ուրիշներ տաճուկ բոյներու մէջ թառած՝ օրը իրիկուն կ'րնեն Սաղմոս կամ «Երդ Երգոց» սերտելով եւ բարբասանքի ճիւթը ծամելով։

Եւ Հայաստանեայց Եկեղեցին կը պայծառանա՞յ, կը ծաղկի ու կը բարգաւաճի։

Ե՞րբ այսքան աշխոյժ եւ փայլուն դերի մը հասած էր վեղարաւոր դասը, իր «արք»երով ու բարբերով։

Վ.Ա.Հէ

ԵԳԻՊՏՈՍ ՄԻՇՏ ԿԸ ԳԱՆԳԱՏԻ

•

Ազգաժողովին ընդհ. քարտուղարը Նիւ Եորք հասաւ Բ. օր, իր տեղեկագիրը յանձնելու համար Ազգաժողովին։ Մանրամասնութիւնները չեն հրատարակուած տակաւին։

Եգիպտական կառավարութիւնը յուշագիր մը յանձնած է ընդհ. քարտուղարին, պահանջելով անմիջապէս դադրեցնել յարձակողական գործողութիւնները։ Խնդրած է նաեւ այս յուշագիրը բաժնել Ազգաժողովին անդամներուն։

Եգիպտոս կը պնդէ թէ բրիտանական, Ֆրանսական եւ իսրայէլեան ուժերը չեն քաշուած Ազգաժողովին որոշումէն 13 օր վերջն ալ։ Ցետոյ կ'ըսէ թէ ծայր առած հրադադարի պարագաներ տեղի ունեցած են Փորթ Սայիտի եւ Ջրանցքի շրջանին մէջ, թէ կրակ բացուած է եւ չատեր սպաննուած կամ վիրաւորուած են։

× *Յամաք հանուած անգլեւֆրանսական ուժերուն հրամանատարը ուժգին բողոքագիր մը ուղղեց Ազգաժողովին, դատապարտելով թէ Եգիպտացիները կրակ բացած են զինադադարի դէմ եւ թէ ամէն բան կ'ընեն խափանելու համար խաղաղութիւն հաստատելու ջանքերը։ Հրամանատարը սպարապետին դիմելով, նոր իրաւասութիւններ կը խնդրէ, պայքարելու համար եգիպտական իշխանութեանց կրաւորական դիմադրութեան դէմ։ Այս երկրորդ անգամն է որ Եգիպտացիները կրակ կը բանան, կ'ըսէ հրամանատարութիւնը։*

× *Նախագահ Նասըր քաղաքական դիւանապետը, Ալի Սապրի յայտարարեց թէ կամաւորներն պիտի պահանջեն միայն այն ատեն երբ անգլիական, Ֆրանս. եւ իսրայէլեան ուժերը վերսկսին թշնամութիւնները։ Այս առթիւ հաստատեց թէ Եգիպտոս կամաւորներ խնդրած էր անցեալ Օգոստոս վերջին, Ֆրանքեւանգլիական զօրաշարժին հետեւանքով։ Ցետոյ պնդեց թէ Ֆրանքեւանգլիական ուժերը իրաւունք չունին Եգիպտոս մնալու, ջրանցքը մաքրելու պատրուակով կամ սպասելով միջազգային ոստիկանութեան։ « Եգիպտոս կը պահանջէ որ անմիջապէս հեռանան »։ Իր կարծիքով, Մ. Նահանգները աւելի մեծ ճնշում պիտի բանեցնեն Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իսրայէլի վրայ, որպէսզի հեռանան Եգիպտոսէն։ Եզրակացնելով, Ալի Սապրի ըսաւ թէ Եգիպտոս հաստատում պիտի պահանջէ Անգլիայէն, Ֆրանսայէն եւ Իսրայէլէն։*

× *Ամերիկայի բարձրաստիճան պաշտօնատարներ կը յայտարարեն թէ Մ. Նահանգները Եւրոպայի քարիւղ պիտի ճարեն միայն այն ատեն երբ անգլեւֆրանսական ուժերը քաշուին Եգիպտոսէն եւ բնականոն վիճակ հաստատուի Միջին Արեւելքի մէջ։ Ուրիշ աղբիւրներէ ալ կը հաւատան թէ Մ. Նահանգները իրենց վերջնական դիրքը պիտի ճշդեն, երբ Ազգաժողովին ընդհ. քարտուղարը պարզէ իր տեսակէտները եւ Եգիպտոսի նախագահին հետ կատարած բանակցութեանց արդիւնքը։*

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՓԱԽՍՈՒՆՑ ՀԵՐՑԱՅՈՒՆ
ՈՂՋՈՒՆԵՑ ՑՈՓՍՈՒՀՎՓ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ ՏԱՍԻՆ, ԲԱՅՑ ՉԻ ՊԱՏՄՈՒԵՐ

*

Ի վեր կացայ, ու ինքնաշարժս հեռացաւ։ Ես ալ ուղղուեցայ դէպի տուն։ Ճամբան ինծի հետ կը խօսէր ինքնիրեն։ Ես ալ ինքնիրեն կը խօսէի։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէի։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէր։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէինք։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէին։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէիր։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէիք։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէին։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէի։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէր։ Ինչո՞ւ ինքնիրեն կը խօսէին

ԱՆՏԻՈԽԻԱ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿԵՍԿ, 364 - 400)

Բ. ՎԱՀԵ

12.— ՀԱՅՐ ՍՈՒՐԲԱՏԸ

Իսկ այդ ամէն ինչ, ամէն մանրամասնութիւն կը հոլովէր Հոգին, ամէն անգամ որ ան կը յիշէր Ֆրանսիան։ Ան կը տեսնէր զայն իր ամբողջ մեծութեամբ, որ ամէն անգամ կը զարմացնէր զինք։ Ֆրանսան իր հոգիին մէջ կը մնար միշտ նոյնը, անկախ ամէն ինչէ։ Ան կը սիրէր զայն իր ամբողջ էութեամբ, ինչպէս կը սիրէ մարդ իր մայրը։ Ան կը սիրէր զայն իր ամբողջ անկատարութեամբ, իր ամբողջ ստորնութեամբ, իր ամբողջ մեծութեամբ։ Ան կը սիրէր զայն, որովհետեւ ինք ֆրանսացի էր։ Ան կը սիրէր զայն, որովհետեւ ինք ֆրանսացի էր։ Ան կը սիրէր զայն, որովհետեւ ինք ֆրանսացի էր։

Ան կը յիշէր Շուրպին ու Ցայտաղբիւրը, Ֆրանսան կը տեսնէր ամբողջ իր ճոխութեան մէջ, իր ամբողջ ծաղկեալ գեղեցկութեան մէջ

ՆՈՐԷՆ ՍԼԱՔՆԵՐ ԹԻԹՈՅԻ ԴԷՄ

Մոսկուայի կուսակցական պաշտօնաթերթը, «Փրաւտա», խիստ քննադատական մը հրատարակեց Եուկոսլաւիոյ դիկտատորին դէմ, որ վերջերս պարսաւած էր Խ. Միութեան դիրքը Հունգարիոյ մէջ: Առաջին յարձակումն է այս Թիթոյի դէմ, անցեալ ամառէն ի վեր երբ մառեշալ Բուլկանին եւ Խրուշչեւ Պելկրատ գացին, ներողութիւն խնդրելու եւ հաշտութի կնքելու համար: Թերթը մերժելով այն մեղադրանքը թէ Կրեմլին պատասխանատու է Հունգարիոյ դէպքերուն համար, կ'ըսէ թէ Թիթօ ինք պատասխանատու է Հունգարիոյ ապստամբութեան եւ «ազգային համայնավար» կառավարութեան մը հաստատման Լեհաստանի մէջ: Յետոյ գիտել կուտայ թէ Թիթօ իր ճառով ձգտում մը կը մատնէ միջամտելու ուրիշ համայնավար կուսակցութեանց ներքին գործերուն, եւ կը քննադատէ համայնավարութիւնը սթալինեան եւ հակասթալինեան թեւերու բաժնելու քաղաքականութիւնը:

× Իրազեկներ կը հաւաստեն թէ Մոսկուա կ'ուզէ վերահաստատել Կոմինֆորմը, ապահովելու համար համայնավար կուսակցութեան կեդրոնաձիգ ուղղութիւնը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԳԼԻՈՅ վարչապետը, Իտըն, ծանրապէս հիւանդացած ըլլալով, ամէն աշխատանք դադրեցուց, բժիշկներու յանձնարարութեամբ:

ԳԱՀԻՐԷԻ ՕԴԱԿԱՅԱՆԸ վերաբացուած է, երեք շաբթուան փակումէ մը վերջ: Կառավարութիւնը արգիլած է անգլիացի, ֆրանսացի, իսրայելացի կամ աւստրալիացի ուղեւորներու մուտքը:

ԱԼԺԵՐԻՈՅ մէջ կատարուած խուզարկութեանց հետեւանքով, ձերբակալուած են 130 համայնավարներ, տեղացի թէ օտար: Միայն Ալժէի մէջ ձերբակալուած են 44 հոգի, երեքը կին: Արեւելեան նահանգին մէջ ձերբակալուած են 51 հոգի: — Զինուորական գործողութեանց հետեւանքով սպաննուած կամ վիրաւորուած են 220 ըմբոստներ, 16 օրուան ընթացքին, ինչպէս կը գրեն տեղական թերթերը:

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ, Պ. Փինօ, որ Նիւ Եորք կը գտնուի, ի պատասխան կարգ մը հարցումներու, յայտարարեց թէ Խ. Միութիւնն էր որ առաջին անգամ միջամտեց Եգիպտոսի մէջ, զէնքեր ճարելով գնդ. Նասրի: Յետոյ բացատրեց թէ «եթէ կ'ուզենք խուսափիլ երրորդ աշխարհամարտէ մը, պէտք է ջնջել պատճառները եւ զգուշանալ այն սխալներէն որոնք տեղի տուին երկրորդ աշխարհամարտին: Դիկտատորներուն տեղի տալով է որ պատերազմ կը ծագի»: Իր կարծիքով, Ազգաժողովին ուժերը պէտք է Եգիպտոս մնան մինչեւ ջրանցքին մաքրումը: Հունգարիոյ մասին ալ խօսելով, Պ. Փինօ ըսաւ թէ Ազգաժողովին Թուլութիւնն էր որ քաջալերեց Ռուսերը:

ՀՐԱՆԻՒԹԻ ՏԱԳՆԱՊԻՆ առթիւ, ելմըտական նախարարը, Պ. Ռամատիէ բացատրեց թէ ուրիշ սեղմումներ պիտի չհաստատուին, եթէ գործածողները 30 առ հարիւր կրճատում կատարեն կամովին: Գիները 2 – 2·50 Ֆրանք պիտի աւելնան յառաջիկայ փետրուարին: Ամէնէն ծանր տագնապը կը նախատեսուի յունուարին:

ԼԻԲԱՆԱՆԻ նոր դահլիճը կազմեց չափաւոր դէմք մը, Սամի Սոլհ, որ պիտի վարէ նաեւ ղատական եւ ներքին գործերը: Նախարարներու թիւն է վեց (նախապէս 13):

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՒ Միլովան Ճիլաս, Թիթոյի աջ բազուկը, որ յայտարարած էր թէ համայնավարութեան վախճանը հասած է:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ազգ. պաշտպանութեան նախարարը, մարեշալ Ռոքոսովսկի, որ ճամբուած էր Վարշաւայէն, նշանակուեցաւ փոխ-նախարար Խ. Միութեան ազգ. պաշտպանութեան (օգնական մառեշալ Ժուկովի):

ՍԱՀԱՐԱՆ (Նոյ. 19).— Զոյլ ոսկի 459·000, Նափոլէոն 3350, դոլար 3250, անգլիական 4210, քսան տոլարնոց 16080: Թղթադրամ (անգլիական).— Սթերլին 1020, տոլար 397, զուից. 95·50, պէզ. 7·95, լիր 0·61:

ՅՈՐԲԵԼԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔԻ

Սալ Շօփէն (Փլէյէլ), Դեկտեմբեր 1
Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին

Նախաձեռնութեամբ Հայ Գրողներու Ընկերութեան եւ մասնակցութեամբ Մշակութային Միութեան եւ Համազգային ու Ֆրանսահայ լսարաններուն:

Հովանաւորութեամբ՝ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ:

Գրական ու գեղարուեստական ճոխ բաժին:

Մուտքը 200 Ֆրանք:

Տոմսերը կը ծախուին Բալուեանի գրատունը:

Մանրամասնութիւնները յառաջիկային:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Այս չորեքշաբթի երեկոյ Քաֆէ Քատէի վերնայարկը, տեղի կ'ունենայ լսարանի հերթական դասախօսութիւնը: Կը խօսի Պ. ՀՐ. ԲԱԼՈՒԵԱՆ: Նիւթը՝ Հայկանուշ Մարքի գրական եւ հանրային գործունէութիւնը (իր յոբելեանին առթիւ): Մուտքը ազատ է:

ՀԱՅ—ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Թիւ 175 - 176 (Յուլիս – օգոստոս), ճոխ բովանդակութեամբ.—

Երգարան... Բժշկարան (Շ. Նարդունի).— Մատ կը ծծեն, յետոյ.. կը ծխեն. — Ասփիրինով... անձնասպանութիւն.— Անակնկալ մահերը (Տօքթ. Լ. Գրիգորեան).— Ուտելիքները (Տօքթ. Գալուստեան).— Մանկութիւն եւ բանաստեղծութիւն.— Ֆրանկախտը (Տօքթ. Պ. Միսաքեան).— Որովայնային ժանտատենդ (Տօքթ. Ղազարեան).— Զաւակ չունենալու համար.— Ինչո՞ւ չեմ քնանար (Տօքթ. Լէվէֆ).— Նիհարնալու համար.— Խլիրդը (քանսէր) կիներուն վրայ (Տօքթ. Ալթունեան).— Դաշտանը լեռներուն վրայ. — Ոտանաւոր բառարան.—Տօքթէօր, զաւակ կ'ուզեմ (Մեծ Հայրիկ).— Կատաղութիւնը (Տօքթ. Ա. Պօղոսեան).— Ինչո՞ւ կը փնտռտաք (Տօքթ. Օճառ).— Աղիքներու թշուառութիւն (Տօքթ. Շ. Այվազեան):

Տարեկան բաժնեգինը հազար Ֆրանք Ֆրանսա, 1200 Ֆրանք արտասահման: Հատով չի ծախուիր: Դիմել Շ. Նարդունի, 32 ռիւ տը Թրէվիզ, Փարիզ:

ԿԱՐԵԼԻ Է ՏԱԿԱՒԻՆ ՔԱՆԻ ՄԸ
ՕՐԻՆԱԿ ԳՏՆԵԼ՝

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ

երկու վէպերէն —
«ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ»
ԵՒ «ՅԱՐԱԼԷԶՆԵՐՈՒ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ»

Երկու հատորը միասին 1500 Ֆրանք:
Դիմել «Յառաջ»ի վարչութեան:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼ.— Սէն Ժերոմի Թաղ. Խորհուրդը իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ՝ Թաղիս նախորդ Թաղ. խորհրդոյ անդամ Պ. Ճիւան Սարեանի եւ զաւակներուն, Կարպիսի, Հմայեակի, Ժաքի, Սիմոնի եւ Իսկուհիի, իրենց կնոջ եւ մօր՝ ողբացեալ Սեվլի Սարեանի դառնաղէտ մահուան առթիւ:

ԾՆՈՂՔՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Դաշնակի դասեր Մարսիլիոյ մէջ

Իբրեւ փորձառու մանկավարժ ուսուցիչ, Մատլէն Եավէր վերսկսած է իր դաշնակի դասաւանդութիւնները:

Ժամանակի խնայողութիւն, հսկայական յառաջդիմութիւն, արդիական արագաշարժ դիւրուսոյց մեթոտներով, անոնք որ կարճ ժամանակի մէջ կ'ուզեն տիրանալ երաժշտական արուեստին եւ դաշնակ նուագել Քոնսերվաթուարի ծրագիր կանոնագրով, դիմեն, ամէն օր ժամը 2-7,

MADELEINE YAVER
17, Rue Flegier, MARSEILLE (1°)

Ste. FRANCE CAMEROUN
24 Rue d'Enghien. Paris 10ème.

Կը փնտռէ երիտասարդ մը, զարգացած իր Քամըրունի Քոնթուարին համար:
Դիմել ժամը 14էն 15 նշանակուած հասցէին:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Շնորհակալութեամբ ստացանք Պ. Էֆթեանէ (Փարիզ) հազար Ֆրանք:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՎԻԷՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ֆ. Կապ. Խաչի մասնաճիւղին, սիրայօժար մասնակցութեամբ Սէնթ Էթիէնի եւ Սէն Շամոնի Նոր Սերունդին, ղեկավարութեամբ Ընկեր Ղարիբեանի

Կը ներկայացուի Ղ. Մելոյեանի
« ԱՐՄԵՆՈՒՇԸ » (տամ 5 արար)

25 Նոյեմբեր, կիրակի կէսօրէն վերջ ժամը 3ին, Սէրֆլը Կաթոլիկի ծանօթ սրահին մէջ:

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ: Ճիշդ ժամուն կը սկսի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՏԷՍԻՆ.— Տէր եւ Տիկին Ռուբէն Արապեան կը ծանուցանեն թէ իրենց աղջկան՝ Տիկ. Մարինէ Միւրարի (ծն. Արապեան) մահուան քառասունքին առթիւ պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտարարդ Ս. Աստուածածին եկեղեցին, այս կիրակի առաւօտ: Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«ՆԻՁԱԿԱՄԱՐՏ ՇԱՒԱՐՇԱՆԱՅ ԴՇՏԻՆ ՎՐԱՅ»

Գրեց՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ
Գին 800 փրանք
Դիմել հեղինակին կամ «Յառաջ»ի:

⁂

ՁԷՆՔԻ ՏԱԿ

Արձակ էջեր
Գրեց
ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ
Տպագրութիւն՝ Վենետիկ–Ս. Ղազար 1956
ԳԻՆ 500 ՖՐ.
Դիմել «ՅԱՌԱՋ»ի

⁂

«ԼՈՒՍԱԲԵՐԴ»

Գրեց՝ Ն. Պէշիկթաշլեան, պատկերազարդ, 240 էջ: Գին 1000 Ֆրանք: Հրատ. Տարօն Տուրուբերանի Հայր. Միութեան: Դիմել հեղինակին,
52, Rue de Strasbourg, Vincennes (Seine).

●

ԵԳԻՊՏԱԿԱՆՔ

Գրեց ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ
Գին 500 Ֆրանք: Դիմել «Յառաջ»ի:

ՍՏԱՑԱՆՔ

ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ (պատմական դէպքեր եւ ապրումներ, 1917 - 1922): Գրեց՝ Յ. Իրազեկ: Տպ. Համազգային, Պէյրութ, 1956: Գին 4 լիբ. ոսկի:

ԲԺԻՇԿ, Բ. տարի թիւ 5 (1956 նոյեմբեր): Հասցէ —
B. P. 4176, Beyrouth.

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ.— Յովհաննէս Վարժապետեան, Զորումցի, տարիք 55–56, որդին Մարկոս Վարժապետեանի, եւ թոռը Տէր Կարապետ Վարժապետեանի, իր մօրը կողմէ տիկին Էլմաս Վարժապետեանի ծնեալ Տէր Կարապետեան (ներկայիս Լօչեան): Տեղեկացնել Տիկին Լօչեանի,
Maison des Vieillards Arméniens
1, Rue Jean Finot, Andilly (S. et O.)
France

ՅՈՒՇԱՏԵՏՐ

●

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Ռոստոմ խումբի ժողովը այս շաբաթ երեկուն ժամը 9ին, ընկեր Մանուկի բնակարանը:

ԱՆԻԷՌ ԳՈՒԱ ՔՈԼՈՄԲ.— Հ. Յ. Դ. Արամ Ենթակոմիտէին ժողովի կը հրաւիրէ իր շրջանի ընկերները այս հինգշաբթի, ժամը 21ին, ծանօթ հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ՇԱՒԻԼ.— Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Անդրանիկ» խումբի դասախօսական ժողովը այս հինգշաբթի ժամը 21ին, ղպրոցի սրահը: Կը դասախօսէ ընկեր Կարօ Մանկեան: Կը հրաւիրուին Շաւիլի երկսեռ երիտասարդութիւնը:

ՍԱՐՍԷԼ - ԱՌՆՈՒՎԻԼ.— Հ. Յ. Դ. Վարդան Ենթակոմիտէին ընդհ. ժողովի կը հրաւիրէ այս շաբաթ, ժամը 21ին, իր շրջանի բոլոր ընկերները Առնուվիլի ծանօթ հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ԿՐԸՆՈՊԼԸ.— Հ. Յ. Դ. Եօթնեղբայրեան կոմիտէին ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս շաբաթ, ժամը 20·30ին, ծանօթ հաւաքատեղին: Խիստ կարեւոր օրակարգ: Անհրաժեշտ է բոլորին ներկայութիւնը:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

ՄԱՐՍԷՅԼ.— Սէն Ժերոմի Թաղ. խորհուրդը, ողբացեալ Առաքել Գասպարեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի, շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները, ի նպաստ դպրոցին: Տէր եւ Տիկին Սարգիս Ինճէճեան, Տիրուհեան եղբարք, եւ Պ. Օննիկ Տորունեան հազարական ֆր., իսկ Պ. Արմենակ Գանթարճեան հազար ֆր. եկեղեցւոյ:

× Թաղ. Խորհուրդը, ողբացեալ Տիկին Սեվլի Սարեանի կսկծալի մահուան առթիւ՝ փոխան ծաղկեպսակի, խորին շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները, ի նպաստ դպրոցին.— Պ. Յակոբ Գափլաքճեան, երկու հազար ֆր., Պ. Պ. Յակոբ Մարգարեան, Անթուան (Պառ Թապա) եւ Սարգիս Թուտլուեան հազարական ֆրանք, իսկ Պ. Պ. Հմայեակ Կարապետեան, Տօքթ. Յակոբ Սիվրիհիսարլեան, Յովհաննէս Ժամկոչեան, Յարութիւն Նէվշէհիրլեան եւ Պ. Պառան 500ական ֆրանք:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիփան - Կոմիտաս երգչախումբին պարահանդէսը Դեկտեմբեր 16ին Ամպասատէօրի սրահը:

●

Սամուէլ Մուրատեան վարժարանի տօնածառի հանդէսը կիրակի 23 Դեկտեմբեր, ժամը 4ին:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ Մարսէյլի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը Դեկտեմբեր ութին: Մանրամասնութիւնները յաջորդով:

ՀԱՅ Թատրոնը Կեդր. Ֆրանսայի մէջ:
ՎԱԼԱՆՍ.— Նախաձեռնութեամբ Ազգային Միութեան, շաբաթ գիշեր, 15 Դեկտեմբեր, (Քաղաք. Թատրոն):
ԼԻՈՆ.— Նախաձեռնութեամբ Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին: Կիրակի ցերեկ, 15 Դեկտեմբեր, (Ֆրանսուա Քոփէ):

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

AVIS AUX
Confectionneurs - Bonnetiers - Artisans

ՍԱՐԳԻՍ ԽԱՆՃԵԱՆ
ԱՐՈՆՈՎ ընկերութեան առուծախի բաժնին տնօրէնը
Ձեզի կը յանձնարարէ.— ճարտարարուեստի կամ ընտանիքի համար կարի մեքենաներ, աշխարհահռչակ «մարքա»ներով
ԱՄԷՆԷՆ ՄԱՏՉԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ ԵՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
Maison ARONOV Հիմնուած 1904ին
19, Bd. du Temple, Paris (3e). Tél.: ARC. 67-29

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ-ք, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրաՖ: Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 22 ՆՈՅԵՄԲԵՐ

JEUDI 22 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7738 32e ANNEE

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3549

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԳԸ

•

Միջին Արեւելքէն հասած տեղեկութիւններ կը հաստատեն թէ «եկեղեցասփրական» ժխորը կորսնցուցած է իր սուրհանդամանքը, բայց դեռ կը շարունակէ աւերներ գործել միտքերու եւ սիրտերու մէջ, տխուր հետեւանքներով :

Պատահաբար ձեռք անցած կարգ մը թերթեր ալ նոյն տպաւորութիւնը կը գործեն :

Ուրեմն, անցեալ հոկտեմբերէն ի վեր ծագած քաղաքական դէպքերն ալ, որոնք հետզհետէ կը բարդանան, որեւէ արժէք չունին ամկարարներուն համար :

Նոյն պատկերը կը տեսնենք ամերիկահայ թերթերուն մէջ: Անշուշտ անոր համար որ կրակի գիծէն հեռու են, եւ զանազան թղթակցութիւններ շաբաթներ վերջը լոյս կը տեսնեն :

Մէկ խօսքով, կատարեալ անտիրութիւն :

Ռազմական օդանաւերու թռիչքը Միջերկրականի ափերուն վրայ, համատարած ալեկոծութիւնը եւ դիւանագիտական փոխատուութիւնները ջուրի ձայն կուգան տակաւին :

Գոնէ օրինակ առնէին տեղական մամուլէն, որ բարձրաձայն կը յայտնէ իր մտահոգութիւնները :

Կառավարութեանց հետ, ժողովուրդներն ալ արթնութեամբ կը հետեւին դէպքերու ընթացքին, համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար :

Մթնոլորտը այնքան թանձրացած է որ, աղետալի անակնկալներ կրնան պայթիլ մէկ օրէն միւսը :

Անցեալ ամառէն ի վեր կը յիշեցնենք այս վտանգը, իբրեւ տարրական պարտականութիւն :

Ցաւակնութիւն չունինք դաս տալու անէք գաղութի :

Ամէն տեղ ալ կան պզտ. իշխանութիւններ եւ հեղինակաւոր անձեր :

Անոնց կ՚՚իյնայ սանձել ամբոխավարական կիրքերը, արթնութեան եւ լրջութեան հրաւէր մը ուղղելով, ի հարկին որոշ պատասխանատուութիւններ ստանձնելով :

Վերջին երեսուն տարիներու ընթացքին, յաճախ գտնուած ենք պղտոր կացութեան մը առջեւ :

Թերեւս կը սխալինք. բայց երեւոյթները ցոյց կուտան թէ շատ աւելի մութ է այսօրուան ալեկոծութեան ելքը :

Միւս կողմէ, աՀաւասիկ անգամ մը եւս հաստատուեցաւ թէ որեւէ փոթորիկի պահուն, չարաչար կը տուժեն անճարներն ու տկարները :

Կը հրմշտկուին, կը տրորուին, կը ճզմուին անոնք որ ճամբուն վրայ կը գըտնուին եւ հեռաւոր սուրբերու ապաւինած են, փոխանակ ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առնելու :

Դեռ երէկ էր որ ամբողջ ժողովուրդ մը ճզմուեցաւ Եւրոպայի սրտին վրայ, հակառակ իր հերոսական մարտնչումներուն :

Ոչ վայրերան կանչեր, ոչ ալ քնարեր դուշակութիւններ :

Աւելի քան երբեք արթուն եւ զգօն:

Մեր հիմնական հոգը պիտի ըլլայ կարելին փորձել, ամրապնդելու համար մեր ապահովութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը որեւէ ցամաքի վրայ :

Թող չըսեն թէ Եւրոպան անձամբ ճանչնալէ ետքն ալ, այս ժողովուրդը մնաց նոյն տիրացուն: Միշտ աչքերը գոց եւ ոտքը գետնէն կտրած ...

Այս ճակատագրական օրերուն, ժողովուրդի թշնամիներ են անոնք որ կը յամառին միտք պղտորել, ճակատ ճեղքել եւ կազմալուծել ներքին ուժերը, որեւէ գաղութի մէջ:

Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԱԶԳԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

•

ՖՐԱՆՍԱՅԻ ԲՈՒՌՆ ԲՈՂՈՔԸ ԱՔՍՈՐՆԵՐՈՒՆ ԴԷՄ

ՄԱԿի ընդհ. ժողովին Նոյեմբեր 20ի նիստին մէջ շարունակուեցաւ Հունգարիոյ մարտիրոսացման քննութիւնը : Խօսք առին 15 ներկայացուցիչներ եւ դեռ ուրիշներ ալ պիտի խօսին: Ամէնէն ուժգին ճառը խօսեցաւ Ֆրանսայի արտաքին նախարարը, Պ. Քրիսթիան Փինօ, որ ինքն ալ տեսած է աքսորի տառապանքները, երկրորդ աշխարհամարտին ատեն :

Պ. Փինօ բացատրեց թէ «Ազգաժողովին յայտնած կամքը չկրցաւ կասեցնել մեր ժամանակներու ամենամեծ ոճրերգութիւններէն մէկը »: Այս առթիւ յիշեց ապացոյցներ եւ օրինակներ երիտասարդ բանուորներու տարագրութեան մասին : Եւ շարունակեց :

— « Ես որ տեսած եմ այն վակոնները ուր 120 հոգի իրարու վրայ կը դիզէին տմարդի պայմաններու մէջ, խլելով իրենց երկրէն եւ ընտանիքէն, բանդատելով ճամբորդութեան մը որ անդարձ էր մեծ մասին համար, չեմ կրնար ծածկել յուզումս, այս բեմը բարձրացած ատեն, բողոքելու համար վայրագութեանց վերսկսման դէմ, վայրագութիւններ որոնք միանգամ ընդ միշտ ջնջուած կը կարծէինք : Տակաւին տասներկու տարի առաջ, Հունգարները եւ Ռուսերը, որոնք մեր ճակատագիրն ունէին Պուխընվալտի արգելարանին մէջ, մեզի հետ կ՚երդնուէին թէ այլեւս երբեք պիտի չպատահին այսպիսի դէպքեր »:

Պ. Փինօ մանաւորապէս ծանրացաւ սա կէտին վրայ թէ հունգարական յեղափոխութիւնը գործն էր ժողովուրդին բատուար մեծամասնութեան, գլուխն ըլլալով բանուոր դասակարգը: Այս առթիւ ստախօս անուանեց Հունգարիոյ խամաճիկ վարչապետին՝ Քատարի ներկայացուցիչը, Հորվաթ, որ փորձած էր Հունգարիոյ դէպքերը վերագրել «ափ մը խռովարարներու, ֆաշական թափթփուքներու »: Միեւնոյն ատեն ըսած էր թէ « ֆրանսական օտար լեգէոնէն երեք հարիւր կամաւորներ ղրկուած էին Հունգարիա, Փարիզի յետադիմական կառավարութեան կողմէ»: Արտաքին նախարարը վճռապէս հերքելով այս վերագրումը, յայտարարեց.— « Խ. Միութեան կը թողունք կամաւորներու մենաշնորհը. այն պետութեան որ կ՚ուզէ այդ սպառնալիքը գործադրել աշխարհի ուրիշ մասերուն մէջ...» :

Հնդկաստանի, Ինդոնեզիոյ եւ Սէյլանի ներկայացուցիչներն ալ խօսք առնելով, ժողովականներուն բաժնեցին բանաձեւ մը որ կը պահանջէ Հունգարիոյ իշխանութիւններէն միջազգային դէտեր ընդունիլ, տեղին վրայ քննելու համար թէ ճի՞շդ են աքսորներու մասին եղած ամբաստանութիւնները :

Շատեր զարմանք յայտնեցին այս բանաձեւին համար, վասն զի Քուպայի պատուիրակը առաջին օրէն բանաձեւ մը առաջարկած էր, պահանջելով դադրեցնել աքսորները եւ քննիչներ ղրկել Հունգարիա: Ուրիշներ ալ կը կարծեն թէ այս ձեռնարկը կատարուած է Հնդկաստանի թելադրութեամբ: Այս պետութիւնը կրաւորական դիրք մը բռնած էր, բայց այժմ կ՚ուզէ աւելի գործօն դեր կատարել : Ամերիկեան պատուիրակը, որ պաշտպանած էր Քուպայի բանաձեւը, յայտարարեց թէ պիտի քուէարկէ նաեւ նոր բանաձեւը: Ուրիշ պետութիւններ ալ համաձայն են Քուպայի պահանջին: Իսկ արբանեակ երկիրները, Ռումանիա, Սպիտակ Ռուսիա, Լեհաստան եւ Ալպանիա կ՚ուրանան աքսորները, հետեւողութեամբ Խ. Միութեան եւ Հունգարիոյ խամաճիկ իշխանութեան :

× Երեքշաբթի օր ժամը 11.30ին ամէն գործ դադրեցաւ Զուիցերիոյ մէջ, ի յարգանս Հունգարիոյ զոհերուն: Փողոցներուն եւ հրապարակներուն վրայ, խանութներուն, գրասենեակներուն եւ գործարաններուն մէջ բոլորն ալ երեք վայրկեան լռութիւն պահեցին յոտնկայս : Ազդանշանը տրուած էր եկեղեցիներու զանգակներով, որոնք երբ հնչեցին, կառամուղները, հանրակառքերը եւ սովորական կառքերը կանգ առին, կայարանները փակուեցան: Համատարած լռութիւն մը կը տիրէր ամբողջ երկրին մէջ :

× Փեշթայէն հասած վերջին լուրերու համաձայն բանուորները կը շարունակեն գործադուլը, այս անգամ նաեւ, հակառակ ձերբակալութեան սպառնալիքներու: Միշտ կը պահանջեն ռուսական զօրքին հեռացումը : Կուսակցութիւնն ալ նոյն պահանջը կը դնէ :

ՕՐԸ ՕՐԻՆ

*

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Կրնա՞ք լուծել հետեւեալ հանելուկները. —

Եղիշէ արք. Տէրտէրեան ի՞նչ ակնկալութեամբ գնաց էջմիածին, իր եղբայրդաւ «ժունտալ»ին յայտնութենէն ետք:

Ամենայն Հայոց կաթողիկոսը ի՞նչպէս արտօնեց որ պատարագէ եւ քարոզ մըն ալ խօսի մայր տաճարին մէջ :

Եթէ նոր հասած ատեն տեղեակ չէր անցուդարձին, ի՞նչ դիրք բռնեց, երբ ստացաւ Երուսաղէմի Միաբանութեան ջախջախիչ ամբաստանագիրը :

Ցետոյ, նախկին տեղապահը իր արտօնութեա՞մբ գնաց Լիզպոնա, իր անփոխարինելի ուղեկցին՝ Շահէ վարդապետի հետ, Կիւլպէնկեան Հիմնարկութեան հետ բանակցելու համար :

Ի՞նչ լիազօրութեամբ եւ ո՞ր համազգային հաստատութեան համար :

Այդ նոր առաքելութիւնն ստացած ատեն, Եղիշէ արք. տեղեկութիւն հաղորդե՞ց անցեալ տարի Գալուստ Կիւլպէնկեանի եւ որդի Նուպարէն անձամբ ստացած մեծագումար նուէրներու մասին:

Ո՞ւր պահուած են այդ գումարները :

Հիմա որ պաշտօնանկ տեղապահը Պէյրութ կը գտնուի, էջմիածինը համապատասխանիրահանգներ տուա՞ծ Երուսաղէմի Միաբանութեան, որպէս զի դատեն ամենայն անաչառութեամբ, թէ «ժունտալ»ի հարցին եւ թէ ուրիշ ամբաստանութեանց առթիւ:

Վազգէն կաթողիկոս ինքն ալ «թերի եւ անընդունելի» բաներ գտած չէ՞ պաշտօնանկ տեղապահին գործունէութեան մէջ:

Կը կարծեմ թէ այս հարցումներուն պատասխանը պիտի ստանանք անյապաղ, եթէ ոչ Երուսաղէմէն, գէթ Լիբանանէն, ուր թղթատարը կը բանի տակաւին :

Որքան շուտ ծակուի թենուկը, այնքան լաւ՝ թէ՛ ամբաստանեալին եւ իր մեղսակիցներուն, թէ երկու վանքերուն եւ թէ Հայ. Եկեղեցւոյ շահերուն համար :

Որեւէ թուլութիւն կամ ողոքում պիտի նշանակէր նոր փանտամա մը բանալ Երուսաղէմի մէջ :

ՎԱՀԷ

ԱՆՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

•

ՆՈՐ ՈՒԺԵՐՈՒ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Ազգաժողովին ընդհ. քարտուղարը երէկ յանձնեց իր տեղեկագիրը : Մանրամասնութիւնները չեն հրատարակուած տակաւին, բայց իրազեկներ կը կարծեն թէ Գահիրէի մէջ կնքուած համաձայնութիւնը աւելի շատ գոհացում կուտայ Եգիպտոսի նախապաշտին քան Ֆրանսայի եւ Անգլիոյ ու Իսրայէլի:

Փարիզի թերթերուն տեղեկութեանց նայելով համաձայնութիւնը կը պարունակէ հետեւեալ կէտերը .— Ազգաժողովին ոստիկանական ուժը պէտք է եգիպտական հողը պարպէ անմիջապէս որ ֆրանքեւանգլիական զինուորները հեռանան: Գնդ. Նասր համաձայն է որ Ազգաժողովը օգնէ Սուէզի ջրանցքը մաքրելու համար եւ միջազգային ոստիկանութեան մէկ մասը տեղին վրայ մնայ, այդ գործողութիւնները պաշտպանելու համար :

Մութ կը մնան հետեւեալ կէտերը . 1. — Ի՞նչ պիտի ըլլայ Ազգաժողովին դերը ջրանցքին վերահաստատման գործողութեանց մէջ : 2.— Եգիպտոս իրաւունք ունի՞ մերժելու այս կամ այնպետութեան մասնակցութիւնը միջազգային ոստիկանութեան եւայլն :

× Նորվեկեան զօրամաս մը եւս Փորթ Սայիտ հասաւ: Ցարդ հասած զինուորներուն թիւը կը հաշուեն 650-700 :

× Եգիպտոսի կառավարութիւնը պահանջէ Ազգաժողովէն քննութիւն կատարել «ֆրանքեւանգլիական ուժերու կողմէ գործուած վայրագութեանց մասին» :

× Վերջին տեղեկութեանց համաձայն եգիպտական կառավարութիւնը արտօնած է որ իրենց տուներէն դուրս ելլեն ֆրանսական եւ անգլիական հպատակները : Տեղական թերթերը քսան հազար կը հաշուեն Եգիպտոսի Ֆրանսացիներուն եւ Անգլիացիներուն թիւը,— վեց հազար անգլիացի եւ 3500 ֆրանսացի Աղեքսանդրիոյ մէջ, իսկ տասը հազար հոգի երկու ազգերէն՝ Գահիրէի մէջ: Կ՚ըսուի թէ Եգիպտոսէն մեկնելու արտօնութիւն ալ պիտի տրուի :

× Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ հաւանութիւն յայտնեց դաշինքին քաղաքականութեան, որ կը տրամադրէ լիակատար աջակցութիւն Եգիպտոսի, « ընդդէմ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իսրայէլի եռանկիւն յարձակման »:

ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Անգլիոյ վարչապետը, Իտըն, ամէն աշխատանք դադրեցնելէ առաջ, հետեւեալ պատասխանը տուած է Խ. Միութեան վարչապետ Բուլկանինի վերջին առաջարկութեան. —

« Ստացած եմ ձեր Նոյ. 15 թուակիր նամակը: Ինչպէս գիտէք, Միջին Արեւելքի մէջ միջամտելով մեր նպատակն էր սահմանափակել ընդհարումները հետեւանքները Իսրայէլի եւ Եգիպտոսի միջեւ: Ես դեռ Նոյ. մէկին առաջարկած էի Ազգաժողովին կողմէ զինեալ ուժ մը ղրկել այնտեղ: Ուրախ ենք որ Ազգաժողովին դէտերը մեզի հետ են այժմ: Բովանդակ աշխարհ ուրախութեամբ պիտի ողջունէր եթէ խորհրդային կառավարութիւնը նոյն դիրքը բռնէր Հունգարիոյ մէջ»:

ՆՈՅ. 7Ի ՑՈՅՑԵՐՈՒՆ առթիւ բուռն վիճաբանութիւններ տեղի ունեցան Փարիզի քաղաքապետական ժողովին մէջ : Համայնավարները մանաւորապէս մեղադրեցին ոստիկանութեան ընդհ. վերատեսուչը, իրենց կեդրոնին հրկիզման առթիւ:

Վերատեսուչը՝ Պ. Ժընեպրիէ պատասխանելով, ըսաւ թէ Ժաք Տիւքլօ խնդրած էր ոստիկան չղրկել, բայց ինք անհրաժեշտ միջոցները ձեռք առած էր, թէ կարելի չէր քանի մը հարիւր ոստիկաններով զսպել տասնեակ հազար ցուցարարներ որոնք տաքապէս գրոհ տուած էին Համայնավար կեդրոնին վրայ: «Կ՚ուզէիք որ հրացայթեր եւ թնդանօթնե՞ր գործածէինք: Այստեղ Փեշթա չէ»: Ընկերվարական անդամի մը առաջարկով, որոշուեցաւ պատերը փակցնել վերատեսուչին յայտարարութիւնը :

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԵՒ ՍԱՆԵՐ, ԲԱՑԻ ԻՆՁԱՆԻՑ ՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ ՉԻ ԿՐՆԱՑԻ

Ներկայացուցիչներ Հայաստանի պետական համալսարանի գիտական աշխատակիցների, որ Ներսիսեան Հայկազեան ճեմարանի շրջանաւարտներ են, ուսուցչական կոչումով ուղարկուած են գիւղեր։ Ուսուցչական կոչումով ուղարկուած են նաեւ Հայաստանի պետական համալսարանի ուսանողներ։

ՆՎՎՈՈՈ

(ԱՇՏԱՐԱԿ ՎԿՅ, 364 - 400)

Ա. ՊԱՐԱ

12.— ՀԱՅՑ ՈՒՆԵՑԱՔ

Ծիսակատարությունը ավարտվեցավ։ Ամբողջ ժողովուրդը, տասնյակ հազարավոր մարդիկ, իրենց հարգանքի տուրքը մատուցեցին հանգուցյալին։ Ամբողջ օրը մեծ երթ էր գնում դեպի Նվվոո։ Ամենքն էլ ուզում էին տեսնել Նվվոոյի դին, ամենքն էլ ուզում էին ներկա գտնվել նրա թաղմանը։ Ամենքն էլ ուզում էին ասել նրան վերջին խոսքը։

Ամբողջ ճանապարհին, մինչև Նվվոոյի գերեզմանը, ամենուրեք կանգնած էին մարդիկ, որոնք ուզում էին տեսնել հանգուցյալի դագաղը։ Ամենուրեք լսվում էին ողբի ձայներ։ Ամենուրեք կանգնած էին մարդիկ, որոնք ուզում էին ասել հանգուցյալին վերջին խոսքը։

Նվվոոյի դագաղը տարան Ամենայն Հայոց Կաթողիկոսարանի եկեղեցին։ Այնտեղ կատարվեցավ հոգեհանգստյան արարողությունը։ Ապա դագաղը դրին ավտոմոբիլի վրա և տարան Նվվոոյի գերեզմանը։ Ամբողջ ճանապարհին, մինչև գերեզմանը, ամենուրեք կանգնած էին մարդիկ, որոնք ուզում էին տեսնել դագաղը։ Ամենուրեք լսվում էին ողբի ձայներ։ Ամենուրեք կանգնած էին մարդիկ, որոնք ուզում էին ասել հանգուցյալին վերջին խոսքը։

Նվվոոյի գերեզմանի մոտ ասվեցավ շատ խոսքեր։ Ամենքն էլ ուզում էին ասել մի խոսք հանգուցյալի մասին։ Ամենքն էլ ուզում էին ասել, որ Նվվոոն մեծ մարդ էր։ Ամենքն էլ ուզում էին ասել, որ Նվվոոն մեծ հայրենասեր էր։ Ամենքն էլ ուզում էին ասել, որ Նվվոոն մեծ հայ էր։

Ամենքն էլ ուզում էին ասել, որ Նվվոոն մեծ հայրենասեր էր, որովհետև նա մեծ հայ էր։ Ամենքն էլ ուզում էին ասել, որ Նվվոոն մեծ հայ էր, որովհետև նա մեծ հայրենասեր

ՀՐԱՆԻՒԹԻ ՏԱԳՆԱՊԸ

●

Միջազգային մամուլը կը չարունակէ ահազանգ հնչեցնել հրանիւթի եւ ընդհանրապէս քարիւղի բոլոր տեսակներու տագնապին առթիւ։ Տեղական թերթերը կը գրեն թէ սեւ չուկան սկսած է արդէն, եւ 100 - 150 ֆրանքի հրանիւթ կը ծախուի։ Ճամբանկերու վրայ հաստատուած քարիւղաբաշխ մեքենաներուն տրամադրուած է միայն 70 առ հարիւր, սովորական գործածութեան համար։ Կառավարութիւնը նոր կոչեր ուղղեց որպէս զի ինքնաշարժները եւ զանազան հաստատութիւնները խնայողութեամբ գործածեն քարիւղը եւ հրանիւթը։

Կը վախցուի որ կացութիւնը աւելի ծանրանայ քանի մը ամիսէն։

Անգլիոյ մէջ չատ աւելի խիստ միջոցներ ձեռք առնուած են եւ պիտի գործադրուին աստիճանաբար, մանաւանդ Դեկտ. 17էն սկսեալ։ Ինքնաշարժները միայն ամիս մը միայն 300 քիլոմեթր չրջագայելու իրաւունք ունին։ Մասնաւոր տեսակներ պիտի հրատարակուին, չորս ամսուան տոմսակներով։

Փարիզի մէջ արդէն պոչեր կազմուած են քարիւղաբաշխ մեքենաներուն առջեւ։ Դաչտօնեաները կաթիլ - կաթիլ կը հոսեցնեն հրանիւթը։ Ինքնաշարժներու երթեւեկը քառասուն առ հարիւր նուազած է Փարիզի փողոցներուն մէջ։ Կառախումբերը եւ մեթրօն չափազանց խճողուածեն։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՓԱՐԻԶԻ ԿՈՄՄԸ (գահաժառանգ միապետութեան) իր տեղեկատուին մէջ դիտել կուտայ թէ «Սուէզի ամբողջ չուրը չի կրնար բաւել սրբելու ռուսական ձեռքերու վրայ եղած հունգարական արիւնին մէկ հարիւրերորդը»։ Ցեսոյ կը պահանջէ օրէնքէ դուրս հռչակել համայնավար կուսակցութիւնը։

ԱՏԼԱՆՏԵԱՆ ճակատին նոր հրամանատարը, զօր. Լորիս Նորսթեադ փարիզ հասնելով ստանձնեց իր պաշտօնը։ Այս առթիւ ճառ մը խօսեցաւ նախորդ հրամանատարը, զօր. Կրունթըր, պարզելով արեւմտեան Եւրոպայի պաշտպանութեան պահանջները։

ԱՆԳԼԻՈՑ վարչապետին՝ Իտընի հիւանդութեան հետեւանքով, գործերը առժամապէս պիտի վարէ Պ. Պըթլըր։ Զի կարծուիր որ փոփոխութիւն մը տեղի ունենայ ընդհանուր քաղաքականութեան մէջ։

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ Լոնտոն հասած լուրերու համաձայն, մօտերս Բուլկանինի եւ Խրուչչեւի պիտի յաջորդեն Մոլոթով եւ Մալենկով, իբրեւ վարչապետ եւ կեդր. կոմիտէի քարտուղար։

ԹՈՒՆՈՒՃԻ վարչապետը, Պուրկիպա, Նիւ Եորք հասնելով, յայտարարեց թէ իր երկիրը ստիպուած չէ միւս արաբական պետութեանց հետեւելու ամէն հարցի մէջ։ Ցեսոյ յոյս յայտնեց թէ Ալժէրիոյ խնդիրը պիտի կարգադրուի մօտերս։

ԵԳԻՊՏՈՍԻ ֆրանքեւանդլիական դին - ուորները պիտի պարպուին մէկ ամիսէն, համաձայն Ազգաժողովի ընդհ. քարտուղարին եզրակացութեան։

ՀՈՒՆԳԱՐԻՈՑ զոհերուն համար կիրակի օր կատարուած հանդանակութեան գումարը կը հաշուեն աւելի քան 30 միլիոն, առաժամապէս։ Ամէնէն մեծ բաժինը տուած է Փարիզ։ Լիոնի մէջ հաւաքուած է 1·500·000 ֆրանք։

ԱՄԵՐԻԿԵԱՆ մեծ նաւահանգիստներու բանուորները ամէն աշխատանք դադրեցուցած են հինգ օրէ ի վեր։ Բանակցութիւնները կը չարունակուին, նաւագնացութիւնը ապահովելու համար։

ԱԼԺԵՐԻԱՑԻՆ հասած վերջին լուրերու համաձայն համայնավարներու ձերբակալութիւնը կը չարունակուի։ Միչա խռովարկութիւններ կը կատարուին Ալժէրի եւ ուրիշ քաղաքներու մէջ։

ԴԱՀԼԻՃԻՆ դէմ հոսանք մը կազմուած է, իբրեւ հետեւանք երմտական եւ տըն - տեսական դժուարութեանց, ինչպէս կը գրեն տեղական թերթերը։ Ընկերվարական կուսակցութեան մէջ ալ դժգոհները կը պահանջեն արտակարգ ժողով գումարել։

ՍԱԿԱՐԱՆ (Նոյ. 20).— Ջոյլ ոսկի՝ 462·000, նախորդին 3390, դուխ. 3300, քան տոլարնոց 16·320, անդլ. 4300։ Թղթադրամ (անպաշտօն).— Սթերլին 1030, տոլար 401, դուխ. 95·75։

ՅՈՐԵԼԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՑՇ ՄԱՌՔ Ի

Սալ Շօփէն (Փլէյէլ), Դեկտեմբեր 1 Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին

Նախաձեռնութեամբ Հայ Գրողներու Ընկերութեան եւ մասնակցութեամբ Մշակութային Միութեան եւ Համազգային ու Ֆրանսահայ լսարաններուն։

Հովանաւորութեամբ՝ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆի։

Գրական ու գեղարուեստական ճոխ բաժին։

Մուտքը 200 ֆրանք։

Տոմսերը կը ծախուին Բալուեանի գրատունը։

Մանրամասնութիւնները յառաջիկային։

[redacted]

Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւնը կը ծանուցանէ թէ՝

ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՊԱՃԱՆԵԱՆ

յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ այս ուրբաթ առաւօտ, ժամը 1045ին, Հայ Կաթողիկէ եկեղեցիին մէջ, 10պիս, ռիւ Թուէն)։

[redacted]

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Եսայեան եւ Քայմակեան - Ցակոբովիչ (Աթէնք) ընտանիքները կը ծանուցանեն թէ այս կիրակի հոգեհանգիստ պիտի կատարուի Փարիզի Ցովհ. Մկրտիչ եկեղեցիին մէջ, ողբացեալ

ՀՈՒԻՓՍԻՄԷ Կ. ԵՍԱԵԱՆի

(Ծնեալ Քայմակեան)

լիչատակին, անոր մահուան առաջին տարելգարձին առթիւ։

Կը հրաւիրուին իր լիչատակը յարգող - ները։

***

Կեսարիոյ եւ չրջանի հայրենակիցներու փափաքին համաձայն, այս կիրակի յետ պատարագի Փարիզի Ս. Ցովհ. Մկրտիչ եկեղեցւոյն մէջ, տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, 1895 Նոյեմբեր 18 եւ 1896ի կեսարիոյ եւ չրջանի նահատակներուն, 1915ի կեսարիոյ մէջ կախաղան հանուած 53 մարտիրոսներուն, ինչպէս նաեւ ընդհ. տեղահանութեան չրջանի նահատակներու եւ բազմավաստակ առաջնորդ Տրդատ եպիսկ. Պալեանի եւ Խոսրով եպիսկ. Պետրիկեանի յիչատակին։

Կը հրաւիրուին Կեսարիոյ եւ չրջանի բոլոր հայրենակիցները այս պաշտամունքին։

ԿԱՐԵԼԻ Է ՏԱԿԱՒԻՆ ՔԱՆԻ ՄԸ
ՕՐԻՆԱԿ ԳՏՆԵԼ՝

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ

երկու վէպերէն —
«ՆԱՀԱՆԶԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ»
ԵՒ «ՑԱՐԱԼԻՋՆԵՐՈՒ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ»
երկու հատորը միասին 1500 ֆրանք։
Դիմել «Ցառաջ»ի վարչութեան։

ԽՆԶՈՑՔ

ԼԻՈՆ.— Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը կազմակերպած է ընկերահամակրական խնճոյք մը՝ 25 Նոյեմբեր, կիրակի կէս - օրէ վերջ, ժամը՝ չորսէն մինչեւ կէս գիչեր, Ցոյներու սրահը, 5 ռիւ Պօնըփուա։ Կը խնդրուի ընկերուհիներէն, ընկերներէն, Նոր Սերունդէն եւ բոլոր համակիրներէն քաջալերել այս բարեսպասակ ձեռնարկը։

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԷյԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ամասիոյ Հայր. Միութեան։ 1 Դեկտեմբեր, չաբաթ եւ - բեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս, Սալոն Ալամպրայի մէջ, 340 Պուլվ. Շաւ։

Պատուակալ նախագահութեամբ բանաստեղծ ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹի։

Գեղեցիկ աչքերու մրցում, ընտրուած թեկնածուհին կը ստանայ արժէքաւոր նուէր մը։

Գեղարուեստական ճոխ բաժին։

Սիւգաճ Հիւպէր (երգ), Ժօ Ալպաճ։

Ընտանեկան մթնոլորտ եւ հաճելի անակնկալներ։ Նաւագախումբ ՆԻՒ ՖՐԱՆՔ։

Սեղանները թուագրուած ըլլալով, այժմէն ապահովել Միութեանս անդամներէն, Տիկին Արփինէ Մորճիկեան, Շէ Վէթէր, 34 ռիւ Թափի Վէր։

Պ. Ցար. Զէքմէեան, 12 ռիւ տը լ'Արբ. հեռ. Փրաւո 78-61։

Պ. Տիգրան Զորիկեան, 5 Ավընիւ Քամիյ Փէլըթան։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄԸ
ՎԻԵՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ֆ. Կապ. Խաչի մասնաճիւղին, սիրայօժար մասնակցութեամբ Սէնթ Էթիէնի եւ Սէն Շամոնի Նոր Սերունդին, ղեկավարութեամբ

Ընկեր Ղարիբեանի

կը ներկայացուի Պ. Մելոյեանի

« ԱՐՄԵՆՈՒՀԸ » (առամ 5 արար)

25 Նոյեմբեր, կիրակի կէսօրէն վերջ ժամը 3ին, Սէրքլը Կաթոլիկի ծանօթ սրահին մէջ։

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ։ Ձիշդ ժամուն կը սկսի։

[redacted]

ՆՈՒԻՐՆԵՐ

Այրի Տիկին Ե. Այանեան իր զաւկին՝ Ցովհաննէսի Ալժերիայէն ողջ եւ առողջ վերադարձին առթիւ, կը նուիրէ.— Վիէնի Նոր Սերունդին երկու հազար ֆրանք, Վիէնի Հ. Մ. Ը. Մ.ին երկու հազար, Փարիզի Մշակոյթի Տան երկու հազար, «Ցառաջ»ի բարգաւաճման հազար ֆր.։

[redacted]

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Որբերու Օգն. Մարմինը, (Փարիզատայ Տիկնանց Միութիւն) չնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որոնք իրենց սիրայօժար աջակցութեամբ նպաստեցին իրենց տարեկան պարահանդէսի յաջողութեան (Նոյ. 18)։

[redacted]

ՆԱՄԱԿԱՏՈՒԻՓ

ՍԱՐՍԷԼ, Ղ. Ն.— Զարժեր ղրկուիլ։
ՆԻՍ.— Շ. Զ.— Նոյնպէս։

[redacted]

ՀԱՑԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ

Լուվէնի (Պելժիա) համալսարանի ուսանողներէն Պ. Երուանդ Բամպուքեան տրամադրելի ժամեր ունի հայերէնի դասեր տալու մասնաւորներու։ Դիմել՝
34 Rue Vésale, Louvain (Belgique)

[redacted]

ԿԱՐԵՒՈՐ ԾԵՐՈՒՆԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Այն հայ զաղթականները որ ծերութեան մասնաւոր նպաստ կը ստանան եւ որոնց համար վերջերս նոր օրէնքով մը յաւելում եղած է, պէտք է ստանան իրենց բնակավայրի քաղաքապետութենէն, յատուկ հարցաթերթեր եւ ասոնցմով ներկայանան հայկական ղրասենեակ, 7 ռիւ Քոփէռնիկ, Փարիզ, առաւօտները 10–12, միասին բերելով իրենց անձնագիրը եւ վերջին ստացուած դումարին կտրոնը։

Այս ազդը կը վերաբերի նաեւ անոնց որ թոշակ կը ստանան ընկերային ապահովութենէն։

Այն զաղթականները որ Փարիզէն դուրս կը բնակին, կրնան նոյնը կատարել Թղթակցութեամբ, ներփակելով վերոյիչեալ թուղթերը։ Անհրաժեշտ է հարցաթերթը ամբողջութեամբ լեցնել եւ ստորագրել, ինչպէս նաեւ իրենց անձնագրին պատճէնը կցել, վաւերացնել տալէ վերջ իրենց բնակավայրի ոստիկանութենէն եւ ղրկել հետեւեալ հասցէին։

J. ARTINIAN, 7, Rue Copernic, Paris (16e).

Օր. ՍՕՆԱ ՉԸՐԸԽՃԵԱՆ
Պ. ՎԱՀՐԱՄ ՉՈՐՄԻՍԵԱՆ
Ամուսնացած

Կնքահայրութեամբ Պ. Արա Պիպէրեանի, Փարիզ 18 Նոյեմբեր 1956 Քաչան

ՅՈՒՇԱՏԵՏՐ

●

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Ռուստամ խումբի ժողովը այս չաբաթ իրիկուն ժամը 9ին, ընկեր Մանուկի բնակարանը։

ԱՆԻԷՌ ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊ.— Հ. Ց. Դ. Ազատ ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր չրջանի ընկերները այս հինգչաբթի, ժամը 21ին, ծանօթ հաւաքատեղին։ կարեւոր օրակարգ։

ՇԱՒԻԼ.— Հ. Ց. Դ. Նոր Սերունդի «Անդրանիկ» խումբի դասախօսական ժողովը այս հինգչաբթի ժամը 21ին, դպրոցի սրահը։ Կը դասախօսէ ընկեր Կարօ Մանկեան։ Կը հրաւիրուին Շաւիլի երկսեռ երիտասարդութիւնը։

ՍԱՐՍԷԼ - ԱՌՆՈՒՎԻԼ.— Հ. Ց. Դ. Վարդան ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ այս չաբաթ, ժամը 21ին, իր չրջանի բոլոր ընկերները։ Առնուվիլի ծանօթ հաւաքատեղին։ Կարեւոր օրակարգ։

ԿՐՈՆՈՊԼԸ.— Հ. Ց. Դ. Եօթնեղբայր - ներ կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս չաբաթ, ժամը 20·30ին, ծանօթ հաւաքատեղին։ Խիստ կարեւոր օրակարգ։ Անհրաժեշտ է բոլորին ներկայութիւնը։

ՎԱԼԱՆՍ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէին ընդհ. ժողովը, այս չաբաթ, ժամը 20·30ին, Ահարոնեան ակումբը։ Կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է։

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՇՐՋ. վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ Փարիզի չրջանի մասնաճիւղերու ընկերուհիները այս երկուչաբթի, ժամը չորսին, Քաֆէ Ռէժանի վերնայարկը։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ։

[redacted]

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիվան - Կոմիտաս երգչախումբին պարահանդէսը Դեկտեմբեր 16ին Ամպասատէօռի սրահը։

●

Սամուէլ Մուրատեան վարժարանի տոնածառի հանդէսը կիրակի 23 Դեկտեմբեր, ժամը 4ին։

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆի Մարսէյլի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը Դեկտեմբեր ութին։ Մանրամասնութիւնները յաջորդով։

[redacted]

ՀԱՑ Թատրոնը կեդր. Ֆրանսայի մէջ։

ՎԱԼԱՆՍ.— Նախաձեռնութեամբ Ազգային Միութեան, չաբաթ գիշեր, 15 Դեկտեմբեր, (Քաղաք. Թատրոն)։

ԼԻՈՆ.— Նախաձեռնութեամբ Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին։ Կիրակի ցերեկ, 15 Դեկտեմբեր, (Ֆրանսուա Քոփէ)։

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

Radiola
Symbole de QUALITÉ

ARSONOR - RADIO
ARABYAN NOUBAR
3, Rue de Mirbel, Paris (5e)
(101 Rue Monge) Métro Censier Daubenton
TEL. : 78-77



Ուր պիտի գտնէք հանրածանօթ բոլոր

ՄԱՐՔԵՐը կրող

ՌԱՏԻՈՅԻ ԵՒ ԹԵԼԵՎԻԶԻՈՆԻ ԳՈՐԾԻՔՆԵՐը
ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

DUCRETET THOMSON
premier en date et en qualité

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՑ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ
ԼՈՒԲՋ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ
HARATCH

ՕՐԱԹԵՐԹ

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ.ար, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրաք : Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ 23 ՆՈՅԵՄԲԵՐ • VENDREDI 23 NOVEMBRE 1956

32ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7739 32e ANNEE

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3550

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ԿԷՍ ՃԱՄԲԱՆ ԿԸ ՁԳԵՆ

Ո՜րքան փոքր ժողովուրդներ կէս ճամբան մնացին, միշտ իրենց յոյսը դնելով «Մեծ»երու աջակցութեան վրայ :

Վերջին ապացոյց՝ Հունգարիան :

Դժուար է հաստատել թէ մէկն ու մէկը ուղղակի դրդած էր ապստամբել, գործնական եւ անմիջական օգնութիւն խոստանալով :

Ռատիօ - քարոզները կրնայի՞ն ոտքի հանել ամբողջ ժողովուրդ մը:

Բաժակը յորդած էր եւ ինը միլիոն Հունգարներ կը հաւատային թէ կարելի է բան մը փրկել, ցնցելով օտար բռնակալութեան մը լուծը:

Մանաւանդ որ կը գտնուէին Եւրոպայի սրտին վրայ :

Եւ մա՛քառեցան հերոսաբար, յանուն ազատութեան ու անկախութեան :

Բոլոր տեղեկութիւնները կը հաստատեն թէ ապստամբութեան գլուխն անցած էին բանուորներն ու գիւղացիները: Երիտասարդներ եւ ուսանողներ: Մինչեւ անգամ երիտասարդուհիներ :

Անշուշտ Փեշթայի մէջ ալ գիտէին թէ ինչ կը ներկայացնեն ներկայ Եւրոպան ու Ամերիկան, այսպիսի ճակատագրական պարագաներու մէջ :

Շատ – շատ, համակրանքի խօսքեր եւ բարեացակամ տրամադրութիւններ պիտի լսէին, ժողովրդական կամ կուսակցական շրջանակներէ: Ապա նաեւ մարդասիրական կոչեր՝ զոհերուն համար :

Այդպէս ալ եղաւ, երբ «օգնութիւն» կ'աղաղակէին ըմբոստները, արեան ճապաղիքներու մէջ :

Ոչ մէկ յուսատու արձագանգ :

Միջազգային մամուլը զոհացաւ նկարագրելով օրհասական պայքարը : Կառավարութիւնները փութացին կարծիքներ փոխանակել :

Ի վերջոյ արտակարգ նիստի հրաւիրուեցաւ Ազգաժողովը, խնդիրը քննելու համար :

Ողբերգութեան երկրորդ վարագոյրը բացուեցաւ այնտեղ :

Երկար վիճաբանութիւններէ ետք, սովորական համարուեցաւ եղիպտական տագնապը:

Եւ երբ կարգը հունգարականին եկաւ, հրասայլն ու թնդանօթը արդէն լռութեան դատապարտած էին ապստամբ ժողովուրդը :

Վերջնական բանաձեւը դեռ երէկ ընդունուեցաւ: Ոչ թէ արտակարգ նիստին, այլ սովորական ժողովին մէջ :

Գոնէ աքսորները պիտի դադրի՞ն, իբրեւ հետեւանք այդ բանաձեւին: Եւ օտար ուժերը պիտի հեռանա՞ն Հունգարիայէն:

Պատասխանը պատրաստ է արդէն, — Մի՛ խառնուիք մեր ներքին գործերուն...

Իրողութիւն է որ 79 պետութիւններէ բաղկացած կազմակերպութիւն մը չի կրնար նոյն իսկ խումբ մը դէտեր ղրկել, կացութիւնը քննելու համար :

Փեշթայի խամաճիկ իշխանութիւնը կ'առաջարկէ տեսակցութիւն մը կարգադրել Հունգարիայէն դուրս ...

Եւ հիմա պատասխանատուութիւններ կը փնտռեն, փոխադարձ մեղադրանքներով :

Ամէնէն անպատկառ դիրքը բռնած է սովետական ճակատը :

Ազատ աշխարհը գոհացաւ բանաձեւեր մշակելով եւ մարդասիրական օգնութիւն հասցնելով :

Ֆրանսայի ընկերվարութեան ականաւոր դէմքերէն Անտրէ Ֆիլիփ ճաղկելով ազատ աշխարհին պառակտումը, հրապարակաւ կը խոստովանի թէ «խայտառակ – ուեցանք անկարող հանդիսանալով ազատութեան ռազմիկներուն ջարդին հան - դէպ »:

Առաջին անգա՞մ է որ աշխարհի Մեծերը կէս ճամբան կը ձգեն տկարն ու անճարը, դայն վերածելով գթութեան կարօտ դանդուածի մը:

Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԾԱՆՐԱՑԱՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

•

ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԻՍՐԱՅԷԼԻ

Մոսկուայի հեռագրական գործակալութիւնը կը ծանուցանէ թէ Իսրայէլ զին - ուոր կը կեդրոնացնէ Սուրիոյ եւ Յորդանանի սահմաններուն վրայ, արշաւանք մը կատարելու համար: Այս առթիւ կ'ըսէ թէ շատ լուրջ ազդարարութիւններ ուղղուած են Իսրայէլի վարիչներուն՝ պատրաստուած նախայարձակման հետեւանքներուն մասին :

Սուրիոյ կառավարութիւնը եւ Ազգաժողովին սուրիական պատուիրակութիւնն ալ նոյնիմաստ ազդարարութիւն մը ուղղած են, ըսելով թէ ոչ միայն իսրայէլեան, այլեւ անգլեւֆրանսական զինուորներ կը համախմբուին երկու պետութեանց սահմաններուն վրայ :

Մոսկուայի հեռագրական գործակալութիւնը գիտել կուտայ թէ Ֆրանսացի եւ անգլիացի զինուորներ կը գտնուին Իսրայէլի մէջ, իսրայէլեան համազգեստներով եւ թէ անոնք ալ պիտի մասնակցին ծրագրուած արշաւանքին: Մոսկուայի կուսակցական պաշտօնաթերթը, « Փրաւտա » եւս կ'արձանագրէ այս տեղեկութիւնները, առանց յիշելու աղբիւրը:Նոյն թերթին համաձայն, Իսրայէլի զինուորական հրամանատարութիւնը արդէն իսկ սահմանագլուխ փոխադրած է տասը վաշտ զինուոր, զրահապատ զօրամասերով եւ զօրաշարժը կը շարունակուի պահեստի ուժերով: Դարձեալ նոյն գործակալութիւնը կը յայտնէ թէ աւելի քան հարիւր ֆրանսական օդանաւեր կը գտնուին Իսրայէլի մէջ, թէ պաշտման վիճակ հաստատուած է սահմաններուն վրայ, թէ կացութիւնը ճիշդ այն է ինչ որ կը տիրէր Եգիպտոսի վրայ կատարուած յարձակման նախօրեակին եւն.: Գործակալութիւնը այս տեղեկութիւնները ստացած է եղեր Աթէնքի դրասենեակէն :

ՈՒՐԻՇ ՎՐԴՈՎԻՉ ՋՐՈՅՑՆԵՐ

Այլապէս վրդովիչ տեղեկութիւններ կը հաղորդեն Լոնտոնի թերթերը : «Տէյլի Թէլէկրաֆ»ի դիւանագիտական թղթակիցը, որ ընդհանրապէս կառավարութեան տեսակէտները կը յայտնէ, նոյեմբեր 22ի թիւով կը ծանուցանէ թէ կարեւոր քանակութեամբ ռուսական զէնքեր ճամբայ հանուած են դէպի Սուրիա, թէ Եգիպտոս եւս կը բանակցի Խ. Միութեան հետ, նոր օդանաւեր եւ հրասայլեր ստանալու համար, վերջերս քանդուած զէնքերուն տեղ: Այս առթիւ կ'ըսէ թէ իրազեկներ շատ ծանր կը գտնեն ռուսական թափանցումը Սուրիոյ մէջ, թէ թափանցումը արդէն իսկ հասած է այն աստիճանին ուր Մոսկուա կրնայ որեւէ ատեն ռուսական խարխուլի մը վերածել ամբողջ Սուրիան:

Այս կացութիւնը մեծ մտահոգութիւն կը պատճառէ Սուրիոյ դրացիներուն : Թուրքիոյ, Լիբանանի եւ Իրաքի: Այս վերջինը լրջօրէն կը նեղուի, քանի որ Սուրիա կտրած է այն նաւթուղիները որոնք Միջերկրական կը փոխադրեն Իրաքի քարիւղը: Թուրքիան անգամ է Ատլանտեան դաշինքին, ինչպէս եւ Պաղտատի ուխտին: Եթէ Սուրիոյ կացութիւնը աւելի վատթարանայ, Թուրքիան ապահովաբար Ատլանտեան կազմակերպութեան օգնութիւնը պիտի խնդրէ, ըստ այնմ գործելու համար :

Միւս կողմէ Լիբանան ուժգին ճնշումի մը կ'ենթարկուի Սուրիոյ եւ Եգիպտոսի կողմէ, ռուսական ճակատին յարելու համար: Լիբանան ցարդ ընդդիմացած է այս ջանքերուն :

Պէյրութէն Դամասկոս հասած ճամբորդներ կը պատմեն թէ քաղաքը զօրանոցի մը վերածուած է այն օրէն ի վեր որ զինուորական իշխանութիւնն ստանձնեց բարեկարգութեան եւ ապահովութեան հոգը: Սպառազէն զինուորներ դիրք բռնած են քաղաքին գլխաւոր կէտերուն վրայ: Բազմաթիւ պահականոցներ հաստատուած են փողոցներու մէջ եւ խուզարկութիւններ կը կատարուին այրերու թէ կիներու վրայ: Համազգեստաւոր զինուորներ կը շրջին փողոցներուն մէջ, հրասայլերով եւ զրահապատ կառքերով : Երեքշաբթի օր անծանօթներ ռումբեր նետեցին Սուրիա - Լիբանան դրամատան վրայ որ ֆրանսական հաստատութիւն մըն է : Երկու պահապաններ ծանրապէս վիրաւորուեցան : Նոյն աղբիւրին համաձայն ռումբ մըն ալ պայթած է նախագահական պալատին մէջ, խոշոր փոս մը բանալով արտաքին պատի մը վրայ: Ուրիշ ռումբ մը նետուած է Տիկին Մոտ Ֆարաճալլայի տան վրայ: Տիկինը բարեկամուհին է նախագահ Շամունի կնոջ : Երեք օր առաջ ալ ռումբեր նետուած էին Միջին Արեւելքի Բրիտանական Դրամատան եւ Սէյնթ Ճորճ Ակումբին վրայ : Ձերբակալուած են բազմաթիւ կասկածելիներ, մեծ մասով պաղեստինեան տարագիրներ: Զինուորական ատեան մը կազմուած է, յանցաւորները անմիջապէս դատելու համար :

Խուզարկութեանց հետեւանքով կառք մը լեցուն պայթուցիկներ և ուրիշ զէնքեր գտնուած են Պէյրութի եգիպտական զինուորական կցորդին չարժավարին տան մէջ :

Պաշտօնական աղբիւրէ կը հաստատուի թէ Սուրիա քսան միլիոն սթերլինի զինամթերք ստացած է Խ. Միութենէն, վերջին 12 ամիսներու ընթացքին :

❖ ՕՐԸ ՕՐԻՆ ❖

*

« ԽՍԱՆՍ»ԱՊԱՏՈՒՄ

Կատարեալ խուճապի մը մատնուած են անոնք որ *օթօ*, առնուազն *մօթօ* մը ունին, տարիներէ ի վեր :

Ո՞վ չունի մէկը կամ միւսը :

Ազատ եւ բարգաւաճ երկիր, ամէն պատեհութիւն կ'ընծայէ ծաղկելու, հարստութիւն դիզելու, օթօներ եւ շաթօներ գնելու :

Եւ մեր հայրենակիցներուն ամէնէն անճարն ալ, որուն համար երէկ երազ էր «*Փայտոն*» կառք մը ունենալ, երկու հիւանդկախ ձիերով, ինքնաշարժի տեսակներ կը փոխէ տարին քանի մը անգամ:

Այսպէս, հազարաւոր ընտանիքներ տիրացած են ինքնաշարժի, պարզ կամ շքեղ, տեղական, ամերիկեան կամ իտալական:

Եւ կան ընտանիքներ որոնց իւրաքանչիւրը իր առանձին կառքն ունի :

Կան բազմաթիւ շարժավար կիներ ու աղջիկներ ալ, որոնք երիտասարդներու նախանձը կը շարժեն իրենց ճարտարութեամբ :

Արդ, բոլորն ալ տագնապի մը մատնուած են այժմ,— Սուէզի ջրանցքը փակուած ըլլալով, հրանիւթը, որ երէկ ջուրի պէս կը հոսէր, այժմ կը բաժնուի կաթիլ կաթիլ :

Սեւ շուկան բացուած է արդէն, եւ կը սպառնայ մեծ չափերու հասնիլ, եթէ տագնապը երկար տեւէ :

Ուրեմն, ամիսներով պիտի փնտռենք այն երանելի օրերը, երբ օթօ ունեցողը կ'առաջարկէր, ինքնաբերաբար .

— Քալէ պտոյտ մը կատարենք, ո՞ւր կ'ուզես, Քոնքո՞րտ, Վենսէ՞ն, Պուա՞...

— Գործադրո՞ղ կայ, կառքս պատրաստ է, մի վախնար :

— Հանդէսէն վերջ կառքս ձեր տրամադրութեան տակ է, մինչեւ տուն ալ կը տանիմ :

Եւ այժմ ամէնքն ալ կը հարցնեն, արդար մտահոգութեամբ .

— Երկա՞ր պիտի տեւէ... Առեւտրական գործերս ալ խանգարուեցան : Կարելի չէ քաղաքէն դուրս ելլել :

Ձայն մը՝ մամուլի գրասենեակէն .

— Ո՞րքան հրանիւթի պէտք ունիք ձեր խմբագրութեան ինքնաշարժին համար :

= Մենք միայն եռանիւ կառք մը ունինք, որ ձեռքով կը բանի, թերթերը նամակատուն փոխադրելու համար ...

ՎԱՀԷ

ՋՐԱՆՑՔԻՆ ԽՆԴԻՐԸ ԿԸ ԲԱՇՔՇՈՒԻ

★

Ազգաժողովին ընդհ. քարտուղարը, Համըրշըլտ, իր տեղեկագիրը ներկայացուց ընդհ. ժողովին, նոր խրատուութիւններ խնդրելով: Արեւմտեան երկիրներու մամուլը կը գանգատի թէ տեղեկագիրը լեցուն է տարտամ խօսքերով եւ անորոշութիւններով «որոնք կրնան դուռ բանալ ծանր թիւրիմացութեանց» : Քարտուղարը բացատրեց ընդհ. ժողովին մէջ թէ համաձայնած են գնդ. Նասրի հետ, կարգ մը սկզբունքներու մասին, թէ հաւաքաբար պիտի քննեն միջազգային բացառիկ-ժինպաշտօնավարութեան, հաղորդակցութեանց եւ մթերքի վերաբերեալ խնդիրները: Բանակցութիւնները պիտի հիմնուին երկու գլխաւոր սկզբունքներու վրայ.— 1. Պիտի ընդունուի Եգիպտոսի գերիշխանութիւնը՝ Ազգաժողովի ուժին ներկայութեան եւ գործունէութեան խնդիրներուն մէջ.— 2. Ազգաժողովը իր ուժերը Եգիպտոսի մէջ պիտի պահէ մինչեւ որ օտար զինուորները քաշուին:

Ընդհ. քարտուղարը իր բացատրութեանց ընթացքին գիտել տուաւ թէ Ազգաժողովին ուժերը չեն կրնար գործել, քանի որ օտար զինուորները տակաւին հեռացած չեն: Ինք տեղեկութիւններ խնդրած է Ֆրանսայէն, Անգլիայէն եւ Իսրայէլէն, իրենց զինուորներու հեռացման

(Շար.ը կարդալ Դ. էջ)

Ի ՊԱՏԻՒ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Լիբանանի պետական խորհրդարանին անդամ Պ. Տիգրան Թոսպաթ եւ Տիկինը նոյեմբեր 18ին սեղան մը սարքած են իրենց բնակարանին մէջ, ի պատիւ Կիլիկիոյ կաթողիկոսին: Հրաւիրուած էին նաեւ Լիբանանի առաջնորդ Խորէն արք., նոր վարչապետը՝ Սամիհ Սոլհ եւ միւս նախարարները, երեսփոխաններ, Մովսէս Տէր Գալստեան, հայ համայնքին ներկայացուցիչները եւն.:

Վարչապետը շատ սիրալիր տեսակցութիւն մը ունեցած է Զարեհ կաթողիկոսին հետ :

ԳՐԱԳԷՏ ՄԱԼԽԱՍԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Վերջին թղթարերէն կ'իմանանք թէ «Զարթօնք»ի հեղինակին՝ Մալխասի գրական գործունէութեան յոբելեանը պիտի տօնուի այս կիրակի, 25 Նոյեմբեր, Պէյրութ, ամերիկեան համալսարանին մէջ: Ուրիշ գաղութներ ալ կը պատրաստուին հանդէսներ սարքելու այս յոբելեանին առթիւ :

ՄՈԼՈԹՈՎԻ ՆՈՐ ՊԱՇՏՕՆԸ

Մոսկուայէն կը հեռագրեն թէ պետական վերստուգման նախարար նշանակուեցաւ Մոլոթով, որ արտաքին գործերու նախարարութենէն հրաժարած էր վեց ամիս առաջ: Այս անուանումը յաջողութիւն մը կը համարուի սթալինականներուն համար :

Մոլոթով իրաւասութիւններ պիտի ունենայ ստուգելու բոլոր գործառնութիւնները, գլխաւոր նախարարութիւններէն մինչեւ կոլխոզները :

ԱՂՎԱՍՏԱՆԻ ԶՈՒՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՐՏՆՉԵՑ ԲԱՑԱ ՄԻ ՍՈՒՏԱԿԵ

— Ի՛հ, ասեց Միքայել, մեղմակիպած աչքերը ինձ հառած, ես էլ քեզ նույնը կասեի, եթե չիմանայի, որ դու ինձ ճանաչում ես։ Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչու եմ այդպես վարվում։ Ինչ-որ ներքին ձայն ինձ ասում է, որ ես ճիշտ եմ վարվում, ուրիշ ոչինչ։ Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչու եմ այդպես վարվում։ Ինչ-որ ներքին ձայն ինձ ասում է, որ ես ճիշտ եմ վարվում, ուրիշ ոչինչ։ Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչու եմ այդպես վարվում։

Միքայել Նալբանդյանը ոտքի ելավ, մոտեցավ պատուհանին, ապա նորից վերադարձավ սեղանի մոտ և ասաց.

—

ԱՍՏՎԱԾԱԿ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ, 364 - 400)

Ի. ԳԱՐԴ

12.— ՀԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԸ

— Մեզ պահանջատիրական ոտնձգութիւններ կը սպառնան, — ըսաւ Վահան Մամիկոնեան, — եւ մենք պէտք է ընդդիմանանք անոնց, որպէսզի մեր հողերը մեզ մնան, եւ մեր ժողովուրդը ազատ ապրի իր հայրենիքին մէջ: Մենք չենք ուզեր ուրիշներու հողերը, բայց մեր հողերը մեզ պէտք են: Մենք չենք ուզեր ուրիշներու ազատութիւնը ոտնահարել, բայց մեր ազատութիւնը մենք պէտք է պաշտպանենք: Մենք չենք ուզեր ուրիշներու հարստութիւնը, բայց մեր հարստութիւնը մենք պէտք է պահենք: Մենք չենք ուզեր ուրիշներու հողերը, բայց մեր հողերը մենք պէտք է պահենք: Մենք չենք ուզեր ուրիշներու ազատութիւնը ոտնահարել, բայց մեր ազատութիւնը մենք պէտք է պաշտպանենք: Մենք չենք ուզեր ուրիշներու հարստութիւնը, բայց մեր հարստութիւնը մենք պէտք է պահենք:

Տարօնի ամրոցներէն, ուր ժողովուրդը կը հաւաքուէր, Վահան Մամիկոնեան կը շրջագայէր ձիով եւ կը խօսէր ժողովուրդին հետ: Ան կ'ըսէր, որ Պարսկաստանի արքունիքը կը ձգտի ոչնչացնել հայ ազգը, որպէսզի հայերը չկարենան միանալ Հռոմի հետ: Ան կ'ըսէր, որ Պարսկաստանի արքունիքը կը ձգտի ոչնչացնել հայ ազգը, որպէսզի հայերը չկարենան միանալ Հռոմի հետ: Ան կ'ըսէր, որ Պարսկաստանի արքունիքը կը ձգտի ոչնչացնել հայ ազգը, որպէսզի հայերը չկարենան միանալ Հռոմի հետ:

Ժողովուրդը կը լսէր Վահան Մամիկոնեանը եւ կը հաւատար անոր խօսքերուն: Ժողովուրդը կը հաւատար, որ Վահան Մամիկոնեան իրաւունք ունի, եւ որ Պարսկաստանի արքունիքը կը ձգտի ոչնչացնել հայ ազգը, որպէսզի հայերը չկարենան միանալ Հռոմի հետ: Ժողովուրդը կը հաւատար, որ Վահան Մամիկոնեան իրաւունք ունի, եւ որ Պարսկաստանի արքունիքը կը ձգտի ոչնչացնել հայ ազգը, որպէսզի հայերը չկարենան միանալ Հռոմի հետ:

մասին եւ ժողովին պիտի հաղորդէ երբ ստանայ :

Քաղաքական շրջանակներու մէջ կը յիշեցնեն թէ շատ աւելի սակրողական է մաքրել Սուէզի ջրանցքը եւ վերահաստատել նաւագնացութիւնը, միջազգային հսկողութեամբ: Այս գործողութեան ծախսը կը հաշուեն 14 միլիոն ոսկի : Կ'ըսուի թէ անգլիական կառավարութիւնը մաս մը զինուորներ պիտի քաշէ այս շաբթու, վստահութիւն ներշնչելու համար :

× Նոյեմբեր 21ին թշնամական ցոյցեր կատարուեցան Փորթ Սայիտի մէջ, 300 ընիկներու կողմէ, երբ հոն կը հասնէր միջազգային ոստիկանութեան առաջին զօրամասը, որ կը բաղկանար 21 Նորվեկիացիներէ: Անգլեւֆրանսական զօրքը միջամտեց, պաշտպանելու համար զօրամասը :

× Անգլիա, Ֆրանսա եւ Իսրայէլ անմիջապէս հերքեցին այն մեղադրանքները թէ զինուոր համախմբած են Սուրիոյ եւ Յորդանանի սահմանին վրայ: Այս առթիւ դիտել կուտան թէ ընդհակառակն սուրիական սատարութիւ զինուորներ մտած են Յորդանան :

× Եգիպտոս կը շարունակէ վայրագութիւններ վերագրել Ֆրանքեւանգլիական զօրքին: Միւս կողմէ եգիպտական թերթերը կը գրեն թէ կառավարութիւնը պիտի խզէ մշակոյթի յարաբերութիւնները Անգլիոյ եւ Ֆրանսայի հետ, միեւնոյն ատեն վերաքննելով դպրոցական ծրագիրները :

× Գնդ. Նասր յայտարարեց թէ բացարձակապէս կը մերժէ բոլոր օտար վարդապետութիւնները, — մարքսականութիւն, ֆաշականութիւն, ցեղապաշտութիւն, գաղթատիրութիւն, աշխարհակալութիւն, անաստուածութիւն եւ թէ երբեք պիտի չդառնայ խաղալիկ, արբանեակ կամ գործիք ոեւէ մէկուն:

ԱԶԳԱԺՈՂՈՎԻՆ ԲԱՆԱՁԵՒԸ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԱՍԻՆ

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՎԵՐՍԿՍԱԻ

ՄԱԿի ընդհ. ժողովը նոյեմբեր 21ին քուէարկեց Քուպայի բանաձեւը, որ կը պահանջէ Խ. Միութենէն եւ Հունգարիայէն անմիջապէս դադրեցնել Հունգարենու ախորը, ետ քաշել խորհրդային զինուորները եւ ընդունիլ Ազգաժողովին ներկայացուցիչները, քննութիւն մը կատարելու համար : Բանաձեւին թեր քուէարկեցին 55 երկիրներ տասնի դէմ, ձեռնպահ մնացին 14 պետութիւններ: Դէմ քուէարկած էին խորհրդային ճակատը եւ Եուկոսլաւիա :

Ժողովը ութի դէմ 57 ձայնով քուէարկեց Հնդկաստանի բանաձեւը, որ կը հրաւիրէ Հունգարիան ընդունիլ Ազգաժողովին ներկայացուցիչները, «առանց խախտելու իր գերիշխանութիւնը »:

Ազգաժողովին ընդհ. քարտուղարը յայտարարեց թէ միշտ պատրաստ է Փեշթա երթալու: Հնդկաստանի պատուիրակը հանդիսաւոր կոչ մը ուղղեց Հունգարիոյ, որպէսզի ընդունի Ազգաժողովին ներկայացուցիչները, «լսելով Ասիոյ միլիոնաւոր ձայները »:

× Փեշթայէն կը հեռագրեն թէ բանուորական խորհուրդը ընդհ. գործադուլ մը սարքեց 48 ժամուան համար, հետեւեալ պահանջները դնելով. — Վերահաստատել Նակին իբրեւ վարչապետ, ազատ արձակել ազատութեան բոլոր ռազմիկները, ետ քաշել խորհրդային զօրքը, ազատ ընտրութիւններ կատարել, ընդունիլ մէկէ աւելի կուսակցութիւններ : Գործադուլը պիտի շարունակուի, եթէ կառավարութիւնը մերժէ բանակցիլ այս պահանջներուն վրայ :

Վերջին լուրերու համաձայն, չարժումը կը տարածուի գաւառի մէջ եւս: Աքսորներն ալ կը շարունակուին, հակառակ բոլոր հերքումներուն, Ականատեսներ կը վկայեն թէ կնքուած վակոններ կ'անցնին սահմանագլուխը, բազմաթիւ երիտասարդներով եւ պատանիներով :

ԱԼԺԵՐԻՈՅ ազատագրութեան ճակատին դանձապահը ձերբակալուեցաւ Փարիզի մէջ: Թերթերը կը գրեն թէ 26 տարեկան երիտասարդ մըն է, Մէհմէտ Տուն կամ Ռեստ : — Կարեւոր գործողութիւններ կը կատարուին Օրանի շրջանին մէջ:— Ալժերիոյ Նախարարը, Լաքոստ, զեկուցում տալով նախարարական խորհուրդին առջեւ, յայտարարեց թէ կացութիւնը բարւոքած է զգալապէս :

Տէր եւ Տիկին Հրանդ Բալուեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Լորիս Բարանեան եւ զաւակը, Այրի Տիկին Արաքսի Քիւրքճեան եւ զաւակը՝ Վահէ (Պոլիս), Տէր եւ Տիկին Նուպար Քիւրքճեան եւ զաւակը (Պոլիս), Տէր եւ Տիկին Միհրան Թէրզեան, Այրի Տիկին Պէատրիս Տէրպէտէրեան, Օր. Էլիզ Քիւրքճեան, Տէր եւ Տիկին Մկրտիչ Պարսամեան, Այրի Տիկին Տիրուհի Բալուեան եւ զաւակները (Պոլիս), ինչպէս նաեւ Պարսամեան, Գորեան, Տէր Ստեփանեան ընտանիքները եւ բոլոր պարագաները սրտի խոր ցաւով կը ծանուցանեն իրեց մօր՝ մեծ մօր եւ ազգականին՝

ԹԱԳՈՒՀԻ ԲԱԼՈՒԵԱՆԻ

մահը որ տեղի ունեցաւ Նոյեմբեր 21ին, իր բնակարանը, յետ երկարատեւ հիւանդութեան :

Յուղարկաւորութիւնը պիտի կատարուի վաղը, շաբաթ, կէսօրէ վերջ ժամը 3.45-ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Փանթէնի գերեզմանատունը :

ԾԱՆՕԹ.— Մասնաւոր մահազդ դըրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել :

ՅՈԲԵԼԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ Ի

Սալ Շոփէն (Փլէյէլ), Դեկտեմբեր 1

Շաբաթ գիշեր, ժամը 8.30ին

Նախաձեռնութեամբ Հայ Գրողներու Ընկերութեան եւ մասնակցութեամբ Մշակութային Միութեան եւ Համազգային Ընկերութեան եւ Ֆրանսահայ Լսարանին:

Հովանաւորութեամբ՝ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ :

Գրական ու գեղարուեստական ճոխ բաժին :

Մուտքը 200 ֆրանք :

Տոմսերը կը ծախուին Բալուեան եւ Պարսամեան գրատուններն եւ կիչէն :

Մանրամասնութիւնները յառաջիկային:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՎԻԷՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ֆ. Կապ. Խաչի մասնաճիւղին, սիրայօժար մասնակցութեամբ Սէնթ Էթիէնի եւ Սէն Շամոնի Նոր Սերունդին, ղեկավարութեամբ

Ընկեր Ղարիբեանի

Կը ներկայացուի Ղ. Մելոյեանի

« ԱՐՄԵՆՈՒՇԸ » (տամ 5 արար)

25 Նոյեմբեր, կիրակի կէսօրէն վերջ ժամը 3ին, Սէրֆլը Կաթոլիկի ծանօթ սրահին մէջ:

Կը խնդրուի ճշդապահ ըլլալ: Ճիշդ ժամուն կը սկսի :

Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւնը կը ծանուցանէ թէ՝

ԿՂԵՄԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՊԱՃԱՆԵԱՆԻ

յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ այս ուրբաթ առաւօտ, ժամը 10.45ին, Հայ Կաթողիկէ եկեղեցիին մէջ, 10պիս, ռիւ Թուէն):



Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉՐԻ ՑԱՆՁՆԵԼԻ ՖՐԱՆՍԱՅԻ

ԱՄԷՆ ՆՈՂՄԸ

185, Bd Jean Jaurès
Boulogne - Billancourt

Métro

ՍԱԿԱՐԱՆ (Նոյ. 21).— Զոյլ ոսկի՝ 459.000, նափոլէօն 3370, զուից. 3290, անգլիական 4290, թղթադրամ (անպաշտօն) սթերլին 1025, տոլար 397, զուից. 94.25, պելժ. 7.90:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԾԱՆՕԹ ԿՌՓԱՄԱՐՏԻԿ ԺԱԳ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Նոր բացած է ճպարեղէնի խանութ մը, ուր պիտի գտնէք ձեր փնտռած լաւագոյն ապրանքները եւ ըմպելիները, մատչելի գիներով :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՍՏԵՓԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ կողմէ

Աճապարեցէք անգամ մը այցելել եւ քաջալերել այս նոր ձեռնարկը :

7 RUE DE TRACY, PARIS (2e)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պէրպէրեան ընտանիքը եւ Պէրպէրեան վարժարանի նախկին սաները կը ծանուցանեն թէ այս կիրակի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին, ողբացեալ՝ ՇԱՀԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ:

Կը հրաւիրուին հանգուցեալին յիշատակը յարգողները :

***

Կեսարիոյ եւ շրջանի հայրենակիցներու փափաքին համաձայն, այս կիրակի յետ պատարագի Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյն մէջ, տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, 1895 Նոյեմբեր 18 եւ 1896ի Կեսարիոյ եւ շրջանի նահատակներուն, 1915ի Կեսարիոյ մէջ կախաղան հանուած 53 մարտիրոսներուն, ինչպէս նաեւ ընդհ. տեղահանութեան շրջանի նահատակներու եւ բազմավաստակ առաջնորդ Տրդատ եպիսկ. Պալեանի եւ Խոսրով եպիսկ. Պեհրիկեանի յիշատակին :

Կը հրաւիրուին Կեսարիոյ եւ շրջանի բոլոր հայրենակիցները այս պաշտամունքին:

●

Եսայեան եւ Քայմակեան – Յակոբովիչ (Աթէնք) ընտանիքները կը ծանուցանեն թէ այս կիրակի հոգեհանգիստ պիտի կատարուի Փարիզի Յովհ. Մկրտիչ եկեղեցիին մէջ, ողբացեալ

ՀՌԻՓՍԻՄԷ Կ. ԵՍԱԵԱՆԻ

(Ծնեալ Քայմակեան)

յիշատակին, անոր մահուան առաջին տարեդարձին առթիւ:

Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները :

●

ՎԻԷՆ.— Թէրզիպաշեան, Այանեան, եւ Թաչճեան ընտանիքները կը ծանուցանեն թէ իրենց մօր Այրի Տիկին Եղիսաբեթ Թէրզիպաշեանի մահուան քառասունքին առթիւ հոգեհանգստի պատարագ պիտի կատարուի այս կիրակի առաւօտեան ժամը 9ին, Սէն Մարթէնի եկեղեցին: Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները :

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Մարսէյլ քաղաքին կեդրոնը՝ (Լոնշան – Լիպէրասիոն) :

Մեկնումի պատճառաւ, ծախու է տուն մը (քօ - փրօփրիէթէ) :

Երկու սենեակ եւ խոհանոց փողոցի վրայ (Ա. յարկ), կարասիներով :

Վճարումը կանխիկ :

×

Նոյն փողոցին մէջ հնակարկատի (կոշիկ) խանութ մը լաւ յաճախորդներով : Տեւական գործ: Դիմել՝

K. Antikian, 11 Rue Léon Bourgeois

Marseille (1e)

Օր. ՎԱՐԴՈՒՀԻ ՏԷՄԻՐՃԱԱՆ

Պ. ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

Ամուսնացած

22 Նոյեմբեր 1956, Միլանօ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

●

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Ռոստոմ խումբը ժողովը այս շաբաթ իրիկուն ժամը 9ին, ընկեր Մանուկի բնակարանը :

ՍԱՐՍԷԼ - ԱՌՆՈՒՎԻԼ.— Հ. Յ. Դ. Վարդան Ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ այս շաբաթ, ժամը 21ին, իր շրջանի բոլոր ընկերները Առնուվիլի ծանօթ հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ՎԱԼԱՆՍ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէին ընդհ. ժողովը, այս շաբաթ, ժամը 20.30-ին, Ահարոնեան ակումբը: Կարեւոր օրակարգ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

Ֆ. Կ. ԽԱՉԻ Շրջ. վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ Փարիզի շրջանի մասնաճիւղերու ընկերուհիները այս երկուշաբթի, ժամը չորսին, Քաֆէ Ռէժանի վերնայարկը: Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ.—

Զաւարեան ենթկ. շաբաթ 1 Դեկտ. ժամը 9ին :

Վռամեան ենթկ. շաբաթ, մէկ Դեկտեմբեր, ժամը 9ին:

Նիկոլ Դուման ենթկ. կիրակի, 2 Դեկտ. ժամը 3.30ին:

Սոյն ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ: Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կ. ներկայացուցիչը :

ԽՆՋՈՅՔ

ԼԻՈՆ.— Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղը կազմակերպած է ընկերահամակրական խնճոյք մը՝ 25 Նոյեմբեր, կիրակի կէսօրէ վերջ, ժամը չորսէն մինչեւ կէս գիշեր, Ցոյներու սրահը, 5 ռիւ Պօնըֆուա: Կը խնդրուի ընկերուհիներէն, ընկերներէն, Նոր Սերունդէն եւ բոլոր համակիրներէն քաջալերել այս բարենպատակ ձեռնարկը :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիփան - Կոմիտաս երգչախումբին պարահանդէսը Դեկտեմբեր 16ին Ամպասատէօրի սրահը :

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՅԱՆՁԽՄԲԻ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ՇԱԲԱԹ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ: ԺԱՄԸ 21ԷՆ ՄԻՆՉԵՒ ԼՈՅՍ

CASINO DE CHARBONNIERES

Մասնակցութեամբ գաւառի ամէնէն ընտիր նուագախումբին՝

MAURICE DE THOU et LEO MELIAN — de la R. T. F.

Գեղարուեստական ճոխ բաժին : Բազմաթիւ անակնկալներ

Կը յանձնարարուի կանխաւ ապահովել սեղանները, հեռաձայնելով .—

Autos-cars — Place Bellecour — Burdeau 54-03

Մուտ զոյն զգեստը նախընտրելի է

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

HARATCH

ՕՐԱԹԵՐԹ

Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 — R.C. Seine 376.286
Fondé en 1925 — Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ․ֆր, տարեկան 3000 ֆր․, վեցամս․ 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրաֆ: Հատը 12 ֆր․

ՇԱԲԱԹ 24 ՆՈՅԵՄԲԵՐ
SAMEDI 24 NOVEMBRE 1956

Ֆ2ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7740 — 32e ANNEE — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3551

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՏԺԳՈՅՆ ՃԻԳԵՐ

•

Տարինները սահեցան եւ չունեցանք ընդհանուր ղեկավարութիւն մը, գաղութներու ինքնապաշտպանութեան օղակները զօրացնելու համար :

Իւրաքանչիւր աշխարհամասի գաղթականութիւն կը գործէ համաձայն իր մտաւոր մակարդակին եւ նիւթական կարողութեան :

Շատ մը պարագաներու մէջ, ինքնահաւանութիւնը կը չփոթեն իրատեսութեան, ամուլ փառասիրութիւնը՝ իրական հայրենասիրութեան հետ :

Եւ հանրային կեանքը հետզհետէ կը լճանայ, կը դառնայ ժամոյն միօրինակութիւն մը:

Նիւթական միջոցներ միշտ ալ կը ճարուին, մանաւանդ Ատլանտեանէն անդին: Բայց արդիւնքը չի համապատասխաներ կատարուած ջանքերուն :

Ընդհանուր ղեկավարութեան հետ, հիմնական ծրագիրն ալ կը պակսի :

Կը ժողվեն ու կը ժողվեն, որոշ նպատակներու համար: Եւ կամ կը ծախսեն անհաշիւ, չփոթելով հիմնականն ու երկրորդականը:

Յաճախ հանգանակութիւն կը կատարեն քրիստոնէութիւն քարոզելու համար ժողովուրդի մը, որ ամէն բանէ առաջ դպրոցի կը կարօտի :

Այս իրողութիւնը մասնաւորապէս աչքի կը զարնէ Հիւս․ Ամերիկայի մէջ, ուր 150 - 200·000 հոգինոց գաղթականութիւն մը երկու մասի բաժնուած է աւելի քան քառ տարիէ ի վեր :

Ձեռքի տակ ունինք էջմիածնական համարուած Թեմին պաշտօնաթերթը, «Հայաստանեայց Եկեղեցի» (1956 Նոյ․):

Քանի մը տեղեկութիւններ կը քաղենք Թեմական Խորհուրդի տեղեկագրէն (1955 — 1956), իբրեւ հում նիւթ խորհրդածութեան :

Թեմը կը բաղկանայ 41 համայնքներէ, որոնց 35ը ունին իրենց սեփական եկեղեցիները, իսկ վեց համայնքներ արարողութիւն կը կատարեն օտար եկեղեցիներու մէջ :

Եկեղեցիներու մուտքը եղած է 474·890 տոլար, ելքը՝ 365·359:

Տիկնանց Եկեղեցասէր Միութիւնը մուտք ունեցած է 37·350 տոլար:

Ունին 19 ծխական դպրոցներ՝ 474 աշակերտներով: Նաեւ 26 կիրակնօրեայ դպրոցներ՝ 1922 աշակերտներով :

Ունին Հոգեւորականաց հիմնադրամ՝ 31·057 տոլար:

Տեղ մը ծախսուած է 55·000 տոլար, ուրիշ տեղ 14·500, իսկ Պոսթընի մէջ նոր եկեղեցի մը շինելու համար պիտի հաւաքուի կէս միլիոն տոլար :

Մասնաւոր հանգանակութիւն մըն ալ կը կատարուի Նիւ Եորքի մէջ, մէկ միլիոն հաւաքելու համար (մէկ մասը պիտի հօգան երկու բարերարներ):

Երուսաղէմի վանքին համար հաւաքուած է 153·00 տոլար, երկու տարիէն:

Բացուած է 120·000 տոլարի հանգանակութիւն մը՝ ազգային տպարան մը նուիրելու համար էջմիածնի վանքին : (Կառավարութիւնը գրաւած է նախկին տպարանը, որ այնքան հրատարակութիւններ հրապարակ հանած էր, բոլշեւիկեան յեղափոխութենէն առաջ):

Տակաւին չենք յիշեր եկեղեցականներ պատրաստելու համար կատարուած հանգանակութիւնները եւ ուրիշ այլազան ձեռնարկներ, բոլորն ալ նոյն ուղղութեամբ :

Աւելի քան քսան եկեղեցիներ ալ «Դաշնակցական» համարուած Թեմը կը պահէ, նոր շինութիւններով :

Հիմա որ աչքի առջեւ ունինք այս խօսուն պատկերը, միասին խորհրդածենք, տրամաբանական եզրակացութեան յանգելու համար : Շ․

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՇԵՓԻԼ... ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԱՆՄԻՋԱՊԷՍ ՊԱՐՊԵԼ ՋՐԱՆՑՔԸ

•

ՆՈՐԷՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ

ՄԱԿի ընդհ․ ժողովին նոյ․ 22ի նիստին մէջ պաշտօնապէս տեղեկութիւն տրուեցաւ թէ Ֆրանսա, Մեծն Բրիտանիա եւ Իսրայէլ սկսած են քաշել իրենց զինուորները Սուէզի շրջանէն: Ընդհ․ քարտուղարը, Համերշոլտ, ժողովին յանձնեց երեք պետութեանց նամակները, որոնց համաձայն,

1․ Ֆրանսա ետ քաշած է իր ուժերուն իբր մէկ երրորդը ․— 2․ Անգլիա որոշած է քաշել մէկ վաշտ, սպասելով որ հասնի Ազգաժողովին ոստիկանական ուժերուն դերը ․— 3․ Իսրայէլ իր ուժերը ետ քաշած է զանազան խորութեամբ, ամբողջ եգիպտական ճակատին վրայ :

Երեք պետութիւնները կը յայտարարեն թէ իրենց ուժերը ամբողջովին կրնան քաշել միայն այն ատեն երբ լիովին գոհացում ստանան Ազգաժողովի ոստիկանութեան կարգադրութեանց մասին: Ֆրանսական կառավարութիւնը կ՚ըսէ թէ կը քննէ իր զօրքին պարպումի ծրագիրը, բայց թէ դժուար է վերջնական գործողութիւն մը կատարել, մինչեւ որ չփում հաստատուի ֆրանքօանգլիական հրամանատարութեան եւ միջազգային զօրագունդի հրամանատարութեան միջեւ : Ֆրանսական կառավարութիւնը պատրաստ է պարպումի ձեռնարկելու անմիջապէս որ միջազգային ուժը ի վիճակի ըլլայ կատարելու իրեն յատկացուած դերը: Այս առթիւ ֆրանսական յուշագիրը դիտել կու տայ թէ անգլեւֆրանսական ուժերը խստօրէն յարգած են կրակը դադրեցնելու որոշումը, բայց Եգիպտացիները չորս անգամ խախտած են զայն :

× Նոյն նիստին մէջ շարունակուեցան վիճաբանութիւնները օրակարգի մասին : Առաջին անգամ խօսք առաւ Ֆրանսայի արտաքին նախարարը, Պ․ Փինօ, պարզելով անգլեւֆրանսական միջամտութեան պատճառները :

Խ. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԻՆԷՐ ԵԳԻՊՏՈՍԸ

Պ․ Փինօ նախ Միջին Արեւելքի վրայ խօսելով, բացատրեց թէ Ֆրանսա որքան համբերութիւն ցոյց տուաւ Եգիպտոսի հանդէպ: Այս առթիւ յիշեց անոր ուղղակի միջամտութիւնը եւ Ալժերիոյ զէնք ղրկելու ձեռնարկը : Մենք ստիպուեցանք միջոցներ ձեռք առնել, կանխելու համար Խ․ Միութեան միջամտութիւնը որ կրնար ի վերջոյ յանգիլ համաշխարհային պատերազմի մը: Իսրայէլի բանակը ահագին քանակութեամբ, խորհրդային զինամթերք ձեռք անցուց Սինայի անապատին մէջ: Ամէն բան մեզ այն եզրակացութեան կը տանի թէ այդ զինամթերքը պատրաստուած էր սպառազինելու այն կամաւորները որոնք զայն աւելի արդիւնաւորապէս պիտի գործածէին պատեհ ժամուն: Զկարենալով կարգադրել Միջին Արեւելքի խնդիրները եւ վերջ տալ կարգ մը բացորոշ սպառնալիքներու, մենք կերպով մը կանխարգել պատերազմի մը դատապարտեցինք Իսրայէլը : Ինչ պէտք էր ընէին Ֆրանսան եւ Անգլիան ընդհարումի մը առջեւ, որ անխուսափելի դարձած էր: 1․ Պէտք էր նկատի առնէին իրականութիւնը եւ Ազգաժողովին անկարողութիւնը, խուսափէին խառնութենէ արաբ երկիրներուն եւ Իսրայէլի միջեւ, առանց սակայն մոռնալու զինդ․ Նասրի յաճախադէպ սպառնալիքները․— 2․ Պաշտպանել Ջրանցքին շրջանը ․— 3․ Կանխել խորհրդային միջամտութիւն մը որ ամիսներէ ի վեր կը պատրաստուէր ամէն տեսակ զէնքերու մեծաքանակ առաքումներով որոնց հետեւանքըկրնար յանգիլ աշխարհամարտի մը »:

Նախարարը այս առթիւ քննադատեց մառեշալ Բուլկանինը որ վիճելի կը համարէր Իսրայէլի գոյութիւնն անգամ: Ըսաւ թէ ահագին սխալ մըն էր այս սպառնալիքը որ կրնայ յուսահատական արարքներու մղել Իսրայէլի կառավարութիւնը: Ցետոյ անցնելով Հունգարական հարցին, բացատրեց թէ կացութիւնը բոլորովին տարբեր էր: Հունգարիան ոչ մէկուն կը սպառնար, մինչդեռ խորհրդային միջամտութեան նպատակն եղաւ խորտակել ժողովուրդի մը զիմադրութիւնը հարստահարութեան եւ թշուառութեան դէմ: « Իսրայէլ, Անգլիա եւ Ֆրանսա հաւանեցան կրակը դադրեցնել համաձայն Ազգաժողովին որոշման, իսկ Խ․ Միութիւնը որեւէ կերպով նկատի չառաւ ընդհ․ ժողովին յանձնարարութիւնը Հունգարիոյ մասին եւ դեռ աւելին, — ղօհերուն վրայ ձգեց իր արարքներուն պատասխանատուութիւնը: Կարելի չէ երկու չափ, երկու կշիռ գործածել Ազգաժողովին յանձնարարութեանց հանդէպ : Անհրաժե՞շտ է որ ամէն երկիր հիւլէական ռումբեր շինէ, իր իրաւունքները արժեցնելու համար: Ազգաժողովը պարտաւոր է իր որոշումները պարտադրել ամէնուն, այլապէս սնանկացած է »:

ՕՐԸ ՕՐԻՆ

*

ԱՆՄԵՂՆԵՐՈՒ ԱՐԻՒՆԸ

Հունգարական մարտիրոսագրութիւնը փորձաքար մը եղաւ միջազգային համայնավարութեան, նոյն իսկ ընկերվարութեան եւ․․․ Ազգաժողովին համար :

Խմորումներ, խլրտումներ ամէն կողմ: Բաց նամակներ եւ հրաժարումներ: Փոխադարձ ամբաստանութիւններ եւ պառակտումներ ;

Անշուշտ նաեւ արտաքսումներ եւ կախակայումներ :

Անգլիոյ համայնավար պաշտօնաթերթին ծաղրանկարիչէն վերջ, մէկ աշխատակիցն ալ հրաժարեցաւ, տեսնելով որ խմբագրութիւնը չի հրատարակեր Հունգարիոյ դէպքերուն առթիւ ղրկած թղթակցութիւնները :

Կուսակցութեան ընդհ․ քարտուղարը կզզի մը գացած էր բանախօսելու :

Ցուցարարները պաշարեցին զինքը եւ կը սպառնային ծովը նետել :

Քարտուղարը հարկադրուեցաւ յետաձգել բանախօսութիւնը :

Ցուցարարները այս անգամ ալ տոմսակներուն գինը ետ պահանջեցին, խոշտանգելով մարդը որ կը բացատրէր թէ դրամ չունի վրան :

Փարիզի մէջ, խումբ մը համայնավար գրագէտներ բողոքի հանրագրութիւն մը ստորագրած էին, դատապարտելով կարմիր բանակին միջամտութիւնը Հունգարիոյ մէջ եւ արդարութիւն պահանջելով զոհերուն համար :

Կեդր․ Կոմիտէն որոշեց արտաքսել բողոքողներէն մէկը, Ժ․ Ֆ․ Ռոլան, որ խիստ ամբաստանագիր մը հրատարակած էր Կեդր․ Կոմիտէին դէմ:

Ուրիշ կարեւոր դէմք մըն ալ արտաքսուեցաւ առժամապէս,— վեց ամիս:

Աշխատանքի Դաշնակցութիւնն ալ ծանր տագնապի մը մատնուած է: Շատ մը սենտիքաներ ուղղակի դիրք բռնած են, եւ հրապարակաւ կը դատապարտեն Հունգարիոյ մէջ կատարուած խժդժութիւնները :

Հռչակաւոր նկարիչը, Փիքասօն անգամ զանգատագիր մը ուղղած է Կեդր․ Կոմիտէին, ուրիշ ինը ծանօթ մտաւորականներու հետ :

Աւելի ուշագրաւ են վարչական շրջանակներու մէջ տրուած որոշումները :

Սէնի նահանգային խորհուրդը որոշեց որեւէ նպաստ չյատկացնել այն կազմակերպութեանց որ կապ ունին համայնավար կուսակցութեան հետ :

Այս առթիւ բանաձեւ մըն ալ քուէարկեց, պահանջելով դադրեցնել հունգարական աքսորները :

Նոյն խլրտումները՝ գաւառի մէջ, ադմկալի ցոյցերով :

Անմեղներու արեան ձայնը սարսեց նոյն իսկ դիւանագիտութեան սառուցեալ գօտին, եւ կրակոտ ճառեր խօսուեցան Ազգաժողովին մէջ ալ, պարսաւանքի բանաձեւերով :

Այս բոլոր խլրտումներն ու խմորումները, բողոքներն ու բանաձեւերը պիտի կրնա՞ն բան մը փոխել այն արիւնազանգ եւ տմարդի կարգուսարքին մէջ որ երկուքի բաժնած է աշխարհը ․․․ ՎԱՀԷ

«ԿԸ ՊԱՐՏԵՆՔ, ԵԹԷ ԴՈՒՔ ԱԼ...»

Խ․ Միութեան արտաքին նախարարը, Շեփիլով, իր ճառը սկսաւ հետեւեալ յայտարարութեամբ ․

Այս ալ բաւական չհամարելով, նմանօրինակ դործողութիւն մը եւս կատարուեցաւ Լիբանանի հողին վրայ: Վնասարարներու խումբ մը Լիբանան մտնելով կարդ մը քանդումներ կը կատարէր Իրաքի Քարիւղի Ընկերութեան Թրիփոլիի դատարաններուն մէջ:

Այս ոտնձգութիւնը մեծ յուզում պատճառեց Լիբանանի կառավարութեան, որ միջոցներ ձեռք առաւ, զօրացնելու համար Թրիփոլիի եւ Սայտայի քարիւղի հաստատութեանց պաշտպանութիւնը:

Այլապէս կարեւոր դէպք մը եւս պատահեցաւ:

Այն օդանաւային կռիւը որ վերջացաւ բրիտանական օդանաւի մը խորտակումով սուրիական երկու օդանաւերու կողմէ, տեղի տուաւ չատ ծանր միջադէպ մը՝ Լիբանանի հողին վրայ: Բրիտանական օդանաւը վար առնուած էր Լիբանանի վերեւ: Երեք օդաչուները վար նետուեցան անկարզեներով եւ վայրկեան մը միջոցին դնդացիրի բռնուեցան սուրիական որսկաններու կողմէ: Անգլիացիներէն մէկը սպաննուեցաւ, միւս երկուքը, որոնց մէկը ծանրապէս վիրաւորուած էր գլուխէն, հաւաքուեցան 2 լիբանանցի ոստիկան-գինուորներու կողմէ: Տեսնելով որ իրենց որսը պիտի կորսնցնեն, Սուրիացիները մօտ վաթսուն գինուոր փութացուցին Լիբանանի սահմանին վրայ, օդաչուները ձերբակալելու համար: Լիբանանցի երկու ոստիկան-գինուորները արտակարգ քաջութիւն մը ցոյց տալով, յաջողեցան պէյրութ փոխադրել երկու վիրաւորները:

Շատ աւելի ծանր միջադէպ մը պատահեցաւ Լիբանանի մայրաքաղաքին կեդրոնին մէջ: Սուրիացի ընդդիմադիր երես-փոխան մը, Սրուր, որ պէյրութ ապաստանած էր, առեւանգուեցաւ սուրիացի երեք ոստիկաններու կողմէ, Օթէլ Նոր-մանանի զաւթին մէջ: Զոհին աղաղակներուն վրայ լուր տրուեցաւ Լիբանանի ապահովութեան տեսչութեան, բայց իսկոյն նախարարի մը միջամտութեամբ հրամայուեցաւ կարճ կապել: Եւ դժբախտ փախստականը կաչկանդելով, բերանը փակելով պարկի մը մէջ նետեցին եւ Սուրիա փոխադրեցին:

Հասկնալի է որ Լիբանանի կառավարութիւնը մտահոդութեամբ կը դիտէ այս արարքները: Զօր. Շեհապ, Լիբանանի դինեալ ուժերուն հրամանատարը, որ ազդային պաշտպանութեան նախարար նշանակուեցաւ, կը բազմապատկէ իր դգուշութիւնները բոլոր ռազմապիտական կէտերուն վրայ:

Ատենէ մը ի վեր մանաւանդ սուրիական տիրապետութիւնն է որ կը սպառնայ խանգարել սուրիական հաւասարակշռութիւնը: Հանրապետութեան նախագահին այցելութիւնը Մոսկուա՝ չէշտեց այս պարագան: Արաբ վեհապետներու խորհրդաժողովին մէջ Դամասկոսի բանբերները աչքի կը զարնէին իրենց անհաշտութեամբ:

ԽՄԲ.— Պ. Սապլիէ ի վերջոյ կ'եզրակացնէ թէ արդէն իսկ շարժում մը սկսած է համայնավարական թափանցումին դէմ եւ հետզհետէ կը զօրանայ:

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԻՐԱՔ ԴԷՄ ԴԻՄԱԾ

•

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ ՄՏԱՀՈԳ ԵՆ

Վերջին լուրերը կը հաստատեն թէ աւելի ծանրացած են Սուրիոյ եւ Իրաքի յարաբերութիւնները, խոր մտահոդութիւն պատճառելով Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն:

Իրաքի կառավարութիւնը Նոյեմբեր 27ին ծանուցագիր մը ուղղեց Պաղտատի սուրիական դեսպանատան, բողոքելով Դամասկոսի անթեղին եւ մամուլին վերաբերմունքներուն դէմ: Ծանուցագիրը կ'ըսէ թէ «Սուրիական բանակը նորէն կը խառնուի քաղաքական գործերու եւ թէ կոչ-ծանարար վարդապետութիւններ կը տարածուին սահմանադրութեան գողին տակ: Այս չարժումը վտանգաւոր համեմատութիւններ ստացած է: Փոխանակ աշխատելու արաբ ժողովուրդներու միութեան համար, սուրիական կառավարութիւնը երկու տարիէ ի վեր պայքար կը մղէ Իրաքի դէմ. պայքար մը որ բուռն ձեւեր ստացած է Իրաքի քարիւղը Սուրիա փոխադրող նաւթուղիներուն քանդումով: Այս վնասարարութիւնը կատարուած է խռովարար տարրերու կողմէ, Դամասկոսի կառավարութեան պատասխանատուութեամբ: Իրաքի կառավարութիւնը իր ձեռքին տակ ունի այս վերջին ամբաստանութեան ապացոյցները:

«Եթէ սուրիական կառավարութիւնը չարունակէ իր ներկայ քաղաքականութիւնը Իրաքի հանդէպ, այն ատեն իրաքեան կառավարութիւնը որեւէ ջանք պիտի չխնայէ պաշտպանելու համար իր համարը եւ արժանապատուութիւնը եւ այդ նպատակով պիտի դործադրէ բոլոր օրինաւոր միջոցները»:

Ծանուցագիրը յետոյ կը յիշէ Իրաքի ազգային քաղաքականութիւնը որ կը ձգտի սերտ դործակցութիւն հաստատել բոլոր արաբ ազդերուն եւ մասնաւորաբար Սուրիոյ հետ: Այս առթիւ կը յիշեցնէ թէ 1949էն ի վեր Իրաք միշտ խորհուրդներ տուած է Սուրիոյ, բացատրելով թէ Սուրիոյ եւ առհասարակ արաբական աշխարհին չահը կը պահանջէ պահպանել սահմանադրական կարգուսարք մը, որպէս զի կարելի ըլլայ ունենալ կատարելագոյն ներկայացուցչական կառավարութիւն մը»:

Անդամ մը եւս լուսաբանութիւններ պահանջելով դէնքի մաքսանենգութեան մեղադրանքին առթիւ, Իրաքի ծանուցագիրը կը հրաւիրէ արաբական երկիրները լրջօրէն քննել վտանգաւոր կացութիւնը որ «ստեղծուած է սուրիական բանակին մէջ սողոսկած վնասարարներու միջոցաւ»:

Ծանուցագիրը մեեւնոյն ատեն դիտել կուտայ թէ Սուրիոյ անթեղը եւ մամուլը մերժեցին հրատարակել Իրաքի կառավարութեան վերջին պաշտօնական հերքումը այն զրոյցներու մասին թէ Իրաք կը չարունակէ քարիւղ ճարել Իսրայէլի:

Պաղտատէն հասած լուրերու համաձայն, կատարեալ անատուդութիւն կը տիրէ երկրին մէջ: Կը վախցուի որ Սուրիա քաջալերուելով Մ. Միութեան եւ դնդ. Նասրի կողմէ, պետական դաւ մը

ՅՈՐԴԱՆԱՆ ԱԼ ԿԸ ԽՋԷ

•

Յորդանանի վարչապետը, էլ Նապուլսի, Նոյեմբեր 27ին ճառ մը խօսելով երեսփ. ժողովին մէջ, յայտարարեց թէ կառավարութիւնը պիտի չանայ խզել 1948ի դաշինքը եւ հեռացնել բրիտանական զօրքը: Այս առթիւ բացատրեց թէ կառավարութեան նպատակն է չնչել ամէն բրիտանական ազդեցութիւն Յորդանանի մէջ եւ արաբական երկիրներէ ճարել այն տարեկան նպաստը զոր կը վճարէ Անգլիա (12·550·000 սթերլին): Եգիպտոս, Սուրիա եւ Արաբիա խոստացած են օգնել: Յետոյ ըսաւ թէ կառավարութիւնը տրամադիր է դիւանադիտական յարաբերութիւններ հաստատելու Մ. Միութեան եւ ուրիշ երկիրներու հետ, թէ իր ջրատարքին քաղաքականութիւնը պիտի հիմնուի Եգիպտոսի, Սուրիոյ եւ Արաբիոյ ուղեդծին վրայ: Այս առթիւ բուռն խօսքեր արտասանեց Մեծն Բրիտանիոյ դէմ, եդիպտոսի վրայ կատարուած յարձակման համար: Ըսաւ թէ 1948 Մարտին կնքուած դաշնագիրը անընդունելի պայմաններ կը պարունակէ: Յետոյ այդ օրէն ի վեր պատահած փոփոխութիւնները «կը պարտադրեն մէկդի նետել այդ դաշնադիրը: Հետեւաբար, համախորհուրդ՝ արաբ եղբայր երկիրներու հետ, որոնք եղմտական օգնութիւն մը ընծայած են մեզի, կառավարութիւնը պիտի չնչէ այդ դաշնագիրը, լուծարքի պիտի ենթարկէ բրիտանական խարիսխները եւ պիտի պահանջէ որ հեռանան անգլիական զինուորները»:

Վարչապետը նախապէս ողջունած էր Եգիպտոսի քաջութիւնը նախայարձակներուն դէմ, ջերմագին շնորհաւորութիւն ներ ուղղելով գնդ. Նասրի, բոլոր սպաներուն եւ զինուորներուն:

× Անգլիացիները օդանաւային կայաններ ունին Մաֆրաքի եւ Ամմանի, հետեւակազօրք եւ հրասայլեր՝ Աքապայի մէջ:

սարքէ իրաքի մէջ, միանդամ ընդ միշտ անհետացնելու համար Արեւմուտքի ազդեցութիւնը աշխարհի այդ մասին մէջ: Այս մտահոդութիւնը սաստկացաւերը հեռագիրը կը հաղորդէր թէ Յորդանան որոշած է խզել իր դաշնագիրը Մեծն Բրիտանիոյ հետ: Բոլոր երեւոյթները կը հաստատեն թէ Մ. Միութիւնը ամէն միջոց կը փորձէ ազդեցութիւն չահելու համար Միջին Արեւելքի մէջ, նոյն իսկ չատ բարձր գնով:

× Սուրիայէն Պաղտատ հասած ճամբորդները կը պատմեն թէ ռուս մասնադէտներու թիւը մեծապէս աւելցած է վերջին ժամանակները: Այժմ Սուրիոյ մէջ կը զործէ եռանդամ «պրեզիդիում» մը, մասնակցութեամբ գնդ. Սարաճի, արտաքին նախարար Սալահ Պիթարի եւ համայնավար երեսփոխան Խալէտ Պեկթաշի: Բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են ընդդիմադիրներուն մէջ: Կալանաւորներուն մէջ կը դտնուին երկու երեսփոխաններ:

× Սուրիական թերթ մը կը պահանջէ արտաքսել Անգլիացիները եւ Ֆրանսացիները, հետեւողութեամբ Եգիպտոսի:

ԵԳԻՊՏՈՍԷՆ արտաքսուած չորս հարիւր Ֆրանսացիներ, Անգլիացիներ եւ Հրեաներ Աթէնք հասան առջի օր: Կը պատմեն թէ թուղթեր ստորագրել տուած են, ըսելով որ իրենց ազատ կամքով կը հեռանան, եւ եթէ վերադառնան պիտի բանտարկուին. — Եգիպտոսի կառավարութիւնը կը յայտարարէ թէ զանգուածային արտաքսումներ կատարելու որոշում չէ տրուած եւ թէ ուղղը կրնայ մեկնիլ կամ մնալ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԵՌՈՒՍ

ԲԱՑԱՌԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ

(ՕՐՈՒՆ ԴԱՒԹԻՒՆ ՄԱՐԴԻՆ)

●

(Բ. եր վերջին մաս)

Ղուկաս որբը Մարգիսին վերադարձնելէ յետոյ, իսկոյն գնաց իր տունը, ուր ամուսինը կը սպասէր իրեն։ Ամուսնոյն տեսնելով՝ ան ալ ուրախացաւ, որովհետեւ ինքն ալ կը կարծէր, թէ Մարգիս մեռած է։ Ղուկաս ամուսնոյն հարցուց, թէ ինչպէ՞ս ազատեցաւ Մարգիս։ Ան ալ պատասխանեց, թէ ինքն ալ չգիտէ, միայն թէ Մարգիս ինքզինքը ազատեց, ինչպէս որ ինքն ալ ազատեցաւ։ Ապա ամուսինը հարցուց, թէ ինչպէ՞ս ինքն ալ ազատեցաւ։ Ղուկաս

ՍԱՍՈՒՆԻ

(ԳԱՍՏՈՒՆՈՒ ՀԱՅԿ, 364 - 400)

Ֆ. ԳԱՐԻ

12.— ՀՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԸ

Գիտու աղբյուրները դարի կոպրի, վերջին ժամանակներս մեծ ուշադրության են դարձնում Հայկ Նահապետի ժամանակաշրջանին, եւ նա ամենահայտնի անձնավորությունն է դարձել ոչ միայն գրականության, այլեւ կինոյի համար, որ նկարահանել է «Հայկ Նահապետ» խորագրով ֆիլմը։ Ֆիլմի ստեղծողները ձգտել են հնարավորինս ճշգրիտ վերարտադրել այդ դարաշրջանի մթնոլորտը։

Օրիորդ Լուսինե Ղազարյանը, որ ստանձնել է Տիրուհու դերը, ասում է, որ ամենադժվարը հագուստն էր։ Նա ասում է, որ ինքը հագուստի մասնագետ չէ, բայց ինչպես ինքն է ասում, «ինչ-որ բան գիտեմ, ինչ-որ բան կարդացել եմ, ինչ-որ բան հետաքրքրվել եմ, ինչ-որ բան հարցրել եմ, ինչ-որ բան նայել եմ, ինչ-որ բան ինձ մոտ կա»։ Ֆիլմի «Տիրուհի» երգում նա ինքն է երգում։ Ինչպես ասում է, ինքը երգում է ոչ թե որպես պրոֆեսիոնալ երգչուհի, այլ որպես դերասանուհի։ Ինքը ոչ մի երգի համար մեկ ամսից ավելի չի փորձել։ Ինքը ասում է, որ ինքն ամեն ինչ անում է, որ ֆիլմը հաջողվի։

Ֆիլմի «Տիրուհի» երգի տեքստի հեղինակ Ռուբեն Մելիքյանը ասում է, որ ինքը ցանկացել է, որ երգի տեքստը լինի ոչ միայն գեղարվեստական, այլեւ պատմական։ Ինք

ՔԱՏԱՐ ԿԱՏՂԵՑԱՒ

★

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Հունգարիոյ խամաճիկ վարչապետը, Քատար անցի օր ճառ մը խօսելով յայտարարեց .— «Ես այն մարդն եմ որ գիտէ թէ վագրը գաւազանով չեն զսպեր, այլ սպաննելով»: Ուրեմն ժամանակը եկած կը նկատէ վճռական հարուած մը տալու ընդդիմադիրներուն եւ հայրենասէրներուն, անշուշտ ապաւինելով Խ. Միութեան գնդացիրներուն եւ հրասայլերուն: Այս առթիւ լուտանքներ թափեց նախորդ վարչապետին՝ Նակիի վրայ, ըսելով թէ ան եւ իր կառավարութիւնը «աններելի ոճիր մը գործեցին հունգար ազգին դէմ, միջոցներ ձեռք չառնելով հակայեղափոխութեան դէմ: Ֆաշական-ները եւ յետադիմականները գործադրուլներ սարքեցին զինեալ դիմադրութեան ձախողումէն ետք: Ես պայքարեցայ Նակիի հետ Մաթիաս Ռաքոցիի դէմ, բայց կապերս խզեցի 1956 Նոյեմբեր 2ին երբ համոզուեցայ թէ իր քաղաքականութիւնը կը վնասէ երկրին եւ կուսակցութեան: Իմրէ Նակի ճառ մը խօսեցաւ Նոյեմբեր չորսին եւ տասը վայրկեան ետք փախչելով հայրենի երկրէն կ'ապաստանէր Եուկոսլաւիոյ դեսպանատունը: Ուրեմն լքեց ոչ միայն իր երկիրը եւ կուսակցութիւնը, այլեւ բուն իսկ ժողովուրդը: Յետոյ իմ կառավարութեանս դիմեց, վերջնապէս երկրէն հեռանալու եւ Ռումանիա հաստատուելու համար: Թէեւ ոճիրներ գործած է հայրենիքին եւ կուսակցութեան դէմ, սակայն թոյլ տուինք որ մեկնի: Այդ մարդը դարձաւ խամաճիկը հակայեղափոխականներուն»:

Անդրադառնալով բանուորական պահանջներուն, ըսաւ թէ «կարելի չէ նկատի առնել զանոնք, աշխատանքի վերսկսումէն եւ բարեկարգութեան վերահաստատումէն առաջ»: Յետոյ ակնարկելով Ազգաժողովին կատարուած դիմումներուն, ըսաւ թէ «ներքին խնդիրներ են հունգարական գործերը, նոյն իսկ խորհրդ. զօրքի մեկնումը: Չենք ուզեր որ ուեւէ մէկը խառնուի մեր գործերուն: Խորհրդային զօրքը օրինապէս կանչուած է պայքարելու համար հակայեղափոխութեան դէմ»:

Այս ճառէն անմիջապէս վերջ զանգուածային ձերբակալութիւններ կատարուած են ամբողջ Հունգարիոյ մէջ: Կ'ըսուի թէ Ռուսերը ձերբակալած են նաեւ 600 հոգինոց պահակազօրք մը Աւստրիոյ սահմանին մօտ, այն ամբաստանութեամբ թէ կը դիւրացնէին փախուստները:

Բանուորական խորհուրդը կը յայտարարէ թէ տեղի պիտի չտան եւ թէ ի վերջոյ պիտի յաղթեն:

× Հնդկաստանի վարչապետը հեռագիր մը ուղղեց Քատարի, առաջարկելով ընդունիլ Ազգաժողովին ներկայացուցիչները, կարելի եղածին չափ շուտ ...

× Հունգարիոյ ներքին նախարարը կը խոստովանի թէ վեց վակոն լեցուն աքսորականներ մեկնած են երկրէն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱԶԳ. ԺՈՂՈՎԸ 9ի դէմ 52 ձայնով որոշեց տասը միլիոն տոլարի վարկ մը բանալ միջազգային զօրագունդին համար: Ձեռնպահ մնացին 13 երկիրներ:— Վիճաբանութեանց ընթացքին Եգիպտոսի արտաքին նախարարը պահանջեց միջոցներ ձեռք առնել Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իսրայէլի դէմ, եթէ վերջնապէս չյայտնեն թէ ե՛րբ պիտի պարպեն իրենց զինուորները: Իր կարծիքով, Ֆրանսա եւ Անգլիա կը տեղաւորեն իրենց ուժերը Սուէզի շրջանին մէջ, զանոնք պարպել ձեւացնելով:

ԱԶԳ. ԺՈՂՈՎԸ վերջնապէս վաւերացուց վարձակալութեանց օրէնքը: Մասնաւոր յօդուածի մը տրամադրութեամբ, արգիլուած է որեւէ վարձակալ դուրս հանել ամէն տարուան դեկտ. 1էն մինչեւ Մարտ 15:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ թիւը 85.000ի հասած է Հունգարիոյ մէջ: Քսան փախստականներ սպաննուած են սահմանագլուխին վրայ, ռուս պահակներու կողմէ:

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ, Փինօ, ճառ մը խօսելով ծերակոյտին մէջ, յայտարարեց թէ «աւելի քան երբեք անհրաժեշտ է կերտել միացեալ Եւրոպան, նկատի առնելով խորհրդային վտանգը եւ ամերիկեան անտարբերութիւնը»:

ԽՆՋՈՅՔ ԻՍԻԻ ՄԷՋ

Դաշնակցութեան Օրուան առթիւ կիրակի, 2 Դեկտեմբեր:

Խրիմեան սրահը ժամը 15ին:

Խօսք կ'առնեն ընկերներ ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ եւ ՊԵՏՐՈՍ ԶՊՈՒՔՃԵԱՆ:

Գեղարուեստական բաժինին կը մասնակցին Տիկին Շաքէ Գալայճեան, Պ. Նշան Զիմէճեան, Օր. Քէշիշեան (արտասանութիւն), Պ. Սէյրան (թառ) եւ ուրիշներ:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է:

ԹԷՅԱՍԵՂԱՆ

Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղի թէյասեղանը այս շաբաթ, կէս օրէ ետք ժամը 3 – 7, Սասունիի ճաշարանը: 31 ռիւ տ'Ալէքսանտրի:

Սիրով կը հրաւիրուին Փարիզի եւ շրջաններու ընկերները, ընկերուհիները եւ համակիրները, ինչպէս նաեւ մամուլի ներկայացուցիչները:

ԽՆՋՈՅՔ ՎԻԷՆԻ ՄԷՋ

× Հ. Յ. Դ. Նոր Սերունդի խնջոյք պարահանդէսը ի նպաստ «Հայաստան» թերթին, այս կիրակի ժամը 3էն 10, Համօ Օհանջանեան ակումբը:

Կը հրաւիրուին շրջանի բոլոր նոր անդամները եւ համակիրները: Խմբերգ, արտասանութիւն, երգ, հայկական պար եւ անակնկալներ: Ճոխ պիւֆէ:

ՅՈԲԵԼԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ Ի

Սալ Շոփէն (Փլէյէլ), Դեկտեմբեր 1

Շաբաթ գիշեր, ժամը 8.30ին

Նախաձեռնութեամբ Հայ Գրողներու Ընկերութեան եւ մասնակցութեամբ Մշակութային Միութեան եւ Համազգային Ընկերութեան եւ Ֆրանսահայ Լսարանին:

Հովանաւորութեամբ՝ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ:

Գրական ու գեղարուեստական ճոխ բաժին:

Կը խօսին Տիկին Պահրի (նախագահ), Տիկին Գարմէն, Տիկին Մառի Աթմաճեան, Յակոբ Տէր – Յակոբեան եւ Հր. Բալուեան:

Գեղարուեստական բաժինը նորութիւն մը կը բերէ փարիզահայ բեմին: Օր. Գոհարիկ Ղազարոսեան կը նուագէ՝ ընկերակցութեամբ Անիթա Սարգսեանի արտասանութեան, յոբելեարին երկու քերթուածները: Կ'երգէ Տիկին Արուսեակ Ալպան: Թաւջութակ Պ. Նահապետ Ալալէմճեան: Ընթերցում՝ Պ. Տէվրիշեան:

Մուտքը 200 Ֆր. եւ պատւոյ տոմս:

Տոմսերը կը ծախուին Բալուեան եւ Պարսամեան գրատունները եւ կիչէն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Յակոբ Սէմէրճեան եւ զաւակը Արամիկ կը յայտնեն թէ այս կիրակի, յետ պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հօր ողբացեալ՝

ՅԱԿՈԲ ՍԷՄԷՐՃԵԱՆի (Ֆէպիւս)

մահուան Ա. տարելիցին առթիւ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները:

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Ամանոյ Հայր. Միութեան: 1 Դեկտեմբեր, շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս, Սալոն Ալամպրայի մէջ, 340 Պուլվ. Շաւ:

Պատուակալ նախագահութեամբ բանաստեղծ ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹի:

Գեղեցիկ աչքերու մրցում, ընտրուած թեկնածուհին կը ստանայ արժէքաւոր նուէր մը:

Գեղարուեստական ճոխ բաժին:

Սիւզան Հիւպէր (երգ), Ժօ Ալպան:

Ընտանեկան մթնոլորտ եւ հաճելի անակնկալներ: Նուագախումբ ՆԻՔ ՖՐԱՆՔ:

Սեղանները թուագրուած ըլլալով, այժմէն ապահովել Միութեանս անդամներէն, Տիկին Արփինէ Մորճիկեան, Շէ Վէթէր, 34 ռիւ Թափի Վէր:

Պ. Յար. Չէքէմեան, 12 ռիւ տը լ'Արք. հեռ. Փրատօ 78-61:

Պ. Տիգրան Զորիկեան, 5 Ավընիւ Քամիյ Փէլըթան:

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Նուիրուած ՇԱՀԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆի յիշատակին:

Նախաձեռնութեամբ «Անդաստան» գրական պարբերականի:

Այս երկուշաբթի երեկոյ ժամը 8.30ին, Միւթիւալիթէի Ժ. սրահին մէջ՝

Գեղարուեստական խնամուած բաժին:

Ծախքերու մասնակցութիւն:

ՀՐԱՒԷՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Հ. Յ. Դ. Ուս. Միութեան վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին:

ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ ՕՐԱԿԱՐԳ:

Բոլորին ներկայութիւնը պարտաւորիչ:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՉԱՓԱՀԱՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Կը կազմակերպեն

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ազգ. Տան մէջ, 32 ռիւ տը Թրէվիզ

Պիտի ներկայացնեն

«ԱՆՈՒՇ»ը (Տիգրանեանի)

Ձայնագրուած Երեւանի Օփերայի արուեստագէտներու կողմէ:

Այս Շաբաթ ժամը 20.30ին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՏԷՍԻՆ.— Տէր եւ Տիկին Արապեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք իրենց ցաւակցութիւնը յայտնեցին իրենց զաւկին Մարիճէ Միւրաքի (ծնեալ Արապեան) մահուան առթիւ, անձամբ կամ գրաւոր:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Րաֆֆի խումբի ժողովը այս ուրբաթ երեկոյ, ժամը 8.30ին, Ռէժանի վերնայարկը: Պարտաւորիչ ներկայութիւն:

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ.—

Զաւարեան ենթկ. շաբաթ 1 Դեկտ. ժամը 9ին:

Վռամեան ենթկ. շաբաթ, մէկ Դեկտեմբեր, ժամը 9ին:

Նիկոլ Դուման ենթկ. կիրակի, 2 Դեկտ. ժամը 3.30ին:

Սոյն ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ: Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կ. ներկայացուցիչը:

(Շար.)

ԼԻՈՆ.— Հ. Յ. Դ. «Վարանդեան» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր ընկերները այս ուրբաթ իրիկուն ժամը 21-ին, Յոյներու սրահը: Կարեւոր օրակարգ:

ԿՐԸՆՈՊԼԸ.— Հ. Յ. Դ. Եօթնեղբայրեան կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս շաբաթ, ժամը 20.30ին, ծանօթ հաւաքատեղին: Խիստ կարեւոր օրակարգ: Անհրաժեշտ է բոլորին ներկայութիւնը:

ՄԱՐՍԷՅԼ.— Քրիստափոր ենթակոմիտէի ընդհ. ժողովը այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին: Պարտաւորիչ ներկայութիւն: Կը խնդրուի ճշդապահ ըլլալ:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Տիկին Մավեան իր թոռնիկին՝ Անահիտի Բ. տարելիցին առթիւ երկու հազար ֆրանք կը նուիրէ Հայ Մշակոյթի Տան:

ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Կիրակի, 16 Դեկտ. ժամը 4ին

AMBASSADEURS

3, Avenue Gabriel (Champs-Elysées)

ՀՌՉԱԿԱՒՈՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ BACHICHA

Մուտք 500 ֆրանք

Սեղանները կանխաւ ապահովել

CEN. 36-23

ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՅԱՆՁ.ԽՄԲԻ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ՇԱԲԱԹ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ: ԺԱՄԸ 21ԷՆ ՄԻՆՉԵՒ ԼՈՅՍ

Նախագահութեամբ՝ Պ. ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆԻ

CASINO DE CHARBONNIERES

Մասնակցութեամբ գաւառի ամէնէն ընտիր նուագախումբին՝

MAURICE DE THOU et LEO MELIAN — de la R. T. F.

Գեղարուեստական ճոխ բաժին: Բազմաթիւ անակնկալներ

Կը յանձնարարուի կանխաւ ապահովել սեղանները, հեռաձայնելով.—

Autos-cars — Place Bellecour

Burdeau 54-03

Մութ գոյն զգեստը նախընտրելի է

ARSONOR - RADIO

ARABYAN NOUBAR

3, Rue de Mirbel, Paris (5e)

(101 Rue Monge) Métro Censier Daubenton

TEL. : 78-77



Ուր պիտի գտնէք հանրածանօթ բոլոր

ՄԱՐՔԵՐԸ կրող

ՌԱՏԻՈՅԻ ԵՒ ԹԵԼԵՎԻԶԻՈՆԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՅ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐՋ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE
HARATCH
Le Directeur : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise, Paris-9e
C.C.P. Paris 1678-63 R.C. Seine 376.286
Fondé en 1925 Tél. : PRO 86-60

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա և գաղութ.մր, տարեկան 3000 ֆր., վեցամս. 1600
Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ 30 ՆՈՅԵՄԲԵՐ
VENDREDI 30 NOVEMBRE 1956

31ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7745 32e ANNEE
Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ
ՆՈՐ ՇՐՋԱՆ, 12ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3556

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ԶԱՐԱՇՈՒՔ ՀԱՐՑԱԿԱՆԸ

★

Օրուան դէպքերը այնքան պերճախօս են որ մեկնութեան չեն կարօտիր :

Մէկ խօսքով, Միջին Արեւելքն ալ աս - պարէզ կը կարդայ արեւմտեան Եւրոպա-յի, եւ խրած է պայքարի մը մէջ որ կրնայ ճակատագրական հետեւանքներ ունենալ բոլորին համար :

Երեւութապէս, այդ պայքարը կը մղուի յանուն անկախութեան եւ գերիշխա - նութեան :

Եւ սակայն, պղտոր հոսանքներ ալ պակաս չեն :

Արեւմուտքի ազդեցութիւնը թօթափած ատեն, տակաւին երէկ անկախութեան տիրացած երկիրներ մեքենաբար ճամբան կը հարթեն ուրիշ օտար տիրապետու - թեան մը համար :

Մանաւանդ որ, ճեղքեր բացուած են, նաեւ, ներքին ճակատի վրայ :

Ասպարէզ նետուած երկիրները ամէն բանէ առաջ ներքին եւ արտաքին խաղա - ղութեան կը կարօտին, իրենց պետական կազմը եւ քաղաքական ու տնտեսական դիրքը զօրացնելու համար :

Միջին Արեւելքի ժողովուրդներուն ի - րական բարեկամները մտահոգութեամբ կը դիտեն այն սուր հակամարտութիւնը որ կը տիրէ ցեղակից դրացիներու միջեւ :

Միշտ օտարն է որ պիտի օգտուի, օրինակ, երբ արաբական Սուրիան եւ Իրաքը ճակատ մը յարդարեն, փոխադարձաբար :

Ինչ որ տեղի կ'ունենայ Դամասկոսի մէջ, Խ. Միութեան գործօն աջակցու - թեամբ, կրնայ պատրուակ ծառայել այ - լայէս վտանգաւոր միջամտութեանց :

Գաղտնիք չէ որ Պաղտատի դաշինքին գլխաւոր անդամները, Անգլիա եւ Թուրքիա, լարուած ուշադրութեամբ կը հե - տեւին անցուդարձին :

Ինչպէս միշտ, այս անգամ ալ ազդե - ցութեան պայքարը կրնայ այլասերիլ եւ դառն անակնկալներ պատճառել, անխնայ մանելով փոքր եւ անճար երկիրները :

Արաբական պետութիւնները տակաւին այնքան զօրացած չեն, որպէսզի կարենան տոկալ ներքին եւ արտաքին ցնցումներու :

Այսօրուան խարուսիկ խայծերը չեն կրնար հաստատուն երաշխիքներ կազմել վաղուան համար :

Անհաւասիկ վաւերական եւ կենդանի փաստ մը եւս, արիւնաթաթախ Հունգա - րիան, Եւրոպայի սրտին վրայ :

Դաւադիր ուժեր կը հսկեն արաբական աշխարհին անմիջական սահմաններուն վրայ, միշտ պատրաստ՝ կռնակէն հար - ուածելու :

Միջին Արեւելքը չի կրնար ապահովել իր անկախութիւնն ու գերիշխանութիւնը, թէ անհատապէս եւ թէ հաւաքաբար, այրելով բոլոր կամուրջները Արեւմուտ - քի հետ :

Իր ճակատագիրը սերտօրէն կապուած է Միջերկրականի հետ, ինչպէս աշխար - հագրութեամբ, նոյնպէս քաղաքակր - թութեամբ :

Նորէն կը դառնանք չարաշուք հարցա - կանի մը առջեւ :

Մեծերը իրենց հաշիւներն ունին : Փոքրերուն կը մնայ արթուն կենալ եւ իրենց տունը կարգի դնել, որպէս զի չդառնան կռուախնձոր, ի հաշիւ հեռաւոր սուր - բերու :

Կացութիւնը կը պահանջէ որ մեր տա - րագիր բազմութիւններն ալ ամփոփուին եւ իրենց ապահովութեան մասին մտա - ծեն լրջօրէն :

Աւելի քան երբեք խուսափիլ որեւէ ա - բարքէ որ կրնայ թիւրիմացութիւններ պատճառել :

Անհրաժեշտ է բացառիկ ճիգ մը փոր - ձել, դարմանելու համար այն բարոյա - կան եւ նիւթական աւերները որ գործուեցան տարուան ընթացքին, ամբոխավա - րական մարզանքներով : Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՎՏԱՆԳԱՒՈՐ ԿԸ ՍԵՊԵՆ ՍՈՒՐԻՈՅ ՎԵՐԱԶԻՆՈՒՄԸ

★

ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԹՈՒՐՔԻՈՅ

Մ. Նահանգներու արտաքին նախարա - րութիւնը Նոյեմբեր 28ին ազդարարեց թէ Խ. Միութիւնը կը ծանրացնէ յարաբերութեանց լարումը Միջին Արեւելքի մէջ, զէնք ղրկելով Սուրիոյ : Այս առթիւ հաստատուեցաւ թէ Դամասկոսի ամերիկեան դեսպանը, Մուզ, իր կառավարութեան մտահոգութիւնը յայտնած է Սուրիոյ : Արտաքին նախարարութեան մամուլի վերատեսուչը յայտարարեց .— «Մենք գիտենք որ կարեւոր քանակութեամբ խոր - հրդային զէնքեր ղրկուած են Սուրիա վերջին ամիսներու ընթացքին, զանազան տեսակներով եւ չափերով : Կ'իմանանք թէ Միջին Արեւելքի տագնապէն ի վեր ուրիշ առաքումներ ալ կատարուած են : Այս ձեռնարկը երբեք չի կրնար օգնել Ազգա - ժողովի աշխատանքին՝ յարաբերութիւն - ները բարւոքելու եւ վերջնական կարգա - դրութեան մը յանգելու համար» :

Վերատեսուչը հարցումի մը առթիւ ը - սաւ թէ չի գիտեր ինչ տեսակ եւ ինչ քանակութեամբ զէնքեր ղրկուած են Սու - րիա : Բայց հաստատեց թէ 30.000.000 տոլար արժողութեամբ գնումթերք յանձնուած է, մէջն ըլլալով թեթեւ հրասայլեր, զրահապատ կառքեր, գնդացիրներ, թնդանօթներ եւ ուրիշ թեթեւ զէնքեր : Դամասկոսի ամերիկեան դեսպանը թելադրած է սուրիական կառավարութեան աջակցիլ Ազգաժողովին խաղաղասիրական ջանքերուն, մեղմացնելու համար յարա - բերութիւնները : Ուրիշ հարցումի մը եւս պատասխանելով, վերատեսուչը ըսաւ թէ Սուրիոյ եւ Իրաքի յարաբերութեանց լարման պատասխանատուն Իրաքը չէ : Եւ հաստատեց թէ Իրաքի կառավարութիւնը զէնք խնդրած է Մ. Նահանգներէն :

Հեռագրի մը համաձայն, Սուրիոյ վարչապետը, Սապրի Ասալի, յայտարարած է թէ «բոլորովին անհիմն է» ամերիկեան վերատեսուչին յայտարարութիւնը խոր - հրդային զէնքերու առաքման մասին ...

× Եգիպտոսի նախկին նախարարներէն Անուար Սատաթ յօդուած մը հրատարա - կելով կառավարական թերթին՝ «Ալ Կումհուրիյա»յի մէջ, կ'ըսէ թէ Թուրքիա պատրաստութիւններ կը տեսնէ Սուրիոյ վրայ յարձակելու համար : Այս առթիւ կ'ազդարարէ .— Եթէ Թուրքիա գործադրէ այդպիսի ծրագիր մը, պատերազմի պիտի բռնուի Խ. Միութեան հետ :

Այս շաբթու Անգարայի ռատիօն կ'ամ - բաստանէր Սուրիան թէ զէնքեր կը ստա - նայ Խ. Միութենէն, թէ զինուորներ կը համախմբէ Լիբանանի սահմանին վրայ եւ թէ սուրիացի եւ եգիպտացի գործակալ - ներ կը փորձեն խռովութիւններ յարուցա - նել Լիբանանի եւ Սուրիոյ մէջ :

× Խ. Միութեան արտաքին նախարա - րը, Շեպիլովնիւ Եորքէն վերադարձած ատեն Քոփենհակ հանդիպելով յայտարա - րեց թէ վաւերագիրներ ունի որոնց հա - մաձայն Ֆրանսա, Անգլիա եւ Իսրայէլ կ'ուզեն յարձակիլ Սուրիոյ, Լիբանանի եւ Միջին Արեւելքի ուրիշ երկիրներու վը - րայ, Եգիպտոսը հպատակեցնելու հա - մար : Եւ աւելցուց .— «Գիտենք նաեւ որ զինուորական մեծ համախմբումներ տեղի կ'ունենան Յորդանանի եւ Սուրիոյ սահ - մաններուն մօտ եւ քաղաքական թափան - ցում կը կատարուի Լիբանանի մէջ : Խ. Միութիւնը վճռած է պաշտպանել աշ - խարհի խաղաղութիւնը » :

Շեշտելով յայտարարեց նաեւ թէ «պարզ ռազմախաղ են» Ֆրանսայի, Անգլիոյ եւ Իսրայէլի հաւաստիքները՝ իրենց զօրքերը Եգիպտոսէն քաշելու մասին :

× Ամերիկեան թերթերը կը գրեն թէ խորհրդակցութիւններ կը կատարուին Մ. Նահանգներուն եւ Մեծն Բրիտանիոյ մի - ջեւ, նկատելով որ Սուրիոյ եւ Իրաքի միջեւ ծագած վէճը կրնայ նոր փոթորիկ մը յարուցանել Միջին Արեւելքի մէջ :

× Բանաձեւ մը յանձնուեցաւ Լիբանա - նի երեսփ. ժողովին, առաջարկելով ամէն միջոց ձեռք առնել, որպէսզի Միջին Արեւելքը երկրորդ Քորէա մը չդառնայ :

ԵԳԻՊՏՈՍ ՄԻՇՏ ԱՆՀԱՇՏ

★

ՆՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԿԱՑՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Եգիպտոսի կառավարութիւնը յայտա - րարութիւն մը հրատարակեց որով կ'ամ - բաստանէ Անգլիացիները եւ Ֆրանսացի - ները թէ մեղսակից են Իսրայէլի կողմէ Եգիպտոսի դէմ կատարուած յարձակման համար : Միեւնոյն ատեն կ'ազդարարէ թէ թշնամութիւնները կրնան վերսկսիլ, քանի որ Անգլիա, Ֆրանսա եւ Իսրայէլ կը մերժեն պարպել եգիպտական հողը : «Եգիպտոս չի կրնար իր անկախութիւնը զոհել աշխարհի խաղաղութիւնը պահպանելու համար » :

Եգիպտոսի պատերազմական նախարա - րը եւ սպարապետը, զօր. Ամիր յայտա - րարեց թէ չեն կրնար թոյլ տալ անգլիական, ֆրանսական եւ իսրայէլեան զին - ուորներու ներկայութիւնը իրենց հողին վրայ : «Ճակատամարտը վերջացած չէ տակաւին և մենք երբեք չենք կրնար հանդուրժել ներկայ կացութեան : Սրբազան պարտականութիւն մըն է պատրաստուիլ ճակատամարտին համար : Այս անգամ մե'նք պիտի որոշենք ճակատամարտին հանգամանքները եւ ոչ թէ նախայար - ձակները, ինչպէս ըրին դաւ մը սարքելով Իսրայէլի հետ, Սինայի մեր զօրքը ոչըն - չացնելու եւ Սուէզի ջրանցքը գրաւելու համար : Այս անգամ պիտի կռուինք եւ պիտի մեռնինք մեր հանրապետութիւնը պաշտպանելու համար» : Այս առթիւ հեղնեց Անգլիան եւ Ֆրանսան, — «Երկու կարծեցեալ մեծ պետութիւններ որոնք չկրցան առանձին ճակատիլ մեզի դէմ » :

× Պաղտատէն հասած լուրերու համա - ձայն Սուրիոյ սովետասէր տարրերը կը տիրապետեն կառավարութեան վրայ, անզօրութեան դատապարտելով վարչապետը եւ նախագահը : «Օր չանցնիր որ նոր մասնագէտներ կամ խորհրդականներ չհասնին Խ. Միութենէն : Անոնք են որ կը հսկեն նոր օդակայաններու եւ ամրու - թեանց վրայ երկրին զանազան մա - սերուն մէջ : Դարձեալ անոնք են որ կը վարեն քարոզութիւնը՝ Իրաքի ժողովուրդը Նուրի Սայիտի դահլիճին դէմ հանելու համար : Կարգ մը շրջանակներու կարծիքով շատ չանցած ուղղակի թշնամու - թիւններ կրնան ծագիլ Սուրիոյ եւ Իրաքի միջեւ : Ընդհարման աւիթ կրնայ ծառա - յել Յորդանանի նոր կացութիւնը : Ատենէ մը ի վեր սուրիական երկու զօրաբաժին - ներ ռազմագիտական դիրքեր գրաւած են հիւսիսային Յորդանանի մէջ, ի նախա - տեսութիւն իսրայէլեան յարձակումի մը : Իրենց դիմացը կը գտնուի բրիտանական օդատորմիղ մը Մաֆրաքի մէջ : Կ'ըսուի թէ իրաքեան ուժեր համախմբուած են Սուրիոյ սահմանագլուխին երկայնքը, դէպի Ճէպէլը Տրիւզ տանող ճամբուն վը - րայ (այստեղ կը համախմբուին ընդդի - մադիրները) ; Կացութիւնը աւելի բարդա - ցած է այժմ, քանի որ Յորդանանի վար - չապետը յայտարարեց թէ պիտի խզէ Անգլիոյ հետ կնքուած դաշնագիրը : Կլեպ փաշայի կարծիքով, արաբական երկիր - ները չեն կրնար վճարել Անգլիոյ կողմէ Յորդանանի տրամադրուած տարեկան գումարը, աւելի քան 12 միլիոն սթերլին : Այն ատեն Յորդանան պիտի ստիպուի դիմել Մոսկուայի : Արդ, Իրաք երբեք չի կրնար թոյլ տալ որ սովետական ամ - րոց մը հաստատեն իր արեւմտեան սահ - մաններուն վրայ : Ուրիշ խօսքով, ան - խուսափելի կը համարուի զինեալ միջա - մտութիւն մը Յորդանանի դէմ :

ՖՐԱՆՍԱ, ԱՆԳԼԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

*

Բոլոր տեղեկութիւնները կը կը հաս - տատեն թէ յարաբերութիւնները պաղած են արեւմտեան երեք պետութեանց մի - ջեւ, իբրեւ հետեւանք Մ. Նահանգներու բռնած դիրքին : Անգլիոյ արտաքին նա - խարարը, Ս. Լոյտ, Լոնտոն վերադառնալով, յայտարարեց թէ «սուր տարակար - ծութիւն մը կը տիրէ Մ. Նահանգներուն հետ՝ Միջին Արեւելքի խնդիրներուն կարգադրութեան մասին» : Նախագահ Այզըն - հաուըրի վերջին բարեկամական հաւաս - տիքն ալ պաղ ընդունելութեան արժանա - ցաւ :

Կը յիշուի թէ Ֆրանսայի արտաքին նա - խարարն ալ քննադատած էր Մ. Նահանգ - ներուն անտարբերութիւնը : Փարիզի ա - մերիկեան դեսպանը Ուոշինկթըն մեկնե - ցաւ եւ պիտի մնայ մէկ շաբաթ, խորհըր - դակցելու համար :

Կը թուի թէ Ամերիկացիներն ալ ըմբռ - նած են իրենց երկու դաշնակիցներուն դառնութիւնը : Արտաքին նախարարը, Տըլըս, հիւանդութենէն ապաքինած ըլլալով, Փարիզ պիտի գայ Դեկտ. 8ին :

Այզընհաուըրի քարտուղարը լրագրա - կան ասուլիս մը սարքելով, յայտարարեց թէ յարաբերութիւնները մեծապէս բար - ւոքած են վերջին երկու երեք շաբաթնե - րու ընթացքին :

Անգլիոյ փոխ - վարչապետը, Պըթլըր ընդունելով հանդերձ անգլօ-ամերիկեան մերձեցման անհրաժեշտութիւնը, աւելի անկախ քաղաքականութիւն մը կը պա - հանջէ Մ. Նահանգներուն հանդէպ : «Մեզի դէմ գործելով Մ. Նահանգները կրնան վարկ շահիլ ուրիշ տեղ, բայց կը կոր - սնցնեն մեր վստահութիւնը » : Այս առ - թիւ ըսաւ թէ չեն կրնար իրենց զինուոր - ները Եգիպտոսէն քաշել անմիջապէս և ա - ռանց պայմանի :

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

Արժանահաւատ աղբիւրէ մը կը հա - ւաստեն թէ Խ. Միութեան ծանօթ վարիչներէն Մալենկով Փեշթա կը գտնուի Նոյ. 23էն ի վեր եւ թէ ան է որ համոզած է Քատարը՝ մեկղի դնել հաշտարար քա - ղաքականութիւնը :

Ձերբակալութիւնները եւ աքսորները կը շարունակուին անընդհատ : Վարչապետը խնդրեց աւստրիական կառավարութենէն վերադարձնել այն հունգար երիտասարդ - ները որոնք փախած էին, «վախնալով փաշական ահաբեկիչներէն» : Քանի մը հազար կը հաշուէ այս երիտա - սարդները, 18 տարեկանէն վար եւ կը խոստանայ ընդհ. ներում շնորհել փա - խստականներուն :

× Ազգաժողովին Քուպայի պատուի - րակութիւնը պահանջեց ընդհ. ժողովէն վտարել Հունգարիոյ պատուիրակնե - րը, եթէ Փեշթա չհաւանի ընդունիլ ՄԱԿի ներկայացուցիչները :

ՀՐԵԱՆԵՐԸ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՐԵՆ

Իսրայէլի խորհրդարանը երկրորդ ան - գամ ստիպողական նիստ գումարելով, քննեց Եգիպտոսի 30.000 Հրեաներուն կացութիւնը : Կը վախցուի որ արտաք - սուին Եգիպտոսէն : Այս առթիւ բանաձեւ մը քուէարկուեցաւ, որով կը պահանջուի Ազգաժողովէն եւ մեծ պետութիւններէն անմիջապէս միջոցներ ձեռք առնել, ա - զատելու համար անոնք որ արգելափակ - ուած են : Արտաքին նախարարը, Տիկին Կոլտա Մէյր կարդաց Ազգաժողովին ուղղած հեռագիրը, որ կը խնդրէ անմիջա - պէս միջամտել :

Վարչապետը յայտարարեց թէ իրենք փոխադարձ միջոցներ ձեռք պիտի չառնեն Իսրայէլի Արաբներուն դէմ :

× Եգիպտոսէն հասած Ֆրանսացիներ կը հաստատեն թէ տնտեսական տագնապը հետզհետէ կը ծանրանայ : Առջի օր Ս. -

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԽՈՍԱՍՏԱՆԸ

ՀԱՅՈՑ ՊԵՏ ԻՆՉ ԲԱՆ ԲՈՒՆ ՀԱՍԱՎ

ՂՈՇՅԱՆՑ ՎԿՈՍ

(Վէպ ՂՈՇՅԱՆՑ ՎՀՈՎՀԱՆՆԵՍԻ)

Մեր ներկայացրած հատվածում Ղոշյանց Վկոսը հանդիպում է իր հին ծանոթ Ղազարոս Ղազարյանին, որը նրան հրավիրում է իր տուն: Ղազարոսի տանը Վկոսը հանդիպում է նաև նրա կնոջ՝ Մարիամի հետ: Ղազարոսը պատմում է, որ իր որդին՝ Գրիգորը, ուսանող է եղել, սակայն ձերբակալվել է և ուղարկվել աքսորավայր: Մարիամը լուռ լսում է ամուսնու խոսքերը, իսկ Վկոսը մտածում է, թե ինչպես կարելի է օգնել Գրիգորին:

Ղազարոսը հիշում է, որ Գրիգորը մանկուց սիրել է գրքեր կարդալ և միշտ ազատության մասին երազել: Նա հարցնում է Վկոսին, թե արդյոք հնարավոր է որևէ միջոց գտնել որդուն վերադարձնելու համար: Վկոսը պատասխանում է, որ կփորձի դիմել իր ծանոթներին, սակայն չի խոստանում հեշտ լուծում:

Մարիամը, որ մինչ այդ լուռ էր, հանկարծ ասում է, որ երազել է Գրիգորին՝ ազատ թռչող թռչունի պես: Այդ երազը բոլորին ուրախացնում է, և նրանք որոշում են հավատալ, որ լավ նշան է:

Վկոսը հրաժեշտ է տալիս տանտերերից՝ խոստանալով շուտով նորություններ բերել: Դուրս գալով տնից՝ նա մտածում է, որ գործը դժվար է, բայց ինքը չի կարող հանձնվել:

Հաջորդ օրը Վկոսը այցելում է իր հին ընկեր Սարգիս Թորոսյանին, որը նախկինում զբաղեցրել է բարձր պաշտոն: Սարգիսը սկզբում զգուշավոր է, սակայն հետո համաձայնում է օգնել՝ ասելով, որ կարող է դիմել իր կապերին:

Վկոսը վերադառնում է Ղազարոսի տուն և պատմում նրանց, որ հույս կա: Մարիամը շնորհակալություն է հայտնում նրան՝ ասելով, որ Աստված չի մոռացել իրենց:

Գիշերը Վկոսը մնում է Ղազարոսների տանը: Նա չի կարողանում քնել՝ մտածելով Գրիգորի մասին: Նրան թվում է, թե լսում է երիտասարդի ծիծաղը, և հասկանում է, որ պետք է անել ամեն ինչ՝ նրան ազատելու համար:

Առավոտյան Վկոսը վերադառնում է քաղաք՝ որոշելով այցելել Սարգիսին կրկին: Ճանապարհին նա հանդիպում է հին ծանոթ Արամ Մելիքյանին, որը նրան հրավիրում է սուրճ խմելու: Արամը հետաքրքրվում է Վկոսի գործերով, և Վկոսը որոշում է նրան ևս ներգրավել՝ հուսալով, որ նա կարող է օգտակար լինել:

Արամը խոստանում է օգնել և տալ մի քանի հեռախոսահամար, որոնք կարող են պետք գալ: Վկոսը շնորհակալություն է հայտնում և շարունակում իր ճանապարհը՝ զգալով, որ գործերը սկսում են շարժվել առաջ:

Երեկոյան Վկոսը վերադառնում է Ղազարոսների տուն և պատմում նրանց այդ մասին: Մարիամը լսում է նրան՝ ձեռքերը ծալած, իսկ Ղազարոսը հարցնում է, թե արդյոք վտանգավոր չի լինի Վկոսի համար: Վկոսը պատասխանում է, որ ամեն ինչ կանի զգուշությամբ:

Գիշերը Վկոսը նորից չի կարողանում քնել: Նա մտածում է, որ կյանքում երբեմն անհրաժեշտ է ռիսկի դիմել՝ հանուն ուրիշների: Նա հիշում է իր երիտասարդությունը, երբ ինքն էլ շատերի օգնությամբ կարողացավ հաջողության հասնել:

Առավոտյան Վկոսը զանգահարում է Սարգիսին, որը խոստանում է հանդիպել նրա հետ կեսօրին: Վկոսը որոշում է այդ ընթացքում գնալ Ղազարոսների տուն՝ նրանց հանգստացնելու համար:

Ղազարոսների տանը Վկոսը հանդիպում է Մարիամին, որը նրան հյուրասիրում է թեյով: Նրանք խոսում են Գրիգորի մասին, և Մարիամը ասում է, որ որդին միշտ եղել է ազատասեր և չի կարողացել հարմարվել ստրկական կյանքին: Վկոսը հիանում է նրա խոհեմությամբ և ուժով:

Ղազարոսը վերադառնում է աշխատանքից և միանում է նրանց: Նա ասում է, որ լսել է Գրիգորի մասին որոշ լուրեր, և որ նա գտնվում է Սիբիրի մի հեռավոր շրջանում: Վկոսը հարցնում է, թե արդյոք հնարավոր է նրան ազատել, և Ղազարոսը պատասխանում է, որ դա շատ դժվար է, բայց ոչ անհնար:

Վկոսը հեռանում է տնից՝ խոստանալով վաղը նորից գալ: Նա գնում է Սարգիսի մոտ, որը նրան տեղեկացնում է, որ կարող է օգնել՝ միայն եթե Վկոսը պատրաստ լինի մեծ գումար վճարել: Վկոսը համաձայնում է, չնայած գիտի, որ դա նշանակում է իր խնայողությունների մեծ մասի սպառում:

Երեկոյան Վկոսը վերադառնում է տուն և պատմում Մարիամին ու Ղազարոսին, որ հնարավորություն կա: Նրանք շնորհակալություն են հայտնում նրան, սակայն Վկոսը ասում է, որ դեռ վաղ է ուրախանալ, քանի որ ամեն ինչ կախված է Սարգիսի հաջողությունից:

Գիշերը Վկոսը կրկին չի կարողանում քնել: Նա մտածում է, որ եթե Գրիգորը ազատվի, ապա նրանք կկարողանան նորից միասին լինել: Նա հիշում է իր կնոջը՝ Աննային, որը մահացել էր տասը տարի առաջ, և մտածում է, որ նա կուրախանար, եթե տեսներ, թե ինչպես նա օգնում է մեկ ուրիշին:

Առավոտյան Վկոսը զանգահարում է Սարգիսին, որը հաստատում է, որ ամեն ինչ պատրաստ է: Վկոսը որոշում է գնալ հանդիպման, սակայն նախ այցելել Ղազարոսների տուն՝ նրանց հանգստացնելու համար: Մարիամը ծանր է տանում լուրը, սակայն ասում է, որ պատրաստ է ամեն ինչի

ՎԱՀԱՆՈՒՇ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԿԱ, 364 - 400)

Ֆ. ԳԱՎԻ

12.— ՀՈՅ ՄԱՐԴԿԱՅԻՆ

Մի առանձին մարդկային էն, որ առանձնա-
յատկություններ ունի, որոնք միայն նրան են
պատկանում, նրան միայն հատուկ են, մի
տարօրինակ էակ էր Վահանը: Մի առանձին
տարօրինակություն էր նրա ամբողջ էության
մեջ: Ոչ ոք չէր, և չէ՛ր էլ կարող լինել նրա
նման: Նրա մեջ կային այնպիսի հակասական
գծեր, որոնք միանգամայն անհնարին էին
միմյանց հետ միացնել: Նրա մեջ կային այն-
պիսի գծեր, որոնք ամենից հեռու էին նրա
բնավորությունից, նրա ոգուց, նրա ամբողջ
էությունից: Նրա մեջ կային գծեր, որոնք
ամենից հեռու էին նրա ոգուց, նրա ամբողջ
էությունից, և նրա մեջ չկային գծեր, որոնք
ամենից մոտիկ էին նրա էությանը: Նրա
մեջ կային գծեր, որոնք ամենից հեռու էին
նրա ոգուց, նրա ամբողջ էությունից, և նրա
մեջ չկային գծեր, որոնք ամենից մոտիկ էին
նրա էությանը

թէնք հասան հարիւր անդլիացի եւ ֆը – րանսացի, 250 ալ հրեայ քաղաքացիները :

× Արտաքին նախարարը, Պ. Փինօ ղե – կուցում տալով նախարարական խորհուր – դին մէջ, հաստատեց թէ դժուարին կա – ցութեան մը մասնուած են ֆրանսական հպատակները, իսկ հակղութեան տակ ըլլալով : Բոլորն ալ միեւնոյն ձեւով կը նկարագրեն կացութիւնը : Մասնաւոր կա– ցութիւն մը ստեղծուած է, որպէսզի ֆը– րանսացիները, Անգլիացիները եւ Հրեա – ները հեռանան :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀՐԱՆԻԹԻ ՏԱԳՆԱՊԻՆ առթիւ, Մոս– կուայի թերթերը կը յայտնեն թէ Խ. Մի– ութիւնը ի վիճակի է քարիւղ ճարելու ա– րեւմտեան Եւրոպայի : Այս տարուան քարիւղի արտադրութիւնը կը հաշուեն 80 միլիոն թոն (անցեալ տարի 71 միլիոն) :

ԱԶԳԱՅՈՂՈՎԻՆ ոստիկանական ուժը 6 հազար զինուորի պիտի բարձրանայ, ինչ– պէս յայտարարեց ընդհ. քարտուղարը : Կը յուսան 4500 զինուոր կեդրոնացնել մինչեւ երկու շաբաթ :

ԱԼՊԱՆԻԱՑԻՆ հասած լուրերու համա – ձայն քանի հոգի սպաննուած են մայրա – քաղաքին մէջ, բուռն ցոյցերու հետեւան– քով : Մասնաւորապէս դժգոհ են դիւղա – կան շրջանակները : Կառավարութիւնը ձերբակալած է չարք մը ականաւոր ան – ձեր :

ԱՀԱԲեԿՈՒՄՆԵՐԸ վերսկսան Ալժե – րիոյ մէջ, բոլոր ճակատներուն վրայ : Միայն մէկ ընդհարման միջոցին սպան – նուած են 11 զինուորներ եւ 38 ըմբոստ – ներ :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՐԻՒՂ պիտի հասնի մինչեւ 15 օր, համաձայն Ուոշինկթընէն հասած լուրերու :

ՍՈՒՐԻՈՑ կառավարութիւնը 850 ընդ – դիմադիրներ ձերբակալած է անցեալ շաբթու, համաձայն Պաղտատ հասած լուրերու :

ՍՈՒԻԶԻ շրջանը պարպելու համար Ազ– գաժողովին քարտուղարը երկու շաբ – թուան պայմանաժամ մը կը նախատեսէ, այն ենթադրութեամբ թէ մինչեւ այն ա – տեն պիտի կրնան 4500 զինուոր համա – խմբել, պատրաստ՝ անդլեֆրանսական զօրքին տեղը բռնելու : Անդլիոյ արտաքին նախարարը յայտարարութիւն մը պիտի ընէ այս մասին, երեսփ. ժողովին մէջ, առաջադրուած Ռէյչըրհեան առաջարկներէն : Պահպանողականները կը սպառնան վո – թորիկ մը յարուցանել այս առթիւ : Կ'ըս– ուի թէ վարչապետը՝ Իրըն, կարճ պիտի կապէ իր արձակուրդը Ճամայիքայի մէջ :

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ օդանաւային նա – խարարը յայտարարեց թէ հիւլէական զէնքեր պիտի զործածեն, եթէ համայնա– վարական յարձակում կատարուի : — Ա – րեւմտեան Գերմանիոյ ամերիկեան բա – նակը մեծ ռազմափորձեր պիտի կատարէ Դեկտեմբերի սկիզբը, Շթութկարտի եւ Նիւրընպէրկի մէջ :

ՄԱՐՍԻԼԻ հասան բազմաթիւ Ֆրան – սացիներ՝ Եգիպտոսէն : Հինգ հազար հո– գի եւս պիտի հասնին մօտերս :

ԱՆԳԱՐԱՑԻՆ կը հեռագրեն թէ կառա – վարութիւնը որոշեց սահմանափակել հը– բանիւթի սպառումը : Միւս կողմէ կառա– վարութիւնը ուշադրութեամբ կը հետեւի Մէջին Արեւելքի կացութեան, չատ ծանր համարելով զայն : «Լը Մոնտ»ի թղթակի– ցը կը զրէ թէ մտահոգութիւնը կ'երեւայ բոլոր դէմքերուն վրայ, իրրեւ հետեւանք զանազան զրոյցներու : Խ. Միութեան ձեռնարկները եգիպտոսի մէջ ամէնէն ա – ւելի կը յուզեն հանրային կարծիքը :

ՍԱԿԱՐԱՆ (Նոյ. 28).— Զոյլ ոսկի 468·000, նափոլէոն 3480, անգլիական 4440, զուից. 3410, քսան տոլարնոց 16·680 : Թղթադրամ (անպաշտօն) . — Սթերլին 1050, տոլար 405, զուից. 96·50, պելժ. 8·10 :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Բնիկ Մշոյ քաղքին Սպոնճի Մուրա – ի որդին Օհաննէս Օհաննէսեան կը փնտռէ իր երկու քոյրերը, Մարմար եւ Պեզօ :

Աբչակ Պօղոսեան կը փնտռէ իր որդին Մխիթարը, կորսուած հայրենական պա– տերազմին :

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊԱԿԻ

Պ. Երուանդ Գրիգորեան հազար Ֆր. կը նուիրէ Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւ – ղին, փոխան ծաղկեպսակի Տիկին Թա – գուհի Բալուեանի մահուան առթիւ :

Սաանալ «Յառաջ»էն :

ԽՆԴՈՅՔ ԻՍԻԻ ՄԷՋ

Դաշնակցութեան Օրուան առթիւ կիրակի, 2 Դեկտեմբեր :

Արիմեան սրահը ժամը 15ին :

Խօսք կ'առնեն ընկերներ ՀՐԱՆՏ ՄԱ – ՄՈՒԼԻ եւ ՊԵՏՐՈՍ ԶՊՈՒՐՃԵԱՆ :

Գեղարուեստական բաժինին կը մաս – նակցին Տիկին Շաֆէ Գալայճեան, Պ. Նշան Զիմէճեան, Օր. Քէշիշեան (արտա– սանութիւն), Պ. Սէյրան (թառ) եւ ու – րիշներ :

ՄՈՒՏՔը ԱԶԱՏ Է :

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Շնորհակալութեամբ ստացանք մեր յա– ժանորդներէն Պ. Լ. Մուրատեանէ երեք հազար ֆրանք, իր բաժնեգինին վճարման առթիւ :

ԹԷՅԱՍԵՂԱՆ

Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղի ներ– յասեղանը այս շաբաթ, կէս օրէ հետք ժա– մը 3 – 7, Սասունի ճայլարանը : 31 ռու տ'Ալէֆսանտրի :

Սիրով կը հրաւիրուին Փարիզի եւ շր– ջաններու ընկերները, ընկերուհիները եւ համակիրները, ինչպէս նաեւ մամու– լի ներկայացուցիչները :

Տէր եւ Տիկին Աւետիս Մարզարեան – զաւակները՝ Յակոբ, Թիրայր եւ Վրէժ Տէր եւ Տիկին Խաչիկ Մարզարեան եւ զա– ւակները՝ Սերոբ եւ Մարզիթ, Տէր Տիկին Մուշեղ Մարզարեան, Տիկին Եր– նուհի Թէրզեան (Ամերիկա), Տէր եւ Տ կին Մեսրոպ Սերոբեան եւ զաւակնե (Ամերիկա), Տէր եւ Տիկին Զօհրապ Մ– րատեան ,Տէր եւ Տիկին Թիրայր Սա– րատեան եւ զաւակները, Տակառեան ,Տէր Սիմոնեան, Տիրացուեան, Տէր Հարէնն եւ Մանուէլեան ընտանիքները ցաւով ծանուցանեն իրենց մօր, մեծ մօր, եւ – դականին՝

ԱՑՐԻ ՏԻԿԻՆ ԱՂԲՈՒԹ ՄԱՐԳԱՐԵԱ (Ծնեալ Պօզէյեան, Մշեցի)

մահը որ տեղի ունեցաւ 68 տարեկան իր բնակարանը :

Յուղարկաւորութիւնը այս շաբթ, Դեկտեմբեր, ժամը 13·30ին Ալֆորվի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին, ապ մարմինը տան առաջ Ժողովրդուի տեւ բեղմնաւորութիւն : Հաւաքուիլ բնակարան 107, ռիւ էքիէն Տօլէ, Ալֆորվիլ :

Մասնաւոր մահագդ չստացողներէն կ խնդրուի ներկայս դրեթ այդ նկատել :

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՑ Խաչի Պահոնի մասնաճիւղը խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Ա Տիկին Հ. Միլտոնեանի եւ զաւակնե ԲԵՆԵԱՄԻՆ ՄԻԼՏՈՆԵԱՆի կսկծալ մահուան առթիւ :

*
**

Ֆ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Հ. Բալուեանին եւ Տէր եւ Տիկին Լ. Բաբանեանի, իրենց սիրեցեալ մօր՝ ընկերուհի Թագուհի Բալուեանի մահուան առթիւ :

×

Հ. Ց. Դ. Բաֆֆի խումբը ցաւակցու – թիւն կը յայտնէ Տէր ւ Տիկին Լորիս Բա– բանեանի իրենց մօր՝ Տիկին Թագուհի Բալուեանի մահուան առթիւ :



Salles de séjour — Penderies - literie
Chambres - cosys — Cuisines laquées
Salons-tapisserie — Fauteuils-canapés lit

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ
ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԶՐԻ ՅԱՆՁՆԵԼԻ ՖՐԱՆՍԱՑԻ
ԱՄԷՆ ԿՈՂՄԸ
185, Bd. J. JAURES et
15, Av. A. MORIZET
Boulogne - Billancourt
Métro : MARCEL SEMBAT

ՀՐԱԽԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Հ. Ց. Դ. Ռս. Միութեան վարչութիւ– նը ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին :

ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ ՕՐԱԿԱՐԳ :

Բոլորին ներկայութիւնը պարտաւորիչ :

ՅՈՐԵԼԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՑՇ ՄԱՌՔԻ

Սալ Շօփէն (Փլէյէլ), Դեկտեմբեր 1

Շաբաթ գիշեր, ժամը 8·30ին

Նախաձեռնութեամբ Հայ Գրողներու Ընկերութեան եւ մասնակցութեամբ Մշա– կութային Միութեան եւ Համազգային Ընկերութեան եւ Ֆրանսահայ Լսարանին :

Հովանաւորութեամբ՝ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆի :

Գրական ու գեղարուեստական ճոխ բա– ժին :

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԶԱՓԱՀԱՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ կը կազմակերպեն

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ազգ Տան մէջ, 32 ռիւ տը Թրէվիզ

Պիտի ներկայացնեն

«ԱՆՈՒՇ»ը (Տիգրանեանի)

Զայնագրուած Երեւանի Օփերայի ար – ուեստագէտներու կողմէ :

Այս Շաբաթ ժամը 20·30ին :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՄԱՐՍԻԼԻ, ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ.— Այս կիրակի Ս. Թադէոս եւ Բարթողիմէոս տօնին առթիւ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի, մասնակցութեամբ Օր. Սիւզան Պոյաճեանի եւ Դպրաց Դա – սու : Այս առթիւ հոգեհանգստեան պաշ – տօն պիտի կատարուի եկեղեցւոյս հիմ – նադիր եւ բազմարդիւն առաջնորդ Տ. Գրիգորիս եպիսկ. Պալաքեանի, կնքա – մայր Օր. Նունիկ Տէր Ղեւոնդեանի եւ ե– կեղեցւոյ սատարող հին եւ նոր ննջեցե – լոց յիշատակին :

ԾՆՈՂՔՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Դաշնակի դասեր Մարսիլիոյ մէջ

Իրրեւ փորձառու մանկավարժ ուսու – ցիչ, Մատլէն Եավէր վերսկսած է իր դա– նակի դասաւանդութիւնները :

Ժամանակի խնայողութիւն, հսկայա – կան յառաջդիմութիւն, արդիական արա – դաւարժ դիւրուսոյց մեթոտներով, անոնք որ կարճ ժամանակի մէջ կ'ուզեն տիրա – նալ երաժշտական արուեստին եւ դաշնակ նուագել Քոնսերվաթուարի ծրագիր կանո– նադրով , դիմեն, ամէն օր ժամը 2-7,

MADELEINE YAVER
17, Rue Flegier, MARSEILLE (1°)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. Բաֆֆի խումբի ժողովը այս ուրբաթ երեկոյ, ժամը 8·30– ին, Ռէժանի վերնայարկը : Պարտաւորիչ ներկայութիւն :

ՄԱՐՍԻԼԻ.— Հ. Ց. Դ. Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ.—

Զաւարեան ենթ. չաբաթ 1 Դեկտ. ժամը 9ին :

Վռամեան ենթ. չաբաթ, մէկ Դեկտեմ – բեր, ժամը 9ին :

Նիկոլ Դուման ենթ. կիրակի, 2 Դեկտ. ժամը 3·30ին :

Սոյն ժողովները տեղի կ'ունենան սո – վորական հաւաքատեղին : Կարեւոր օրա – կարգ : Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կ. ներկայա– ցուցիչը :

(Շար.)

ԼԻՈՆ.— Հ. Ց. Դ. «Վարանդեան» կո – միտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր ընկերները այս ուրբաթ իրիկուն ժամը 21 – ին, Ճոյներու սրահը : Կարեւոր օրա – կարգ :

ԿՐԸՆՈՊԼԸ.— Հ. Ց. Դ. Եօթնեղբայր – եան կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս շաբաթ, ժամը 20·30ին, Ծանօթ հաւաքատեղին : Խիստ կարեւոր օրակարգ : Անհրաժեշտ է բոլո – րին ներկայութիւնը :

ՄԱՐՍԻԼԻ.— Քրիստափոր ենթակոմի – տէի ընդհ. ժողովը այս կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին : Պարտաւորիչ ներկայու – թիւն : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՓԱՐԻԶ.— Հ. Ց. Դ. «Քրիստափոր» խումբի ժողովը այս երեքշաբթի դիչեր, Բաֆֆ Ռէժանի վերնայարկը :

ԽՆԴՈՑՔ ՎԻԵՆԻ ՄԷՋ

× Հ. Ց. Դ. Նոր Սերունդի խնջոյք պարահանդէսը ի նպաստ « Հայաստան » թերթին, այս կիրակի ժամը 3ին 10, Համ– մօ Օհաննէսեան ակումբը :

Կը հրաւիրուին չրջանի բոլոր նոր ան – դամները եւ համակիրները : Խմբերգ , արտասանութիւն, երգ, հայկական պար եւ անակնկալներ : Ճոխ պիւֆէ :

ՌՕՆԻ ՍՈՒ ՊՈՒԱՑԻ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ այս շաբաթ երեկոյ, ժա– մը 8·30ին, կայարանի ալ ելքին դէմի սրճարանին վերնայարկը, 3 - 5 ռիւ ժան Ժօրէս :

Դասախօս ՏՈՒՔ. Լ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Նիւթը՝ Հայ կեանքը նախապէս եւ հիմա :

Կը հրաւիրուին Ռոնի սու Պուայի եւ չրջակայքի հայրենակիցները :

Մուտքը ազատ է :

Imp. Araxes - 46, rue Richer, Paris (9e)

ՇԱԻՒԼԻ ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ
ՄԵԾ ԵՐԵԿՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
Փրակի, 9 Դեկտեմբեր , ժամը 17էն մինչեւ կէս գիշեր,
Salle des Fêtes, Rue Stalingrad, Chaville
Բարձր հովանաւորութեամբ կաթող. Պատուիրակ
ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆի
ՄԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՍԻՓԱՆ–ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱԽՈՒՄԲԻ
Պիտի ներկայացուի «ՈՉԽԱՐՆԵՐՈՒ ԴԱՏԸ (զաւեշտ), Շաւիլի յանձնախում – բին կողմէ Ճոխ պիւֆէ Մուտք 250 ֆր. :
Orchestre GARO SARIAN

ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՅԱՆՁ.ԽՄԲԻ
ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
ՇԱԲԱԹ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ : ԺԱՄԸ 21Էն ՄԻՆՉԵՒ ԼՈՑՍ
Նախագահութեամբ՝ Պ. ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆի
CASINO DE CHARBONNIERES
Մասնակցութեամբ գաւառի ամէնէն ընտիր նուագախումբին՝
MAURICE DE THOU et LEO MELIAN — de la R. T. F.
Գեղարուեստական ճոխ բաժին : Բազմաթիւ անակնկալներ
Կը յանձնարարուի կանխաւ ապահովել սեղանները, հետաձգելով .—
Autos-cars — Place Bellecour Burdeau 54-03
Մուտք գոյն զգեստը նախընտրելի է